ՂԵՎՈՆԴ ՔԱՀԱՆԱ ՄԱՅԻԼՅԱՆ

# ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՂԱՆԴՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

վերանայված, լրացված հրատարակություն

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ 2011

## ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Դեռևս Եկեղեցու հիմադրման և հետագա տարածման ու կյանքի զարգացմանը զուգահեռ սկզբնական օրերից սկսյալ Սուրբ Եկեղեցին կանգնած է եղել բազմանուն ու բազմազան հերետիկոսությունների ու հերձվածողական շարժումների մարտահրավերի առջև. պաշտպանել և ջատագովել փրկության տանող ուղիղ փառաբանության և դավանության հիմնական սկզբունքը՝ խարսխված Ավետարանի ճշմարտության և Եկեղեցու ավանդության վրա: Արդեն իսկ առաքյալների կենդանության և քարոզության օրերին նկատվում են զանազան ուղղությունների ու քարոզիչների սպրդումը առաքյալների ձեռքով հաստատված և նրանց խնամատարությունը վայելող համայնքների ծոցում: Աստվածային Պողոսը լայնորեն պատկերագրում է վերոբերյալ անառողջ վիճակը՝ համարելով դրանք մարդակենտրոն դրսևորումներ, որոնք ոչ մի աղերս չունեն Աստուծո մարմնացած Խոսքի, առաքելական ավանդության և քարոզության հետ. դարձ է «դեպի ուրիշ ավետարան», «խռովության սերմանում», որոնք «ուզում են շուռ տալ Քրիստոսի Ավետարանը» (ԳԱՂ. Ա 6-10):

Գրեթե չի եղել մի ժամանակաշրջան, որ Տիրոջ Խոսքի առաքելությունը շարունակողն ու իրականացնող Ընդհանրական Եկեղեցին զերծ լինի ամենատարբեր շարժումների զուգահեռաբար գոյությունից, որոնք իրենց սնունդն են ստացել և ստանում Եկեղեցու իսկ ծոցից: Բնականաբար Եկեղեցին չի կարողացել անտարբեր մնալ Քրիստոսին դավանելու անաղարտության պահպանման նախանձախնդրությունից և ժամանակ առ ժամանակ տարբեր եղանակներով՝ զերծ որևէ մեղմաբանությունից, տևական պայքարի՝ գրչով, խոսքով և երբեմն էլ ծայրահեղ միջոցներով ձգտել է կանգնեցնել վերոհիշյալ շաժումների ծավալումը: Արդեն իսկ երկրորդ-երրորդ դարերից հանդիպում ենք եկեղեցական հայրերի «Բան ճշմարտության», «Ընդդեմ հերձուածողաց», «Եղծ աղանդոց» և այլ խորագրերով, հակաճառական և Եկեղեցու ուղղափառ ու բարեփառ դավանանքի ջատագովական երկերի: Դավանական ուղիղ փառաբանությունը նախնական եկեղեցում կարևորագույն հիմնաքարն է եղել փրկության հասնելու համար, որով Սուրբ Գրքի և այդպիսով զբնավորված դավանանքի, հոգևոր մշակույթի յուրաքանչյուր տառ ու բառ դիտվել է որպես փրկաբանական արժեք, առանց որևէ երկրորդական կամ երրորդական դասակարգման: Ինչ որ իմաստով էլ անուղղակի կերպով սույն շարժումները իրենց նետած մարտահրավերներով նպաստել են Եկեղեցու դավանանքի բանաձևման, բյուրեղացման, հաստատման և կենսագործունեության աշխուժացմանը:

Ցավալիորեն, մերօրյա իրականության մեջ դավանաբանական խնդիրները, Եկեղեցու կենսապահովման տեսակետից համարվում են ավելի անկարևոր և երկրորդական, քան Եկեղեցու ընկերային, տնտեսական, շինարարական, ազգապահպանական, քաղաքական խնդիրների մեջ ներգրավումը: Միանշանակ է, որ վերոնշյալ ոլորտները ուղղակի կամ անուղղակի կերպով մաս են կազմում Եկեղեցու առաքելության: Սակայն հարցերի հարցն է, թե ի՞նչ և ինչպե՞ս դավանելու հիմքի վրա է իրականացվում այդ առաքելությունը: Վերջապես, դավանական ուղղվածությունը, եթե նույնիսկ մի պահ դիտենք այն ոչ փրկաբանական տեսակետից, ձևավորում է անհատի և հասարակության մտածողությունը: Եվ վերջապես եթե անդրադառնալու լինենք այսօրվա իրականությանը, ոչ

միայն Հայաստանում, հստակ է, որ բազմաբղետ աղանդավորական ներթափանցումները ամեն ինչից առավել դավանաբանական հարցեր են առաջադրում և աղանդ եզրը ինքնին նշանականում է ուղիղ դավանանքից խոտորված: Հետևաբար, որևէ անլուրջ մոտեցում դավանաբանական խնդիրներին հղի է ծանր հետևանքներով հողեղեն և հոգեղեն աստիճաններում համաժամանակ:

Այս իմաստով ներկայիս «Եղծ աղանդոց» ընդհանուր ուղղվածությամբ տպագրված բազմաքանակ մեծ ու փոքր հրատարակությունների մեջ սույն հատորը, Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանի դասախոս Սերժ Մայիլյանի աշխատասիրությամբ, նպատակ ունի համապարփակ կերպով լուսաբանել Հայաստան աշխարհում տեղ գտած աղանդների ծագման, զարգացման, պատմական և հոգևոր շերտերը և հայրերի ավանդության հարազատությամբ պատկերել հիմնական շեղումներն ու վարդապետական թյուրությունները: Սույն աշխատությամբ, պրն Մայիլյանը հայ ընթերցողին է առաջադրում նրանց դիմագրվելու մեթոդներն ու եղանակները՝ Հայ և Ընդհանրական Եկեղեցու դավանանքի սկզբունքով, միանգամայն ոչ հակառակապնդող, այլ վերլուծական, տրամաբանական և պատմական հավատքի անաչառ դիտարկողի և քննողի մոտեցմամբ: Այս երկը հեղինակի ներդրումն է այսօրվա կրոնական գրականության մեջ պայմանավորված նորօրյա խնդիրներով և մարտահրավերներով:

Բագրատ Աբեղա Գալստյան

## ԻԲՐԵՎ ՆԱԽԱԲԱՆ

«Զգույշ եղեք, չլինի թե մեկը ձեզ գրավի ճարտարամտությամբ և սնոտի խաբեբայությամբ. դրանք մարդկային ավանդության և բնության տարերային ուժերի վրա են հիմնված և ոչ թե Հիսուս Քրիստոսի ճշմարիտ վարդապետության վրա» (Կողոս. Բ 8):

Հայաստանը, ինչպես նախկինում, այսօր էլ թատերաբեմ է համարվում բազմաթիվ կրոնական ուղղությունների համար, որոնք իրենց գործունեությամբ «լույս» են տարածում մեզանում. թե՛ արևելքից, թե՛ արևմուտքից, թե՛ հյուսիսից և թե՛ հարավից զանազան կրոնական ալիքներ բախվում են իրար ու ներխուժում Հայաստան: Ոմանք «ճշմարտության լույսն» են բերում մեր «խավարած» սրտերին, ոմանք՝ «ճշմարտություն», ոմանք էլ՝ «տիեզերական եղբայրություն» և այլն:

«Լուսաբարներ» Վոչման Նիի ու Վիթնես Լիի[1] ուսմունքն են քարոզում այս փոքրիկ -Հայաստանում, տպագրելով ու տարածելով ՆԻ-ԼԻ զույգի «աստվածաբանական» երկերը: Եթե մինչ հիմա այդպիսի երկերը մեզ էին հասնում հիմնականում արևմտահայերեն տարբերակով, ապա այսօր դրանք հրամցվում են արևելահայերենով: Մորմոնի գրքի[2] արևմտահայերեն թարգմանությունը արդեն շրջանառության մեջ է դրված մեզանում, ուրեմն պիտի սպասել, որ շուտով երևան կգա նաև արևելահայերեն տարբերակը:

«Դիտարանի»[3] վերջին, 1998-99 թվականների համարները արդեն արևելահայերեն լեզվով ու ուղղագրությամբ են տարածվում Երևանի կանգառներում ու մետրոյի կայարաններում:

Ի՞նչ է սպասվում մոտ ապագայում: Կարելի է ենթադրել, որ հայերեն կթարգմանվեն և կտարածվեն Մուն[4]ու Խաբարդի[5] ընտիր «երկերը», Լա Վեյի[6] «Սատանայի աստվածաշունչը» և այդ ամենը սկուտեղի վրա դրված կմատուցվի մեզ: Ցավալին ոչ թե այդ գրքերի երևան գալն է, այլ այն, որ դրանք ունենալու են իրենց հետևորդներն ու ջատագովները, որոնք վաղ թե ուշ կազմելու են կրոնական համայնքներ՝ իրենց ուրույն դավանանքով ու աշխարհայացքով՝ որն, անշուշտ խորթ է ինչպես 1700-ամյա քրիստոնյա եկեղեցի ունեցող ժողովրդին, այնպես էլ ազգային լեզվամտածողությանն ու մշակույթին: Բոլոր դեպքերում այդ «արտաքին» ներխուժմանը նպաստում և նպաստելու են այսօր արդեն փաստորեն գոյություն ունեցող կրոնական ուղղություններն ու միավորումները, կամ մեկ բառով ասած՝ աղանդները:

Ի՞նչ են ներկայացնում այդ շարժումները, ո՞ւմ են ներկայացնում, ի՞նչ նպատակ են հետապնդում, ի՞նչ են քարոզում:

---

[1] Ամերիկյան Անահայմում գործող «Կենդանի հոսք» անունով բողոքական հարանվանության չինացի առաջնորդները:
[2] Մորմոնների՝ XIX դարի սկզբին ամերիկյան մայրցամաքում առաջացած կրոնական շարժման «սրբազան» գիրքը:
[3] Եհովայի վկաների պաշտոնական ամսագիրը, որը լույս է տեսնում երկու շաբաթը մեկ:
[4] Կորեական ծագում ունեցող արդի աղանդներից մեկի առաջնորդը:
[5] Արդի աղանդավորական ուղղություններից մեկի՝ սայենտոլոգների հիմնադիրը:
[6] Մեր դարի 70-ականներին Սան Ֆրանցիսկոյում ծնված սատանայապաշտության առաջնորդը:

Գնորգյան Հոգևոր Ճեմարանի ուսանողների և ՔԴՔԿ կրոնի ուսուցիչների համար վաղուց զգացվում էր այնպիսի դասագրքի անհրաժեշտությունը, որը կտար այդ հարցերի պատասխանը: Այդ բացը լրացնելու համար 1998-99 թթ. ՔԴՔԿ վարիչ-տնօրեն Վազգեն վարդապետ Միրզախանյանի նախաձեռնությամբ հրատակության պատրաստվեց սույն ձեռնարկը, որը 1996-1999 թթ. Գևորգյան Հոգևոր Ճեմարանում կարդացված դասախոսությունների ամփոփումն է:

Սույն գրքում փորձել ենք ամփոփ և սպառիչ կերպով ներկայացնել Հայաստանում գոյություն ունեցող ժամանակակից քրիստոնեական և կեղծ-քրիստոնեական շարժումները, որոնք ինչ-որ կերպ առնչություն ունեն քրիստոնեության հետ, տալ նրանց ծագման պատմությունը, դավանանքը, առանձնահատկությունները: Քննության է ենթարկվում նրանց դավանանքը, տրվում պատասխաններ հնարավոր առարկություններին, ինչպես նաև առաջարկվում է մեթոդներ՝ նրանց հետ շփումներն ավելի օգտակար դարձնելու համար:

Մեկնաբանություններ և բացատրություններ տալիս աշխատել ենք դուրս չգալ Ս. Գրքի շրջանակներից և միայն ծայրահեղ դեպքերում են հղումները կատարվել հայրաբանական գրականությունից: Մոտեցման այս ձևը համարվում է ամենաընդունելին, քանի որ աղանդավորական ոչ մի շարժում վավերական չի համարում հայրաբանական ժառանգությունը և նրանց հեղինակությունը:

Եզնիկ Կողբացին իր «Եղծ աղանդոցի»[7] առաջին գրքում, գրելով հեթանոսական աղանդների հերքման մասին (այդ ժամանակների ամենատարածված աղանդներից), նա գրում է. «Արդ՝ Աստծու Եկեղեցու գործն է՝ արտաքիններին դատապարտել ճշմարիտ իրողություններով, առանց Գրքի, իսկ կարծեցյալ և ոչ արդարացի ներքիններին՝ Սուրբ Գրքով» (ԵԿ, էջ 91):

Հենց այդ սկզբունքով էլ Եզնիկը սկսում է իր «Եղծը»՝ թե՛ առանց Գրքի և թե՛ Գրքով պատասխան տալիս աղանդավորներին:

Եզնիկի շարադրանքի մեջ առանձնանում են մի քանի սկզբունքներ, որոնք նա կիրառում է հերքելու համար իր ժամանակի աղանդավորներին:

- Հաճախ նա դիմում է լեզվաբանական մեկնաբանումներին՝ հունարեն բառերի քննությանը (ԵԿ, էջ 91, 167, 169, 213 և այլն):
- «Անհավատ ու դանդաչանաց» գաղափարներին «բոլորովին էլ պետք չէր պատասխան տալ, որովհետև բավական էր նրանց անմտությունը ցուցադրել հենց իրենց այն ասածներով, որոնք միմյանց հակամարտ են ու հակասական» (ԵԿ, էջ 95):
- Օգտագործում է իր ժամանակի տոմարագիտական, աստղագիտական պատկերացումները (էջ 97, 177):
- Օգտագործում է ժամանակի բժշկագիտական պատկերացումները (էջ 143-145):
- Օգտագործում է բնագիտական պատկերացումները (էջ 151 և ամենուր):
- Եվ վերջապես օգտագործում է Սուրբ Գրքի համապատասխան համարները (էջ 239-241 և ամենուր):

[7] **Եզնիկ Կողբացի**, «Եղծ աղանդոց», Երևան, 1994: Դետ այսու ԵԿ:

Եզնիկ Կողբացու ժամանակներից (IV-Vդդ) անցել է ավելի քան 15-16 դար, փոխվել են բնագիտական պնտկերացումները, բժշկագիտությունը, աստղագիտությունը, աշխարհագրությունը, լեզվաբանությունը և այլն, բայց աղանդավորությունը իր էությամբ մնացել է նույնը:

Այդ առումով էլ, օգտագործելով վերոհիշյալ սկզբունքները, սույն դասագրքում քննարկվում են ժամանակակից աղանդավորական շարժումները: Այսօր արդեն անհրաժեշտություն է զգացվում հակադրվել աղանդավորական շարժումներին թե՛ սուրբգրային վարդապետությամբ, թե՛ ժամանակակից բնագիտության պատկերացումներով, քանի որ ժամանակակից աղանդավորությունը հարձակվում է ոչ միայն քրիստոնեական Եկեղեցու վրա, այլև քաղաքակրթության, առողջ բանականության վրա ընդհանրապես:

Մորմոնները սիրում են իրենց վարդապետությունը հիմնավորել բնագիտական տվյալներով, ուստի մորմոնականությունը քննարկելիս մեծ տեղ է հատկացվում բնագիտական քննարկումներին և բնագիտական տեղեկություններին:

Եհովայի վկաներն ու ադվենտիստները շատ են սիրում հղումներ կատարել Ս. Գրքի եբրայական և հունարեն բնագրերին, ուստի այդ բաժիններում զգալի տեղ է հատկացվում լեզվաբանական քննարկումներին ու փաստարկներին:

XX դ. ծնունդ առած կրոնական ուղղություններն էլ իրենց փաստարկները հիմնավորում են միայն Ս. Գրքի շրջանակներում, ուստի այդտեղ էլ աշխատել ենք մնալ միայն այդ շրջանակում և «արտաքին» աղբյուրներին չդիմել:

Բոլոր դեպքերում մանրամասնորեն ներկայացվում են նաև սուրբգրային այն համարների մեկնաբանությունները, որոնց վրա հիմնված է այս կամ այն աղանդի վարդապետությունը:

Աշխատել ենք մեծամասամբ օգտվել աղանդներում տարածված և ընդունված գրքերից, գրքույկներից ու պարբերական հրատարակություններից:

Եվ, բնականաբար, սույն գրքում հաճախ է օգտագործվում այնտեղ հաղիպող աստվածաբանական եզրերը, որոնք, անհրաժեշտության դեպքում տրվում են լատիներեն համարժեքով կամ տառադարձությամբ: Օրինակ Եհովայի վկաների հայերեն պարբերականներում հաճախ են հանդիպում «եռամիասնական», «եռամեկ» եզրերը, որոնք թարգմանությունն են անգլերեն trinitarian, triune բառերի (հայերեն Երրորդություն բառի համարժեքները), որոնք իրենց հերթին ծագել են լատիներեն համարժեք բառերից:

Աղանդներին ճանաչելու ու նրանց գործունեությունը կանխատեսելու համար կարևոր է իմանալ նաև նրանց «եկեղեցու» կառուցվածքը, կազմակերպչական գործունեության առանձնահատկությունները: Ուստի, հնարավորության սահմաններում, ներկայացվում են նաև այդ խնդիրները, քանի որ մեծամասամբ աղանդների ներքին կառուցվածքը գաղտնի է պահվում:

Սուրբգրային հղումները վերաբերում են Աստվածաշնչային Ընկերության հրատարակած Աստվածաշնչերին ու ոչ թե արևելահայերեն վերջին՝ 1994 թ. հրատարակության Աստվածաշնչին, քանի որ աղանդավորների համար այդ հրատարակությունը չընդուն-

վեց[8] և նրանք այդպես էլ շարունակում են օգտագործել միայն Աստվածաշնչային Ընկերության հրատարակած Աստվածաշնչերը: Մյուս կողմից, գրեթե բոլոր աղանդների հայրենիքում գործածության մեջ են եղել անգլերեն լեզվով հրատարակված Աստվածաշունչ մատյաններ, որոնք շատ չեն տարբերվում Աստվածաշնչային Ընկերության հրատարակած հայերեն Աստվածաշնչերի հետ:

Բնագրային հղումները կատարելիս օգտագործել ենք՝

- Նոր Կտակարանի համար. The greek New Testament, by K. Aland, UBS, Stutgard, 1983:

- Հին Կտակարանի համար. The Septuagint version (greek and english) of the Old testament, London, 1973 և The hebrew Bible, Berlin, 1903[9]:

Օտար տերմինները, որոնք հաճախ են օգտագործվում, տրվում են հայերեն թարգմանությամբ, և, որպեսզի շփոթություն կամ երկիմաստություն չառաջանա, զուգահեռ տրվում է նաև բառի ընդունված օտար ձևը՝ հայատառ կամ լատինատառ:Շատ աստվածաբանական եզրեր, որոնք արդեն ունեն ձևավորված ավանդական իմաստ, հաճախ նույնությամբ օգտագործվում են աղանդավորական գրականության մեջ, ինչպես օրինակ մարգարե, եկեղեցի և այլ նմանատիպ եզրերը: Դրանք տարբերակելու համար օգտագործված է այդ բառերի գրության շեղագիր ձևը, եթե նախադասության բովանդակությունից չի հասկացվում, թե որ տարբերակի մասին է ասվում. օրինակ՝ Եսայի մարգարե, բայց Ելենա Ուայտ մարգարեուհի:

Փոքր տառերով տրվում են լրացուցիչ բնագիտական, աշխարհագրական, լեզվաբանական և այլ տեղեկությունները, որոնք առաջին ընթերցման ժամանակ կարելի է բաց թողնել:

Ընթերցելիս խորհուրդ է տրվում ձեռքի տակ ունենալ Ս. Գիրքը, քանի որ միշտ չէ որ մեջբերումները տրվում են ամբողջությամբ. երբեմն ուղղակի նշվում է միայն համարը, առանց տեքստի մեջբերման:

Վերջում՝ բացատրական բառարանում տրված են օգտագործված տերմինների համառոտ բացատրությունները և անհրաժեշտության դեպքում նաև Հայ Եկեղեցու տեսակետը տվյալ հարցի վերաբերյալ:

Հայ Եկեղեցու վարդապետությունը հիմնականում բերվում է ըստ վերջին ժամանակներում գործածության մեջ եղող հայ վարդապետների և աստվածաբանների, արդեն կարելի է ասել հանրությանը մատչելի գործերի: Դրանք են Մ. Արքեպս. Օրմանյանի «Համապատումը», «Տեղիք աստվածաբանությանը», Շնորհք Պատրիարքի «Տեղիք աստվածաբանությանը», Ա. Միքելյանի «Քրիստոնեականը» և վերջերս հրատարակված տարբեր «Քրիստոնեականներ»:

Գիրքը նախատեսված է քարոզչական կենտրոնների, կրոնի ուսուցիչների և բոլոր նրանց համար, ովքեր հետաքրքրվում են աղանդներով:Գիրքը քննարկելու և իր դիտո-

[8] Ուղղափառ կանոնում ընդգրկված որոշ գրքեր նրանք համարում են պարականոն (Յուդիթ, Տոբիթ, Սողոմոնի իմաստությունը և այլն):

[9] Բնագրային բոլոր տարբերակները զանազան լեզուներով թարգմանություններով հանդերձ (Էլեկտրոնային տարբերակ) ներկայումս կարելի գտնել նաև Internet ցանցում, օգտագործելով Bible on line համակարգը:

դություններով օգտակար լինելու համար Խորին շնորհակալություն եմ հայտնում Բագ-
րատ աբեղա Գալստյանին:

## I. ԱՂԱՆԴՆԵՐԸ, ՆՐԱՆՑ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Աղանդների նկարագրման և ներկայացման առաջին քայլը նրանց դասակարգման խնդիրն է, աղանդի կամ հերձվածի սահմանումը:

Այսօր այդ բառերը կարելի է ինչ-որ տեղ հոմանիշներ համարել հասկանալի պատճառներով, ընդ որում «հերձվածը» աստիճանաբար դուրս է մղվում գործածությունից՝ տեղը զիջելով «աղանդին», որն ընդգրկում է նաև «հերձվածի» իմաստն ու նշանակությունը:

Հնում հերձված ասելով նկատի էին ունենում Եկեղեցու դավանանքի այս կամ այն մեկնաբանությունը չընդունող կամ այլ կերպ քարոզող կրոնական ուղղություններին, մինչդեռ աղանդ ասելով հասկանում էին ոչ քրիստոնեական կրոնները[10] (ինչպես Եզնիկի մոտ՝ գնոստիկներ, հեթանոսներ, Պարսից կրոն և այլն):

Դարերի ընթացքում այդ երկուսը միախառնվեցին իրար և այսօր ավելի գործածական է դարձել հերձվածներին էլ աղանդ անվանել: Քանի որ հիմա դժվար է հստակորեն սահմանազատել կրոնական ուղղությունները, նշել նրանց շեղումը ուղղափառությունից, ապա կարելի է, անշուշտ, պայմանականորեն բոլորին էլ տալ աղանդ ընդհանուր անվանումը, առանց հաշվի առնելու նրա հերձված կամ աղանդ լինելը: Հստակությունն էլ ավելի է դժվարանում, եթե ընդունենք, որ ուղղափառության ընդհանուր սահմաններն էլ դժվար է ներկայացնել, քանի որ 2000-ամյա Եկեղեցու ընդհանրական, սուրբ, մի և առաքելական լինելը ընդգծելու կամ նկարագրելու համար հազարավոր էջեր են անհրաժեշտ: Բայց և այնպես, չնայած դրան, կարելի է որոշակիորեն, իսկ մասնավոր դեպքերում նաև հստակորեն ընդգծել որևէ ուղղության շեղումը ուղղափառությունից, կամ տալ դրա ուղղափառության աստիճանը:

Փորձենք դասակարգել այսօրվա հայաստանյան կրոնական աշխարհի համայնապատկերում առկա աղանդները: Սկզբունքորեն, հաշվի առնելով վերը նշված վերապահումները, դրանք կարելի է բաժանել երկու դասի՝ իրենց ենթադասերով.

Ա. Քրիստոնեության հետ անմիջական առնչություն ունեցող դաս:

---

[10] Նոր Հայկազյան Բառարանը, ինչպես նաև Մալխասյանցի Բացատրական բառարանը հերձվածը նկարագրում է «եկեղեցու ներսում առաջացող ճեղքվածքը, բաժանումը», իսկ աղանդը ներկայացնում որպես օտար կրոն, այսինքն՝ քրիստոնեական Եկեղեցուց դուրս գտնվող կրոնական ուղղությունները: Նույնն է գրում նաև Շնորհք պատրիարքը, տալով եկեղեցու սահմանումը. «Իսկ ներսէն, այսինքն հերետիկոսներէն և հերձուածողներէն եկած քննադատութիւններ առ հասարակ եկեղեցւոյ ըմբռնումին, վարչակարգին դէմ են» (Շնորհք եպս. Գալուստեան, Տեղիք աստուածաբանութեան, Երուսաղէմ, 1993, էջ 7, հետայսու ՇԳ): Նոր Կտակարանում հունարենը օգտագործում է երկու բառ՝ heresis և heretikos, որոնք սովորաբար թարգմանվում են և՛ հերձված, և՛ աղանդ բառերով: Հունարենում այդ երկու բառերը նույն իմաստն ունեն, այսպես օրինակ, Տիտոս 3.10-ի heretikos-ը գրաբարը թարգմանել է հերձված բառով, իսկ Գործք 5.17-ի heresis-ը աղանդ բառով, չնայած մյուս տեղերում հանդիպող heresis-ները գրաբարը հերձված է թարգմանել: Ավետարաններում աղանդ բառով է թարգմանված նաև Մատթ. 16.12-ի «վարդապետությունը» (հունարեն՝ didakhe), շեշտելով փարիսեցիների աղանդի վտանգավորությունը: Հունարենն ունի նաև skhismatikos (=բաժանում) բառը, որը դարձյալ հերձված-ի իմաստն ունի: Շնորհք Պատրիարքը տարբերակում է այդ երկու բառերը. «Ձևապես հերձվածող մը կրնայ ուղղափառ ըլլալ, և հերետիկոս մը եկեղեցիի միութեան մէջ մնալ, սակայն յիրականին, հերձուածողներ անխուսափելիօրէն կ՛իյնան հերետիկոսութեան մէջ, եթէ յամառին մնալ իրենց հերձուածող դիրքին մէջ, իսկ հերետիկոսներ եթէ շարունակեն մնալ իրենց մոլար հաւատքին մէջ, անպայման պիտի անջատուին եկեղեցիի ամբողջութենէ, նման չորցած ճիւղին որ ի վերջոյ հովերէն կոծուելով պիտի փրթի և իյնայ մայր ծառէն» (ՇԳ, էջ 18):

1. Քրիստոնեական հերձվածներ կամ աղանդներ, որոնց թվում կարելի ընդգրկել հայ հոգեգալստականներին, խարիզմատներին, ադվենտիստներին, տնային զանազան եկեղեցիներին[11]:

2. Կեղծ քրիստոնեական ուղղություններ, որոնց մեջ կարելի է ընդգրկել մորմոններին, Եհովայի վկաներին:

3. Նորագույն ուղղություններ, որոնցից Հայաստանում «հայտ» են ներկայացրել առայժմ մունիստները (Միավորված եկեղեցի), և շուտով հայտնվելու նշաններ են ցույց տալիս սայենտոլոգները, Նոր դարը[12]:

Բ. Ոչ քրիստոնեական աղանդներ, որոնց մի մասը սիրում է ներկայանալ որպես ոչ-կրոնական շարժում, մինչդեռ էության մեջ կրոնական հոսանքներ են:

1. Արևելյան կրոնական հոսանքները, իրենց տարատեսակներով՝ Հարե կրիշնա և ՏՄ[13], բահայիստներ (իսլամական ծագում ունեցող աղանդ, որը դատապարտվեց իսլամի կողմից):

2. Եվ վերջին ժամանակներում ակտիվություն ցուցաբերած Օկկուլտ ուղղություններ, որոնք ընդգրկում են թեոսոֆիան (Մադամ Բլավատսկայայի հետևորդները), անտրոպոսոֆիան (Շտայներականները), աստրոլոգիան, սպիրիտուալիզմը կամ ոգեպաշտությունը (ոգեկանչությունը), սատանայապաշտությունը[14]:

Այս ենթախմբին կարելի է դասել նաև թուղթ-ու-գիր անողներին, գուշակների մի ստվար բանակին՝ սուրճի մրուրի վրա գուշակություն անողներից սկսած:Իհարկե, վերը թվարկածներում մեզ համար ավելի շատ հետաքրքրություն է ներկայացնում Ա դասը, ուստի պիտի փորձենք տալ այդ դասին բնորոշ հատկանիշները, որոնք, անշուշտ, մասնակիորեն վերաբերում են նաև Բ դասին:

Ա. Էկլեկտիզմ: Այսինքն, այս կամ այն կրոնական ուղղության (ներկա կամ պատմական) դավանանքի պատճենումը, վերակենդանացումը կամ վերաձևավորումը ըստ արդի պայմանների կամ այսօրվա տերմիններով՝ ըստ պահանջարկի: Ներկայիս բոլոր ուղղությունները, հիմնականում ծնունդ առած լինելով ամերիկյան մայր ցամաքում, կրկնել են պատմական աղանդների այս կամ այն սկզբունքը, նորովի ընկալելով և զարգացնելով այն:

Բ. Սինկրետիզմ: Առաքելական ժամանակներին բնորոշ այս երևույթը յուրովի հարություն է առել մեր ժամանակներում, երբ իրար են միախառնվում տարբեր կրոնական համակարգեր, ծնունդ տալով մի նոր, երրորդ ուղղության:

---

[11] Ժամանակակից աղանդավորական շարժումներից:

[12] Սայենտոլոգիան 50-60-ական թվականներին ամերիկյան նախկին զինվորական Ռոն Հաբարդի ստեղծած ամբողջատիրական աղանդն է, որը հիմնականում անդամներին իրեն է ենթարկում զանազան հոգեբանական մեթոդներով: Նոր - Դարը Արևելքի միստիկ կրոնական ուղղությունների վերածնունմն է Արևմուտքում

[13] Հնդուիզմի տարատեսակներից:

[14] Ժամանակակից էլեկտրոնային եթերը (Internet ցանցը) այսօր հեղեղված է այդ խմբին վերաբերող բազմաթիվ էլեկտրոնային գրքերով և գրքույկներով: Նշանակում է, որ մոտ ապագայում, երբ էլեկտրոնային եթերը մատչելի կդառնա, այդ ամբողջ եթերը կներխուժի մեր տները:

Գ. Անդամների պարզունակ (տրիվիալ) աշխարհայացք և աշխարհընկալում: Ըստ իրենց համոզման, իրենք են միակ ճշմարիտը, իսկ մնացած բոլորը մոլորության մեջ են: Այսինքն, մերժվում է ցանկացած գաղափար, որն անընդունակ են ընկալելու, և այն փոխարինվում է ռացիոնալ, շոշափելի համարժեքով: Այդպիսի աշխարհընկալմամբ «լցված» անդամները արդեն «իմանում» են ամեն հարցի պատասխանը «հասկանում» աստվածաբանության վերաբերող բարդ ու խճճված հարցերը, իսկ մնացած հարցերը իրենց չի հետաքրքրում: Այդպիսով աղանդը ինքնակամորեն ինքնամեկուսացման է ենթարկվում: Դրա ցայտուն օրինակը Եհովայի վկաներն են:

Նրանք մերժում են իրենց կազմակերպության որևէ անդամի «ինքնագործունեությունը», այսինքն որևէ անհատի մտավոր ունակության դրսևորումը: Սեփական կարծիքի արտահայտումը խարազանվում է ամեն կերպ, իսկ «Ես կարծում եմ» կամ «Ես գտնում եմ» դարձվածքները խորթ են նրանց: «Ցանկացած աշխարհիկ կրթություն չի խրախուսվում, քանի որ այն մթագնեցնում է ուղեղը կեղծ գիտելիքներով և թուլացնում է Ս. Գիրքը սերտելու ջանքերը: Բացասական վերաբերմունք է դրսևորում ցանկացած աշխարհական աշխատանքի հանդեպ, եթե այն խանգարում է աղանդի անդամին ամբողջովին նվիրվելու Եհովայի ծառայությանը» (3, էջ 105): Մեզանում այդպիսի դիրքորոշումը ցայտուն երևում է ոչ միայն Եհովայի վկաների մոտ, այլև մյուս աղանդներում:

Դ. Հանդգնություն: «Բացառիկությունը» և «ընտրյալ» լինելը գրեթե բոլոր աղանդավորներին բնորոշ հատկանիշ է: Որպես հետևանք այդ «բացառիկության» աղանդները իրենց են վերագրում աշխարհը «փրկելու» առաքելությունը և նման համոզմունքը աղանդի անդամին դարձնում է հանդուգն, հպարտ[15]: Հաճախ այդ հանդգնությունը չի ճանաչում և ոչ մի սահման, այն աստիճան, որ նրանք իրենցից դուրս մարդկանց դիտում են որպես սատանայի կամքը կատարողների և ուրիշ ոչինչ: Նրանց հետ հաճախակի հաբաբերվողներին շատ լավ ծանոթ է այդ որակավորումը: Նրանց հակաճառելիս անմիջապես լսում ես պատասխանը. «Դա չարից է»:

Ե. Հեղինակության հարցը: Բոլոր աղանդները այս կամ այն ձևով կապված են որոշ անհատների հետ, որոնք համարվում են «վավերական» հեղինակություններ: Այսպես՝ - Ռասելը[16] Եհովայի վկաների համար, Միլլեր-Ուայթը զույգը ադվենտիստների համար, Սմիթը մորմոնների համար և այլն: Պատմական աղանդների դեպքում էլ այս սկզբունքը նույնն էր. Մոնտանը մոնտանականների համար, Արիոսը՝ արիոսականների, Պողոս - Սամոսատցին՝ պավլիկյանների և այլն:

Հնազանդությունն այդ հեղինակներին անհրաժեշտ պայման է, առանց որի համայնքը կամ շարժումը չի գոյատևի: Հեղինակությունները երբեք չեն սխալվում, նրանք հայտնում են երկնային կամքը մարդկանց, - այս է աղանդավորների ընկալումը: Շատ միա-

[15] Աղանդներին բնորոշ այս հատկանիշը շեշտում է նաև «A guide to cults and new religions»-ը, ավելացնելով, որ նրանց կարծիքով «ճշմարտությունը» հայտնված է միայն իրենց և իրենցից հեռացողների «փրկությունը» վտանգված է (Ronald Enorlt, A guide to cults and new religions, Illinois, 1983, էջ 18-19):

[16] Այդ աղանդների հիմնադիրները:

միտ անդամներ, մարդկանց իրենց հավաքներին հրավիրելիս, հաճախ են հորջորջում «Եկեք երկնային հաղորդում լսելու» դարձվածքը:

Հայտնի «պատվելի» Ջիմ Ջոնսը, Ջոնսթաունում իրենց վերջին պաշտամունքի ժամանակ (1978 թ.) հաղորդության գինուն խառնելով ցիանիստական կալիում՝ մասսայական ինքնասպանության դրդեց համայնքին, որպեսզի, նորից հարություն առնելով, նրանք իրենց սիրելի Ջիմի հետ Թագավորության մեջ լինեն: Այս «ապոկալիպտիկ»[17] աղանդը եզակիներից չէր. 1993 թվականին «Դավթի սերունդ» աղանդի անդամները տեխասյան Ուեյկոյում ինքնակիզման ենթարկվեցին: Երբ փորձում էին մայրերի ձեռքից խլել երեխաներին, այդ մայրերը չէին թողնում, ամուր գրկելով՝ նրանք պահում էին երեխաներին և նետվում էին կրակը: Ո՞ւր էր կորել նրանց մայրական զգացմունքը, մի՞թե այն չկար, արդեն վերացել էր: Իհարկե՝ ո՛չ: Նրանք հավատում էին, որ իրենցից դուրս սատանայի իշխանությունն է, որ իսկական կրակն այնտեղ: Եվ եթե երեխան չայրվի, այլ փրկվի, ապա նա կվառվի իսկական կրակում՝ դժոխքում:

Զ. Վախճանաբանական հիվանդությունը: Այս հիվանդությամբ տառապել են սկսած առաքելական ժամանակներից: Ընդհանրական Եկեղեցին միշտ էլ բախվել է նման «ապոկալիպտիկ» շարժումների հետ համարյա բոլոր դարերում: 19-րդ դարի ներկայացրած վախճանի տարեթվերի հիմնավորումը կրկնությունն էր 10-11 դարերի (1-ին հազարամյակի ավարտի) վախճանաբանական հաշվարկների: Այն, ինչ Ս. Գիրքը փակել էր, որպեսզի ոչ մեկը չիմանա, հենց այդ էլ ուզեցին իմանալ Ռասելը, Միլլերը և ուրիշներ:

Է. Նոր հայտնություններ: Ս. Գրքին լրացնող ու ինչ որ տեղ նաև այն շրջանցող նոր հայտնությունների և նոր «աստվածաշունչ» գրքերի երևան գալը բնորոշ է համարյա բոլոր աղանդներին:

Պատմական մոնտանականները, իրենց առաջնորդ Մոնտանին և նրա հետևորդներ՝ Մաքսիմիլլային ու Պրիսկիլլային (ի միջի այլոց երկուսն էլ կին) հռչակեցին որպես նոր մարգարեներ և Հիսուսի խոստացյալ Մխիթարիչի (պարակլետ[18]) մարմնավորումներ: Նրանք ընկնելով մտահափշտակության մեջ (էքստազ) մարգարեանում էին, որոնց ասածներն էլ գրի էին առնվում անդամների կողմից և այդ ընդունվում որպես վերջին՝ աշխարհի վախճանին պատրաստվելու համար անհրաժեշտ կատարյալ հայտնություններ: Նրանք հավատում էին, որ ինչպես Հիսուս լրացրեց Հին Կտակարանը, աշխարհին տալով Նոր Կտակարանը և առաքյալներին, այդպես էլ այս նոր պարակլետը՝ Մոնտանը, աշխարհին պիտի տա մի երրորդ՝ ավելի կատարյալ հայտնություն, որն ավելի բարձր է, քան Հին և Նոր Կտակարանները և առաքյալներ՝ Մաքսիմիլլային ու Պրիսկիլլային:

19-րդ դարում նույնը էկլեկտիկորեն կրկնվեց. 19-րդ դարի Մոնտանը՝ Սմիթը տվեց իր նոր հայտնությունը՝ Մորմոնի գիրքը և հիմնեց իր եկեղեցին, որպես վերջին օրերի սրբերի Հիսուս Քրիստոսի եկեղեցի: Անշուշտ, Սմիթը, ինչպես հայտնի է չուներ բավա-

---

[17] Ապոկալիպտիկ - Նոր Կտակարանի վերջին գրքի՝ Հայտնության գրքի հունարեն անվանումից (apokalipsis): Ապոկալիպտիկ աղանդների քարոզչությունների առանցքը՝ վերջին օրվա՝ աշխարհի վախճանի և դրա հետ կապված հարցերն են:

[18] Հովհ. 14.16-ում խոստացված Մխիթարիչը (հունարեն՝ parakletos):

բար կրթություն, որպեսզի տեղյակ լիներ վաղ միջնադարի մոնտանականների մասին, բայց նրա հիմնած շարժումը գերճշգրիտ պատճենումն է այդ շարժման:

Ը. Բացահայտ ձգտում դեպի Հին Կտակարան, ինչ-որ տեղ շրջանցելով Նոր Կտակարանը:

Թ. Նախնական Եկեղեցու կամ Առաքելական ժամանակների Եկեղեցու միակ իրավահաջորդը հռչակելը:

Ժ. Գործունեության տարածումը սկսում են հիմնականում 18-25 տարեկանների շրջանակներում: Այսինքն, նրանց համար ռազմավարական նշանակություն ունեն դպրոցները, ԲՈՒՀ-երը և, որպես կանոն, այնտեղից էլ սկսում են իրենց գործունեությունը, իսկ թե ինչ նշանակություն ունի հասարակության այդ խավը որևէ պետության, ժողովրդի համար ինքնին հասկանալի է:

Բողոքական շարժման սկզբնավորման ժամանակներում առաջադրվեցին մի քանի խնդիրներ, որոնցից էլ, սկզբունքորեն, առաջացան և մինչ այսօր էլ առաջանում են նորանոր ուղղություններ ու կրոնական հոսանքներ:

Այսպես, լյութերականները գտնում են, որ մարդ կարող է փրկվել միայն հավատով՝ Աստծու ողորմությամբ: Նրանք մերժում են սրբերի բարեխոսությունը, բարի գործերը առանց Աստծու ողորմության որևէ արժեք չեն ներկայացնում, ամեն մարդ ինքն է գտնում իր ճանապարհը դեպի Աստված:

Կալվինականները գտնում են, որ փրկությունը միայն Աստծու ողորմությամբ է, Նրա նախասահմանությամբ, և ամեն մարդ՝ դեռ չծնված, սահմանվել է Աստծու կողմից, ու որոշված է, թե ուր պիտի նա գնա՝ դրախտ թե դժոխք: Մարդկային ոչ մի ջանք ի զորու չէ փոխել այդ որոշումները:

Որպես ներշնչման աղբյուր ընդունում են միայն Ս. Գիրքը և ամեն մի անդամ իրավասու է մեկնել Ս. Գիրքը:

Խորհուրդների թիվը (Ուղղափառ Եկեղեցիների կողմից ընդունված է յոթը) երկուսն է՝ մկրտություն ու հաղորդություն, որոնց մասին միայն Ս. Գրքում բացահայտ ակնարկություն կա:

XVI-XV դդ. Եվրոպայում հալածանքի ենթարկվելով, բնականաբար, այս շարժումները պիտի տարածվեին այլ երկրներ՝ որն էլ հանդիսացավ նոր հայտնաբերված ամերիկյան մայրցամաքը և, բնականաբար, դարձավ վերջին ժամանակների՝ XIX-XX դդ. աղանդների օրրանը:

Այսօր Հայաստանում մեղվի նման ժրաջանորեն գործում են հոգեգալստականները, Եհովայի վկաները, նոր են սկսել գործել մորմոնները, ձգտում են իրենց գտնել մունիստները, ավելի չափավոր են գործում ադվենտիստները, արևելյան և օկուլտ ուղղությունները դեռ սահմանափակում են իրենց «ինտելեկտուալ» շրջանակներում: Ժամանակագրական տեսակետից այդ ուղղությունների ծագման պատմությունը թերևս այդպիսի կարգ չի ունեցել:

Առաջին «մեծ տրոհումը» սկսվեց 1830-ականներին ամերիկյան մայր ցամաքում՝ - Ժոզեֆ Սմիթի՝ մորմոնների երևան գալով: Այդ դասական օրինակ է բոլոր աղանդների համար, որոնք հիմնականում էկլեկտիկորեն որդեգրեցին Սմիթի գործելակերպը:

Ադվենտիստների հիմնադիրը՝ Միլլերը, Քրիստոսի Բ գալստին առընչվող հարցերը քննարկելիս առճակատման մեջ մտավ մկրտչական եկեղեցու հետ, որի անդամն էր ինքը: Նշանակելով Գալստյան կամ աշխարհի վախճանի համար իր հաշվարկած ժամկետը, նա ամեն անգամ նոր հայտնություններ և տեսիլքներ էր ստանում, ուր մեկնաբանվում էր, թե ինչու դա այդպես չեղավ կամ ինչու է այդպես եղել և այլն: Համոզվելով, որ իրենց գուշակությունները չեն համապատասխանում իրականությանը, ադվենտիստները որակական փոփոխություն մտցրեցին Բ գալստին վերաբերող հարցերի մեջ: Օգնության եկավ մեծ մարգարեուհին՝ Ելենա Ուայթը, որի հայտնություններից պարզվեց, որ Քրիստոսի Երկրորդ գալուստը արդեն տեղի է ունեցել, Նա իջել է երկնային Սրբարան (Եբր. 8. 1-3), ուր սկսել է դատական հետաքննությունը: Ծայրահեղ ադվենտիստները չհամաձայնվելով նման փոփոխությանը, և ադվենտիստ Ռասելի շնորհիվ աշխարհը ստացավ Եհովայի վկաների առաջնորդին: Ադվենտիստներն ավելի ճկուն էին. ստեղծված իրավիճակից շատ հմտորեն դուրս գալով, նրանք հիմնվեցին Ուայթի տեսիլքների վրա և շարժումը տեղափոխեցին հրեական շաբաթի հորձանուտ, սակայն դարձյալ չկարողացան ազատվել «ադվենտիստ» բառից, որ գալստական է նշանակում:

Եհովայի վկաների հիմնադիրը չհաշտվելով Բ Գալստի, իր մարգարեությունների և - հաշվարկների չիրականանալու հետ, սկսեց իր հաշվեհարդարը ոչ միայն Քրիստոսի հետ, այլև Քրիստոնեության հետ ընդհանրապես: Իր յոթհատորյա երկերում նա Սուրբ Գրքից դեն նետեց ամեն գաղափար, որ իր համար անընդունելի էր և հիմնեց «սուրբ գրոց ուսումնասիրությունների» իր ընկերությունը, այդպիսով մի այլ ուղիով տանելով շարժումը:

Հոգեգալստական կամ խարիզմաթ շարժումը Հայաստանում ներկայացնում են մի քանի տասնամյակ առաջ Ուկրաինայից, Մերձբալթյան երկրներից եկած հայ դավանափոխները, որոնք հայ բողոքականներից անջատվելով հիմնեցին այդ շարժումը: Վերջին ժամանակներում դրանց ավելացան նաև «Ճշմարտության» հետևորդները, որոնք նույն հոգեգալստական կամ Պենտեկոստական շարժման տարատեսակներից են՝ լրացնելով Հայաստանի աղմկոտ այդ շարժումը:

Վերջում մեկ «կառուցողական» սկզբունքի մասին, որն ընդհանուր է թե՛ հոգեգալստականների, թե՛ Եհովայի վկաների և թե՛ այլ շարժումների համար: Դա «կտրելու» սկզբունքն է, որը մոտավորապես նման է «նզովքին»:

Բնական է, որ աղանդավորական կառույցները ամրապնդելու ու կայուն դարձնելու համար պետք են խիստ կազմակերպչական օրենքներ: Հակառակ դեպքում այդպիսի կառույցները կփլուզվեն:

Այսպես, եթե որևէ մեկը սկսում է ինքնուրույն մտածել կամ իր սեփական կարծիքն է հայտնում, որն ընդունված չէ համայնքի կողմից, նրան աստիճանաբար մեկուսացնում

են, ու, եթե չի խրատվում, «կտրում են», այսինքն հեռացնում են եկեղեցուց: Արգելվում է կտրվածին բարև տալ, տուն հրավիրել, նրա տուն գնալ, նրա հետ հաց ուտել և այլն: Ավելին, նրանք հավատում են, որ կտրվածին պետք է Աստված էլ «կտրի»:

Այս առումով ավելի ծայրահեղ են Եհովայի վկաները: Նրանց առաջնորդներից Ֆրեդերիկ Ֆրանցը գործածության մեջ դնելով «կտրելու» սկզբունքը՝ ամրապնդեց կառույցի՝ Բրուկլինյան տաճարի[19] կայունությունը: Ավելին, նրանք սկսեցին քարոզել, որ եթե մեկը տեսնի իր եղբոր մեղքը և չհայտնի այդ մասին վերադասին, այդ մեղքը կմնա իր վրա: Այդպես ամեն մի անդամի փոքրիկ մեղքի մասին տեղեկանում էին Նյու Յորքի արվարձանում գտնվող տաճարում: Այնպես որ կտրված Եհովայի վկայի մասին ամբողջ աշխարհը ամեն ինչ գիտի, նրան չեն տեսնում, նա չկա իրենց համար, նա «չգոյ» է: Պատկերացրեք մի պահ, որ այդ կտրվածը մի ընտանիքի անդամ է, ուր բոլորը Եհովայի վկաներ են...

[19] Նյու Յորքի արվարձանը, ուր գտնվում է Եհովայի վկաների կենտրոնակայանը:

## II. ՄՈՐՄՈՆՆԵՐ ԿԱՄ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ ԵԿԵՂԵՑԻ

Մորմոնականությունը որպես կրոնական շարժում և Ժոզեֆ Սմիթը՝ որպես այդ շարժման հիմնադիր, աղանդավորական շարժումների առաջացման փայլուն օրինակ են հանդիսանում: Այդ պատճառով այս գլխում մանրամասնորեն նկարագրվում է շարժման յուրահատուկ գծերը, նրա «սրբազան» գրքերի պատմությունը, բովանդակությունը, վարդապետության առանձնահատկությունները: Մորմոնականությունը բացառիկ ուշադրություն է դարձնում բնագիտական պատկերացումների վրա, ձգտում է ցույց տալ և ապացուցել իրեն «սրբազան» գրքերում ամփոփված բնագիտական տվյալների ճշմարտացիությունը: Այդ իսկ պատճառով բնագիտական տեսանկյունից ևս ներկայացվում են այդ հարցերը, ցույց է տրվում մորմոնական «բնագիտության» խոցելի կողմերը:

### 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Երբևէ գոյություն ունեցած աղանդներից ամենազարմանալին ու ամենաարտասովորը մորմոնական շարժումն է: Ծնունդ առնելով Ամերիկայում, այն եղավ դրոշակակիրը ամերիկյան կրոնական շարժումների: Մորմոնականությունը նախապետն է այսօրվա գործող կրոնական ուղղությունների, մանավանդ որ նրանց աճի տեմպերը այնպիսի զարմանալի ցուցանիշեր ունեն, որ այն անտեսել չի կարելի: Սկսելով 1830-ական թվականներին ընդամենը մի քանի հոգով, այսօր նրանց շարքերում հաշվվում է մոտ վեց միլիոն անդամ:

Մորմոն եկեղեցին երկու հիմնական ճյուղավորում ունի. Հիսուս Քրիստոսի վերջին օրերի սրբերի եկեղեցին՝ Յութայի Սոլթ Լեյք Սիթիում և Վերափոխված Հիսուս Քրիստոսի վերջին օրերի սրբերի եկեղեցին՝ Միսսուրիի Ինդիփենդանսում: Վերջինն ավելի արմատական է որոշ հարցերում, բայց թվով զիջում է առաջինին: Լինելով բավականին հարուստ եկեղեցի, նրանք շատ մեծ ակտիվությամբ են գործում և լուրջ մրցակից են համարվում միսիոներական[20] բոլոր շարժումների համար:

Մոտավոր տվյալներով նրանք այսօր ունեն 50.000 գործունյա անդամներ, որոնք զբաղվում են միայն ավետարանչությամբ (այսինքն՝ մորմոնականութան տարածմամբ): Եթե այն համեմատենք Հայ Առաքելական Եկեղեցու հոգևորականների թվի հետ, ապա կստացվի հետևյալ պատկերը.

Մորմոն ավետարանիչների թիվը՝ 50,000

Մորմոնների ընդհանուր թիվը (1994 թ. տվյալներով)՝ 6 միլիոն

Հայերի թիվն աշխարհում՝ 6-7 միլիոն

Հայ հոգևորականների թիվը, ամենակոպիտ հաշվարկներով՝ 2,000-ից ոչ ավել:

---

[20] Որևէ կրոնական շարժման քարոզչության շրջանակների ընդլայնումը այլ ազգերի մեջ: Հնում միսիոներական շարժումները տարածում էին իրենց գործունեության շրջանակները ոչ քրիստոնյա ազգերի և պետությունների մեջ, մինչդեռ ներկայի աղանդավորները ջանում են տարածվել հիմնականում քրիստոնյա ազգերի մեջ:

Իսկ սա նշանակում է, որ մորմոնների հոգևոր ծառայության մեջ ընդգրկվածները թվով մոտ քսան անգամ գերազանցում են հայ հոգևորականներին, և հասկանալի է, թե ինչ անլուծելի խնդիրների առաջ կկանգնենք շատ մոտ ապագայում:

Մորմոնների ներխուժումը Հայաստան սկսվեց 1988 թվականից հետո, երբ զանազան բարեգործությունների անվան տակ մորմոններն էլ հաստատվեցին մեզանում:

Մորմոնները վերին աստիճանի մաքրակենցաղ են, հրաժարվում են ծխախոտից, չեն օգտագործում ոգելից և ոչ ոգելից զանազան խմիչքներ, անգամ՝ զովացուցիչ հեղուկներ (կոկա-կոլա, պեպսի-կոլա, ֆանտա և այլն):

Մորմոնների աստվածաբանությունը խճճված մի հանգույց է, և այն պարզորեն պատկերացնել իրենք էլ չեն կարողանում, քանի որ ակնհայտ հակասությունները, վրիպակները, իրարամերժ դրույթները դժվարությամբ են քողարկվում: Դրան հակառակ ծիսական արարողությունները, հրահանգները, պատվիրանները շատ հստակ են ձևակերպվում:

Չնայած որ մորմոնների պաշտոնական անվանման մեջ առկա է «Հիսուս Քրիստոս» հատուկ անունը, նրանց կրոնը բավականին հեռու է քրիստոնեությունից, քրիստոնեական տարրերն էլ այնքանով են ընդունելի նրանց աստվածաբանների կողմից, որքանով որ դրանք չեն հակասում Ժոզեֆ Սմիթ մարգարեի հայտնություններին: Ավելին, քրիստոնեական դավանաբանությունից միայն անվանումներն են փոխանցվել սմիթյան աստվածաբանության մեջ: Այս առումով էլ դժվարություններ են ծագում նրանց հետ հաբաբերվելիս, քանի որ միևնույն տերմինների տակ տարբեր բաներ են հասկացվելու:

Մորմոն դավանանքին հատուկ է էկլեկտիկորեն ընդօրինակելը և այն նույնությամբ այլ տեղերում և պայմաններում հարմարեցնելը: Օրինակ հայտնի է, որ Ս. Գիրքը պատմականորեն կապված է Հին աշխարհի ժողովուրդների, երկրների, աշխարհագրության, հավատալիքների հետ, և այդ ցանկում Նոր աշխարհը՝ ամերիկյան մայրցամաքը բացակայում է: Հենց այստեղ էլ ի հայտ է գալիս Ժոզեֆ Սմիթի հայտնությունների առանցքը. ամերիկյան մայրցամաքն էլ պիտի ունենա իր ս. գիրքը, իր նախապատմությունը, իր Երուսաղեմը, իր Սիոնը և այլն: Այդպես էլ եղավ. Մորմոնի գիրքը փոխարինեց Ս. Գրքին, ուր տրվեց Նոր աշխարհի նախապատմությունը՝ հին ժամանակներից սկսած, նկարագրվեց նոր Երուսաղեմը և Սիոնը, որը տեղադրվեց Նյու Յորքի նահանգում:

Այդ նույն սկզբունքով էլ վերաբնակեցվեց Տիեզերքը: Մորմոն վախճանաբանության համաձայն, փրկված մորմոնը դառնում է մի նոր աստված ու տեղափոխվում անծայրածիր Տիեզերքի որևէ, նախօրոք որոշված մոլորակ, հիմք է դնում մի նոր քաղաքակրթության, դառնալով Ադամ այդ աշխարհի համար: Եվ այս վերաբնակեցումը շարունակվում է անվերջ:

Մորմոնների ավետարանչության հիմնական սկզբունքներն են այդ գաղափարների տարածումը, որպես նորագույն աստվածային հայտնություններ, որոնք մինչև Ժոզեֆ Սմիթը թաքնված էին եղել մարդկանցից: Մորմոնի գիրքը հենց այդպիսի վերնագիր էլ ունի. «Մորմոնի գիրք, նոր հայտնություններ (կամ տեղեկություններ) Հիսուս Քրիստոսի մասին»:

Մորմոն եկեղեցին առանձնահատուկ ուշադրություն է դարձնում նորադարձների՝ եկեղեցուն անդամագրված նոր անդամների վրա: Դրանով է բացատրվում նրանց եկեղե-

ցու անդամների թվի աճի բարձր ցուցանիշը: Մորմոն եկեղեցու ներկայիս ղեկավարներից մեկը՝ Մ. Բալլարդը գրում է. «Մորմոն եկեղեցու Բարձրագույն իշխանությունը լրջորեն մտահոգված է ամեն մի նորադարձ անդամի բարեկեցությամբ: Ոչ մի համայնք չպետք է թույլ տա, որ նորադարձը իրեն անվստահ զգա՝ եկեղեցու իր անդամակցությամբ»[21]: Բոլոր նրանց, ովքեր զուրկ են այդ վերջին օրերի հայտնություններից, մորմոնները անվանում են հեթանոսներ:

## 2. ԺՈԶԵՖ ՍՄԻԹ ԿՐՏՍԵՐԸ ԵՎ ՄՈՐՄՈՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ

Ժոզեֆ Սմիթը ծնվել է Վերմոնթ նահանգի Շարոն քաղաքում 1805 թվականի դեկտեմբերի 23-ին: Նա է ստեղծողն ու առաջին նախագահը մորմոն եկեղեցու՝ որի ծնունդը կարելի է համարել 1830 թվականի ապրիլի 6-ը:

Ըստ Սմիթի կենսագիրների նրա հայրը գանձ որոնող էր: Այդ տարիներին ոսկու տենդը շատ էր տարածված Ամերիկայում:1

820 թվականին, երբ նա ընդամենը 15 տարեկան էր, սկսվում է մի նոր շրջան Սմիթի համար. նա սկսում է հայտնություններ ու տեսիլքներ ունենալ: 1820 թվականի տեսիլքների մասին, ի միջի այլոց, նա հետո է գրել:

Անտառում, ուր նա աղոթում էր, նրան են հայտնվում Հայր Աստված ու Հիսուս Քրիստոս: Նրանք հայտնում են Ժոզեֆ Սմիթին, որ այս աշխարհում գոյություն ունեցող և ոչ մի եկեղեցի ճշմարիտ չէ և հաճելի չեն իրենց և միայն նա՝ Սմիթը կարող է վերահաստատել ճշմարտությունը և նա՝ Սմիթն է լինելու նոր մարգարեն այդ նորագույն՝ վերջին օրերի հայտնությունների:

«Ես արդեն տասնհինգ տարեկան էի: Հորս ընտանիքը համակրում էր երիցականներին: Ընտանիքից չորսը՝ մայրս՝ Լյուսին, Հայրում և Սեմուել-Հարիսոն եղբայրներս և - քույրս՝ Սոֆրոնիան անգամ, անդամ էին այդ աղանդին:Ես հաճախ ինքս ինձ հարց էի տալիս. «Ի՞նչ պետք է անել, եղած խմբերից որո՞նք են ճշմարիտ և որո՞նք՝ սխալ: Եթե անգամ դրանցից որևէ մեկը ճիշտ է, ապա ինչպե՞ս կարելի է իմանալ այդ մասին»:

Հոգեկան այդպիսի վիճակում գտնվելով, ես ընթերցեցի Հակոբոսի ընդհանրական թուղթը. «Բայց եթե մեկը ձեզանից իմաստության պակասություն ունի, թող խնդրի Աստծուց, որ ամենին տալիս է առատությամբ և չի նախատում, և կտրվի նրան» (Հակոբոս, 1, 5):

Սուրբ Գրքի որևէ հատված թերևս երբեք այնպիսի ազդեցություն չի ունեցել որևէ մարդու, ինչպես դա այն ժամանակ ունեցավ ինձ վրա» (1, էջ 2):

Այս համարը (Հակոբոս 1, 5) այն հիմնական համարն է, որին, որպես կանոն, միշտ մատնացույց են անում բոլոր աղանդավորները: Նրանք, ելնելով դրանից, քարոզում են, որ բոլորն էլ պակասել են իմաստությունից, քանի որ չեն հավատում կամ հետևում իրենց, և պետք է խնդրեն, որ Աստված իմաստություն տա: Սմիթն էլ բացառություն չէր: - Նա շարունակում էր խնդրել, որ իմաստություն ստանա:

---

[21] Տե՛ս Մորմոն եկեղեցու պաշտոնական ամսագիրը՝ Лиахона, январь, 1999, էջ 7:

1825 թվականին Սմիթն իր երկրորդ տեսիլքն է տեսնում: «Ես շարունակում էի հալածվել հասարակության թե՛ հավատացյալ, թե՛ անհավատ խավերի կողմից: Հալածում էին, որովհետև ես չէի հրաժարվում իմ տեսիլքից:

Եվ այսպես, վերը նշված թվականի սեպտեմբերի 21-ի երեկոյան քնելու պատրաստվելով, ես երեկոյան աղոթք ասելով Ամենակարող Աստծուն, նրան խնդրեցի ներել իմ մեղքերն ու զանցանքները ու նաև իր ցուցումները ուղարկել՝ որպեսզի ես կարողանամ իմանալ իմ դիրքը և վիճակը Նրա առաջ: Ես վստահ էի, որ կստանամ այդ ցուցմունքները ճիշտ այն ձևով, ինչ ձևով նախկինում արդեն ստացել էի:

Մինչ ես աղոթքով դիմում էի Աստծուն, նկատեցի, որ աստիճանաբար պայծառացող ինչ որ լույս հայտնվեց սենյակում: Քիչ անց սենյակս այնքան լուսավոր էր, որ կարծես կեսօր լիներ: Անկողնուս առջև հանկարծ մի անձնավորություն հայտնվեց: Թվում էր, թե նա կանգնած է օդում, քանի որ ոտքերը չէին դիպչում գետնին» (1, էջ 8):

Այս տեսիլքն աստիճանաբար իմաստություն է տալիս Սմիթին, պատրաստում նրան այն մեծ առաքելությանը, որի համար ինքը՝ Սմիթը նախօրոք ընտրված էր:

Համեմատելով այդ տեսիլքը Մովսեսի կանչի դրվագի հետ, պարզ երևում է այդ երկու պատմությունների նմանությունը: Այստեղ Մովսեսի անձը ուղղակի փոխարինված է Սմիթի անձով (Ելք, գլուխ 3):

Այս տեսիլքի երկրորդ մասն ամենակարևորն է. պարզվում է, որ ոսկե թերթերի՝ սալիկների վրա գրված մի գիրք կա, որը պետք է թարգմանի Սմիթը, ընդ որում այն գրված է հին վերափոխված եգիպտերենով[22]: Թարգմանության համար էլ այնտեղ կան երկու քարեր՝ Ուրիմն ու Թումիմը, որոնց միջոցով Սմիթը պիտի վերծանի ոսկե սալիկները: Բայց դեռ այդ օրը չի հասել: Ինչպես Մովսեսի դրվագում, այստեղ էլ Սմիթին թույլ չտրվեց անմիջապես իր առաքելությանն անցնել: Մովսիսյան քառասուն տարիները այստեղ փոխարինվեցին մի քանի տարով: «Նա տվեց իմ անունը և ասաց, որ իրեն կոչում են Մորոնի և ինքը Աստծու կողմից ուղարկվել է ինձ հայտնելու այն մասին, որ Աստված առաքելություն ունի ինձ հանձնարարելու, և որ իմ անունը հավետ կհիշվի բոլոր ազգերի, ցեղերի, ժողովուրդների մեջ՝ մարդկանց ստիպելով իմ մասին պատմել և լավը և վատը:

Նա ասաց, որ ոսկե թերթերի վրա գրված մի գիրք կա պահված, որը պատմում է այս մայրցամաքի հնագույն բնակիչների և նրանց ծագման մասին: Հավերժական Ավետարանի լրիվությունը, ասաց նա, ամփոփված է այդ գրքում այն ձևով, ինչ ձևով Փրկիչը հանձնել է այս մայրցամաքի հնագույն բնակիչներին» (1, էջ 9-11):

Այս պատմության մեջ երկնային սուրհանդակը հեռանում է մի որոշ ժամանակ և հետո կրկին ետ վերադառնում.

«Պառկած մնալով, ես սկսեցի մտորել այս պատահարի եզակիության վրա՝ մեծապես զարմանալով սուրհանդակի հայտնած բաների վրա: Իմ մտորումների մեջ հանկարծ զգացի, որ սենյակս սկսում է վերստին լուսավորվել և շուտով երկնային սուրհանդակը հայտնվեց անկողնուս առաջ:

[22] Համաձայն Մորմոն 9.32 համարի այդ երևակայական լեզվով գրվել է Մորմոնի ամբողջ գիրքը: «Մենք գրեցինք այս տարեգրությունը՝ ըստ այդ գրերի մեր իմացության, որոնք մեզանում կոչվում է վերափոխված եգիպտական լեզու»:

Առանց որևէ փոփոխության նա սկսեց կրկնել այն ամենը, ինչ ասել էր ինձ իր նախորդ այցելության ժամանակ: Հետո նա ինձ տեղեկացրեց այն մեծ դատաստանների մասին, որոնք սպառնում են երկրին» (1, էջ 11):

Այս միջանկյալ հայտնությունն ուներ մի նպատակ, ցույց տալ Սմիթին, թե ինչպիսի մեծ արհավիրքներից նա պիտի փրկի երկիրը: Այդ պատգամը բերելուց հետո դարձյալ սուրհանդակը համբառնում է երկինք: Եվ վերջապես, այդ նույն գիշերը երրորդ անգամ է սուրհանդակը հայտնվում Սմիթին.

«Զարմանքս հասավ գագաթնակետին, երբ երրորդ անգամ երկնային սուրհանդակը հայտնվեց իմ առաջ՝ վերստին ինձ պատմելով այն ամենը, ինչ որ ասել էր իր առաջին հայտնության ժամանակ: Նա նախազգուշացրեց, որ Սատանան կփորձի գայթակղեցնել ինձ՝ սեփականացնելու համար այդ թերթերը և դրանց միջոցով հարստության հասնելու:

Վերջում նա նորից վեր բարձրացավ՝ ինձ թողնելով խորհրդածել տեսածիս ու լսածիս արտասովորության վերաբերյալ: Նրա անհետանալուց շատ չանցած աքաղաղը կանչեց՝ ազդարարելով նոր օրվա սկիզբը և ես տեսա, որ արդեն առավոտ է, և ինձ պատահած հայտնությունը տևել է ողջ գիշեր» (1, էջ 12):

Այսպես սկսում է մի նոր տարեգրություն Սմիթի կյանքում, մի նոր առավոտ, երբ նա մի գիշերվա ընթացքում լուսավորվելով և ստանալով երկնային իմաստությունը, պիտի սկսեր իրագործել երկնային պատվերները: Այս դեպքից հետո, Սմիթը, համաձայն իր տեսիլքի, գնում և գտնում է այդ պահված գանձը այնպես, ինչպես իրեն հայտնվել էր: - Բայց բացել այդ սնդուկը և տեսնել թերթերը, նրան արգելվում է:

«Հողը հեռացնելուց հետո ես մի լծակ վերցրի և այն մտցնելով կափարիչի տակ՝ մի փոքր ճիգ գործադրելով այն բարձրացրի: Սնդուկի ներսը զննելով ես իրոք գտա թերթերը, Ուրիմն ու Թումիմը և լանջապանակը՝ ինչպես որ երկնային սուրհանդակը ինձ ասել էր: Ես փորձեցի դուրս հանել սնդուկի պարունակությունը: Երկնային սուրհանդակը հայտնվելով ինձ արգելեց այդպես վարվել՝ ասելով, որ դրա ժամանակը դեռ չի եկել և այն կգա ուղիղ չորս տարի հետո» (1, էջ 13):

Եվ այդ չորս տարին բավական եղավ պատրաստելու Սմիթին՝ իրագործելու համար իր վրա դրված առաքելությունը: Նրան սովորեցրեցին «խելք և իմաստություն՝ բացատրելով Տիրոջ մտադրությունները իր թագավորության վերջին օրերին կառավարելու վերաբերյալ»:

Վերջապես, երբ անցավ չորս տարին, Սմիթին թույլ տրվեց բացել սնդուկը:

«1827 թվականի սեպտեմբերի 21-ին սովորականի նման գնալով թերթերի գտնվելու վայրը, ես այնտեղ նորից տեսա երկնային նույն սուրհանդակին, որը պահված իրերը ինձ հանձնելով պատվիրեց, որ ես անձնապես պատասխանատու լինեմ դրանց համար:

Աստծու նախախնամությամբ ես կարողացա թերթերը ինձ մոտ պահել այնքան ժամանակ, մինչև վերջացրեցի ինձանից պահանջվող գործը և երկնային սուրհանդակը եկավ դրանց ետևից» (1, էջ 14):

Ոսկե հորթի հայտնի պատմության մեջ (Ելք, գլուխ 32) երկու անգամ շեշտվում է այն փաստը, որ վկայության երկու տախտակները Աստծու ձեռքի գործն են: «Տախտակները Աստծու գործն էին: Տախտակների վրա Աստված էր գրել» (Ելք, 24.12, 32.16): Եվ հենց այդ

աստվածակերտ տախտակները կոտրվեցին ոսկե հորթի պատճառով: Բայց Աստված - Մովսեսին հրամայեց նորից պատրաստել տախտակներ՝ առաջվա նման (34.1-2), որի վրա դարձյալ Աստված պիտի գրեր օրենքը (34.27): Այս սկզբունքը, որն պայմանականորեն կարելի է կոչել երկրորդման սկզբունք, բնորոշ է շատ կրոններին, մանավանդ ժամանակակից աղանդներին:

«Թերթերը ես հանձնեցի սուրհանդակին և դրանք նրա մոտ են մնում մինչև այժմ» (1, էջ 14):

Այսինքն, աստվածային հայտնության բնագրերը չկան, վերացվել են երկին և դրանց միակ ճշգրիտ պատճենը՝ Սմիթյան տարբերակն է, որն այսուհետև բնագրային արժեք է ներկայացնում: Սա ճիշտ երկրորդման սկզբունքն է. աստվածային նախախնամությամբ պահված թերթերը տրվեցին միայն Սմիթին, ինչպես Մովսեսին տրվեց Օրինաց տախտակների առաջին օրինակը, ապա նրանք վերցվեցին և մնաց միայն Սմիթի ձեռակերտ տարբերակը, ինչպես Մովսեսի ձեռքով պատրաստած տախտակները: Տարբերությունն այն էր, որ Մովսեսը օրենքը թարգմանելու կարիք չուներ:

Այս սկզբունքն ավելի բացահայտ առկա է նաև իսլամական ավանդության մեջ: Սմիթյան պատմությունը այնքան նման է Ղուրանի ստացման իսլամական ավանդությանը, որ կարծես երկու սցենարն էլ նույն մարդու կողմից գրված լինի:

Ղուրանի բնագիրը, իսլամական ավանդության համաձայն, գրված է արաբերեն լեզվով և պահվում է յոթներորդ երկնքում՝ Ալլահի գահի տակ: Ջեբրայիլ հրեշտակապետը այն աստիճանաբար հայտնում է Մուհամեդին, որն էլ այն հայտնում է մարդկանց: Նմանությունն ակնհայտ է. արաբերեն բնագիրը փոխված է ինչ որ վերափոխված եգիպտական լեզվով, մանավանդ որ իր կենսագրության մեջ Սմիթը նշում է ոսկե թերթերի «եգիպտական, քաղդեական և արաբական լինելը» (1, էջ 16): Բնագիրը այսօր չկա, տեղափոխված է երկինք, Մորոնի-Մորմոն զույգն էլ փոխարինելու են եկել Ջեբրայիլին:

Ավելին, շիայական ալ-ղայբայով ներծծված է սմիթյան ողջ շարժումը: Ալ-ղայբան իմամի[23] անհետացումն է, բայց ոչ վերացումը, ընդ որում անհետացած իմամը շարունակում է ղեկավարել «ուղղափառ հետևորդներին» համայնքի առաջնորդի՝ իմամի միջոցով, որն ամենօրյա կենդանի հաղորդության մեջ է գտնվում ալ-ղայբայում գտնվող իմամի հետ: Այսպիսով, եթե եկեղեցիները բոլորն էլ սխալ են, այսինքն, Հիսուսի խոստացյալ պարակլետը[24]՝ Սուրբ Հոգին չի գործում, ապա վերջին օրերում պետք է գործի Ժոզեֆ Սմիթ մարգարեն, որի միջոցով ճշմարտությունը հայտնվելու է մարդկությանը:

Եվ ինչպես Իսլամ ասելով հասկանում են Մուհամմեդին, այնպես էլ մորմոն եկեղեցի ասելով պետք է հասկանալ և պատկերացնել երկու անգլերեն բառ՝ Ժոզեֆ Սմիթ: Ժոզեֆ Սմիթից դուրս չկա մորմոն եկեղեցի և այդ եկեղեցու նպատակն էլ հենց այդ է՝ աշխարհին տանել նրան՝ Ժոզեֆ Սմիթին, նրա կյանքը, վարքը, մտքերը, հայտնությունները, տեսիլքները:

---

[23] Մահմեդական համայնքի առաջնորդն ու նրանց հավատի պահապանը: Թիվ 1 իմամն է համարվում Մուհամեդը, իսկ հաջորդ իմամները նրա՝ Մուհամեդի ժառանգներն են՝ խալիֆները: Համաձայն իսլամական ավանդության 12-րդ իմամը անհետացել է (ալ-ղայբա) և միայն աշխարհի վերջին նա կհայտնվի:

[24] Հովh. 14.16-ի պարակլետը հայ մատենագրության մեջ հանդիպում է նաև պառակղետոս ձևով: Միջնադարյան շատ աղանդապետեր, ելնելով այդ համարից, իրենց հռչակում էին պարակլետ:

Եվ այսպես, 1827 թվականի սեպտեմբերի 21-ին, Սմիթին տրվեցին ոսկե թերթիկները, որոնք նա պահեց իր մոտ մինչև 1838 թվականի մայիսի 2-ը, երբ նա թերթիկները հանձնեց երկնային սուրհանդակին:

Այս դեպքերից հետո՝ Սմիթն անմիջապես ձեռնարկում է ոսկե թերթերի թարգմանությունը՝ Ուրիմի և Թումիմի միջոցով, ինչպես ինքն է գրում.

«Բավականին թերթեր պատճենելուց հետո, Ուրիմի և Թումիմի օգնությամբ ես թարգմանեցի դրանցից մի քանիսը» (1, էջ 16): Այսինքն, Սմիթը ինքն էլ հստակ չի գրում, թե ինչպես է թարգմանել չիմացած լեզվով գրած թերթերը: Պարզ է, որ համենայն դեպս ոչ Շամպոլեոնի նման և ոչ էլ ռոզեթյան քարի[25] օգնությամբ: Այդպիսի մեթոդները ընդունելի չեն Սմիթի համար: Կենսագիրները նշում են երկու տարբերակ. մի դեպքում, երբ նա նայում էր այդ քարերի միջոցով՝ ինչպես ակնոց, անհայտ մեհենագրերը նա տեսնում էր հստակ անգլերենով և այն արտագրում էր, ընդ որում անգլերեն պատկերը չէր անհետանում այնքան ժամանակ, մինչև որ Սմիթը ամբողջը չէր արտագրում: Երկրորդ դեպքում Սմիթը Ուրիմը և Թումիմը պահում էր գլխարկի տակ, որն էլ դնում էր իր առաջ: -Նայելով գլխարկին՝ նա հասկանում էր այդ անհայտ թերթիկների բովանդակությունը և շարադրում էր այն անգլերենով: Երբ Սմիթը իր հայացքը կտրում էր գլխարկից՝ թերթիկների գրությունները անհասկանալի էին դառնում:

Այստեղ հատկանշական է հետևյալը. Սմիթը թարգմանում է մի բան, որը ոչ կարող էր կարդալ, ոչ էլ գիտեր բովանդակությունը: Բայց արդյունքում ստացվում է անգլերենով գրված գիրքը:

Ի վերջո, Նյու Յորքի մոտ գտնվող Կումորա լեռան մոտ երկնային տախտակները հայտնաբերելուց հետո, ինչպես և պետք է լիներ, Սմիթը ձեռնարկում է դրանց թարգմանության գործը:

Թարգմանության տարիներն են համարվում 1827-1829 թվականները, իսկ գրքի տպագրությունն ավարտվում է 1830-ին:

«Շուտով մեր հավատակից եղբայրներին մենք տեղեկացրեցինք, որ մեզ պատվիրվել է աշխատանքներ սկսել եկեղեցու հաստատման համար: Այս նպատակով Քրիստոսի ծննդից հետո 1830 թվականի ապրիլի 6-ին, մենք հավաքվեցինք Փիթեր Ուիթմեն Ավագի տանը: Մեր ժողովը բացվեց հանդիսավոր մաղթանքով առ մեր Երկնային Հայրը, որից հետո մենք, ըստ պատվիրված կարգի, սկսեցինք հարցնել հավատակից մեր եղբայրներին, թե նրանք արդյոք մեզ ընդունում են որպես Աստծո թագավորության վերահաստատողներ և արդյոք նրանք համաձայն կլինեն, որ մենք կարգի համաձայն սկսենք վերահաստատել եկեղեցին երկրի վրա» (1, էջ 25-26):

Եվ այդպես նրանք հիմնում են մի կրոնական միություն, եկեղեցին երկրի վրա, անվանելով այն «Քրիստոսի եկեղեցի», իսկ հետագայում՝ որպես «Վերջին օրերի սրբերի եկեղեցի» (1834 թ.) և վերջապես 1838 թվականին՝ «Հիսուս Քրիստոսի Վերջին օրերի սրբերի եկեղեցի»: Մորմոն եկեղեցու առաջին անդամները դարձան Մարտին Հարրիսը, -Դեյվիդ Ուիթմերը և Օլիվեր Քաուդերին, որոնց հայտնի վկայությունը դրվում է Մորմոնի

[25] Նապոլեոնի եգիպտական արշավանքի ժամանակ հայտաբերված ռոզեթյան արձանագրությունը հիմք ծառայեց Շամպոլեոնին վերծանելու եգիպտական մեհենագիր արձանագրությունները:

գրքի սկզբում: Ըստ նրանց վկայության, նրանք «Տեր Հիսուս Քրիստոսի և Հայր Աստծու կամքով տեսել են այն թերթերը, որոնք պարունակում են այն տարեգրությունը, որը պատմում է Նեֆիի ժողովրդի ու նաև Լամանացիների մասին, նրանց եղբայրների, նույնպես նաև Հարեդի ժողովրդի[26] մասին, որոնք առաջ եկան աշտարակից» (1, էջ 22):

Այդ զավեշտական վկայության համաձայն, նրանք երեքով աղոթել են Աստծուն, որ ցույց տա իրենց այն թերթերը, որոնցից թարգմանվել է Մորմոնի գիրքը: Եվ, անտառում երկար աղոթելուց հետո, Աստծու հրեշտակը իջեցնում է այդ երկնային թերթերը և նրանք համոզվում են դրանում:

Մորմոնի գրքի սկզբում դրվում է նաև հայտնի ութ հոգու վկայությունը՝ նույն բովանդակությամբ, թե ինչպես իրենք հայտնում են «աշխարհին, ազգերին, ցեղերին, ժողովուրդներին, լեզուներին, որ այս գործի (այսինքն՝ Մորմոնի գրքի) թարգմանիչն է Ժոզեֆ Սմիթ Կրտսերը», և որ այդ թերթերը ոսկուց էին և իրենք իրենց ձեռքով շոշափել և հավաստիացել են, որ նրա վրայի «փորագրությունները հետաքրքրական և հնագույն տեսք ունեն» և իրենք «ամենայն պատասխանատվությամբ» հավաստում են այդ: Այս վկայության տակ դրված է ութ հոգու անուն. Քրիսչեն Ուիթմեր, Ջեյքըբ Ուիթմեր, Փիթեր Ուիթմեր՝ Կրտսեր, Ջոն Ուիթմեր, Հայրըմ Փեյջ, Ժոզեփ Սմիթ՝ Ավագ, Հայրըմ Սմիթ, Սեմուել Սմիթ:

Մորմոն եկեղեցու ավանդությունը հիշատակում է մի միջանկյալ, երրորդ փաստ ևս, որը «կար և չկա» (դարձյալ երկրորդման սկզբունքը): Համաձայն այդ պատմության, - Մարտին Հարրիսը՝ երեքից մեկը, վերցնելով Սմիթի թարգմանություններից մի քանի էջ և դրանց համապատասխան պատճենված մեհենագիր էջերը, ցույց է տալիս Նյու Յորքի պրոֆեսոր ոմն Չարլզ Էնթոնին, «որը բավականին մեծ հեղինակություն էր համարվում այդ ասպարեզում: Պրոֆեսոր Էնթոնին հաստատեց, որ թարգմանությունները կատարված են առավել ճշգրիտ, քան հին եգիպտերեն մյուս բոլոր թարգմանությունները, որոնք ինքը առիթ է ունեցել կարդալու» (1, էջ 16): Այնուհետև, երբ պրոֆեսորը իմացել է թերթերի հայտնաբերման «հրեշտակային պատմությունը», ետ է վերցրել իր իսկ տված վկայությունը և պատառոտել՝ ասելով. «Հրեշտակների ծառայության ժամանակը վաղուց անցել է»:

Անշուշտ, Ս. Գրքից հայտնի է «հրեշտակների ծառայության» մասին, մանավանդ Ստեփանոսի հայտնի ճառում ասվածը՝ Օրենքի մասին, որն ստացել են «հրեշտակների մատակարարությամբ» (Գործք, 7.53): Հնարավոր է, որ պրոֆեսորը վկայակոչում էր հենց այս համարը, ասելով թե՝ Հրեշտակների ծառայության ժամանակը վաղուց անցել է: Համենայն դեպս Ստեփանոսի ճառի այդ մեկ հատվածի ազդեցությունը (միգուցե պատճենումը) բացահայտ է սմիթյան հրեշտակային պատմություններում:

Եվ այսպես, ստացվում է, որ գոյություն են ունեցել ընդամենը երեք փաստ այն մասին, որ Սմիթի մոտ եղածը ինչ որ մեհենագրեր են եղել, որոնք թարգմանվել են առավել ճշգրիտ, քան կարելի էր: Դրանք են՝

ա) Երեքի վկայությունը,

բ) Ութի վկայությունը, և

---

[26] Մորմոնի գրքի համաձայն այդ երևակայական ազգերն են բնակեցրել ամերիկյան մայրցամաքը:

գ) արևելագետ պրոֆեսորի գրությունը, որը ոչնչացվել է հենց իր՝ պրոֆեսորի կողմից:

Առաջին եռյակին Սմիթը վտարեց եկեղեցուց այն բանի համար, որ նրանք դատարանում իրենց տված ցուցմունքներում հրաժարվել էին վկայությունը հաստատելուց, ասելով, թե այդ տեսել էին «հոգևոր աչքերով» և ոչ թե իրականության մեջ:

Ուրեմն, այդ երեքի վկայությունը վավերական համարել չի կարելի:

Վկաների հաջորդ խումբը՝ ութ հոգին են, որոնցից առաջին չորսը Ուիթմերի որդիներն են, հինգերորդը՝ կինը, մնացածները՝ Սմիթի հայրն ու եղբայրները: Քանի որ Ուիթմերի ընտանիքին էլ Սմիթը վտարեց մորմոն եկեղեցուց և մերժեց նրանց, իսկ ազգականների վկայությունը ընդհանրապես չի կարելի ընդունելի համարել, ուստի այս Ութի վկայությունն էլ լուրջ փաստ չի կարող համարվել:

Մնում է շատ թե քիչ վավերականության նշույլ ունեցող համարել երրորդ վկայությունը, որը փաստորեն չկա: Իսկ պատմությունը, չնայած իրական է, բայց սխալ է ներկայացված: (4)-ում բերված է մի փաստաթուղթ, որի վավերականությունը կասկած չի հարուցում (էջ 197-199). այդ նույն պրոֆեսոի պատասխանն է իր ընկերոջ նամակին, ուր նա խնդրել էր լուսաբանել Հարիսի հետ կապված միջադեպը, քանի որ մորմոնական գրություններում սկսում էին հոլովել արդեն պրոֆեսորի անունը: Պրոֆեսոր Էնթոնին պատասխանում է ընկերոջը և խնդրում հրատարակել այդ նամակը: Նա գրում է, որ իրոք, ինչ-որ թերթեր՝ մանկական խզբզանքով, ներկայացվեցին իրեն, խնդրելով կարծիք հայտնել դրանց մասին: Էնթոնին գրում է, որ այդ գրատեսակները թարս ու շիտակ գրված հունարեն, եբրայերեն, լատիներեն տառեր էին՝ ուղղահայաց սյունակներով շարված, անկապ մանկական բաներ և ոչ մի եգիպտական մեհենագրեր այնտեղ չկային:

Հայտնի է, որ եգիպտագիտությունը այդ տարիներին դեռ նոր էր ձևակերպվում և -Շամպոլեոնը (մահացել է 1832 թ.) դեռ չէր հրատարակել իր հանրահայտ աշխատությունները: Եվրոպայի առաջնակարգ գիտական կենտրոններում դեռ նոր էին ձևակերպվում եգիպտագիտության ամբիոններ, իսկ Շամպոլեոնի «Եգիպտերենի քերականությունը» և «Եգիպտերենի բառարան և հիերոգլիֆային գիրը» լույս է տեսնում նրա մահվանից հետո միայն՝ 1835-1843 թվականներին: Դրա համար էլ Սմիթին անծանոթ պետք է լինեին եգիպտական մեհենագրերը, իսկ Նյու Յորքի պրոֆեսորը, «ոտքի վրա» աչքի անցկացնելով անհայտ մեհենագրերով ինչ որ թերթեր, եթե դրանք իրոք եգիպտական ծագում ունեին, չէր կարողանա ճշգրիտ որոշել նրանց բովանդակությունը, գրերի տեսակները, և հավաստեր դրանց թարգմանության առավել ճշգրիտ լինելը: Նրա պատասխանը հակառակն է ասում:

Ավելի անհավանական է բերված վկայության մեջ թերթերի «եգիպտական, քաղդեական, արաբական լինելը» դարձվածքը: Նախ հայտնի է, որ արաբական գիրը թատերաբեմ է ելել Ղուրանի հետ միասին, կամ դրանից մի քիչ առաջ, այսինքն՝ 7-րդ դարից ոչ շուտ: Իսկ արաբական գրերին նախորդած գրերը, որոնք հայտնի են Սինայական կամ -Կարմատական անունով, գրեթե չեն գործածվել: Հետևաբար ենթադրել, որ ամերիկյան մայրցամաքում դեռ 5-րդ դարում (421 թ.) և դրանից առաջ, ինչ-որ Մորմոն և Մորոնի անունով հայր ու որդի գրի են առել այդ մայր ցամաքի պատմությունը՝ դեռ գոյություն չունեցող գրերով, անհեթեթություն է:

Հետևաբար ստացվում է, որ չկա մի հավաստի փաստարկ այն մասին, որ Սմիթի մոտ եղել են այդ խորհրդավոր եգիպտական մեհենագրերը: Եզրակացությունըմեկն է. սմիթյան պատումների վավերական լինելը շատ կասկածելի է և նման «հրեշտակային հայտնությունները» համարել Սուրբ Գրքից ավելի կատարյալ և նրան փոխարինող՝ որպես «վերջին օրերի» կատարյալ հայտնություններ՝ անընդունելի է:

1831-1844 թվականներին Ժոզեֆ Սմիթը ունեցել է 135 հայտնություն. նրան օգնել և -ցույց են տվել, թե ինչ է անելու ինքը, որտեղ է հիմնելու իրենց կենտրոնը: Նա ստանում է համապատասխան ցուցումներ և հրահանգներ եկեղեցու հիմնադրման, կառուցվածքի և բոլոր անհրաժեշտ բաների մասին: Դրանցից մեկն էր նաև Սմիթի հայտնությունը բազմակնության վերաբերյալ, որը ներկայացվեց որպես աստվածային հայտնություն: Իսկ Սմիթի հաջորդներից մեկը, Վիլֆորդ Վուդրաֆը 1890 թվականին մի նոր հայտնություն է ստանում, ուր մերժում է բազմակնությունը: Իսկ ինչպե՞ս կարելի սմիթյան հայտնությունը աստվածային համարել, եթե ընդամենը հիսուն տարվա կյանք ունեցավ և մերժվեց հաջորդ մարգարեի «աստվածային» հայտնություններով:

«Ես, որպես Հիսուս Քրիստոսի վերջին օրերի սրբերի եկեղեցու նախագահ, այսու հայտարարում եմ ամենալուրջ կերպով, որ բոլոր ամբաստանությունները (բազմակնության վերաբերյալ) սուտ են: Մենք չենք քարոզում բազմակնություն...», - գրում է նա իր այդ հռչակագրում (2, էջ 358-359):

Համենայն դեպս, չնայած անհամաձայնությունների, մորմոն եկեղեցու պատմական ճանապարհը ընթացավ Սմիթի հայտնությունների համաձայն:

Խուսափելով հալածանքներից, համաձայն Սմիթի 1831 թվականի հայտնությունների, մորմոնները տեղափոխվեցին Օհայո և Միսսուրի նահանգներ: Իրենց հաստատման ժամանակներում, ուր որ գնացել են մորմոնները, իրենց բարքի ու տարօրինակ սովորույթների համար, բնակիչները նրանց հետ միշտ թշնամաբար են վերաբերվել: Իսկ այդ վերաբերմունքը մորմոն առաջնորդները ներկայացրել են որպես հալածանք ճշմարիտ կրոնի համար: 1839 թվականին Միսսուրիի նահանգապետի կարգադրությամբ մորմոններին դաժյալ վտարում են նահանգից և նրանք տեղափոխվում են Իլլինոյս նահանգ, ուր հիմնում են Նավու ավանը: Համայնքում Սմիթն ուներ անսահման հեղինակություն և իշխանություն: Այդ ամենով չբավարարվելով, 1844 թվականին նա նաև իր թեկնածությունն է դնում ԱՄՆ նախագահի պաշտոնի համար: Այդ արարքն անհետևանք չի անցնում. որոշ մորմոններ հեռանում են Սմիթից և միավորվելով սկսում են Սմիթի դեմ պայքարել՝ տպագրելով զանազան նյութեր նրա դեմ: Սմիթի կողմնակիցները իրենց հերթին սկսում են միջամտել, և, մի օր մտնելով տպարան, ուր տպագրվում էին Սմիթի դեմ ուղղված հոդվածները, ավերում են այն: Կառավարությունը ստիպված միջամտում է «վերջին օրերի սրբերի» գործին և ձերբակալում Ժոզեֆ և Հայրում Սմիթներին: Իսկ զայրացած ամբոխը, չսպասելով դատարանի որոշման, հունիսի 27-ին գրոհում է բանտը, դուրս հանում եղբայրներին և գնդակահարում նրանց: Իհարկե, այս փաստն անմիջապես օգտագործում են մորմոնները և Սմիթ եղբայրներին հռչակում նահատակներ:

Նրանց սպանության պատմությունը դնում են «Վարդապետություն և Ուխտեր» գրքի 135-րդ գլխում, ուր փառաբանում են նրանց, իսկ Ժոզեֆին համարում երկրորդ մարդը - Հիսուսից հետո. «Ժոզեֆ Սմիթը, Աստծու Մարգարեն և Տեսանողը, այս աշխարհում

մարդկության փրկության համար արեց ավելին, քան որևէ մեկ այլ մարդ, բացի Հիսուս Քրիստոսից»:

Այդպես ավարտվում է Ժոզեֆ Սմիթի կյանքը, որը մորմոնների համար ամենամեծ հեղինակությունն է համարվում, մի մարդ որի հայտնություններն ու խոսքերը նրան հետևողների համար ավելի մեծ արժեք են ներկայացնում, քան Ս. Գիրքը: Մի առիթով Սմիթն ասել էր, որ «Հիսուսին հետևողները փախան Հիսուսից, բայց ինձ հետևողները երբեք չեն փախչի ինձանից» (4, էջ 183), և այս խոսքերը եղան նրա միակ մարգարեությունը, որ կատարվեց:

Սմիթին հաջորդում է Բրիգհեմ Յանգը, որը ստանձնելով Մարգարեի և Առաջնորդի պաշտոնը, մորմոններին առաջնորդում է դեպի արևմուտք՝ Յութայի նահանգ և հաստատվում Սոլթ Լեյք Սիթիում (բառացի՝ Աղի լիճ քաղաք): Մինչ այսօր այնտեղ է գտնվում մորմոն եկեղեցու կենտրոնակայանը:

Մորմոն եկեղեցու պատմությունն էլ հարուստ է զանազան միջադեպերով, որոնցից մորմոնները սիրում են առանձնացնել ճայերի երամի և մորեխների հայտնի միջադեպը, համարելով այն որպես երկնային նախանշան: 1848 թվականին, հունձի ժամանակ, մորեխների ամպը ոչնչացնում էր արտերը: Այդ ժամանակ ճայերի մի ամպ է հայտնվում և ոչնչացնում մորեխներին և այդպիսով հունձը փրկվում է: Վերջին օրերի սրբերի եկեղեցին այդ դեպքը հռչակեց որպես երկնային նշան և երկնային օրհնություն իրենց եկեղեցուն:

Դրան հակառակ մորմոն պատմաբանները աշխատում են մոռանալ մեկ այլ՝ դաժան մի դիպված, երբ Յանգը 1857 թվականի սեպտեմբերին կարգադրում է իր տեղակալ Ջոն - Լիին, կոտորել մոտ 100 անզեն ներգաղթողների՝ ընտանիքներով հանդերձ: Հավանաբար, այդ ոչ մորմոն գաղթականներից վտանգ ակնկալելով, Յանգը հրամայում է դուրս տանել նրանց և լեռնային մարգագետիններից մեկում կոտորել: Այդ դիպվածը մտավ պատմության մեջ Լեռնային մարգագետինների ջարդ անունով (4, էջ 191): ԱՄՆ կառավարությունը միայն 12 տարի անց վերսկսեց այդ դեպքի քննությունը ու մահվան դատապարտեց Ջոն Լիին: Անշուշտ, դժվար թե գտնվի մեկը, որն այսօր փորձի արդարացնել - Յանգի այդ որոշումը, չնայած նրան, որ մորմոնների Մարգարեն ցանկացած որոշում կայացնում է միայն և միայն համապատասխան հայտնություն ունենալու դեպքում:

Համենայն դեպս, մորմոնները հակված են իրենց բոլոր անդամների գլխին «սրբության պսակ» դնել, փաստորեն հաստատելով իրենց եկեղեցու անվանումը, որպես «սրբերի եկեղեցի»: Մինչդեռ անգամ Սմիթ եղբայրների գնդակահարության ժամանակ նրանց մոտ, ինչ որ ձևով, ատրճանակներ են հայտնվել և նրանք դիմադրություն են ցույց տվել ամբոխին՝ մի քանի հոգու էլ վիրավորելով: Իսկ նման պարագաներում «սրբերի պսակներ» հանդերձել Սմիթ եղբայրներին, այնքան էլ լուրջ չէ:

## 3. ՄՈՐՄՈՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Մորմոն եկեղեցու կառուցվածքը հիմնականում հիմնված է Սմիթի հայտնության վրա (2, § 107), ուր ամենայն մանրամասնությամբ նկարագրվում է եկեղեցու կառուցվածքային համակարգը: Այս գլուխը կարծես կրկնում է Մովսեսին, երբ նա Աստծուց պատգամ էր ստանում խորանի կառուցվածքի, քահանայության մանրամասների մասին (Ելք, գլ. 21-31):

Մորմոն եկեղեցին խիստ կարգապահություն ունեցող մի հզոր կազմակերպություն է, որի կենտրոնակայանը կամ գլուխը գտնվում է Սոլթ Լեյք Սիթիում: Այդ նվիրապետության գլուխը համարվում է Առաջին պրեզիդենտը կամ նախագահը, որը նաև Մարգարե ու Տեսանող է ընդունվում: Ամեն ինչ նա է հիմնավորում՝ իր ստացած հայտնություններով և տեսիլքներով, որոնք, ըստ մորմոնների, գալիս են Աստծուց և, հետևաբար, ընդունելի են անվերապահորեն: Չնայած դրան, ամեն մի հայտնություն կամ հայտնագործություն դրվում է ընդհանուր քննարկման և, որպես կանոն, անցնում միաձայն: Այլ կերպ չէր էլ կարող լինել, եթե ի սկզբանե ընդունվում է հայտնությունների աստվածային ծագումը:

Մարգարեն ունի երկու խորհրդական. Առաջին Խորհրդական և Երկրորդ Խորհրդական: Այս եռյակը կոչվում է Առաջին նախագահություն: Առաջին նախագահությունն էլ, փաստորեն, ղեկավարում է մորմոն հսկայական եկեղեցին:

Առաջին նախագահությանը ենթարկվում է Տասներկու Առաքյալների Խորհուրդը: Այս Խորհուրդը ունի իր նախագահը կամ պրեզիդենտը, որը, Մարգարեի մահվանից հետո, փոխարինում է նրան: Այսինքն, այսօրվա Տասներկուսի նախագահը վաղվա Մարգարեն է լինելու: Ժոզեֆ Սմիթից մինչ այսօր ընտրվել են 15 Առաքյալներ[27]:

Տասներկուսի Խորհրդին ենթակա է Յոթանասունի Նախագահությունը, որին ենթակա են Յոթանասունի Առաջին քվորումը և Յոթանասունի Երկրորդ քվորումը: Ինչպես տեսնում ենք, այդ բոլոր վարչական ստորաբաժանումները նմանեցված են Նախնական եկեղեցու վարչական կառույցին. Տասներկուսի խորհուրդը՝ Տասներկու առաքյալներին, իսկ Յոթանասունի Խորհուրդը՝ Քրիստոսի յոթանասուն աշակերտներին:

Ստորին օղակներ են համարվում են 200-500 անդամներից բաղկացած խմբերը, իրենց ավագով: Խմբի մեծանալուց այն կիսվում է երկու ենթախմբի և այդպես շարունակ: Մի ընդհանուր տարածքում գտնվող խմբերը միավորվում են և կազմում են տարածքային խումբ կամ Սյուն: Սյուն անվանումը գալիս է ամերիկյան մայրցամաքի բնակեցման ժամանակ սյուներ՝ ցցեր խփելու սովորությունից, երբ նոր տարածքներ բաժանելու ժամանակ ցցեր՝ սյուներ էին խփում, սեփականացված տարածքներին տիրանալու համար: Ամեն մի Սյուն ունի իր նախագահը՝ պրեզիդենտը:

Տարին երկու անգամ մորմոնները հավաքվում են ընդհանուր վեհաժողովի՝ համապատասխան պաշտոնյաներ ընտրելու:

---

[27] Վերջին Մարգարեներն են՝ Եզրա Թաֆտ Բենսոնը (13-րդ), Հովարդ Հանտերը (14-րդ) և ներկայիս Մարգարեն՝ Գորդոն - Խինկլին:

Մորմոն եկեղեցում գոյություն ունի երկու «քահանայություն»՝ Ահարոնյան, որը ստորին քահանայություն է համարվում, և Մելքիսեդեկյան, որը բարձրագույն քահանայությունն է: Կանանց քահանայություն չի ընդունվում ընդհանրապես, իսկ Սմիթի ժամանակ անգամ սևամորթներին ու հնդկացիներին «արժանի» չէին համարվում քահանայության կարգերին, քանի որ Մորմոնի գիրքը սևամորթներին նզովված ազգ է համարում: Ցանկացած մորմոն, տասներկու տարին լրանալուց հետո, ինքնաբերաբար համարվում է Ահարոնյան քահանայության թեկնածու, իսկ դրանցից արժանավորներին, տասնութ տարին լրանալուց հետո տրվում է Մելքիսեդեկյան քահանայության կարգ, իհարկե համապատասխան որոշումներից հետո: Փաստորեն բոլոր Մելքիսեդեկյան քահանայություն ունեցողները լիարժեք մորմոն քարոզիչներն են, որոնց թույլատրված է վեր բարձրանալ մորմոնական նվիրապետության սանդղակով:

Եկեղեցու պաշտոնական անվանման նման, իրենք իրենց անվանում են մորմոններ, իսկ եկեղեցին՝ Մորմոն եկեղեցի:

Մորմոն անվանման ծագման մասին մի վարկած գոյություն ունի, ըստ որի այն առաջացել է անգլերեն more և եգիպտերեն mon արմատների համադրումից (5, էջ 22): Այս ստուգաբանությամբ մորմոն նշանակում է ավելի բարի, սակայն քիչ հավանական է նման ստուգաբանությունը, քանի որ դժվար թե այդ ժամանակներում այդքան հանրածանոթ լիներ դեռ նոր ուսումնասիրվող եգիպտերենի հնչողությունը:

Մորմոն եկեղեցու վարչական կառավարմանը բնորոշ մի փաստաթուղթ ընդգրկված է «Վարդապետություն և Ուխտեր» գրքում (2, էջ 361), որը շատ ցայտուն ներկայացնում է մորմոնների այսօրվա վարչական և վարդապետական համակարգը: Այն անվանվում է «Պաշտոնական հայտարարություն հմր 2»: Սհա այն.

### 3.1 ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

Բոլոր հետաքրքրվողների համար:

1978 թվական սեպտեմբերի 30-ին Հիսուս Քրիստոսի վերջին օրերի սրբերի եկեղեցու հարյուր քառասունութերորդ կիսամյակային Ընդհանուր վեհաժողովին Եկեղեցու Առաջին Նախագահության Առաջին խորհրդական Ն. Էլդոն Տեները ներկայացրեց հետևյալը.

Այս տարվա հունիսի սկզբին Առաջին Նախագահությունը հայտարարեց, որ Նախագահ Սպենսեր Ն. Կիմբալը հայտնություն է ստացել, որով քահանայությունը և տաճարի օրհնությունները տարածվում են Եկեղեցու արական սեռի բոլոր արժանավոր անդամների վրա: Նախագահ Կիմբալը խնդրեց ինձ հաղորդել վեհաժողովին, որ այն բանից հետո, երբ ինքը ստացավ այդ հայտնությունը, որն արդյունք էր սրբազան տաճարի սրբազան սենյակներում իր երկարատև աղոթքների ու մտածմունքների, այն ներկայացրեց իր խորհրդականներին, որոնք ընդունեցին և հավանություն տվեցին դրան: Հետո այն ներկայացվեց Տասներկու Առաքյալների Խորհրդին, որը միաձայն հավանություն տվեց և այն ներկայացվեց Եկեղեցու Գերագույն իշխանության բոլոր ներկայացուցիչներին, որոնք նույնպես միաձայն հավանություն տվեցին:

Նախագահ Կիմբալը խնդրեց ինձ կարդալ այդ նամակը.

8 հունիսի 1978 թ.

Ամբողջ աշխարհի Հիսուս Քրիստոսի Վերջին օրերի սրբերի եկեղեցու բոլոր գերագույն և տեղական իշխանություններին.

Սիրելի եղբայրներ,

Քանի որ մենք համարվում ենք Երկրի վրա Տիրոջ գործի ներկայացուցիչներ, մենք շնորհակալության զգացումն ենք ապրում այն բանի համար, որ բազում ազգեր կլսեն վերահաստատված Ավետարանի խոսքը և կմիանան Եկեղեցուն էլ ավելի մեծագույն զգացումով:

Գիտակցելով այն խոստումները, որոնք տվել են մեզ Եկեղեցու նախորդ բոլոր Մարգարեները և Նախագահները, այն մասին, որ ինչ-որ ժամանակ Աստծու հավիտենական ծրագրում, մեր եղբայրները, որոնք արժանի են, կարող են ստանալ քահանայություն, և - տեսնելով նրանց համառ ձգտումները, որոնց քահանայություն տալը մերժվել է, մենք երկար ու թախանձագին խնդրել ենք Տիրոջից Տաճարի Վերին սենյակում:

Նա լսեց մեր աղոթքները և հայտնությամբ հաստատեց, որ եկել է վաղուց սպասված օրը, երբ ամեն մի հավատարիմ ու արժանի տղամարդ Եկեղեցում կարող է ստանալ սուրբ քահանայություն, այն լիիրավ օգտագործելու լիազորությամբ և իշխանությամբ:

Համապատասխանաբար Եկեղեցու բոլոր արական սեռի արժանավոր անդամները, անկախ ցեղից և մաշկի գույնից կարող են ստանալ քահանայություն: Համապատասխան պատասխանատու ղեկավարներին հանձնարարված է մանրակրկիտ քննել ու զրուցել բոլոր թեկնածուների հետ, որոնք պիտի քահանայություն ստանան՝ Ահարոնյան և Մելքիսեդեկյան կարգի, որպեսզի վստահ լինենք, որ նրանք բավարարում են ընդունված պահանջներին:

Մենք լրջորեն հայտարարում ենք, որ Տերը հիմա հայտնել է իր կամքը Երկրի վրա Իր որդիներին օրհնելու, նրանց, որոնք լսում են իշխանություն ունեցող Նրա ծառաների ձայնը, և պատրաստ են ընդունել Ավետարանի ամեն մի օրհնություն:

Անկեղծորեն՝<br>
Սպենսեր Վ. Կիմբալ<br>
Ն. Էլդոն Տեններ<br>
Մերիոն Ջ. Ռոմնի<br>
Առաջին Նախագահություն

Ընդունելով Սպենսեր Վ. Կիմբալին որպես Մարգարե, Տեսանող և Ընդունող հայտնության և որպես Հիսուս Քրիստոսի Վերջին օրերի սրբերի եկեղեցու Նախագահ, առաջարկվում է, որ մենք, որպես սահմանադիր ժողով, ընդունենք այդ հայտնությունը որպես Տիրոջ խոսքը և կամքը: Բոլոր նրանք, ովքեր կողմ են, խնդրում եմ բարձրացնել աջ ձեռքը: Եթե ինչ որ մեկը դեմ է, դարձյալ թող բարձրացնի աջ ձեռքը:

Այս առաջարկը ընդունվեց միաձայն:

Սոլթ Լեյք Սիթի, Յութա, 30 սեպտեմբերի 1978 թ.:

Այս փաստաթուղթը, որը հիշեցնում է ոչ վաղ անցյալում մեզ շատ ծանոթ ժողովների արձանագրությունները, իրոք որ բնութագրում է մորմոնների կազմակերպչական կարողությունները ավելին, քան կարելի է պատկերացնել: Այս հայտնությամբ փաստագրվում է, որ Սմիթի ժամանակներից սկսած քահանայություն ստանալու կարգը փոխվում է, որ այլ ցեղերն ու ուրիշ մաշկի գույն ունեցողներն էլ լիարժեք մորմոններ կարող են լինել:

## 4. ՄՈՐՄՈՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՍՐԲԱԶԱՆ ԳՐՔԵՐԸ

Մորմոնների սրբազան գրքերն են. Մորմոնի գիրքը, Վարդապետություն և Ուխտերը, Մեծագին գոհարը: Ս. Գիրքը, որ ընդունված է մորմոնների մոտ այնքանով է ընդունելի, որքանով որ այն օգնում է հիմնավորել այդ գրքերը կամ մորմոնական դրույթները: Ինչքան էլ որ մորմոնները հայտարարեն, որ ընդունում են Ս. Գիրքը, որպես այդպիսին, միևնույն է, այն նրանց համար միշտ գտնվում է երկրորդ շարքում: Դրանցից բացի մորմոնները գործածում են նաև Ժոզեֆ Սմիթի «Եկեղեցու պատմությունը» (յոթը հատոր, միայն անգլերեն), որից մի քանի հատվածներ ընդգրկված են «Մեծագին գոհարի» մեջ: Դրանք են Ժոզեֆ Սմիթի կենսագրությունը, այլ կերպ ասած՝ ազգատոհմը (ինչպես և - պետք է լիներ Աստծու կողմից ուղարկված մարգարեի համար), ոսկե թերթերի հայտնաբերման պատմությունը, Մորմոն եկեղեցու հաստատման պատմությունը, Սմիթի հավատամքը:

## 4.1 ՄՈՐՄՈՆԻ ԳԻՐՔԸ

Մորմոնի գրքի սկզբում, որպես կանոն, զետեղվում են համառոտ տեղեկություններ գրքի հայտնաբերման, թարգմանության մասին, որը վերագրվում է Ժոզեֆ Սմիթ Կրտսերին, ինչպես նաև մի քանի «մարգարեական» համարներ, որոնցում համաձայն մորմոն աստվածաբանների, կանխագուշակված են զանազան հայտնի դեպքեր, ինչպես օրինակ, Ամերիկայի հայտնագործումը Կոլումբոսի կողմից և այլն: Մորմոնի գրքի ժամանակագրությունը, դատելով գրքի բոլոր էջերի տողատակում տրված թվականի գրությունից, ընդգրկում է մ.թ.ա. 600 - մ.թ. 421 թվականները: Ի միջի այլոց գրքում ամենուր օգտագործվում է փրկչական թվականությունը և, բնականաբար, պետք է ենթադրել, որ ամերիկյան մայրցամաքում մինչ մ.թ. 421 թ. արդեն կիրառում էին Քրիստոսի ծննդից հաշվելու թվականությունը: Այս կարգի ժամանակագրական զեղումներով գիրքը լեցուն է: Անգամ Հին աշխարհում նման թվականությանը անցել են բավականին ուշ՝ 6-րդ դարում, ավելի ճիշտ 532 թվականին՝ Հռոմում, որտեղից էլ այդ համակարգը տարածվել է աշխարհով մեկ: Բայց Դիոնիսիոս Կրտսերի[28] այդ համակարգի կիրառության գոյությունը՝ իրենից մոտ 100 տարի առաջ, այն էլ ամերիկյան մայրցամաքում՝ անընդունելի է:

[28] Դիոնիսիոս Կրտսեր - հռոմեացի քահանա, որը մ. թ. 582 թվականին զատկական աղյուսակներ կազմելու համար առաջարկեց հաշվարկները սկսել Քրիստոսի ծննդյան թվականից: Փրկչական թվականը, որ օգտագործում ենք այսօր, փաստորեն գործածության մեջ է մտել այդ թվականից:

Գիրքը բաղկացած է 15 գրքերից. Նեֆիի Ա գիրք, Նեֆիի Բ գիրք, Հակոբի գիրք, Ենոսի գիրք, Հարոմի գիրք, Օմնայի գիրք, Մորմոնի խոսքերը, Մոսիայի գիրք, Ալմայի գիրք, Գելամանի գիրք, Նեֆիի Գ գիրք, Նեֆիի Դ գիրք, Մորմոնի գիրք, Եթերի գիրք, Մորոնիի գիրք:

Մորմոնի գիրքը պատմում է մի ազգության մասին, որը Աշտարակաշինությունից հետո վերաբնակվել է ամերիկյան մայրցամաքի հյուսիսում (Եթերի գիրք), տալով այդ ազգին հարեդներ անունը: Ընդ որում, ի տարբերություն Բաբելոնի լեզուների խառնվելուն, այստեղ Աստված լսում է Հարեդի եղբոր աղոթքը, և հարեդների լեզուն չի խառնում: Այնուհետև այս եղբայրները սկսում են իրենց ընտանիքներով գնալ դեպի ավետյաց երկիր՝ ցամաքի հյուսիս, իսկ Աստված խոստանում է, որ եթե նրանք չծառայեն իրեն, ապա կոչնչացնի բոլորին:

Ավետյաց երկրի ճանապարհին, ինչպես Իսրայելը անապատական քառասուն տարիների թափառումների ժամանակ, հարեդներին էլ հաճախ երևում է Աստված ամպի սյան մեջ և պատգամներ տալիս: Մի անգամ նույնիսկ Հարեդի եղբորը երևում է մարմնապես, ցույց է տալիս իր մարմին ու ոսկոր լինելը, և ասում, որ Ինքը սկիզբն ստեղծողն է և Հիսուս Քրիստոսը, Հայրն ու Որդին: Այնուհետ պատմվում է, թե ինչպես Աստված պատրաստում է երկու քար (հետո ենք իմանում, որ դրանք Ուրիմն ու Թումիմն են) և ասում, որ պահի այդ քարերը ոսկե թերթերի գրությունների հետ, որպեսզի ապագայում այն ընթերցողը կարողանա հասկանալ այդ գրությունները, որոնք գրված են չխառնված եգիպտերեն լեզվով:

Հարեդների հետագա ճակատագիրը նման է հին աշխարհի ազգերի պատմությանը: Նրանք, ըմբոստանալով Աստծու դեմ, ժամանակի ընթացքում ոչնչացան երկրի երեսից, բայց նրանց մարգարեները Աստծու զորությամբ գրի առան ոսկե թերթերի վրա այս տարեգրությունը, ինչպես նաև ապագայում լինող պատմություններ ու թաքցրեցին այն:

Տարեգրության հաջորդ փուլը դարձյալ սկսվում է Բաբելոնից: Այս անգամ բաբելոնյան գերությունից առաջ, երբ հրեաների մի բազմություն Երուսաղեմից փախավ՝ ոմն - Լեհիայի և նրա որդի Նեֆիի առաջնորդությամբ: Ըստ մորմոնների այս խումբը կտրումանցնում է Խաղաղ օվկիանոսը և հասնում Կենտրոնական Ամերիկա: Այդ նոր երկրում նրանք բաժանվեցին երկու հակամարտող բանակի՝ նեֆիների և լամանացիների: Լամանացիները անօրեն դուրս եկան և, որպես պատիժ, փոխեցին մաշկի գույնը, դարձան ամերիկյան հնդկացիների նախահայրերը (2 Նեֆի, 5, 21): Նեֆիի Ա-Դ գրքերը պատմում են այն մասին, թե ինչպես է իրենց հայտնվել Հիսուս Քրիստոս, քահանայություն հաստատել, իշխանություն տվել մկրտելու և հաղորդության խորհուրդը կատարելու: Ի վերջո, լամանացիները և նեֆիները դարձի են գալիս և Քրիստոսի եկեղեցին գնալով աճում ու բարգավաճում է և մի քանի դար ապրում հաշտ ու համերաշխ: Հետո թշնամություն և բաժանություն է ծագում նրանց միջև: Նեֆիները գնում են բնակվելու դեպի հյուսիս, իսկ լամանացիները՝ հարավ: Բայց թշնամությունը գնալով խորանում է և սկսվում է կործանարար պատերազմը:

Մորմոն անունով նեֆիների հրամանատարը՝ միաժամանակ նաև պատմագիրը, գրի է առնում այս ամենը, և մոտենում Կումորա լեռանը: Դա երեք հարյուր ութսունչորս

թվականն էր: Լամանացիները կոտորում են նեֆիների մեծ մասին և Մորմոնին սպանում, որից հետո «սրբազան» տարեգրությունը շարունակում է Մորմոնի որդի Մորոնին:

Վերջում (Մորոնի, 9-րդ գլուխ) Մորոնին դարձյալ վկայում է լամանացիներին, քարոզում որ նրանք դարձի գան և բերում է նորկտակարանյան մեջբերումներ՝ մանավանդ - Մարկոսի ավետարանի 16-րդ գլխից, համարյա առանց փոփոխության: Դա 421 թվականն էր: Մորմոնի գիրքը եզրափակում է Մորոնիի գիրքը, ուր Մորոնին հասցնում է կնքել և թաքցնել ոսկե թերթերը՝ հետագայի մարդկանց համար:

Այս է համառոտ բովանդակությունը մի գրքի, որն այնքան աղմուկ է հանել իր գոյության 150 տարիների ընթացքում:

Բնական է, որ հաշվի առնելով արդի պայմանները, հնարավոր չէր լինի Մորմոնի գիրքը ներկայացնել աշխարհին առանց որոշակի սրբագրությունների, մանավանդ այն տեղերում, ուր ցեղային խտրականություն է քարոզվում: Արդեն թիվ 2 պաշտոնական հայտարարության մեջ երկնային հայտնությամբ, փաստորեն, վերացվեց ցեղային խտրականությունը քահանայական կարգ ստանալու պարագայում և, բնական է, դրան պետք է հաջորդեր ավելի լուրջ քայլեր՝ վերացնելով կամ սրբագրելով այդ համարները սկզբնաղբյուրում՝ Մորմոնի գրքում: Հակառակ դեպքում ամբողջ Աֆրիկան, Ասիան, որպես նզովվածներ, զուրկ կլինեին մորմոնական հայտնություններից:

Այդպես էլ եղավ. այդ հայտարարությունից ընդամենը մի քանի տարի հետո Մորմոնի գիրքը հրատարակվեց արդեն որոշակի սրբագրումներով, և ցեղային գերազանցություն կամ առաջնություն արտահայտող «սպիտակը» փոխարինվեց «մաքուր», «անմեղ» բառերով:

Այսպես,

«և տգիտության թեփերը կսկի թափվել նրանց աչքերից, և կանցնի մի քանի դար և նրանք կդառնան անմեղ և հիասքանչ ժողովուրդ» (2 Նեֆի, 30, 6) նախադասությունը բնագրում եղել է՝

«և տգիտության թեփերը կսկեն թափվել նրանց աչքերից, և կանցնի մի քանի դար և նրանք կդառնան սպիտակ և հիասքանչ ժողովուրդ»:

Բովանդակությունից էլ երևում է, որ «անմեղ» բառը չի կարող լինել այդ համարում: Սմիթյան ժամանակներում այն եղել է՝ «սպիտակ», այսինքն, այդ «անհավատ» ժողովուրդը կդառնա սպիտակամորթ ժողովուրդ (4, էջ 194):

## 4.2. «ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒԽՏԵՐ»

Մորմոնի գիրքը մորմոնների համար համարվում է ինքնօրինակ «ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆ», պատմելով Հին աշխարհի պատմությունն և ժողովուրդների ազգաբանությունը՝ Հին Կտակարանի նմանողությամբ: Իսկ մորմոնական «ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ» կարել է համարել - Ժոզեֆ Սմիթի հայտնությամբ ստացված «Վարդապետություն և Ուխտեր» գիրքը, ուր ամփոփված է մորմոն եկեղեցու վարդապետությունը: Գրքի ամբողջական վերնագիրն է. «Հիսուս Քրիստոսի վերջին օրերի սրբերի եկեղեցու Վարդապետությունը և Ուխտերը, որը պարունակում է Ժոզեֆ Սմիթ մարգարեի հայտնությունները, նաև որոշ լրացումներ, որոնք արվել են եկեղեցու նախագահության նրա հաջորդների կողմից»:

Գրքի Ներածության մեջ ասվում է. «Վարդապետություն և Ուխտերը Աստվածային հայտնությունների և Աստվածաշունչ խոսքերի հավաքածուն է, որի նպատակն է Աստծու Թագավորության հաստատումը երկրի վրա»: Բնական է, եթե Ժոզեֆ Սմիթին հայտնված էր, որ աշխարհում չկա ոչ մի եկեղեցի կամ կազմակերպություն, որ հաճելի լինի Աստծուն, ապա ամեն ինչ պետք է սկսվեր նորից: Հիսուս Քրիստոսի հաստատած եկեղեցին այլևս պիտանի չէր և պետք է հաստատվեր նոր՝ Վերջին օրերի սրբերի եկեղեցին: Սուրբգրային վարդապետությունը, հետևաբար, պետք է փոխարինվր մի նոր վարդապետությամբ, որն էլ «ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒԽՏԵՐ» գիրքն է:

«Վարդեպետություն և Ուխտերի» եզակիությունն այն է, որ այստեղ արդեն չկա Մորմոն և Մորոնի հայր ու որդու միջամտությունը: Չկա նաև «աշխարհիկ» կամ «աշխարհին» հիշեցնող որևէ տարր, ինչպես եգիպտական ձեռագրերը Մորմոնի գրքի պատմության մեջ, իսկ երկնային ծագում ունեցող Ուրիմն ու Թումիմն էլ վերացված են: Այս գիրքը, ուրեմն, «ժամանակակից Սուրբ Գիրք է, որ Աստված տվել է իր ընտրյալների՝ մարգարեների միջոցով անմիջականորեն, Աստծու Թագավորությունը այս օրերին աշխարհում հաստատելու համար», ինչպես գրված է գրքի առաջաբանում: Այսինքն Մորմոն-Մորմոնի հայր ու որդուն փոխարինելու են եկել երկնային Հայրն ու Որդին՝ Հայր Աստված և - Հիսուս Քրիստոս, դարձնելով գիրքը երկնային «Հնգամատյան»՝ սահմանադիր գիրք մորմոնների համար:

Առաջաբանի վերջում, ինչպես և Մորմոնի գրքում, զետեղված են Տասներկու առաքյալների վկայությունը այն մասին, որ այդ գիրքը իրոք ճշմարիտ գիրք է: Եթե Մորմոնի գրքի պարագայում վկաները վկայում են, որ տեսել ու շոշափել են ոսկե թերթերը կամ Ուրիմն ու Թումիմը, ապա այստեղ, քանի որ բացակայում են «աշխարհիկ» շոշափելի ինչ-որ ապացույցներ, վկաները խոստովանում են.

«Եվ մենք ուզում ենք վկայել ամբողջ աշխարհի մարդկանց, երկրի վրա ամեն մի էակի, որ Աստված, Սուրբ Հոգու միջոցով, այն թափելով մեզ վրա, բացեց մեզ՝ մեր հոգիներում, այն, որ այս պատվիրանները տրվել են Աստծու ներշնչանքով և այդ տրվել է մարդկանց օգուտի համար, և որ դրանք իրոք ճշմարիտ են»: Վկայության տակ ստորագրել են Տասներկու առաքյալները՝ Սմիթի կողմնակիցներից ու հետևորդներից:

Այդպիսի ճշմարիտ 138 գլուխներից բաղկացած մորմոն «Վարդապետությունը» ընդգրկում է Ժոզեֆ Սմիթի ողջ գործունեությունը (1-135 գլուխները)՝ հայտնությունները, իսկ վերջին, 136-138 գլուխները՝ Սմիթին հաջորդած Մարգարեների մի քանի հայտնությունները և գիրքը եզրափակվում է երկու պաշտոնական հռչակագրով՝ Մարգարե - Վուդրաֆի Մանիֆեստով (բազմակնության մասին) և Կիմբալի 1978 թ. հայտնությամբ:

Նախնական եկեղեցուն ծանոթ է եղել հայտնությամբ ստացված պատմությունների ժողովածուներ, որոնցից մեկը՝ Հերմասի «Հովիվը[29]» (Ա-Բ դարեր) մի ժամանակ կանոնական են համարել Իրինեոսը և Որոգինեսը[30]: «Հովիվը» տեսիլքների և հայտնությունների պատմություններ են, որոնք տրվել են Հերմասին երկու երկնային էակների (Մորմոն

---

[29] Բ դարում քրիստոնեական աշխարհում տարածված գործ, ուր հեղինակը՝ Հերմասը պատմում է իր տեսիլքները, հայտնությունները: Տես (13, էջ 54-56):

[30] Բ-Գ դարի եկեղեցական գործիչներ:

և Մորոնի զույգի նախատիպերը)՝ մի ծեր տիկնոջ և հովվի կերպարանքով հրեշտակի միջոցով: Բայց, ի տարբերություն սմիթյան «հովվերգության», Հերմասի «Հովիվը» քրիստոնեական ջատագովության և քրիստոնեական վարդապետության մասին է և դեպի քրիստոնեություն առաջնորդելու նպատակ ունի:

Հայտնի է, որ Հին Կտակարանում Մովսեսը ամենավճռական պահերին հարցնում էր Աստծուն և իմանալով Տիրոջ կամքը՝ հնազանդվում էր և դրանով առաջնորդում ժողովրդին: Հետագայում, թագավորության հաստատումից հետո, Իսրայելի թագավորը քահանայապետերի կամ մարգարեի միջոցով իմանում էր Տիրոջ կամքը և հնազանդվում դրան: Չհնազանդվելու դեպքում նրանք պարտություն էին կրում և թշնամիների բանակը ասպատակում էր Իսրայելը: Սավուղ-Դավիթ-Սողոմոն-Ռոբովամ-... շղթան աստվածապետական թագավորության օրինակն է, ուր թագավորին զուգահեռ միշտ եղել է - Մարգարեն, Տեսանողը, Քահանայապետը, որոնք թագավորի հետ միասին կառավարել են Իսրայելը:

Մորմոն եկեղեցու պատմությունն, իր հայտնություններով հանդերձ, նմանեցված է հենց այդ, հինկտակարանյան Իսրայելի պատմությանը, այն տարբերությամբ, որ այստեղ Թագավորն ու Մարգարեն նույնացված են մի անձի մեջ՝ Մորմոն եկեղեցու Առաջին Նախագահության Առաջին Նախագահի՝ Առաջին Տեսանողի և Առաջին Մարգարեի անձի մեջ:

Փաստորեն 2000-ամյա Քրիստոսի հաստատած Եկեղեցին մեռած համարելով՝ Ժոզեֆ Սմիթ մարգարեն իրեն հռչակում է Նոր Եկեղեցու հիմնադիրը և գլուխը, մարգարեն և թագավորը: Նրա հայտնություններով ու տեսիլքներով է առաջնորդվելու 19-րդ դարի Իսրայելը՝ մորմոնները, Նյու Յորքի նահանգից դեպի Սոլթ Լեյք՝ աղի լիճ, միշտ հալածվելով շրջապատի «քանանացիների»՝ այլադավանների (այսինքն՝ քրիստոնյաների) կողմից:

Ընդհանուր առմամբ «Վարդապետություն և Ուխտերը», հայտնությունների ժողովածու լինելով, ներդաշնակություն չունի անգամ Մորմոնի գրքի հետ, մի բան, որը բնորոշ չէ Սուրբ Գրքին: Սուրբ Գիրքը գրված լինելով բազում դարերի ընթացքում՝ զանազան մասնագիտության տեր հեղինակների կողմից (թագավորից մինչև հովիվ) ունի միայն իրեն բնորոշ հատկություն, այն է, բոլոր գրքերի ներդաշնակություն, մի բան, որ հետևանք է Ս. Գրքի միայն և միայն Աստվածային ծագում ունենալու: Ծննդոց գրքից մինչև Հայտնություն՝ նույն ձեռագիրն է երևում, չնայած տարբեր «գրիչների» և լեզուների:

Իսկ Մորմոնի գիրքը և «Վարդապետություն և Ուխտերը» գրված լինելով մի մարդու՝ Ժոզեֆ Սմիթի կողմից, ընդամենը մի քանի տարվա ընթացքում, չունեն այդ ներդաշնակությունը, ավելին, մի գրքից մի պատվիրան մերժվում կամ ժխտվում է մյուս գրքի մեկ այլ պատվիրանով: Այսինքն, կասկածելի է այդ գրքերի աստվածային ծագում ունենալու փաստը:

Ամենացայտուն օրինակը մորմոններին բնորոշ բազմակնության վերաբերող համարներն են: Այսպես, «Վարդապետություն և Ուխտերում» գրված է. «Աստված պատվիրեց Աբրահամին, և Սառան Աբրահամին կնության տվեց Հագարին: Ինչո՞ւ նա այդ արեց: Քանի որ այդ օրենք էր» (գլ. 34):

Իսկ Հակոբ 2.26-27 համարներում ասվում է. «Ես, Տեր Աստվածը, թույլ չեմ տա, որ իմ ժողովուրդը վարվի այնպես, ինչպես հնում:

Եվ այսպես, իմ եղբայրներ, լսեք ինձ և հնազանդվեք Տիրոջ խոսքերին. քանի որ ձեր միջից և ոչ մի մարդ չունենա մեկից ավելի կին, և ոչ մի հարճ»:

Աստվածային ներշնչանքով գրված գրություններն, որպես կանոն, ունեն մեկ հատկություն ևս, մարգարեականություն, այսինքն, ապագայի ընթացքը բնորոշող և այդ մասին նախօրոք ազդարարող կոչ: Անշուշտ, սուրբգրային մարգարեությունները, որոնք կատարվել են բառ առ բառ, կատարվում են և որ կկատարվեն ապագայում, ոչ մեկի մոտ կասկած չի հարուցում: Մարգարեությունների մասին պատկերացումները և դրա բայական ձևը՝ մարգարեանալը միշտ գտնվել են բոլոր կրոնական շարժումների առանցքում:

Մորմոնների պարագայում էլ, մարգարեն և նրա մարգարեությունը, որն անշուշտ պիտի ընդունվի որպես աստվածային, և հետևաբար, պիտի կատարվի կամ իրականանա իրականում: Աղանդավորական շարժումների համադրությունից կարելի է հանգել այն եզրակացության, որ չնայած նրանք առանձնացել և ծագել են մարգարեական հողի վրա, իրականում այդ մարգարեությունները չեն կատարվել ո՛չ անցյալում և ո՛չ էլ՝ ներկայում: Եվ, բնականաբար, այդ շարժումների առաջ մի նոր գերխնդիր է ծագել. բացատրել կամ մեկնաբանել թե ինչո՞ւ չի կատարվել մարգարեությունը: Որպես կանոն, նրանք մեկնաբանում են, թե այդ մարգարեությունը կատարվել է, իսկ մենք չենք իմացել կամ սխալ ենք հասկացել մարգարեության իմաստը (Ադվենտիստների մոտ Քրիստոսի Երկրորդ գալստյան գուշակությունները, Եհովայի վկաների մոտ Արմագեդոնի զանազան տարեթվեր մատնանշելը և այլն):

«Վարդապետություն և Ուխտերում» էլ անկասկած առկա է մարգարեական ոգին, բայց առայժմ չի կատարվել այնտեղի և ոչ մի մարգարեություն: Համաձայն Հին Կտակարանի եթե չի կատարվում մարգարեի ասածը, նրան քարկոծում էին, որպեսզի չմոլորեցնի ժողովրդին: Այս է որևէ մարգարեության ստուգման սկզբունքը և այս սկզբունքն է, որ հմտորեն շրջանցվում է կամ էլ այլաբանորեն մեկնաբանվում այսօրվա աղանդների ջատագովների կողմից: Եվ մինչ հիմա ոչ մի կրոնական ուղղություն, հիմնվելով այս սկզբունքի վրա, «ինքնալուծարման» հայտարարություն չի արել, այսինքն չի քարկոծվել, որպեսզի չմոլորեցնի ժողովրդին:

Այսպես, «Վարդապետություն և Ուխտերում» (գլուխ 87, 1-4) Սմիթը գրում է. «Տերը ճշմարտապես այսպես է ասում պատերազմների մասին, որ կսկսվի հարավային Կարոլինայում, որը ժամանակի ընթացքում կավարտվի բազում հոգիների մահվամբ և տանջանքներով: Եվ ժամանակ կգա, երբ պատերազմը կհասնի բոլոր ժողովուրդներին՝ սկսած այստեղից:

Ահա հարավային նահանգները կբաժանվեն հյուսիսային նահանգներից, և հարավային նահանգները կդիմեն այլ երկրների, մի երկրի, որի անունն է Մեծ Բրիտանիա, և նրանք էլ կդիմեն ուրիշ երկրների, որ պաշտպանեն իրենց և պատերազմը կտարածվի բոլոր ժողովուրդների վրա:.... Եվ այնպես կլինի, որ շատ օրեր անց ստրուկները կապստամբեն իրենց տերերի դեմ... Երկրի բնակչության մնացորդները կմիանան և կպատերազմեն ընդդեմ անհավատների»: Այս հայտնությունը տրվել է Սմիթին 1832 թվականի դեկտեմբերի 25-ին, ինչպես գրված է «Վարդապետություն և Ուխտերում»:

Չնայած մի քանի տարի հետո ԱՄՆ-ում բռնկվեց քաղաքացիական պատերազմը՝ հյուսիսի և հարավի միջև, բայց երբեք Մեծ Բրիտանիան պատերազմ չհայտարարեց ԱՄՆ-ին, բոլոր ազգերը չմիացան պատերազմին, ստրուկները չըմբոստացան իրենց տերերի դեմ, և մնացորդը՝ այսինքն ամերիկացի հնդիկները, չմիավորվեցին ընդդեմ անհավատների, այսինքն, ոչ մորմոնների:

### 4.3. «ՄԵԾԱԳԻՆ ԳՈՀԱՐԸ»

Մորմոնների երրորդ սրբազան գիրքը «Մեծագին գոհարն» է, որն ընդգրկում է Սմիթի հայտնություններից հատվածներ, թարգմանություններ և ինքնակենսագրական տեղեկություններ: 1995 թվականի ռուսերեն հրատարակության մեջ ընդգրկված են.

1. Հատվածներ Մովսեսի գրքից, որը Ծննդոց գրքի թարգմանությունն է, կատարված Սմիթի կողմից:

2. Աբրահամի գիրքը, որը եգիպտական ինչ որ պապիրուսների թարգմանությունն է, որն պատահաբար հայտնվել է Սմիթի մոտ:

3. Հատվածներ Մատթեոսի ավետարանի սմիթյան թարգմանությունից:

4. Սմիթի վկայությունը:

5. Սմիթի հավատո հանգանակը:

Այստեղ «թարգմանություն» ասելը խիստ պայմանական է, քանի որ Սմիթը չի թարգմանել, ասենք, Ծննդոց գիրքը եբրայերենից կամ հունարենից, լատիներենից կամ ասորերենից, այլ այդ տարբերակը նրան տրվել է հայտնության միջոցով, իսկ Սմիթը այն գրի է առել անգլերեն լեզվով: Եվ, չնայած դրան, գրքի հրատարակիչը՝ Սոլթ Լեյք Սիթիում գտնվող մորմոն Կենտրոնակայանը գրում է.

«Հատված Աստվածաշնչի թարգմանությունից, այնպես ինչպես այդ տրվել է Մարգարե Ժոզեֆ Սմիթին հայտնությամբ»:

Այս դեպքում, իհարկե, չի հասկացվում, թե ի՞նչն է թարգմանել Ժոզեֆ Սմիթը: Հնարավոր է երկու տարբերակ: Մի դեպքում նրան հայտնությամբ տրվել է Ծննդոցի բնագիրը և նա, տեսիլքի մեջ տեսնելով բնագիրը, թարգմանել է այն: Մորմոնի գրքի պարագայում ամեն ինչ հստակ էր, հայտնի էր թե ինչից է թարգմանում և թե ինչպես է թարգմանում: Բայց չէ՞ որ Ծննդոցի բնագիրը վաղուց է հայտնի եղել և թարգմանություններն էլ կատարվել են երկու հազար տարի առաջ և ի՞նչ կարիք կար, որ Սմիթը կրկներ այդ ամենը, երբ 19-րդ դարում արդեն Սուրբ Գրքի թարգմանությունները այդ ժամանակի բոլոր գործածական լեզուներով համարյա գոյություն ունեին:

Երկրորդ դեպքում Սմիթին հայտնվել է մի նոր բնագիր, որն էլ թարգմանել է Սմիթը: Իսկ ո՞ւր է այդ բնագիրը: Չկա: Այս դեպքում դարձյալ երկրորդման սկզբունքն է աշխատում:

### 4.4. ՄՈՎՍԵՍԻ ԳԻՐՔԸ

Այս գիրքը բաղկացած է ընդամենը մի քանի գլուխներից, ուր Ծննդոցի առաջին ինը գլուխների բովանդակությունը շարադրված է շատ ազատորեն: Այստեղ կարելի է հան-

դիպել ամեն տեսակ խառնաշփոթությունների. Հին ու Նոր Կտակարանները իրար են խառնված, Հիսուսի խոսքերը փոխանցվել են Մովսեսին, իսկ ծանրախոս Մովսեսի խոսքերը դարձել են հռետորական: Մովսեսն այստեղ այլևս օրենսդիր չէ, այլ՝ պատմիչ, պատմում է Նոր Կտակարանի մասին, Հիսուս Քրիստոսի մասին, Սուրբ Հոգու մասին, Ադամի ժամանակներում գիր ու գրչության դպրոցների գոյության մասին, ուր Ադամի երեխաները սովորում էին գրել և կարդալ:

Նման երևակայական հայտնություններով լեցուն այս գիրքը Սմիթը ներկայացնում է որպես աստվածային հայտնություն, տրված իրեն 1830 թվականի հունիսից մինչև 1831 թվականի փետրվար ամիսը: Հինգերորդ գլխի 4-6 համարները պատմում են այն մասին, թե ինչպես Ադամն ու Եվան Աստծու անունը կանչեցին, և Տերը Եդեմի պարտեզի կողմից լսեց նրանց ձայնը և խոսեց նրանց հետ, բայց նրանք չէին տեսնում Իրեն: Եվ Տերը պատվիրում է, որ երկրպագեն իրեն, իրենց հոտերի անդրանիկներին բերեն Տիրոջ առաջ: Այնուհետև հայտնվում է հրեշտակը և բացատրում Ադամին, որ այն, ինչ ինքը ասում է, Հոր Միածին Որդու խորհուրդն ունի, շնորհով և իմաստությունով լեցուն: Հովհաննես ավետարանչի այս խոսքերն ու ոգին կարծես տեղափոխվել են եդեմական պարտեզ, Ադամի ժամանակները: Այսպիսի խառնաշփոթություններ Մովսեսի անունը կրող այս գրքում ամենուր են և այն ընթերցելիս չպետք է զարմանալ դրա վրա, քանի որ նույն Սմիթն է խոսում, նույն ոգին է, Մորմոնի գրքի ոգին: Նույնիսկ 6-րդ գլխում նկարագրված է Ադամի մկրտության տեսարանը, երբ Տիրոջ հոգին Ադամին հափշտակում է, ընկղմում ջրի մեջ և հետո դուրս հանում ջրի միջից. «Այսպիսով նա մկրտվեց, և Աստծու հոգին իջավ նրա վրա և այդպիսով նա ծնվեց հոգուց և կենդանացավ նրա ներքին մարդը: Եվ նա լսեց երկնքից ձայնը. Դու մկրտվեցիր կրակով և Հոգով: Դա է վկայությունը Հոր և Որդու հավիտյանս հավիտենից» (6. 64-66):

Ինչպես տեսնում ենք, այստեղ Հովհաննես ավետարանչի խոսքերին միացել են նաև Պողոս առաքյալի աստվածաբանությունից «ներքին մարդը» (Հռոմ. 7.22), իսկ նման հայտնություններ ամեննին չեն կարող հավակնել աստվածային լինելու: Ամենազարմանալին այս գրքում Նոյի խոսքերն են (8-րդ գլուխ), ուր նա քարոզում է Պետրոս առաքյալի խոսքերով.

«Հավատացեք և ապաշխարեցեք ձեր մեղքերից, մկրտվեցեք հանուն Հիսուս Քրիստոսի, Աստծու Որդու, մեր հայրերի նման և դուք կստանաք Սուրբ Հոգին» (8.24):

### 4.5. ԱԲՐԱՀԱՄԻ ԳԻՐՔԸ

Այս գրքի հայտնագործման պատմությունը հետաքրքրական է, քանի որ, ըստ էության, գրքի լույս աշխարհ գալը լոկ պատահականության արդյունք է, մի բան, որ ամենևին բնորոշ չէ աստվածաշունչ մատյաններին:

1833 թվականին, Կիրտլենդում մի հնավաճառ է հայտնվում, բերելով մի հին եգիպտական պապիրուս: Քաղաքում անշուշտ գիտեին Սմիթին՝ որպես եգիպտական գրերի գիտակի, և այդ հնավաճառն էլ, իմանալով որ եգիպտական պապիրուսով ամերիկյան մայրցամաքում կարող է հետաքրքրվել միայն Ժոզեֆ Սմիթը, գնում է նրա մոտ և պապիրուսը 2000 դոլարով վաճառում նրան, որն այն ժամանակ բավականին մեծ գումար էր

կազմում: Սմիթն անմիջապես թարգմանում է այդ պապիրուսը և հրատարակում: Պարզվում է, որ այդ պապիրուսը գրել է անձամբ ինքը՝ Աբրահամ նահապետը, իր ձեռքով, Եգիպտոսում գտնվելու ժամանակ: Մորմոն աստվածաբաններ պնդում են, որ հետագայում այդ պապիրուսը այրվել է, և բնագիրը ոչնչացել, այսինքն՝ արդեն բնագիր է համարվում Սմիթի թարգմանությունը: Ինչպես տեսնում ենք, այստեղ դարձյալ գործում է երկրորդման սկզբունքը:

Աբրահամի գրքում ներկայացվում է նաև մի քանի պատկերներ, պատճենված պապիրուսից, բնական է, Սմիթի կողմից, համապատասխան բացատրությամբ, որն իբր նկարել է ինքը, Աբրահամը, պարզաբանելու համար իր պատմությունները:

Համաձայն որոշ մասնագետների (3, էջ 71), այդ պապիրուսը գտնվել է 1967 թվականին Նյու Յորքի թանգարաններից մեկում, և պարզվել է, որ դա սովորական թաղման արարողության մասին պատմող պապիրուս է, և ոչ մի կապ չունի Աբրահամ նահապետի հետ: Իհարկե, այս փաստարկը չի ընդունվում մորմոնների կողմից: Համեմատության համար մորմոնների ուշադրությունը պետք է հրավիրել Կումրանի[31] ձեռագրերի հայտնագործման պատմության վրա, որը, փաստորեն շատ նման է Աբրահամի գրքի պատմությանը. բնագրերը չկան, կան ընդօրինակումները, որոնք կատարվել են ավելի ուշ ժամանակներում և, հանկարծ հայտնաբերվում են երկու հազար տարվա հնություն ունեցող ձեռագրեր, որոնք հինկտակարանյան որոշ գրքերն են ներկայացնում, ի մասնավորի Եսայի մարգարեի գիրքը: Եվ պարզ համեմատությունը ցույց տվեց, որ դրանք մեր ունեցած սուրբգրային գրքերից ոչնչով չեն տարբերվում: Եզրակացությունը միանշանակ է. տարիների անցուղարձերը չեն կարող խախտել աստվածաշունչ գրքերի վավերականությունը:

Աբրահամի գրքին վավերականություն տալու նպատակով, հրատարակիչները անպայման զետեղում են այնտեղ մի քանի պատկերներ, եգիպտական մեհենագրերով և նկարներով: Այդ նկարները, ինչպես պատմում է ինքը՝ Աբրահամը, ինքն է անձամբ նկարել, որպեսզի պատկերավոր ցույց տա թե ինչ է ներկայացնում իրենից զոհասեղանը, որի վրա քուրմերը կույսերին էին զոհաբերում և ուզում էին իրեն՝ Աբրահամին էլ զոհաբերել (Աբրահամ, 1, 10-14), բայց Աբրահամը կանչում է Աստծուն, և Տիրոջ հրեշտակը ազատում է իրեն (1, 15-17):

Հաջորդ գլուխներում պարաֆրազ (ազատորեն) շարադրված է Ծննդոց 11-րդ գլխի Աբրահամին կանչելու պատմությունը՝ Ուրից մինչև Խարան և Եգիպտոս: Եգիպտոսում Աբրահամը սովորում է աստղագիտություն՝ Արևի, Լուսնի մասին գիտելիքներ, Ուրիմի և Թումիմի միջոցով նրան բացվում է Աստծու տիեզերական ամբողջ ծրագիրը, փրկությունը, կյանքի իմաստն ու նպատակը: Հետևաբար, կարելի եզրակացնել, որ Աբրահամն էլ, Սմիթի նման, իմաստություն ու գիտություն սովորել է Ուրիմի ու Թումիմի միջոցով, դառնալով այդպիսով Եգիպտական Սմիթը: Հենց դրանց միջոցով նա տեսնում է Աստծու գահը, Կոլոբ աստղը, որը գտնվում է Գահի մոտ և ղեկավարում է Տիեզերքի բոլոր աստղերին.

---

[31] 1947 թ. Մեռյալ ծովի ափին, Կումրանի անձավներում հայտնաբերված ձեռագրեր, որոնց մեջ եղել են նաև Հին Կտակարանի գրքերի բազմաթիվ ձեռագրեր:

«Եվ Տերը ասաց ինձ. Այս աստղերը կառավարվում են և դրանցից ամենամեծի անունը Կոլոբ է, որն ինձ ամենից մոտ է գտնվում: Ես այդ աստղը դրել եմ, որպեսզի կառավարի բոլոր նրանց, որոնք այն դասին են պատկանում, որին որ պատկանում է այն աստղը, որի վրա դու կանգնած ես» (Աբրահամ, 3,3):

Չորրորդ գլուխը Ծննդոց Ա գլխի աղավաղված պատմության շարադրանքն է, ուր Աստված բառը փոխարինված է բնագրային ԷԼՈՀԻՄ բառի բառացի թարգմանությամբ՝ հոգնակի թվով, որով և խախտվել է Հին Կտակարանի ամենահիմնական սկզբունքը՝ միաստվածությունը (մոնոթեիզմ):

Մյուս գրքերի հետ ներդաշնակությունն էլ խախտված է այս գրքում: Ինչպես հայտնի է Մովսեսի գիրքը Սմիթը գրել կամ հայտնությամբ ստացել է 1830 թվականին, իսկ Աբրահամի գիրքը թարգմանել է 1833 թվականին: Այդ մի քանի տարիների ընթացքում գրված գրքերում անգամ հակասություններ կան ամենահիմնական հարցերում: Այսպես, Մովսես, 2.1-ում գրված է.

«Եվ եղավ այնպես, որ Տերը դիմեց Մովսեսին և ասաց. Ահա ես քեզ հայտնություն եմ տալիս Երկնքի և Երկրի մասին, գրի առ այդ: Ես Սկիզբն եմ ու Վերջը, Ամենակալ Տերը, Իմ Միածնի միջոցով ստեղծեցի ամեն ինչ»:

Մինչդեռ Աբրահամ 4.1-ում Սմիթը գրում է.

«Եվ Տերն ասաց այդ ժամանակ. Իջնենք ներքև: Եվ նրանք իջան սկզբում, և նրանք, այսինքն Աստվածները կառուցեցին և ձևավորեցին Երկինքն ու Երկիրը»:

### 4.6. ԺՈԶԵՖ ՍՄԻԹԻ ՄԱՏԹԵՎՈՍԻ ԱՎԵՏԱՐԱՆԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ (ԳԼ. 24)

Մատթեոսի ավետարանի 24-րդ գլխի թարգմանությունն էլ է հայտնությամբ տրվել - Ժոզեֆ Սմիթին 1831 թվականին, որն իրենից ներկայացնում է աղավաղված և խառնաշփոթ շարադրանքը 24-րդ գլխի, որն անշուշտ որևէ արժեք չի ներկայացնում:

### 4.7. ԺՈԶԵՖ ՍՄԻԹԻ ՀԱՎԱՏՈ ՀԱՆԳԱՆԱԿԸ

Ժոզեֆ Սմիթի գրվածքների մեջ ամենաթանկագին բանը, կամ մեծագին գոհարը, իհարկե ՀԱՎԱՏՈ ՀԱՆԳԱՆԱԿՆ է, որը գրել է ինքը՝ Սմիթը, առանց որևէ միջանկյալ օգնության, առանց Ուրիմ Թումիմի, հայտնաբերված պապիրուսի կամ ոսկե թերթերի: Այս առումով էլ Հանգանակը կարևոր է այնքանով, որ հենց այստեղ ենք տեսնում Ժոզեֆ Սմիթ առաքյալին:

Հանգանակը բաղկացած է 13 դրույթներից, նման է քրիստոնեական հանգանակներին, խոսում է քրիստոնեական բառերով, բայց ամեննին էլ քրիստոնեական չէ:

Ներկայիս Մարգարեն՝ Գորդոն Խինկլին գրում է. «"Մենք հավատում ենք Աստծուն, - Հավիտենական Հորը, Նրա Որդուն՝ Հիսուս Քրիստոսին և Սուրբ Հոգուն": Սա հավատո հանգանակի առաջին դրույթն է և համառոտ ներկայացնում է մեր ուսմունքը: Մենք չենք հավատում ոչ Աթանասյան, ոչ Նիկիական հավատո հանգանակներին և ոչ էլ մի այլ հանգանակի, որը հիմնված է ավանդության և մարդկանց տրամաբանական եզրահանգումների վրա:

Մենք մեր ուսմունքի համար որպես հիմք ընդունում ենք Ժոզեֆ Սմիթի պնդումը այն մասին, որ երբ ինքը աղոթում էր իմաստության պարգևի համար, «Լույսը լրիվ իջավ ինձ վրա, իմ առջև հայտնվեցին լուսեղեն երկու կերպարանքներ, որոնց փառքն ու պայծառությունը գերազանցում էր արևին: Լուսեղեն կերպարանքներից մեկը խոսեց ինձ հետ՝ տալով իմ անունը: Այնուհետև մատնացույց անելով մյուսին նա ասաց. "Սա է իմ Սիրեցյալ Որդին: Լսի՛ր նրան"»[32] (1, էջ 3-4):

Այնուհետև Խինկլին ներկայացնում է իրենց ուսմունքի առանցքը. «Ես հայտարարում եմ, որ եթե Ժոզեֆ Սմիթը իրոք խոսել է Հայր-Աստծու և նրա սիրեցյալ որդու հետ, ապա մնացած ամեն բան, ինչի մասին նա խոսել է - ճշմարտություն է: Այս է այն առանցքը, որի շուրջը պտտվում են փրկության և հավիտենական կյանք տանող դարպասները»:

Այսպիսի պարզունակ տրամաբանությամբ էլ շաղախված են մորմոնների վարդապետական բոլոր դրույթները: Ոչ Ս. Գիրքը և ոչ էլ որևէ տրամաբանական եզրահանգում կարևորություն չի ներկայացնում. կարևորը միայն և միայն Ժոզեֆ Սմիթի տեսիլքներն են ու նրա խոսքերը: Ստորև ներկայացնում ենք սմիթյան հանգանակը, որը ներծծված է հենց այդպիսի տրամաբանությամբ:

1. Մենք հավատում ենք Աստծուն, Հավիտենական Հորը, Նրա Որդուն՝ Հիսուս Քրիստոսին և Սուրբ Հոգուն:

Այս առաջին կետից երևում է, որ հանգանակը ավելի բազմաստվածյան (պոլիթեիստական) է, քան՝ միաստվածյան (մոնոթեիզմ): Այստեղ բացակայում է «մի» բառը, որն առկա է քրիստոնեական հավատամքներում, ինչպես Նիկիականում՝ «Հաւատամք ի մի Աստուած»: Այս կետից անգամ չի բխում Հիսուս Քրիստոսի և Սուրբ Հոգու Աստվածությունը, այսինքն, Սուրբ Երրորդության գոյությունը որպես մեկ Աստված: Այդպես էլ պիտի լիներ. Սմիթյան աստվածաբանության մեջ հաճախ է Սուրբ Հոգին ներկայանում որպես Աստծու զորություն, հեղուկ՝ որով Աստված իր կամքն է թելադրում կամ իրականացնում:

Ներկայիս մարգարեն՝ Խինկլին, խոսելով Ժոզեֆ Սմիթի Առաջին տեսիլքի մասին, գրում է. «Նրա առաջ երկու նյութական էակներ էին, նա (Ժոզեֆ Սմիթը) տեսավ նրանց: Նրանք մարդկանց ձև ունեին, միայն ավելի հրաշալի և փառահեղ: Նա (Ժոզեֆ Սմիթը) խոսեց նրանց հետ: Նրանք խոսեցին նրա հետ: Նրանք ամորֆ հոգիներ չէին: Նրանցից ամեն մեկը առանձին դեմք էր: Նրանք մարմին և ոսկոր ունեցող էակներ էին»[33]:

Իսկ սմիթյան Հիսուս Քրիստոսը, իր նախագոյության ժամանակ, սատանայի հետ հարազատ եղբայրներ էին. սկզբում սատանան է իր «թեկնածությունը» դնում՝ մարդկանց փրկիչ լինելու համար, բայց մերժվում է, քանի որ ապստամբում է, և փրկիչ լինելու պատիվը անցնում է Հիսուս Քրիստոսին՝ եղբորը (Մովսես, 4.1-4, նաև Աբրահամ, 3.26-28):

---

[32] Лиахона, январь, 1999, էջ 82:

[33] Նույն տեղում:

Սմիթի գրվածքների մեջ ներդաշնակության բացակայությունը օրինաչափություն է դառնում: Հստակության բացակայությունը, իհարկե, որոշակիորեն թեթևացնում է մորմոն քարոզիչների գործը, քանի որ իրարամերժ գաղափարների առկայության դեպքում ամեն հարցի համար կարելի է գտնել համապատասխան բացատրություն:

«Վարդապետություն և Ուխտերում» Սմիթը գրում է. «Հայրը մարմին ունի և ոսկորներ, այնպես կապված իրար, ինչպես մարդու մամինը, նույնը և Որդին է, բայց Սուրբ Հոգին մսից և ոսկորներից մարմին չունի, այլ հոգևոր էություն է: Հակառակ դեպքում Սուրբ Հոգին չէր կարող բնակվել մեր մեջ» (130.22), իսկ մի ուրիշ տեղում նա գրում է. «Եվ Տերը ասաց. Իջնենք ներքև. և նրանք սկզբում իջան, և նրանք, այսինքն Աստվածները կառուցեցին և ձևավորեցին Երկինքները և Երկիրը» (Աբրահամ, 4.1): Այսպիսի բաբելական խառնուրդի մեջ հստակ աստվածաբանություն չի կարող լինել:

2. Մենք հավատում ենք, որ մարդիկ կպատժվեն իրենց իսկ գործած մեղքերի, այլ ոչ թե Ադամի մեղսագործության համար:

Այս դրույթով վերացվում է սկզբնական կամ ադամական մեղք հասկացողությունը, համաձայն որի սկզբնական մեղքը գոյություն ունի մարդկանց մեջ ծնվելու պահից սկսած: «Մեղք» հասկացողությունը, այսպիսով, զրկվելով սկզբնապատճառից, դառնում է ենթակայական (սուբյեկտիվ), և կորցնում է իր առարկայական (օբյեկտիվ) իմաստը: Այդպիսով, որպես հետևանք, կտրվում է փրկագործության շղթան:

3. Մենք հավատում ենք, որ Քրիստոսի քավությամբ ողջ մարդկությունը կարող է փրկվել՝ հնազանդվելով Ավետարանի օրենքներին և ծեսերին:

Այս դրույթը ներկայացնում է մորմոնական փրկությունը: Իսկ թե ի՞նչ են ներկայացնում «Ավետարանի օրենքներն ու ծեսերը» բացատրվում է հաջորդ դրույթում:

4. Մենք հավատում ենք, որ Ավետարանի հիմնական սկզբունքներն ու ծեսերն են.

առաջին. հավատք Տեր Հիսուս Քրիստոսի հանդեպ,

երկրորդ. ապաշխարություն,

երրորդ. մկրտություն ընկղմամբ՝ մեղքերի թողության համար,

չորրորդ. Սուրբ Հոգու շնորհում (ընդունում) ձեռնադրությամբ:

Այս դրույթը ընդունելի է քրիստոնեական տեսանկյունից այնքանով, որ մասն է կազմում քրիստոնեական ընդհանուր փրկագործության:

Ընդհանուր առմամբ քրիստոնեական փրկագործության շղթան՝ «Հավատ - զղջում - մկրտություն - մեղքերի թողություն -որդեգրություն -...» բավարար է անհատին փրկագործության հասցնելու համար, իսկ ձեռնադրությունը՝ նվիրապետական ծառայության անցնելու համար է, այսինքն, պարտադիր չէ, որ բոլորը ձեռնադրված լինեն:

Հասկանալի է, թե Սմիթն ինչու է այդ շղթայի վերջում ավելացրել ձեռնադրությունը՝ այն պարտադիր համարելով բոլորի համար, այսինքն, սմիթյան հանգանակը ներկայացնում է միայն մորմոն եկեղեցին և կարծես նրա համար էլ գրված է: Այսինքն, բոլորը պետք է ձեռնադրվեն՝ փրկվելու համար, և դրանով իսկ կախված լինեն ձեռնադրողից,

որն հայտնությամբ և աղոթքներով է որոշում այս կամ այն արժանավորին (տե՛ս հաջորդ կետը):

5. Մենք հավատում ենք, որ մարդ պետք է կանչված լինի Աստծու կողմից այն մարդկանց մարգարեությամբ և ձեռնադրությամբ, որոնք իշխանություն ունեն, որպեսզի Ավետարանը քարոզի և նրա ծեսերը կատարի:

Այս դրույթ այն ծայրահեղ սկզբունքներից է, որոնք պարտադրում են անդամներին գնալու ավետարանչության լոկ նրա համար, որ աշխարհը առանց իրենց կկործանվի, քանի որ նրանք աստվածային հայտնությամբ են կանչվել:

Այստեղ կարելի է առանձնացնել հետևյալ կետերը.

ա) Կանչը Աստծու կողմից:

բ) Այդ կանչը իրականացնողները իշխանություն ունեցողներն են, այսինքն, եկեղեցու ղեկավարները:

գ) Կանչի նպատակն է ավետարանչության գնալը և խորհուրդների կատարումը:

Ինչպես տեսնում ենք, այս պատվերները, որոնք արդեն իսկ հայտնի էին Նոր Կտակարանից, այստեղ հարմարեցված են Ժոզեֆ Սմիթ Մարգարեի անձի գործունեությանը և նրան է ներկայացնում.

ա) Սմիթը կանչվել է հրեշտակի կողմից, բ) Սմիթին երկնային քահանայության շնորհ է տրվել և գ) նրան պատվիրվել է ավետարանչության կազմակերպումը ամբողջ աշխարհում:

6. Մենք հավատում ենք նույն կազմակերպությանը, որը գոյություն ուներ Նախնական Եկեղեցում՝ իր առաքյալներով, մարգարեներով, հովիվներով, ուսուցիչներով, ավետարանիչներով և այլն:

Զգտումը արմատները զցել Նախնական եկեղեցում և այդպիսով համարվել նրա միակ իրավահաջորդը՝ ամենատարածված սկզբունքն է բոլոր կրոնական շարժումներում: Համաձայն Սմիթի քրիստոնեական և ոչ մի եկեղեցի այլևս հաճելի չէ Աստծուն, և - միայն իր՝ Սմիթի հիմնածն է հաճելին: Մորմոն եկեղեցու վարչական կառույցն էլ նմանեցված է Նախնական եկեղեցու կառուցվածքին, այն տարբերությամբ, որ Նախնական եկեղեցում արդեն ահարոնյան քահանայություն չկար, այն փոխարինվել էր Մելքիսեդեկյան քահանայության կարգով, որն եկել էր փոխարինելու հին քահանայությանը (Եբրայեցիներին, 5-7 գլուխներ):

Հին Կտակարանի՝ ստվերականի փոխումը Նոր Կտակարանի՝ լույսի, նշանակում է «ստվերական» քահանայության՝ ահարոնյան քահանայության փոխարինումը նոր՝ մելքիսեդեկյան քահանայության, իսկ «լույսի» առկայության դեպքում «ստվերը» վերանում է[34]: Ուստի երբ մորմոն եկեղեցին վերստին «հարություն» է տալիս «ստվերին»՝ ահարոնյան քահանայությանը, դրանով իսկ հավակնում է Հին Կտակարանի իրավահաջորդը լինելուն:

---

[34] * «Ստվերը» որպես Հին Կտակարան և «լույսը» որպես Նոր Կտակարանի խորհրդանիշ տարածված է մանավանդ մեր շարականներում, ինչպես նաև Տաթևացու մոտ (47, էջ 369):

7. Մենք հավատում ենք լեզուների պարգևին, մարգարեության, հայտնության, տեսիլքների, բժշկելու, լեզուների թարգմանության և այլ պարգևների:

Այստեղ թվարկված են Սուրբ Հոգու պարգևները (Ա Կորնթ. 12.1-11), բայց այդ ամենը ընդգրկել Հանգանակի մեջ, նշանակում է պարտադրել եկեղեցու անդամներին սահմանափակվել միայն այդ պարգևներով, այսինքն, Սուրբ Հոգու գործունեությունը սահմանափակել ինչ-որ շրջանակների մեջ, մանավանդ որ այս դրույթը ավարտվում է անորոշ «և այլն»-ով: Ի՞նչ է այդ «և այլն»-ը, եթե ոչ ճանապարհ հետագա կամայական հավելումների համար:

8. Մենք հավատում ենք Աստվածաշնչի Աստծու խոսքը լինելուն, որքանով այն ճիշտ է թարգմանված: Մենք հավատում ենք նաև, որ Մորմոնի գիրքը ևս Աստծու խոսքն է:

Աստվածաշնչի ընդունելությունը, համաձայն այս կետի, կախված է թարգմանության ճշգրտությունից: Այսինքն, այն, ինչ ընդունելի չէ, կարելի է որակել որպես թարգմանչական անկատարություն:

Իսկ ինչ վերաբերում է Մորմոնի գրքին, ապա ըստ այս դրույթի այն կատարյալ հայտնություն է և, հետևաբար, խոսք լինել չի կարող թարգմանության որակի մասին: - Համեմատելով Մովսեսի, Աբրահամի, Մատթեոսի Ժ. Սմիթի հայտնությամբ արված թարգմանությունները իրական սուրբգրային համապատասխան հատվածների հետ, կարելի է բացահայտ տեսնել, թե որն է կատարյալ թարգմանությունը և հայտնությունը:

Այս դրույթով, փաստորեն, Մորմոնի գիրքը դրվում է նույն դասին, ինչ որ Սուրբ Գիրքը: Ավելին, ըստ այդ դրույթի, Ս. Գրքի Աստծու խոսք լինելու համար մի պայման է դրված, մինչդեռ Մորմոնի գրքի պարագայում ոչ մի պայման չկա: Այսինքն՝ Մորմոնի գրքի աստվածաշունչ լինելը անվերապահորեն է ընդունվում, իսկ Ս. Գրքի համար «եթե» կա:

9. Մենք հավատում ենք այն ամենին, ինչ Աստված հայտնել է, այն ամենին, ինչ հայտնում է և հավատում ենք, որ դեռ շատ մեծ ու կարևոր բաներ Նա ունի մեզ հայտնելու Աստծու արքայության մասին:

Այստեղ հայտնություններին շարունակական բնույթ է տրվում: Դրանով իսկ վավերացնելով իր՝ Սմիթի և նրա հաջորդ մարգարեների հետագա հայտնությունները:

10. Մենք հավատում ենք բառի ուղղակի իմաստով Իսրայելի Տան հավաքմանը, նրա տասը ցեղերի վերականգնմանը, Սիոնի (Նոր Երուսաղեմի) կառուցմանը ամերիկյան աշխարհամասում, և որ Քրիստոսը ինքը կթագավորի երկրի վրա ու երկիրը նորանալով կընդունի իր դրախտային փառքը:

Իսրայելի կորած տասը ցեղերը նրանք են, որ Ռոբովամի ժամանակ ըմբոստացան և բաժանվելով՝ առանձին պետություն ստեղծեցին՝ Իսրայելը, որը Պատմության թատերաբեմից առաջինը վերացավ, մինչ Հուդան կամ Հրեաստանը մնաց մի քանի դար ևս: Ա-

հա հենց այս տասը ցեղերի վերականգնումն է, որ ակնարկում է այս դրույթը[35]: Նորօրյա բոլոր աղանդները, որպես կանոն, իրենց համարում են հենց այդ կորած տասը ցեղերը, որոնք «վերականգնվել» են:

11. Մենք պահանջում ենք մեր սեփական խղճի թելադրանքով Ամենակարող Աստծուն երկրպագելու մեր բացառիկ իրավունքը: Նույնպիսի իրավունք մենք ընդունում ենք բոլոր մարդկանց համար: Թող մարդիկ երկրպագեն ում, ինչպես և որտեղ կամենան:

Կրոնական ազատություն հռչակող այս հոդվածը տարօրինակ է այնքանով, որ չի համապատասխանում մորմոն դավանանքին, որը չի ընդունում այլ կրոնների ճշմարտացիությունը: Հավանաբար այս կետը կրոնական իմաստ չունի, և զուտ քաղաքական հոդված է, որևէ պետության մեջ գործող խղճի ազատության գոյություն ունեցող օրենքին չհակադրվելու համար:

12. Մենք հավատում ենք օրենքին հնազանդվելուն, այն հարգելուն և պաշտպանելուն, թագավորներին, նախագահներին, դատավորներին և մյուս իշխանավորներին հպատակվելուն:

Բազմակնության խնդրի առումով նշել ենք, որ Մորմոն մարգարեները ինչպես նոր հայտնությամբ փոխեցին իրենց դիրքորոշումը (Վուդրաֆի մանիֆեստը): Այս դրույթով մորմոնները էապես տարբերվում են մյուս կրոնական ուղղություններից, որոնք անհանդուրժող կեցվածք են ցուցաբերում (օրինակ, հոգեգալստականները, Եհովայի վկաները և այլն): Այս ճկուն դիրքորոշումը շատ բնորոշ է մորմոններին, ի տարբերություն շատ պահպանողական ուղղությունների: Այլ կերպ ասած այս «այն ինչը չի կարելի շրջանցել, պետք է ենթարկվել» հարմարվողական դրույթն է:

13. Մենք հավատում ենք ազնիվ, ճշմարիտ, ողջախոհ, բարեսիրտ և առաքինի լինելուն, բոլոր մարդկանց բարիք անելուն: Իրավացիորեն մենք կարող ենք ասել, որ հետևում ենք Պողոս Առաքյալի հորդորանքին: Մենք հավատում ենք ամեն բանի, ապավինում ենք ամեն բանի, տոկացել ենք շատ բաների և հույս ունենք տոկալ ամեն բանի: - Մենք ձգտում ենք այն ամենին, ինչ առաքինի է, գեղեցիկ, բարեհամբավ, արժանի գովեստի:

Այստեղ, իհարկե, Պողոսի խոսքերի կրկնությունն է, և հենց դա է, որ լավագույնս բնորոշում է մորմոն եկեղեցու անդամներին: Պողոս առաքյալի հորդորներին (Կողոս. 3.5-12) հնազանդվելը խրախուսելի և գովելի է ոչ միայն մորմոնների, այլ նաև բոլոր մարդկանց համար: Այնպես որ Սմիթի այս կետը որևէ նորություն կամ հայտնություն չի բերում աշխարհին, բացի ավետարանական պատվիրանների կրկնությունից:

[35] * Այս առումով պատահական չէ մորմոնների եկեղեցու ամբողջական անվանման մեջ «վերջին օրերի» բառերը, որովհետև, համաձայն այդ դրույթի, նրանք հավատում են վերջին օրերին Իսրայելի տասը ցեղերի վերականգնմանը: Այդ կարծիքը ընդունված էր եղել հնում: Տաթևացու մոտ էլ կա ակնարկություն այդ մասին. «Գիրք հարցմանցում» նա, Գոգի և Մագոգի մասին խոսելիս, գրում է, որ տասը ցեղերը՝ հրեաները, աշխարհի վախճանին վերականգնվելու են և - հավաքվելու են Երուսաղեմում (էջ 708):

# 5. ՄՈՐՄՈՆՆԵՐՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

## 5.1. ԱՍՏՎԱԾ ՄՈՐՄՈՆՆԵՐԻ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հին Կտակարանի ամենակարևոր կետերից մեկը՝ Շեման[36] (Բ Օր. 6.4-9), հռչակում է. «Ով Իսրայել, լսիր, մեր Տեր Աստված մեկ Տեր է»:

Այս հայտնությունը, որը կարելի է անվանել նաև հինկտակարանյան միաստվածության (մոնոթեիզմ) բանաձև, առանձնացնում էր Իսրայելին իրեն շրջապատող ազգերի բազմաստվածությունից (պոլիթեիզմ): Քրիստոնեական հայտնությունը Աստծու մասին, հայտնությունն է այն բանի, որ Սուրբ Երրորդություն դա Մեկ Աստված է, և այդ հայտնությունը, փաստորեն, հինկտակարանյան հայտնության լրումն է:

Հին Կտակարանում Աստված շատ անուններով է հանդես գալիս. Էլոհիմ, Եհովա, Ադոնա, Էլ Գեբար, ինչպես նաև այս անունների համադրությամբ, օրինակ, Եհովա-Էլոհիմ, Եհովա-Սաբաովթ և այլն:

Եբրայերենում երբ գոյականի հոգնակին օգտագործվում է եզակի իմաստով, ցույց է տալիս նրա մեծությունը, հզորությունը, վեհությունը և ինչ-որ տեղ այդ քանակականը վերափոխվում է որակականի[37]: Այդ առումով էլ Ծննդոց 1.1-ում elohim-ը՝ Աստծու անունը, ցույց է տալիս Աստծու զորության անսահմանափակությունը: Այդ համարում բայը՝ barah (=ստեղծեց) եզակի թվով է, ինչը ցույց է տալիս elohim-ի եզակիությունը (նույն տեղում, Հ146, 2): Այդ առումով էլ Հին Կտակարանը Էլոհիմ-Աստված ասելով երբեք չի հասկացել աստվածներ, չնայած որ Հին Կտակարանը ունի elohim-ի հոգնակի կիրառությունն էլ, ինչպես օրինակ Սաղմոս 8.5-ում, ուր elohim-ը վերաբերում է հրեշտակներին կամ հաճախ դատավորներին (Ելք 21.6, 22.7-8 և այլն)[38]:

Մորմոն վարդապետությունը Աստծու մասին վերին աստիճանի խճճված է. այստեղ առկա է թե՛ Քրիստոնեական Երրորդությունը, որպես մեկ Աստված և թե՛ բազմաստվածությունը: Քրիստոնեական ընկալումով դժվար է պատկերացնել մորմոնների «արյուն և միս, ոսկոր» ունեցող Աստծուն: Համաձայն սմիթյան հանգանակի 9-րդ կետի, Աստված մորմոն եկեղեցու միջոցով դեռ նոր հայտնություններ պիտի տա աշխարհին: Իսկ սա նշանակում է, որ Աստծու մասին գիտելիքները կարող են զարգանալ և ընդարձակվել նորանոր հայտնություններով և համապատասխան որոշումներով:

Ընդհանուր գծերով Աստված մորմոնների մոտ հոգնակի է: Եբրայական «ԻՄ» հոգնակի ածանցը նշանակում է աստվածների գոյություն, - տրամաբանում են մորմոն վարդապետները: Սմիթյան հանգանակի 8-րդ կետի համաձայն, Ս. Գրքի թարգմանությունը սխալ է հենց առաջին տողերից սկսած, քանի որ Ծննդոց 1.1-ում Աստվածներ չի գրում, այլ՝ Աստված: Ալմա 11.44-ում նկարագրված է Հայրը, Որդին և Սուրբ Հոգին՝ որպես կա-

---

[36] * Հին Կտակարանի եբրայերեն բնագրի գրքերի առաջին բառը համարվել է տվյալ գրքի անվանումը: Օրինակ Ծննդոց գիրքը եբրայերենում կոչվում է Բիրեյշիթ (որ թարգմանվում է՝ սկզբում), քանի որ այդ բառով է սկսվում, իսկ Ելից գիրքը՝ Շեմոտ (թարգմանվում է՝ անուններ) և այլն: Բ Օր. 6.4 համարն էլ սկսվում է շեմա (որ թարգմանվում է՝ լսիր) բառով, որով էլ հայտնի է այդ համարը:

[37] Еврейская грамматика Гезениуса, Спб, § 108, 2б.

[38] Wilson՛s Old Testament, էջ 13, 195, 234, համապատասխան հոդվածները, Hebew and english lexicon of the Old Testament, Oxford, 1978, էջ 41-44:

տարյալ միություն, բայց միևնույն ժամանակ մյուս հայտնություններում Սմիթը ներկայացնում է Աստծուն որպես աստվածներ (Աբրահամ 4.1), արյուն և ոսկոր ունեցող նյութական մարմիններ (Վարդապետություն և Ուխտեր § 132, 22):

«Ինչպե՞ս կարող է երեքը մեկ լինել և մեկը՝ երեք: Դրանք առանձին աստվածներ են և առանձին անձեր», - գրում է Սմիթը (7, էջ 193):

Աստծու մասին մորմոնական պատկերացումները համառոտ կարելի է ներկայացնել այսպես.

- Հայրը և Որդին մարմին ունեն: Ոչ միայն Հիսուս մարմին ու արյուն ունի, այլ նաև՝ - Հայրը:

- Շատ աստվածներ կան Տիեզերքում և, մասնավորաբար, սուրբգրային Հայրը Երկիր մոլորակի աստվածն է (հմմտ. Ա Կորնթ. 8.5): Սմիթը այդպես էլ ասում է. «Պողոսն է ասում, որ շատ աստվածներ և շատ տերեր կան» (7, էջ 193): Եվ այդ բոլոր աստվածները սփռված են Տիեզերքով մեկ:

- Տրինիտար (=Երրորդություն) աստվածը շատ տարօրինակ աստված է:

- Աստվածների խորհուրդը որոշում է, թե որ աստվածը որ երկրի վրա գնա՝ այնտեղ աստված՝ Հայր լինելու համար (Աբրահամ, 4-5 գլուխներ):

- Երբ Ս. Գրքում ասվում է մեկ Աստված, դա աստվածներից մեկն է, և այդպես է գրվում մեզ հասկանալի լինելու համար. նա մեր երկրում մեկն է: Ինչպես Աստված մարդ է դառնում, այնպես էլ մարդը պետք է Աստված դառնա:

- Ադամը եդեմական պարտեզում ցելեստիալ՝ երկնային հավիտենական մարմնով էր (տե՛ս ստորև), նա կազմակերպեց այս աշխարհը, նա Միքայել հրեշտակապետն է, նա մեր Հայրն է ու մեր Աստվածը (4, էջ 221):

- Աստված (ինչպես էլ նրան պատկերացնենք՝ Տիեզերքում շատ, բայց որևէ երկրում՝ մեկ) արարիչ չէ, այլ կազմակերպիչ է: Նա նյութը չի ստեղծել, այլ եղածը ձևավորել, կազմավորել է:

- Աստված մի ժամանակ եղել է այնպես, ինչպես մենք ենք հիմա, նա աստիճանաբար բարձրանում է դեպի կատարելություն:

### 5.2. ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ

Մորմոնների Հիսուս Քրիստոսը ամենևին սուրբգրային Հիսուս Քրիստոսը չէ, թեև նրանք պնդում են, թե հավատում են Հիսուս Քրիստոսին և մորմոնական բոլոր գրքերում Հիսուս Քրիստոս անունը հանդիպում է համարյա ամեն մի էջում:

- Մորմոնները ընդունում են, որ Հիսուս Քրիստոս Աստծու որդին է, անդրանիկը, առաջին ծնունդը, մինչ մնացած բոլոր ծնվածները, նրա համեմատությամբ ավելի ուշ են ծնվել:

- Փաստորեն Ադամն ու Հայր Աստված նույնացվում են: Այստեղից հետևում է, որ Հիսուս ոչ թե Սուրբ Հոգուց ծնվեց, այլ Ադամից (7, 15): Հետևաբար մերժվում է Հիսուսի կուսական ծնունդ լինելը:

- Բոլոր մարդիկ իրենց մեղանչումից առաջ գոյություն ունեին որպես հոգիներ, և նրանք սպասում են հարմար առիթի՝ մարդեղանալու համար: Այդպես էլ Քրիստոս, Սատանայի հոգևոր եղբայրը, մարդեղացավ, և հարությունից հետո աստվածացավ: Այս առումով էլ քրիստոսաբանական հարցերը, որոնք հուզել են I-V դարերում Քրիստոսի Եկեղեցուն, մորմոնների մոտ ուղղակի գոյություն չունեն:

Ըստ մորմոնների Քրիստոսը ոչ միայն մարդկանց նման է, այլև բնությամբ նույնն է: - Մորմոնները սիրում են Քրիստոսին անվանել՝ մեր սիրելի եղբայրը (4, 230):

## 5.3. ՍՈՒՐԲ ՀՈԳԻ

Սուրբ Հոգին, ի տարբերություն Հորը և Որդուն մարմին և արյուն չունի, և հետևաբար, նրան որպես Աստված՝ Հորը կամ Որդուն հավասար, չի կարելի ընդունել: Ուստի մնում է միակ տարբերակը. նա չունի դեմք՝ անդեմ է և հետևաբար չի կարող լինել անձնավորություն:

Հենց այդպես էլ նրանք ընդունում են.

- Սուրբ Հոգին մի տիեզերական հեղուկ է, որ տարածվում կամ լցվում է մարդկանց մեջ:

- «Վարդապետություն և Ուխտերում» հայտնվում է, որ «Հայրը, Որդին և Սուրբ Հոգին մի Աստված է, անվերջ և հավիտենական» (Ճ 20, 28): Եվ չնայած Հայրը և Որդին նյութական են, Սուրբ Հոգին նյութական չէ և ոչ էլ դիմավոր անձ է:

Այսինքն, այդ տիեզերական հեղուկը անբաժան է Հորից և Որդուց և միևնույն ժամանակ անձ չէ, զորություն է (հմմտ. Եհովայի վկաների տեսակետը Սուրբ Հոգու մասին):

## 5.4. ՓՐԿԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Սմիթյան հանգանակի 3-րդ կետի համաձայն մարդիկ կարող են փրկվել, եթե հնազանդ գտնվեն Ավետարանի օրենքներին և ծեսերին: Նույն կետի համաձայն մորմոնները ընդունում են, որ Քրիստոսի քավությունը անհրաժեշտ է փրկության համար:

«Մենք գիտենք, որ նրա ողորմության շնորհիվ մենք փրկություն ենք ստանում, այն ամենից հետո, ինչ մենք կարող ենք անել» (2 Նեֆի 25, 23): Ընդհանուր առմամբ մորմոն փրկաբանությունը ձևակերպվում է այսպես.

Բոլոր մարդիկ մինչ ծնվելը գոյություն ունեն որպես հոգիներ, որպես Հայր Աստծու որդիներ: Այնուհետև մտնելով երկրային կյանք, ստանում են ֆիզիկական մարմին, և երկրային կյանքի ընթացքում արժանանում են փրկության՝ պահելով ավետարանի պատվերները և ծեսերը, Աստծու օրենքները: Մահվանից հետո հոգիները սպասում են հարության օրվան (2 Նեֆի 9.12-13, Ալմա 11.43, 21.9, նաև 7, էջ 195):

Սմիթյան հանգանակի 2-րդ կետի համաձայն, մարդիկ պիտի աշխատեն իրենց փրկությունը ձեռք բերելու համար: Քրիստոսի քավությունը անցյալի մեղքերի համար է, և ոչ թե ապագայում գործած:

## 5.5. ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆԸ

Ժամանակին մորմոն ասելով բազմակնություն էին հասկանում: Այդպիսին էր նրանց ընտանեկան կառուցվածքը՝ Սմիթի ժամանակներից սկսած: Հետագայում, երբ արգելվեց պետականորեն այդ խորհուրդը, բնական է, մեջտեղ եկավ մորմոնական հայտնությամբ Վուդրաֆի մանիֆեստը, հայտարարելով միակնությունը օրենք մորմոնների համար:

Բայց բազմակնությունը քողարկելու մի այլ ճանապարհ գտան մորմոն աստվածաբանները: «Շրջանառության» մեջ դրվեց երկնային (ցելեստիալ) և երկրային ամուսնության գաղափարները: Երկնային ամուսնությունը հատուկ ծես է, և այն կատարվում է մորմոն տաճարում: Ընտանեկան բոլոր հարաբերակցությունների համար տաճարում կատարվում է դրանց «հավիտենականացման» խորհուրդը, որպեսզի երկնային կյանքում նրանք մնան և չանցնեն ու վերանան այս անցողիկ կյանքի հետ միասին (2, Ճ 132, 15-16):

## 5.6. ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆ ՄԵՌԱԾՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ըստ մորմոնների Ճշմարիտ եկեղեցին հաստատվեց 1830 թվականին միայն, հետևաբար մինչ այդ մեռածները, փաստորեն, զուրկ են մնացել մորմոնական փրկությունից: Այդ բացը լրացնելու համար մորմոն եկեղեցին ընդունել է մի յուրահատուկ խորհուրդ, որը ոչ մորմոն մեռածներին հնարավորություն է տալիս հետագայում՝ հարություն առնելիս, միանալ իսկական մորմոններին (2, Ճ 128, 5): Մինչդեռ պարզ է, որ Պողոս առաքյալի այդ մեկ ակնարկությունը (Ա Կորնթ. 15, 29)՝ մեռածների փոխարեն մկրտվելու մասին, չի նշանակում որ մեռելների փոխարեն փոխանորդական մկրտություն կատարելով մեռելները փրկության են արժանանում:

Հարության հույսի մասին խոսելիս, Պողոս առաքյալը կորնթացիներին բերում է «վասն մեռելոց մկրտվելու» օրինակը, որն հավանաբար «ուրիշ բան չէր, եթե ոչ անկնունք մեռնողներու քրիստոնյա ազգականներու կողմէ հանուն անոնց մկրտվելը, որը մեռելոց համար աղոթելու սկզբունքից կբխի» (ՇՊ, էջ 69):

«Եկեղեցին չի աղոթում հեթանոս, հերետիկոս, անհավատ և անկրոն մեռելների համար» (նույն տեղում) և այս սկզբունքն է, որ արթուն է պահում եկեղեցու անդամներին և «փրկության ժամանակաշրջանը հիմա է, երբ ապրում ենք երկրի վրա, մեռնելուց հետո, ինչքան որ գիտենք, ապաշխարելու և հետևաբար փրկվելու հնարավորություն չկա» (նույն տեղում):

Մեկ այլ մեկնության համաձայն, այդ համարում «մեռյալը» մեռնող մարմինն է, որի համար էլ մկրտությունը իմաստ է ստանում հարության փաստի գոյության դեպքում (TB, 1 Կորնթ. 15.29-30 հատվածի մեկնությունը):

Հետառաքելական շրջանում՝ II-III դդ. նման ծես գոյություն է ունեցել միայն աղանդավորների մեջ, որոնց և անդրադարձել է Եզնիկը[39]: Նա ասում է, որ համաձայն Տիրոջ

[39] * ԵԿ, Մարկիոնի աղանդի հերքումը, էջ 239-241:

խոսքի, «եթե մեկը նորից չծնվի, չի կարող տեսնել Աստծու արքայությունը», և «եթե մեկը չծնվի ջրից ու հոգուց, չի մտնի երկնքի արքայությունը» (Հովհ. 3.3-5): Այսպիսով, - եզրակացնում է Եզնիկը, - պարզ է, որ յուրաքանչյուրն իր համար պետք է մկրտվի, և ոչ թե մեկը մյուսի փոխարեն» (ԵԿ, էջ 239):

Ծեսը կատարվում է մեռածի գերեզմանի վրա, ուր մեռածի բարեկամներից մեկին մկրտում են նրա փոխարեն: Ի միջի այլոց վերափոխված Վերջին օրերի սրբերի եկեղեցին, ի տարբերություն Յութայի մորմոնների, չի ընդունում այս խորհուրդը:

(2, Ճ128, 1-5)-ում տրվում է մի հրահանգ մեռելների համար մկրտություն անողներին. գրանցել վկաներին (ամենաքիչը՝ երեք հոգի), տեղը, ժամը, անունները, ընտանեկան պատմությունը և այլ մանրամասներ: Այդ բոլորը մորմոնները խնամքով պահում են հսկայական գրապահոցներում: Նրանք այդպիսով հավաքում են բազմաթիվ և բազմապիսի տեղեկություններ, զանազան գերդաստանների մասին տոհմածառեր՝ բոլոր ազգերից, ազգություններից, ժողովուրդներից: Սրանով կարելի է բացատրել մորմոնների յուրահատուկ ձգտումը թափանցել այնպիսի օղակներ, ուր առկա են տեղեկատվական զանազան արխիվներ (ԶԱԳՍ-եր, ԲՇՏ-եր, արխիվներ, ծննդատներ և այլն): Այս առումով ամենևին էլ ուռճացած չեն այն լուրերը, թե Յութայի նահանգում կարելի ճշտել է հայաստանաբնակների համապատասխան տոհմածառերը՝ ընդհուպ մինչև պապուպապի անունը:

(3, էջ 82)-ում պատմվում է մի մորմոն կնոջ մասին, որը փրկել է, այսինքն, մորմոն է դարձրել Ալեքսանդր Մակեդոնացուն, Հուլիոս Կեսարին և այս աշխարհի այլ մեծամեծներին, և նույնիսկ նա ավելի շատ մարդ է փրկել, քան... Հիսուս Քրիստոս:

Մորմոնների մոտ մկրտության հետ միասին, խորհուրդ է համարվում նաև հաղորդությունը: Մորմոնները հաղորդությունը տալիս են 8 տարեկանից սկսած, մկրտությունից անմիջապես հետո: Իսկ հաղորդության սեղանը բացում են շաբաթը մեկ անգամ:

Մորմոնները խորհուրդները կատարում են տաճարում, և հիմնականում դրանք ծածկված են խորհրդավորության և գաղտնիության քողով: Հայտնի է, որ 1841 թվականին Ժոզեֆ Սմիթը, իր բազում հետևորդների հետ, մասոնականությանն անդամագրվեց, և այդ օթյակի շատ ու շատ խորհրդավոր ծեսեր փոխանցվեցին մորմոնների արարողակարգի մեջ, անշուշտ համապատասխան հայտնությամբ հիմնավորելուց հետո (7, էջ 197): Մասոնական օթյակի անդամ դառնալու բանաձևը և մորմոն եկեղեցու անդամ դառնալու բանաձևը չնչին տարբերությամբ նույնն են. մասոնական «Mahha-bone» անունը, որը ընդունվողները շշուկով են արտասանում, մորմոնական բանաձևում փոխարինված է «Տեր» բառով:

## 5.7. ՄԵԼՔԻՍԵԴԵԿՅԱՆ ԵՎ ԱՀԱՐՈՆՅԱՆ ՔԱՀԱՆԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Եբրայեցիների 5-7-րդ գլուխներում Պողոս առաքյալը ցույց է տալիս, որ Ահարոնյան, կամ հինկտակարանյան քահանայությունն անցավ և իր տեղը զիջեց նոր՝ Մելքիսեդեկյան քահանայության կարգին: Հին Կտակարանում քահանայությունը պատկանում էր միայն Ահարոնի սեռնդին: Եվ ահա, Պողոսը ուզում է ցույց տալ, որ չնայած դրան Հիսուս - Քահանայապետ է, թեև Ահարոնի սերնդից չէ: Այդ տեսակետը պաշտպանելու համար, -

Պողոս առաքյալը բերում է մի քանի հինկտակարանյան հատվածներ, ցույց տալով, որ անգամ Հին Կտակարանում կար նման քահանայության մասին մարգարեություններ, քահանայություն, որը Ահարոնի սերնդին չէր պատկանում: Նա բերում է Սաղմոս 110.4 համարը, ասելով, որ Հին Կտակարանում եղած այդ քահանայությունը ավելի բարձր կարգի է, քան՝ Ահարոնի քահանայությունը: Մեկնելով Ծննդ. 14.17-20 համարները, Պողոսը ասում է, որ հենց սա է այն բարձր քահանայությունը, որին Աբրահամը՝ իր մեջ ընդգրկելով Ահարոնի կարգին, տասանորդ մատուցեց Մելքիսեդեկին, ցույց տալով դրանով, որ այդ կարգն ավելի բարձր է: Այսպիսով, Պողոսը ներկայացնում է Նոր Կտակարանի բարձր՝ Մելքիսեդեկյան քահանայության կարգը, որը Հիսուս Քրիստոսն է, երկնային Քահանայապետը, որը փոխարինեց Ահարոնի քահանայական կարգին:

Սմիթը և Քաուդերին[40] 1829 թվականի մայիսի 15-ին հրեշտակի ձեռքով ստանում են Ահարոնյան քահանայության կարգ՝ որը ստորինն էր (2, Ճ13): Այնուհետև նրանց երևում են Հովհաննես, Պետրոս և Հակոբոս առաքյալները և նրանց ձեռնադրում են Մելքիսեդեկյան կարգի քահանաներ:

Այդպիսով, մորմոն եկեղեցու հիմնադիրները միանգամից անցնում են Մովսեսից մինչև Հովհաննես Մկրտիչ եղած ճանապարհը՝ դառնալով նրանց իրավահաջորդը:

Այս քահանայությունները, սակայն, սուրբգրային տեսակետից միաժամանակ գոյություն ունենալ չեն կարող, մեկը՝ հինը, անցավ և փոխարինվեց նորով՝ մելքիսեդեկյանով: Հենց այս առումով էլ Մորմոն եկեղեցու քահանայական այդ անհամատեղելի ու անհասկանալի զուգորդությունը ոչ մի կապ չունի Քրիստոսի եկեղեցու քահանայության հետ:

## 5.8. ՎԱԽՃԱՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Սմիթյան հանգանակի 10-րդ կետի համաձայն մորմոնները հավատում են, որ Իսրայելի կորած 10 ցեղերը կհավաքվեն Նոր Երուսաղեմում, ուր և Քրիստոս կվերադառնա որպես թագավոր (2, § 29, 9-11):

(2, § 110,11)-ում Ժոզեֆ Սմիթն ու Օլիվեր Քաուդերին ստանում են բանալիները՝ կորած տասը ցեղերին հավաքալու համար:

Ըստ մորմոն աստվածաբանների երեք երկինք կա.

ա. - Հեռերկրային - telestial

բ. - Երկրային - terrestial

գ. - Երկնային - celestial:

Հեռերկրայինը նախատեսված է այս աշխարհի սկզբունքներով ապրողների, մարդասպանների, գողերի համար (4, էջ 241):

Երկրայինը նախատեսված է քրիստոնյաների համար, որոնք չեն ընդունել մորմոնական վարդապետությունը: Այս դասին են նաև անցնելու այն մորմոնները, որոնք չեն ենթարկվել մորմոնական եկեղեցու պահանջներին և օրենքներին, և մյուս կրոններից այն

[40] Սմիթի համախոհը:

բոլոր բարի մարդիկ, որոնք մերժել են Աստվածային ճշմարտությունները, այսինքն մորմոնական հայտնությունները: Այս երկինքը շատ նման է կաթոլիկական քավարանին:

Երկնային կամ բարձրագույն երկինքը, իր հերթին բաժանվում է երեք ենթաերկինքների: Այս բարձրագույն երկինք կարող են մտնել միայն այն մորմոնները, որոնք մորմոն տաճարում անցել են խորհուրդներով, երկնային ամուսնությամբ և այլն: Այստեղ գնացողները, իրենց ընտանիքներով վերաբնակեցնելու են տիեզերքը՝ իրենց հատկացված մոլորակի վրա, դառնալով այդ աշխարհում Ադամ - Աստված: Այս այն տեղն է, որ «աչքը չի տեսել և ականջը չի լսել ու որոնք մարդու սրտի մեջ չեն ընկել, Աստված իրեն սիրողների համար պատրաստեց» (Ա Կորնթ. 2. 9):

(2, § 76)-ում Սմիթը նկարագրում է իր հայտնությունը այն մասին, թե ինչպես և ովքեր պետք է ժառանգեն երկնային, երկրային և հեռերկրային փառքը:

Երկնային փառքը (celestial) նման է արեգակի՝ այսինքն Աստծու փառքն է (2, § 76.70): Այս փառքին արժանացողները ճշմարիտ մորմոններն են, որոնք ընդունել են Քրիստոսի վկայությունը, մելքիսեդեկյան քահանայության կարգը, սրբված են բոլոր մեղքերից, կնքված են Սուրբ Հոգով, մի խոսքով Անդրանիկների եկեղեցին (2, § 76, 54):

Երկրային փառքը (terrestrial) տարբերվում է երկնային փառքից, ինչպես Լուսինը տարբերվում է Արեգակից: Այս փառքին մասնակիցները նրանք են, ովքեր թերացել են Քրիստոսի վկայության մեջ, «երկրի պատվավոր անձերն են», նրանք «ստանում են Քրիստոսի ներկայությունը, բայց ոչ Հոր լիությունը» (2, § 76. 71-80):

Հեռերկրային փառքը (telestial) տարբերվում է և երկնային փառքից, և երկրային փառքից, և «ավելի փոքր է, ինչպես աստղերի փառքը տարբերվում է Լուսնից և Արեգակից» (2, § 76. 81): Այս փառքին արժանացածները նրանք են, ովքեր չեն ընդունել Ավետարանը և Հիսուսի վկայությունը, մերժել Սուրբ Հոգին, նետվել են դժոխք, որոնք չեն ազատվի Սատանայից:

## 6. ՄՈՐՄՈՆԱԿԱՆ ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՑԵԼԻ ՏԵՂԵՐԸ

Մորմոնների, և ընդհանրապես աղանդավորների հետ շփվելիս, պետք է նկատի ունենալ, որ նրանք ուրիշներին դիտում են շատ բարձր դիրքերից, որպես մոլորվածներ, և ձգտում են «դարձի բերել» նրանց: Ուստի, պիտի աշխատել «խլել» նախաձեռնությունը և նրանց քարոզել իրենց իսկ «լեզվական» ոլորտում, իրենց իսկ գաղափարների ու սկզբունքների շրջանակներում:

Մորմոնների պարազայում տրամաբանությունը և փաստերի անաչառ վերլուծությունը պիտի հակադրել «հայտնությամբ» ստացած նրանց աստվածաբանական և տիեզեբագիտական պատկերացումներին:

Պետք է հաշվի առնել այն ամենը, ինչը որ արժևորված է մորմոն եկեղեցու պատմությամբ, մորմոնական դավանանքով: Առողջ տրամաբանությունը, քրիստոնեական ճշգրիտ դավանանքը բավարար են փլուզելու այդ «հողից հանված» շինծու պատմության շենքը, ինչքան էլ ոսկի ու արծաթ պարունակվի կառույցի վերին հարկերում՝ սրբության սենյակներում:

Մորմոն եկեղեցու սյուները, ինչպես վերևում նկարագրեցինք, հետևյալներն են.

I. Մորմոնի գիրքը,

II. Ժոզեֆ Սմիթ անհատը և մարգարեն,

III. Ժոզեֆ Սմիթի հայտնություններն ու մարգարեությունները:

Չնայած որ մորմոնները սրան ավելացնում են նաև Հիսուս Քրիստոսին և Սուրբ Գիրքը, բայց պետք է իմանալ, որ Ս. Գիրքը և Հիսուս Քրիստոս մորմոնների համար միայն քող են, ծածկելու համար իրենց ոչ քրիստոնեական հավատն ու դավանանքը:

Բանավեճի մեջ մտնել մորմոնների հետ՝ Ս. Գրքի այս կամ այն հարցի շուրջ, անիմաստ զբաղմունք է և անօգուտ. այդպիսի հարցերը պետք է շրջանցել: Սուրբգրային ոչ մի առարկություն կամ վարդապետություն մորմոնի համար այնքան էլ արժեք չի ներկայացնում:

Արդյունավետության կարելի հասնել միայն այն դեպքում, երբ մտածված, ռազմավարական տեսակետից՝ ճշգրիտ, կամաց-կամաց թուլացվում է մորմոնին ամուր թվացող այդ սյուները:

Մորմոնականությունը սուրբգրային պատմությունները օգտագործում է միայն սմիթյան վարդապետությունը մեկ անգամ ևս հաստատելու համար: Այսպես օրինակ, - Հովհաննեսի ավետարանի «ուրիշ ոչխարները», «որոնք այս գավթից չեն» (Հովհ. 10.16) մորմոնների համար ամերիկյան մայրցամաքի բնիկներն են ներկայացնում, որոնց հայտնվել է Հիսուս՝ Գողգոթայից հետ:

Ստորև ներկայացնում ենք մորմոնական այդ «անխոցելի» սյուների որոշ խոցելի տեղերը:

### 6.1. Մորմոնի գիրքը

Պետք է վստահ լինել, որ մորմոնական պատմությունները չեն համապատասխանում իրականությանը, քանի որ չկան որևէ լուրջ, «ոչ մորմոնական» փաստարկներ: Արդի ժամանակներում չի գտնվել և ոչ մի գիտական փաստ, որ հաստատի Մորմոնի գրքի պատմությունների իրական, պատմական հիմք ունենալը: Իհարկե, մորմոն հավատացյալի համար դա ոչինչ չի նշանակում, նա կարող է այդ բնագավառը համարել որպես գիտության բնագավառ, որը վաղը կամ միգուցե հարյուր տարի հետո՝ կգտնի նման փաստարկներ: Բայց, քանի որ մորմոնների մեջ, ի տարբերություն մյուս ամերիկյան աղանդների, կրթվածության աստիճանը շատ մեծ է, պետք է բերել այնպիսի փաստարկներ, որոնք կժխտեն նման ապացույցների ի հայտ գալը ընդհանրապես: Ի միջի այլոց, մորմոնները իրենք էլ սիրում են նման «գիտական» բանավեճերի մեջ մտնել, և չեն խուսափում խոսել նման թեմաների շուրջ: Ուրեմն, եթե հաջողվի մորմոն հավատացյալի մոտ կասկած հարուցել Մորմոնի գրքի պատմությունների ոչ գիտական լինելու մասին, ապա դա ինքնին մեծ «նվաճում» կլինի: Իսկ նման փաստարկներ, ինչպես տեսանք, շատ են...

## 6.2. Պղնձի, երկաթի խնդիրը

Հայտնի է, որ ամերիկյան մայրցամաքում, նախակոլումբոսյան ժամանակներում մետաղաձուլարաններ չեն եղել, այսինքն, այդ ցամաքը չի մտել երկաթե դար և ընդհուպ մինչև կործանվելը եղել է քարեդարյան հասարակարգ: Մետաղաձուլարանների գոյությունը ո՛չ պատմությունը և ո՛չ էլ բնական տարերքները ի վիճակի չեն ջնջելու. դա միակ բանն է, որ անպայման կհայտնաբերվեր: Հետևաբար, ամենայն վստահությամբ կարելի հայտարարել, որ բնիկներին հայտնի չեն եղել մետաղը, երկաթը, առավել ևս՝ պողպատը: Եվ այդ այն դեպքում, երբ նման հանքավայրեր ամերիկյան մայրցամաքում եղել են: - Սակայն միայն ոսկին ու արծաթն են հայտնի եղել ամերիկյան նախակոլումբոսյան քաղաքակրթություններին:

Այդ փաստը շատ պարզ կարելի է բացատրել: Ոսկու և արծաթի հալման ջերմաստիճանը մոտ 1000 C է, իսկ մաքուր երկաթի հալման ջերմաստիճանը՝ 1600 C է: Ազնիվ մետաղները բնության մեջ հանդես են գալիս մաքուր վիճակում, մինչդեռ երկաթը՝ համաձուլվածքի ձևով, այսինքն, նախ այն պետք է «քիմիական» մշակման ենթարկել և հետո հալեցնելով՝ կորզել երկաթը երկաթաքարից: Մինչդեռ ազնիվ մետաղները կարելի է անմիջականորեն կորզել հանքից՝ անգամ հողը լվանալով, և հետո՝ ոչ բարձր ջերմաստիճանի տակ մշակելով: Երկաթ ստանալու համար այդ մեթոդը չի կարելի կիրառել, քանի որ նախ, պետք է կարողանալ այդ բարձր ջերմաստիճանը ստանալ, և հետո միայն այն մաքրել օտար նյութերից: Հենց այս է, որ ամերիկյան մայրցամաքի բնիկները չեն կարողացել անել:

Իսկ Հին աշխարհում այդպես չի եղել. Ծննդոց 4.22-ից հայտնի է դառնում, որ երկաթը հայտնի էր աշտարակաշինությունից առաջ և, հետևաբար, Մորմոնի գրքի հարեդները պետք է իմանային երկաթի մասին. չէ՞ որ նրանք Բաբելոնից հեռացան աշտարակաշինությունից հետո:

Այսպիսով, ստույգ հայտնի է, որ երկաթը և երկաթագործությունը նախակոլումբոսյան շրջանում չի եղել, մինչդեռ այն, ըստ Մորմոնի գրքի, պետք է հայտնի լիներ, քանի որ հաճախ է նա պատմում այդ մասին, և այն էլ այնպիսի վստահությամբ, որ կասկածելու տեղիք չի տալիս:

Ահա մի քանի հատվածներ Մորմոնի գրքից.

«Մենք բավականին բազմացանք, տարածվեցինք երկրի երեսին և հարստացանք ոսկով, արծաթով, թանկարժեք իրերով, փայտե ընտիր գործերով, շինանյութերով, մեքենաներով, ինչպես նաև երկաթով, պղնձով, բրոնզով և պողպատով, արտադրելով հողագործության գործիքներ, սրածայր նետեր, նիզակներ, կապարճներ և այլ պատերազմական հարմարանքներ» (Յարոմ 1.8):

«Եվ ես սովորեցնում էի իմ ժողովրդին շենքեր կառուցել և զանազան առարկաներ փայտից, երկաթից, պղնձից, պողպատից, ոսկուց, արծաթից և թանկարժեք հանքաքարից, որոնցից մեզ մոտ շատ կար» (2 Նեֆի 5.15):

«Մորոնին զինեց իր ժողովրդին զրահներով և ձեռքը պաշտպանելու վահաններով, գլուխը պահող սաղավարտով...» (Ալմա 43.19):

Այս կարգի համարներ շատ կան Մորմոնի գրքում, բայց այսքանն էլ բավական է պատկերացում կազմելու համար: Ավելին, այդ համարներում օգտագործվում է անգամ «պողպատը», որը շատ ուշ շրջանում է հայտնի դարձել Հին աշխարհի ժողովուրդներին:

**6.3. Մետաքսի խնդիրը**

Ըստ Մորմոնի գրքի նախակոլումբոսյան ամերիկացիներին հայտնի է եղել նաև... մետաքսը: Ահա թե ինչ ենք կարդում Եթերի գրքի 9.17 համարում.

«Ունենալով ամեն տեսակի մրգեր, հացահատիկ, մետաքս, բարակ գործված գործվածք...»:

Մետաքսագործության գոյությունը ամերիկյան մայրցամաքում բացառվում է, քնի որ դրա համար անհրաժեշտ է զարգացած թե՛ այգեգործություն, թե՛ հողագործություն, որոնց գոյության մասին փաստեր չկան. չկա ոչ մի իրեղեն ապացույց կամ որևէ գրավոր տեղեկություն այդ մասին, որ թողած լինեին ամերիկյան մայրցամաք գաղթած առաջին եվրոպացիները Կոլումբոսից հետո:

**6.4. Կովի, ոչխարի, ձիերի, էշերի և... փղերի խնդիրը**

Ըստ Մորմոնի գրքի բնիկներին հայտնի են եղել խոշոր և մանր եղջրավոր անասուններից կովը, ոչխարը.

«Ինչպես նաև զանազան անասուններ. ցուլեր, կովեր, ոչխարներ, խոզեր, այծեր, ինչպես նաև այլ տեսակի կենդանիներ, որոնք օգտակար են սնվելու համար» (Եթեր 9.18):

«Նրանք ունեին նաև ձիեր, էշեր, ունեին նաև փղեր... որոնք օգտակար էին մարդուն» (Եթեր 9.19):

Ամերիկյան մայրցամաքի նվաճման պատմությունից հայտնի է, որ Էռնանդո Կորտեսը ացտեկյան հզոր, բազմահազարանոց բանակը ջախջախեց ընդամենը մի քանի տասնյակ զինվորներով. բնիկները այնքան չսարսափեցին հրետանու կամ հրազենի համազարկերից, որքան Կորտեսի 11 հեծյալ զինվորների տեսքից, քանի որ նրանք առաջին անգամ էին ձի տեսնում ու ձիավորներին հրեշի տեղ դրեցին:

Կենդանական աշխարհի վերը թվարկած տեսակներից և ոչ մեկը չի հայտնաբերվել ամերիկյան մայրցամաքում: Եթե դրանք գոյություն ունեցած լինեին, անհնար էր, որ դրանք չհայտնաբերեին հնագետները:

Մորմոն աստվածաբանները այդ ամենը բացատրում են այսպես. մի ժամանակ եղել են, հետո՝ անհետացել: Բայց հնագիտության պատմությունը ցույց է տալիս, որ երկրի երեսից ոչինչ չի անհետանում, ինչքան էլ ժամանակ անցնի կամ ինչքան էլ որ մարդիկ թալանեն. հետքերն անհնար է վերացնել, պատմության էջերն անջնջելի են:

**6.5. Մարդաբանական տիպը՝ մոնղոլոիդ**

Համաձայն Մորմոնի գրքի պատմության, ամերիկյան բնիկները պետք է պատկանեին սեմական ժողովուրդների խմբին, այսինքն, մարդաբանական դասը պետք է պատ-

կաներ եվրոպեոիդ ռասայի[41] միջերկրածովյան մարդաբանական դասին, քանի որ Նեֆին և նրա սերունդը հրեաներ էին և, բնականաբար, այդ դասին էլ պետք է պատկանեին:

Բայց իրականում այդպես չէ. ամերիկյան բնիկների մարդաբանական տեսակը մոնղոլոիդ է: Հայտնի է, որ մարդաբանական տեսակը սերնդափոխության ժամանակ չի փոխվում: Ուստի մորմոն աստվածաբանների մեկնաբանությունը, թե՝ ժամանակի ընթացքում զանազան արտաքին գործոնների ազդեցության տակ հնարավոր է միջերկրածովյան տեսակի անցումը մոնղոլոիդ տեսակի՝ գիտական չէ և չի հաստատվում:

Այսպիսով, կարելի պնդել, որ Մորմոնի գրքում նկարագրված ամերիկյան աշխարհի կենդանական աշխարհը, բուսական աշխարհը, այնտեղի բնակիչների մարդաբանական տեսակը իրական ամերիկյան մայրցամաքում գոյություն չեն ունեցել երբեք: Իսկ մի գիրք, որը հավակնում է աստվածաշունչ լինելու, և այդքան դժվարությամբ պահվելով հասել է մարդկությանը, չի կարող պարունակել այդ կարգի սխալների շարան:

Այսօրվա պատմագիտությունը ընդունում է, որ Հին և Նոր աշխարհները այնքան էլ մեկուսացված չեն եղել իրարից: Շփումներ, տեղաշարժեր (միգրացիաներ) եղել են և կան փաստեր, որոնք վկայում են այդ մասին, բայց միայն մի ճանապարհով՝ հյուսիսային ճանապարհով, այսինքն՝ Գրենլանդիայի վրայով կամ Բերինգի նեղուցով և կամ հարավային ճանապարհով՝ Պոլինեզիայով: Հայտնի է, օրինակ, որ X-XI դդ. սկանդինավների մի զանգված վերաբնակվել է Գրենլանդիայում: Իսկ Բերինգի նեղուցով (երկարությունը կազմում է ընդամենը 60 կմ) հնարավոր է կապը երկու մայրցամաքների միջև (Ասիա և Ամերիկա), որով էլ կարելի բացատրել մոնղոլոիդ տարրի թափանցումը ամերիկյան մայրցամաք: Բայց ենթադրել, որ եղել են անմիջական շփումներ միջերկրականի ժողովուրդների և Կենտրոնական Ամերիկայի բնիկների միջև, ինչպես պատմում է Մորմոնի գիրքը, բացառվում է:

### 6.6. Տեքստաբանական խնդիրներ

Մորմոնի գիրքը լի է նաև բազմաթիվ սրբագրումներով, հավելումներով, վրիպակներով, ժամանակագրական սխալներով:

Մորմոնի գրքի 1981 թ. հրատարակության համեմատումը 1830 թվականի հրատարակության հետ, որն լույս է տեսել Ժոզեֆ Սմիթի օրոք, ի հայտ է բերել է մոտ 4,000 տարբերություններ (4, էջ 203): Իսկ դա նշանակում է, որ Սմիթի հաջորդները լրջորեն սրբագրել են աստվածային հայտնությամբ արված թարգմանությունը, որն անընդունելի է:

Այսպես, Մորոնի 10-րդ գլուխը բառացի կրկնությունն է Ա Կորնթ. 12.1-11-ի (ըստ Ս. Գրքի KJV-ի[42] տարբերակի, որն այդ ժամանակ գործածական էր Ամերիկայում):

Ահա մի քանի այլ կրկնություններ.

2 Նեֆի 13-րդ գլուխը բառացի կրկնությունն է Եսայի 4-րդ գլխի:

2 Նեֆի 12-րդ գլուխը բառացի կրկնությունն է Եսայի 2-րդ գլխի:

---

41 * Գիտությունը մարդկությանը բաժանում է մի քանի գլխավոր ռասաների. նեգրոիդ, ավստրալոիդ, եվրոպեոիդ, մոնղոլոիդ, որոնք իրենց հերթին բաժանվում են զանազան ենթառասաների:

42 * KJV անգլերեն 1611 թ. Աստվածաշունչը:

Մովսես 14-րդ գլուխը բառացի կրկնությունն է Եսայի 53-րդ գլխի:

2 Նեֆի 13-րդ գլուխը բառացի կրկնությունն է Մատթեոսի 6-րդ գլխի:

Իհարկե այս ցուցակը կարելի շարունակել: Բնականաբար հարց է առաջանում: Այդ ինչպե՞ս եղավ, որ XVII դարի անգլերեն հրատարակութունից այդքան հատվածներ անփոփոխ կերպով թափանցեցին 421 թվականին արդեն ավարտված, զմռսված գրքի ոսկե թերթերի մեջ:

Ժամանակավրիպության (անախրոնիզմ) ցցուն փաստ է Ա Հովհ. 5.7 համարի այն հատվածը, որը բացակայում է շատ հին ձեռագրերում, բայց նույնությամբ առկա է 3 Նեֆի 11.27 համարում:

«Հայրը, Որդին և Սուրբ Հոգին և այս երեքը մեկ են»:

Այս հատվածը առկա է անգլերեն թարգմանության՝ KJV-ում, բայց հունարեն բնագրում այդ հատվածը բացակայում է և նախնական եկեղեցու հայրերին այն հայտնի չի եղել: Նոր Կտակարանի քննական տեքստի համաձայն, այդ հատվածը առաջին անգամ երևան է եկել 450 թվականին թվագրված մի ձեռագրի մեջ, և, հետևաբար, այդ հատվածը չէր կարող հայտնի լինել 421 թվականից առաջ, այն էլ ամերիկյան մայրցամաքում, ամերիկյան բնիկ «քրիստոնյաներին»:

Միակ ընդունելի տրամաբանական բացատրությունն այն է, որ Սմիթը, ինչպես նաև իր ժամանակի մյուս աղանդապետերը, օգտագործել են Ս. Գրքի անգլերեն KJV տարբերակը, և նրանք երբեւէ Ս. Գրքի բնագրերին ծանոթ չեն եղել:

Բացարձակ նույն պատմությունը կրկնվում է նաև 3 Նեֆի 33-34 համարներում, որը բառացի Մարկ. 16.16 համարի կրկնությունն է:

Հայտնի է, որ Մարկ. 16. 9-20 համարները բացակայել են հին ձեռագրերում և, չգիտես ինչպես, հայտնի են եղել ամերիկյան մայրցամաքի հին բնակիչներին:

Այսպիսի փաստարկներին մորմոնները աշխատում են անորոշ պատասխաններ տալ, անշուշտ ունենալով նաև իրենց մեկնաբանությունները, որ, իբր, Աստված կամ Աստծու Հոգին այդ ամենը նախօրոք գիտեր և հայտնել է այդ մասին, քանի որ Աստծու մոտ ժամանակաշրջանները արգելք չեն կարող լինել և այլն:

Այդպիսի դեպքերում հարմար է բերել մեկ այլ բնույթի օրինակներ, ուր ոչ թե ժամանակներն են խառնված, այլ՝ անհատները, մարդիկ, որը բացառվում է աստվածային ծագում ունեցող հայտնության պարագայում:

(4, էջ 205)-ը բերում է հետևյալ օրինակը.

3 Նեֆի 20.23-ում Հիսուս ասում է.

«Ահա Ես, Նա որի մասին խոսել է Մովսեսը. Ձեր Տեր Աստված ձեր եղբայրներից ինձ նման մարգարե կհանի, և նրան լսեք ամեն ինչում, ինչ էլ որ նա ասի ձեզ»:

Այստեղ մեջբերումը ոչ թե Մովսեսի ասածն է (Բ Օր. 18.15), այլ՝ Պետրոսի ասածը՝ - Գործքից (3.22): Ստացվում է անհասկանալի բան. ամերիկյան մայրցամաքում Հիսուս մեջբերում է կատարում Մովսեսից, բայց բերում է Պետրոս առաքյալի խոսքը՝ մի քարոզից, որը դեռ այդ ժամանակ չէր արտասանվել: Նման բան չի կարելի համարել աստվածային հայտնության դրսևորում:

Ժամանակավրիպումներից բացի, Մորմոնի գրքում առկա են անգամ KJV-ից պատճենված թարգմանական սխալները: Այսինքն, Սմիթի հայտնությամբ թարգմանած թերթիկները պարունակել են KJV-ի թարգմանական սխալները, որոնք անհնար է վերագրել Աստծուն, որի անսխալականությունը անվերապահորեն ընդունում են մորմոնները:

Մորմոնի գրքի բնագիտությունն էլ, տեքստաբանական հարցերի նման խառնված է, լի է անախրոնիզմներով:

Այսպես, համաձայն Մորմոնի գրքի, հարեդները կտրեցին անցան Խաղաղ օվկիանոսը արևելյան ուղիով և հասան Կենտրոնական Ամերիկա. բնականաբար, հարց է ծագում, թե ինչպե՞ս կտրեցին-անցան Խաղաղ օվկիանոսը:

1 Նեֆի 16.10-ում կարդում ենք.

«Եվ եղավ այնպես, որ իմ հայրը, առավոտյան վեր կենալով, դուրս եկավ վրանից և, ի զարմանս իրեն, գետնի վրա տեսավ մի գունդ՝ չքնաղ պատրաստված, մաքուր պղնձից: Գնդի մեջտեղում երկու սլաք կան, որոնցից մեկը ցույց էր տալիս ճանապարհը, թե որ ուղղությամբ մենք պետք է գնայինք անապատով»:

Ալմայի գիրքը (37.38) նկարագրում է մի գործիք, որին անվանում է լիախոնա, «որը նշանակում է կողմնացույց, որը Տերը պատրաստեց»:

Այդպես, այդ լիախոնա-կողմնացույցը եղել է այն «առաջնորդողը», որի շնորհիվ Քրիստոսից առաջ VI դարում, բաբելական գերությունից հետո, հրեաների մի խումբ՝ Նիֆայի գլխավորությամբ հասնում են ամերիկյան մայրցամաք:

Բայց, ցանկացած հանրագիտարան բացելով, կհամոզվենք, որ կողմնացույց-սարքը, որին Մորմոնի գիրքը տալիս է պոետիկ լիախոնա անունը, մարդկությանը հայտնի է եղել X-XI դդ ոչ շուտ և, համենայն դեպս, ոչ մետաղական իրանով, ինչպես նկարագրում է Նիֆայի գիրքը: Սլաքները այդ ժամանակ դնում էին ջրի մեջ, որպեսզի հնարավորին չափ ճիշտ ցույց տան ուղղությունը՝ բացառելով շփման ուժերը: Եթե անգամ այդ գործիքը՝ լիախոնան եղել է կողմնացույցը, այն չէր կարող օգտագործվել որպես կողմնացույց, այն էլ մետաղյա իրանով, քանի որ այդ դեպքում սարքը երբեք ճիշտ չէր աշխատի: Եվ այսօր, պատմությանը և բնագիտությանը շատ թե քիչ ծանոթ որևէ մեկին չեք կարող համոզել, որ կողմնացույցի հայտնագործումից (ի միջի այլոց կողմնացույցի հայրենիքը Չինաստանն է համարվում) 1000-1500 տարի առաջ այն հայտնի է եղել ամերիկյան բնիկներին, որի միջոցով նրանց հայրերը կտրել-անցել են Խաղաղ օվկիանոսը ու ոչ թե Ատլանտյան օվկիանոսը, մանավանդ որ ատլանտյան ուղին մի քանի անգամ կարճ է եղել խաղաղականից:

Հաջորդ ոչ պակաս կարևոր բնագիտական փաստարկն է համարվում ապակու բացակայությունը ամերիկյան մայրցամաքում: Հայտնի է, որ նախակոլումբոսյան Ամերիկային ծանոթ չի եղել նաև ապակին: Չկա ոչ մի հնագիտական փաստ այն մասին, որ հզոր համարվող ացտեկյան, մայաների կամ ինկերի պետությունները ապակի օգտագործած լինեն: Ապակեգործությունը Հին աշխարհին հայտնի է եղել շատ վաղուց՝ մի քանի հազար տարի առաջ (Հին Եգիպտոսում): Այնպես որ, հարեդներին պետք է հայտնի

լիներ ապակին և հետևաբար՝ նաև ամերիկյան բնիկներին: Այդ է ասում նաև Մորմոնի գիրքը, օրինակ Եթեր 3.1-ում և շատ ուրիշ տեղերում:

Բայց ոչ մի հնագիտական պեղում ամերիկյան մայրցամաքում չի հայտնաբերել ապակու նշույլն անգամ: Ամբողջ քաղաքներ են պեղվել, բայց ապակի չեն հայտնաբերել, մի բան, որն անշուշտ պետք է կիրառություն ունենար քաղաքաշինության մեջ:

Այսպիսով կարող ենք պնդել, որ Մորմոնի գրքի բնագիտությունը չի համապատասխանում իրականության և այդ ցցուն փաստը միշտ պետք է ներկայացնել մորմոն ուսանողներին և մեր դռները բախող մորմոն քարոզիչներին:

### 6.7. Մարգարեական հոգին և մորմոն եկեղեցին

Ժոզեֆ Սմիթ անհատի աստվածային հայտնությունների վավերականությունը հաստատող փաստը, անշուշտ, նրա մարգարեությունների կատարումը պետք է լիներ: Մորմոն եկեղեցու համար Սմիթ մարգարեն ամենամեծ հեղինակությունն է: Իսկ Սուրբ Գիրքը սովորեցնում է, թե ինչպես ստուգել մարգարեությունները: Բ Օր. 18.20-21 հատվածն այն հիմնական բանաձևն է, որով պետք ստուգման ենթարկել ամեն մի մարգարեություն, անկախ ժամանակաշրջանից:

Մորմոնները առանձնահատուկ վերաբերմունք ունեն մարգարեությունների հանդեպ, հավատալով, որ Մորմոն եկեղեցու գլուխը՝ Մրգարե և Տեսանող է: Այս հարցերի վերաբերյալ ուղղափառ դիրքորոշումը շատ հստակ է. եթե մարգարեությունը չի կատարվում, այն կեղծ մարգարեություն է, և տարբեր բացատրություններ տալը՝ միայն պատասխանատվությունից խուսափելու ջանքեր են: Այսպես, մորմոն հավատացյալները վստահ են, որ Սմիթը մարգարե է, և արդյո՞ք նրա մարգարեությունները կատարվել են, կամ պիտի կատարվեն ապագայում:

Մորմոնները այս հարցերին պատասխանում են այսպես (8, էջ 19).

ա. Սմիթը երբեք չի մարգարեացել:

բ. Եթե անգամ Սմիթը մարգարեացել է, ապա նրա մարգարեությունները նման են - Մովսեսի կամ Հիսուսի արած մարգարեություններին:

Մովսեսն էլ մարգարեացավ և առաջնորդեց Իսրայելը դեպի Ավետյաց երկիր, բայց ինքը չմտավ:

Հիսուսն էլ մարգարեացավ, որ մինչև իր Երկրորդ գալուստը այդ սերունդը չի անցնելու, բայց այդպես էլ Երկրորդ Գալուստը չեղավ, իսկ այդ սերունդը անցավ:

Այս հարցերին կարելի է շատ հստակ պատասխաններ տալ, նորից վերընթերցելով նշված տեղերը:

ա. Մորմոնների համար Սմիթը իրոք, որպես մարգարե, նմանեցվում է Մովսեսին, մանավանդ որ Ավետյաց երկրի պարագան էլ նման է. Սմիթը չհասցրեց մտնել մորմոնների ավետյաց երկիրը՝ Յութայի նահանգ, ուր հիմնավորվեցին Սմիթի հետևորդները, բայց արդեն ոչ թե Մովսես-Սմիթի առաջնորդութեամբ, այլ՝ Հեսու-Յանգի գլխավորութ-

յամբ: Սմիթը մինչ այդ արդեն գնդակահարվել էր Նավուում, 1844 թվականին, դեպի Յութա գնալու ճանապարհին, այդպես էլ մնալով Հորդանանի աջ ափին՝ Նավուում:

Նախ Ելք 3.10-ում Մովսեսին առաքելություն է տրվում «Իսրայելի որդիներին Եգիպտոսից հանելու», իսկ հետագայում Աստված ասում է Մովսեսին ու Ահարոնին, որ «այս ժողովուրդին դուք չեք տանելու այն երկիրը, որը տվեցի նրանց» (Թվեր 20.12), քանի որ դուք «ինձ չհավատացիք, որ ես կարող եմ ինձ սրբացնել իսրայելացիների առջև»: Եվ, որպես հետևանք այդ մարգարեության, Մովսեսը մեռավ Հորդանանի մյուս ափին, այդպես էլ չմտնելով Ավետյաց երկիր (Բ Օր. 34.5):

Այստեղից պարզ երևում է, որ այդ մարգարեական համարներում ակնարկություն չկա այն մասին, որ Մովսեսը անձամբ պիտի մտնի Ավետյաց երկիր: Այսինքն, Մովսեսը չի մարգարեացել այդ մասին, և, հետևաբար, չի կարելի նրան անվանել «սուտ» մարգարե:

բ. Հիսուսի ասածի մեջ (Մատթ. 24.34) «այս սերունդը» չի նշանակում այդ պահին միայն իրեն շրջապատողները, այլ՝ Իրեն փնտրողները ընդհանրապես, որոնք մինչև աշխարհի կատարածը լինելու են, «չեն անցնելու»[43]: Հետևաբար Սմիթի հետ համեմատելը տեղին չէ, քանի որ, ի տարբերություն Սմիթի ասածների, Հիսուսի ասածները իրականություն են դառնում նաև մեր օրերում, և մինչև աշխարհի վերջը կլինեն Քրիստոսին փնտրողների սերունդ:

Սմիթի մարգարեությունները այնքան պարզ ու միանշանակ են, որ չի կարելի այն որևէ այլ կերպ մեկնաբանել: Այսպես, «Վարդապետություն և Ուխտեր»-ում (29-րդ գլ.), Սմիթը նկարագրում է Գալուստը և Հազարամյան և մի քանի անգամ մարգարեանում, որ «Ահա մոտ է ժամը, և շուտով կգա օրը» (9-10 համարներ) և կոչ է անում պատրաստվել - Հիսուսին դիմավորելու համար: Այդ «ժամի» մասին հայտնությունը Սմիթը ստացել է 1830 թվականին և ահա, արդեն անցել է 169 տարի այդ «ժամից», բայց «ժամը» չի հասել:

Նույն բանն է քարոզում նաև 88-րդ գլուխը, որը Սմիթը ստացել է 1832 թվականի դեկտեմբերի 27-ին: Ամբողջ գլուխը կոչ է պատրաստվելու, դիմավորելու Հիսուսին, իսկ 87-րդ համարում Սմիթը գրում է.

«Եվ չի անցնի մի քանի օր ու երկիրը կտատանվի, ետ ու առաջ կշարժվի, ինչպես խմած մարդը, արևը կթաքցնի իր երեսը մարդկանցից և կհրաժարվի լույս տալուց...»:

Չնայած այդ համարի բանաստեղծականության և այլաբանության, անհնար է այդ «մի քանի օր»-ը ընդունել որպես ժամանակահատված: Իսկ եթե մորմոն հավատացյալը պնդի, թե այդ համարը այլաբանորեն է ներկայացնում Հիսուսի գալուստը, կարելի բերել 112.15 համարը, ուր արդեն այն այլաբանություն որակելու մեթոդը իրեն չի արդարեցի:

«Մի ըմբոստացեք (խոսքն ուղղված է Տասներկուսին) իմ ծառա Ժոզեֆ Սմիթի դեմ, քանի որ ճշմարիտ եմ ասում Ես ձեզ, որ Ես նրա հետ եմ և Իմ ձեռքը նրա վրա է, և բանալիները, որ ես տվել եմ նրան, ինչպես նաև ձեզ, նրանից չի խլվելու, մինչև որ Ես չգամ»:

[43] * Շնորհալի, Մատթեոսի ավետարանի մեկնություն, Կ. Պոլիս, 1825, էջ 513-514, նաև TB, h. 3, համապատասխան համարի մեկնությունը:

Այստեղ բացահայտորեն ասվում է, որ մինչև Տիրոջ գալը Սմիթը կենդանի պիտի լինի, քանի որ բանալիները Իր գալստի ժամանակ են վերցվելու անձամբ Սմիթից: Բայց նա զոհվեց 1844 թվականին, իսկ գալուստը այդպես էլ չեղավ:

Իսկ մի այլ հայտնությամբ, տրված 1843 թվականի դեկտեմբերին, Սմիթին հայտնվում է Գալուստի ճշգրիտ ժամանակը.

«Մի անգամ ես թախանձագին աղոթում էին, որպեսզի իմանամ Մարդու Որդու - Գալստյան ժամանակը, երբ ես ձայն լսեցի, որն ինձ ասաց հետևյալը. «Ժոզեֆ, որդյակ իմ, եթե դու ապրես, մինչև քո 85 տարին լրանալը, դու կտեսնես Մարդու Որդու դեմքը» (130.14-15):

Սմիթը ծնվել է 1805 թվականին, ուստի նրա 85 տարին կլրանար 1890 թվականին: Այսինքն՝ Աշխարհի վախճանին պիտի սպասեին մինչև 1890 թվականը, որն այդպես էլ չեկավ:

Այսպիսով, մորմոնական մարգարեական ոգին չփայլեց իր կանխատեսումներով, և այդ հայտնությունները չարդարեցրին իրենց, ուստի, բնական է, որ դրանք, անցնելով Բ Օր. 18.20-21 համարների բովով, դասվում են սուտ մարգարեությունների շարքին:

### 6.8. Սողոմոն Սբոլտինգը և Մորմոնի գիրքը

Ի վերջո, Մորմոնի գրքի ստեղծման պատմությունը, ինչքան էլ որ այնտեղ լինեն հնարովի տարրեր, ունի իր հետևորդները և ջատագովները: Եվ բնականաբար հարց է ծագում, թե ինչպե՞ս է ստեղծվել այդ գիրքը: Արդյո՞ք իրական է ոսկե թերթիկների հայտնագործման կիսաիեքիաթային պատմությունը: Իհարկե, մորմոնները հենց այդպես էլ կարծում են, բայց այսօր, մասնագետները հակված են ընդունելու Մորմոնի գրքի Սբոլտինգյան ծագման տեսակետը, որն ավելի ճշմարտամոտ է, քան հրեշտակների այցելությունները և ոսկյա թերթերի հայտնագործման պատմությունը:

Սմիթի ժամանակակից ոմն Սողոմոն Սբոլտինգ, հայտնի է եղել որպես սուրբգրային պատմությունների մոտիվներով վիպակներ գրող: Այդպիսի գործերից է եղել նրա «Գտնված ձեռագիրը», ուր Սբոլտինգը փորձել Հին Կտակարանի նման ծննդաբանական պատմություններ գրել ամերիկյան մայրցամաքի բնիկների մասին (4, էջ 208-209):

Հրատարակիչները ժամանակին հրաժարվել են այն տպագրելուց, որպես անճիշտ, ֆանտաստիկ պատմություններ: Այնուհետև ոմն Ռիկտոն, գտնելով այդ գործը հրատարակչության թղթերի մեջ, այն հանձնում է Սմիթին, որն էլ ներկայացնում է այն որպես - Մորմոնի գրքի հայտնագործման պատմությունը:

## III. ՉԱՐԼԶ ՌԱՍԵԼԸ ԵՎ ԴԻՏԱՐԱՆԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ (ԵՀՈՎԱՅԻ ՎԿԱՆԵՐ)

### 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսօր Հայաստանում ակտիվորեն աճում-բազմանում է մի նոր կրոնական շարժում, որին դժվար է անվանել կրոնական, քանի որ այն ավելի շուտ կուսակցական-կազմակերպչական երանգ ունի: Այդ շարժումը կրում Եհովայի վկաներ կամ Դիտարանի ընկերություն անունը:

Մեզանում այսօր Եհովայի թագավորությունը ծանուցող քարոզիչներն են դռնե-դուռ ընկած իրենց «բարի լուրը» բերում հայ ընտանիքներին: Տարիներ առաջ նույն բանը փորձեցին անել ուրիշ աղանդավորներ, բայց, քարոզչության այդ արևմտյան ձևը իրեն չարդարացրեց և նրանք դադարեցին թակել բնակարանների դռները: Այն ժամանակվա մունետիկները՝ քարոզիչները, դուռը բացողներին հարցնում էին, թե՝ «Չե՞ք ուզում լսել - Հիսուս Քրիստոսի մասին» և եթե ընդունում էին նրանց, սկսում էին իրենց քարոզությունը, չմոռանալով վերջում հրավիրել իրենց ժողովարան-հավաքատեղին:

Այսօրվա «դուռ թակողները»՝ Եհովայի վկաները, նույնն են անում, բայց առանց Հիսուս Քրիստոսի: Նրանք ուղղակի ասում են. «Մենք Ձեզ բարի լուր ենք բերել» և շարունակությունը՝ համաձայն ստեղծվող իրադրության: Բարի լուրն էլ կայանում է նրանում, որ մարդը հոգի չունի, մեռնելու է անասունի նման, չպետք է հավատալ Հիսուս Քրիստոսին, նա Աստված չէ, սովորական մարդ է, այս պետությունն էլ սատանայից է և շուտով կործանվելու է... և վերջում թե՝ շտապեք մեր հավաքատեղին, ուր պիտի գտնեք փրկության ճանապարհը: Շտապեցեք, քանի դեռ Արմագեդոնը չի սկսել և այլն:

Արդեն 130 տարի է, ինչ անընդհատ այդ նույն քարոզն են տանում ու, առանց հոգնելու, շարունակում են նույն պարզունակությամբ գնալ XXI դար: Նրանց չի կարելի եկեղեցի համարել, քանի որ եկեղեցի՝ դասական իմաստով, նրանց մոտ գոյություն չունի: Իրենք էլ են խուսափում այդ բառից և իրենց չեն անվանում եկեղեցի: Նրանք իրենց հռչակում են ավելի շուտ միակ ճշմարիտ կազմակերպություն-պետություն, Եհովայի պետություն կամ կառավարություն, որի քաղաքացիները Եհովայի վկաներն են: Այդ պետության մայրաքաղաքը գտնվում է Բրուկլինում՝ Նյու Յորքի արվարձանում, և բոլոր հրահանգները, ցուցումները ստացվում են այնտեղից, որոնք, իրենց հերթին, ճշմարտությունը ստանում են երկնքից: Նրանք հավատում են, որ միայն իրենց կազմակերպություն-պետությունն է ղեկավարում Եհովան, մնացած բոլոր կազմակերպություններին (այդ թվում նաև քրիստոնյա եկեղեցիներին), պետություններին ղեկավարում է սատանան:

Ովքե՞ր են այդ նորելուկները, ի՞նչ են քարոզում, ինչպե՞ս են քարոզում, ի՞նչ դավանանք ունեն: Ահա այս մասին ենք խոսելու այս բաժնում:

## 2. ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Շարժման հիմնադիրն է Չարլզ Թեյզ Ռասելը, ծնված 1852 թ. փետրվարի 16-ին, -Պիտսբուրգում, Փեննսիլվանիա նահանգում, ԱՄՆ-ի հյուսիսում: Նրա ընտանիքը բողոքական եկեղեցու հարանվանություններից մեկի՝ ժողովական[44] եկեղեցու անդամ էր:

1870-ականներին, տակավին 18 տարեկան Չարլզը հիմնում է մի փոքրիկ խումբ՝ Աստվածաշնչի սերտողության նպատակով, որտեղ էլ նրան տալիս են «պաստոր» (հովիվ) անունը:

Այդ տարիներին նա, չնայած որ կրթություն չուներ և չէր տիրապետում դասական լեզուներին՝ հունարենին ու եբրայերենին, որոնցով գրվել են Աստվածաշնչի գրքերը ու չուներ նաև որևէ աստվածաբանական կրթություն, հանկարծ սկսում է Սուրբ Գրքի սեփական թարգմանական տարբերակն առաջարկել, մեկնաբանել, բացատրել: Այս հենց այն ցցուն հատկանիշն է, որ բնորոշ է XIX դ. ամերիկյան կրոնական շարժումներին: Ի միջի այլոց, նույն այդ «հիվանդությամբ» են տառապում նաև ժամանակակից եհովականները մեզանում՝ Հայաստանում:

Այդ տարիներին էր, երբ ադվենտիստ շարժումը հիասթափեցրեց իր անդամներին Աշխարհի վախճանի օրվա հաշվարկներով, բայց այդ հիասթափությունը չմնաց անհետևանք. նույն այդ գաղափարները միանգամից որդեգրվեցին Ռասելի ու նրա կողմնակիցների կողմից: Փաստորեն, ադվենտիստ շարժման «մեծագույն ծառայությունը» մարդկությանը եղավ այն, որ նրանք ծնեցին ռասելականությունը, մի շարժում, որին կարելի տալ նաև «ծայրահեղ ադվենտիստ» շարժում անունը:

1844 թվականի Մեծ հուսախաբության օրերից հետո, սկսվեցին ծանր օրեր նրանց համար, բայց նրանք երբեք էլ չհրաժարվեցին աշխարհի վախճանի օրվա գտնելոI գաղափարից: Տալով ինչ-ինչ բացատրություններ 1844-ի Հիսուսի «չգալու» մասին, նրանք այդ թիվը փոխարինեցին 1874-ով, երբ, իբր Հիսուս պիտի գար, երեք և կես տարի քարոզեր, իսկ 1878-ին սրբերի հետ հափշտակվեր երկինք:

Ռասելը, ոչինչ նոր բան չավելացրեց ադվենտիզմի վրա, փոխեց միայն հաշվարկի ձևերը, Հիսուսին զրկեց աստվածությունից, Սուրբ Հոգուն ընդհանրապես վերացրեց ու շարժումը տարավ նոր ուղով, Ռասելի ուղով:

Հատկանշականն այն է, որ թե՛ ադվենտիստերը, թե՛ ռասելականները Վախճանի օրվա հաշվարկները ամեն կերպ հիմնավորում էին սուրբգրային փաստարկներով, ամեն անգամ բացատրելով կամ նոր մեկնություն տալով՝ երբ այն չէր իրականանում: Մորմոնները ավելի ճկուն ին. նրանց մոտ վախճանաբանական օրերի հաշվարկը հիմնված է Մարգարեի անձնական հայտնությունների վրա, որը միշտ էլ կարելի էր շրջանցել կամ այլ կերպ մեկնաբանել: Պատմությունը ցույց տվեց, որ թե՛ մեկը և թե՛ մյուսը սխալ դուրս եկան և հաստատվեց ավետարանական այն սկզբունքը, ըստ որի այդ օրվա մասին ոչ ոք չգիտի:

[44] * Հյուսիսային Ամերիկայում տարածված բողոքական հարանվանություններից (congregational ժողովական բառից):

1876 թվականին Ռասելը հանդիպում է ադվենտիստ առաջնորդներից ոմն Բարբույի, որը չհաշտվելով ադվենտիստական գալուստների գաղափարների հետ, միացավ Ռասելին և միասին սկսեցին հրատարակել «Առավոտյան ազդարար» թերթը:

1877 թվականին այս երկու գործընկերները հրատարակեցին իրենց «Փրկության ծրագիրը» գիրքը, ըստ որի Հազարամյայի սկիզբը համարվեց 1874 թվականը, այսինքն՝ Քրիստոսի գալուստը այդ թվականին համարվեց անտեսանելի, հոգևորապես ներկայություն և ոչ թե՝ իրական: Այս «հայտնագործությունը» հետագայում ընդունվեց որպես անառարկելի փաստ, ստեղծելով դավանական այն սկզբունքը, որ Հիսուսի գալուստը ընդհանրապես պիտի լինի աներևույթ, ոչ մարմնական, այլ միայն՝ հոգիով, անտեսանելի ներկայությամբ:

Եվ այսպես, երբ 1878 թվականին Քրիստոս դարձյալ չեկավ, նրանք փրկության ծրագրերի հարցերում խճճվելով՝ բաժանվեցին և, 1879 թվականին, Ռասելը հիմնեց արդեն իր թերթը՝ «Սիոնի Դիտարանը կամ Քրիստոսի ներկայության ազդարարը», որը դարձավ Եհովայի վկաների Դիտարանի կամ Դիտաշտարակի նախատիպը: Հազարամյայի և Գալստի իր հաշվարկները շատ շուտով տարածվեցին, իսկ Ռասելի հաշվարկած 1914 թվականը դեռ բավականին հեռու էր ու մինչ այդ կարելի էր նախապատրաստվել, հիմնավորումներ տալ:

Նա հաշվարկում էր մոտավորապես այսպես. Դանիելի յոթ ժամանակները (Դանիել 4.32), որոնք կապված են Նաբուգոդոնոսորի հետ, համարվում են մարգարեական տարիներ. «Քու վրայիցդ յոթը ժամանակ պիտի անցնի, մինչև իմանաս, որ մարդկանց թագավորության վրա Բարձրյալն է տիրում»:

Այս յոթ ժամանակները մարգարեական յոթ տարիներ ընդունելով, իսկ ամեն տարին ընդունելով 360 մարգարեական օր՝ ստանում ենք. 7x360=2520 մարգարեական օր, որը հավասարազոր է 2520 տարվա:

Հաշվարկի սկիզբ ընդունելով Երուսաղեմի կործանման թվականը կստանանք, որ 2520 տարի հետո կգա Բարձրյալը: Երուսաղեմի կործանման թվականն ընդունում են մ.թ.ա. 607 թվականը[45], ստանում են՝

2520-607=1913,

այսինքն, հաջորդ՝ 1914 թվականն էլ լինելու է Գալստյան թվականը:

Այս 1914 թվականը եղավ Եհովայի վկաների վարդապետության ամենակենտրոնական թվականը, որի վրա է պարուրված նրանց աստվածաբանների ողջ իմաստությունը, Ռասելին հաջորդած առաջնորդների իմաստությունն ու քարոզած վարդապետությունը: Նրանց ցանկացած գրություն, թերթիկ, ամսագիր, գիրք բացելով անպայմանորեն գտնում ենք 2520 մարգարեական շրջանը, 1914 թվականը և հաստատումներ, որ այդ թվականին Հիսուս եկել է, բայց՝ հոգևորապես, այն էլ ոչ թե երկիր, այլ երկինք և այլն: -Զարմանալին այն է, որ ամենևին նշանակություն չունի թե ինչի մասին է գիրքը կամ ամսագիրը. այնտեղ անպայման կգտնենք այդ մասին մի քանի ընդարձակ էջեր:

Շուտով ճանաչվեց այս շարժումը որպես «Սուրբ Գրոց ուսումնասիրողների միություն», որն էլ հետագայում անվանափոխվեց ու ստացավ «Եհովայի վկաներ» անունը:

---

[45] * Իրականում այն ոչ թե մ.թ.ա. 607 թվականին, այլ՝ մ.թ.ա. 585 թվականին է եղել:

1886 թվականին Ռասելը հրատարակեց «Հազարամյայի արշալույսը», որն ավելի ուշ դարձավ Ռասելի «Սուրբ Գրոց ուսումնասիրություններ» բազմահատոր աշխատությունը, որի յոթերորդ հատորը հրատարակվեց արդեն նրա մահվանից հետո:

1908 թվականին Ռասելի կենտրոնակայանը տեղափոխվեց Բրուկլին, Նյու Յորքի շրջաններից մեկը, ուր և գտնվում է այսօր: Այստեղից էլ ղեկավարվում է այն հսկայական պետություն-կազմակերպությունը, որը լայն ցանց ունի տարբեր ազգերի, տարբեր պետությունների մեջ: «Դիտարանի» 1999 թվականի N1 համարում զետեղված տվյալների համաձայն (եթե այն ճիշտ է) Հայաստանում արդեն կան մոտ 12.000 Եհովայի վկա:

1914 թվականը եկավ ու անցավ առանց Քրիստոսի հայտնության և Ռասելը, համոզվելով, որ իր հաշվարկները և մարգարեությունները սխալ դուրս եկան, ամենևին էլ չընկճվեց, այլ շարունակեց իր ուսումնասիրությունները: Նրա աշխատությունների վեց հատորը արդեն տպվել էին աստղաբաշխական քանակով, մնում էր վերջին հատորը, որի լույս տեսնելը ինքը՝ Ռասելը չտեսավ: 1916 թվականին նա վախճանվեց, այդպես էլ չտեսնելով Հիսուս Քրիստոսի գալուստը, թեև հետագայում նոր մարգարեները բացատրեցին և հիմնավորեցին այդ ամենը և մինչև այսօր շարունակում են բացատրել ու հիմնավորել:

Նրա կողմնակիցները Ռասելին տվեցին «Լավոդիկյան պատգամաբեր» անունը, ակնարկելով Հայտնության գրքում հիշված Լավոդիկյան հրեշտակին*, որը վերջինն էր:

Լավոդիկյան այս սուրբը շատ տարօրինակ կենսագրություն ունեցավ:

Ադվենտիստական հիասթափությունն ապրելով մեկը մյուսի ետևից, նա նույն բանը կրկնեց՝ տեղափոխելով գալստյան թվականը 1844-ից՝ 1914 թ.: Այդ թվականը ստանալու համար պետք չէր նոր հայտնագործություններ անել, ինչպես վարվեց Ռասելը. բավական է Մեծ Հուսախաբության 1844 թվականին գումարել 7x10 և հեշտությամբ կստանանք այդ թվականը՝ 1914: Այնպես որ կարիք չկար Դանիելի խորհրդավոր յոթնյակներին դիմելու, որպեսզի ստացվեր այդ թվականը, իսկ 70 տարվա պարբերություն կարելի է գտնել Ս. Գրքի ցանկացած գրքի մեջ:

Ընտանեկան կյանքում անհաջողակ[46], քաղաքացիական կյանքում՝ դարձյալ անհաջողակ... այս է Ռասելի կյանքի ուղեկցորդը:

Հայտնի է նրա «առևտրական բիզնեսի» խայտառակ պատմությունը՝ «հրաշագործ ցորենի» վաճառքը (4, էջ 81), երբ Ռասելը սովորական ցորենը հայտարարեց «հրաշագործ, օրհնված» և վաճառքի հանեց սովորական գնից մի քանի անգամ ավելի թանկ: Բնական է, հետագայում նա կասի, որ այդ շահը գնալու էր Դիտարանի օգուտի ու Աստծու ճշմարտությունների տարածման համար, մամոնայից բարեկամներ դարձնելու սուրբգրային պատգամով հիմնավորելով այդ արարքը (Ղուկ. 16.9): Իսկ հիմնականը, որ Հին Կտակարանում անմաքուր գումարն անգամ տաճարի գանձանակ չէին մուտքագրում (Մատթ. 27.6), մոռացվում է (Հուդայի երեսուն արծաթի պատմությունը):

Բայց անխոնջ հովիվ Ռասելը հանգիստ չի մնում: Ժամանակի ձայնարկիչների (ֆոնոգրաֆ) միջոցով նա տարածում է իր քարոզները, պատրաստում է հայտնի «Ստեղծագործության պատկերադրաման»՝ շարժական ու անշարժ պատկերներով տարածելով

---

[46] * Ռասելը ամուսնալուծվել է իր կնոջից և միշտ դատական վեճի մեջ է եղել նրա հետ (5, էջ 77-78):

իր գաղափարները: Նա հավատում էր, որ հունձ է անում, փրկում է մարդկանց, քանի որ սկսվել է հունձի ժամանակը (Մատթ. 24.31):

Իսկ Մատթ. 24.45-47 համարների հարցադրումը, թե՝ «ո՞վ է այն հավատարիմ ու իմաստուն ծառան, որ իր տերը իր ծառաների վրա դրեց» ստանում է միանշանակ պատասխան շարժման անդամների համար: Այլ կերպ չէր կարող լինել. դա հովիվ Ռասելն է, «ճշմարտապես նվիրված և Աստծու խոսքի լուրջ ուսանողը» (9, էջ 242), որն իր գործունեությամբ սնունդ է հայթայթելու ողջ մարդկության համար:

Իր ջանասիրության դրսևորումն էր այն, որ նա պտտվեց ամբողջ աշխարհով մեկ, ամենուր քարոզելով իր հայտնագործությունների մասին, հավաքելով և ի մի բերելով բոլոր ճշմարիտ հետևորդներին: Նա 1881-1904 թվականներին հասցրեց գրել իր «Սուրբ Գրոց ուսումնասիրությունների» վեց հատորը, իսկ վերջինը՝ «Կատարված խորհուրդը» հրատարակվեց իր մահվանից հետո՝ 1917 թվականին:

Նա է հիմնադրել Դիտարանի «Սուրբ Գրոց ու Տետրակի ընկերությունը», որը պիտի շարունակեր իր սկսած գործը:

Զարմանալի է, որ նա սկսեց իր մեկնաբանական գործունեությունը առանց իմանալու դասական լեզուներ (4, էջ 84-85):

Նրա հայտնի մարգարեությունը այն մասին, թե՝ «միլիոնավոր մարդիկ են հիմա ապրում, որ մահ չեն ճաշակելու», սուտ դուրս եկավ, քանի որ աշխարհի վախճանը իր ուզած օրը չեղավ և ինչպիսի բացատրություն էլ տրվի, միևնույն է, անհամոզիչ է լինելու: Նա չէր հավատում, որ այդ օրը պիտի հետաձգվի, չէր ուզում իր վրայից այդ ծանր լուծը հաջորդների վրա գցել, նա վստահ էր, որ իր կյանքի ընթացքում է լինելու վախճանը: Դրա համար էր նա ամբողջ եռանդով ու նվիրվածությամբ աշխատում գիշեր ու ցերեկ:

Նույնիսկ բացարձակ հակասություններն ու սուտ մարգարեությունները չկասեցրին նրան: Մարգարեության չիրականալուն միշտ կարելի է մի որևէ պատասխան գտնել կամ որևէ բացատրություն տալ, այն էլ այնքան համոզիչ, որ մարգարեությունը կկսի կորցնել իր սկզբնական իմաստն ու անմիջական նշանակությունը, տեղը զիջելով «շարունակական» մի գործընթացի, որի վերջը չի երևա: Այս շարժման ամեն մի ղեկավար, առաջնորդվելով այդ սկզբունքով, իրենից հեռացրեց վախճանի կատարումը, թողնելով խնդրի լուծումը իր հաջորդին:

Ադվենտիստական շարժման նման, ռասելականներն էլ օգտվեցին այնպիսի սկզբունքներից, որոնք անմիջական նշանակություն չունեին, բայց ունեին փուլ առ փուլ իրականանալու նշանակություն: Այսպես, ցանկացած մարգարեական դեպքի իրականացում կարելի է պատկերացնել ոչ թե անմիջական կատարումով, այլ՝ աստիճանական փուլերով, որոնցից կարելի է ընդգծել հետևյալ աստիճանները.

ա. նախապատրաստական փուլ:

բ. պատրաստություն:

գ. մարգարեության սկսելու շրջանի սկիզբը:

դ. Մարգարեության սկսելու շրջանի ավարտը:

ե. Մարգարեության կատարման սկիզբը:

զ. Մարգարեության կատարման սկզբի առաջին փուլ և այդպես շարունակ:

Յանկացած մարգարեություն կարելի է այդ աստիճանական կատարման բանաձևով համարել սկսած, ընթացքի մեջ և այլն ու այլն:

Ռասելական մարգարեն հենց այս անորոշությամբ է տարբերվում մորմոն մարգարեից: Մորմոն մարգարեն հայտնելով Աստծու կամքը տվյալ ժամանակի համար, բացատրում է, որ Աստված հիմա, այս պահին հարմար է գտնում այդպես գործել, ինչպես օրինակ Վուդրաֆի[47] հայտնի մանիֆեստի պատմությունը, որը հերքեց մինչ այդ եղած մարգարեների ասածները:

Ռասելականությունը, զուտ տրամաբանական քայլերի միջոցով, 1799 թվականը հռչակեց որպես աշխարհի վախճանի սկիզբ, հետո այն տեղափոխեց 1844, հետո՝ 1874, հետո՝ 1918, հետո՝ 1925, հետո՝ 1975, հետո՝ ...

Եվ բոլոր դեպքերում նկարագրվեց, պարզաբանվեց, բացատրվեց, ներկայացվեց և - հիմնավորվեց: Այս է ռասելական ձեռագիրը, որին ցայսօր հավատարիմ են նրա հետնորդները: Մի դեպքում ասվեց, ող այդ թվականը Քրիստոսի հզոր ներկայության սկիզբն է, մի ուրիշ դեպքում՝ դատաստանի սկիզբը, կամ այսօրվա տերմիններով՝ նախաքննչական շրջանը: Այնուհետև ներմուծվեց հունձի սկսվելու գաղափարը, հետո՝ հունձը և նոր միայն՝ Հիսուսի գալուստը, ներկայությունը կամ Վախճանը, որը կլինի երբ ավարտվի նախաքննությունը և այլն... Տեղին է այստեղ հիշել, որ Ռասելի հաջորդը՝ - Ռուտերֆորդը, մասնագիտությամբ դատավոր էր, և նա էլ դատավարական տերմիններով հեղեղեց ռասելական շարժման աստվածաբանությունը:

Ռասելի հիմնած շարժումը և մորմոնական շարժումը համեմատելիս չի կարելի չնկատել մի շատ ցցուն փաստ: Դա հավատի, որպես այդպիսին, բացակայությունն է ռասելականության մեջ: Այստեղ այն փոխարինվում է «տրամաբանական» հաշվարկներով, հաշվարկային (ռացիոնալ) մտածելակերպով և, ի վերջո, կազմակերպչական ու վարչական խիստ կառույցներով: Հենց սա է նշանակում այն, որ նրանք չունեն «եկեղեցի» հասկացողությունը, և երբեք էլ իրենց կազմակերպությունը չեն անվանում եկեղեցի և չեն ձգտում դրան, ի տարբերություն այն աղանդների, որոնք ձգտում են ներկայանալ որպես միակ եկեղեցին: Նրանք իրենց կազմակերպությունը անվանում են Աստծու թագավորությունը այս աշխարհում, որի գլուխը, պարզ է, Հիսուսը չէ, այլ Բրուկլինյան դիտարանը՝ կենտրոնակայանը:

Ահա այսպիսի ժառանգություն թողեց Ռասելը, երբ իր մահկանացուն կնքեց 1916 թվականին: Նրան հաջորդեց Ժոզեֆ Ֆրանկլին Ռուտերֆորդը:

## 3. ԺՈԶԵՖ ՖՐԱՆԿԼԻՆ ՌՈՒՏԵՐՖՈՐԴԸ ԵՎ ՆՐԱ ՀԱՋՈՐԴՆԵՐԸ

1917 թվականից սկսած Դիտարանի նախագահ է ընտրվում դատավոր Ռուտերֆորդը: Նա ծնվել է 1869 թվականի նոյեմբերի 8-ին, Միսսուրի նահանգի Բունվել քաղաքում, բողոքական ընտանիքում: Մասնագիտությամբ իրավաբան Ռուտերֆորդը հետագայում կարգի բերեց «Դիտարանի ընկերությունը», ամրապնդելով նրա կազմակերպչական կառուցվածքը և դրանով այն վերածեց ամբողջատիրական (տոտալիտար) կազմակեր-

[47] * Տես (2, էջ 358), Պաշտոնական հայտարարություն թիվ 1:

պության, ուր այլախոհությունը համարվում էր դատապարտելի, իսկ այդ անդամները հեռացվում էին կազմակերպությունից: Նա շարունակեց իր նախորդի գործը և հրատարակեց Ռասելի երկերի վերջին՝ յոթերորդ հատորը (1917 թվականին): Ինքը, դատավոր - Ռուտերֆորդը, գրական ասպարեզում պակաս բեղմնավոր չեղավ. իր բազմաթիվ գրքերով ու գրքույկներով նա շարունակեց Ռասելի գործը: Այսօրվա հրապարակ ելած Դիտարանի համարյա բոլոր համարները արտատպություններ են Ռասելի «Ուսումնասիրություններից» և Ռուտերֆորդի «Երկերից», համեմված վերջին պատմական, գիտական հայտնագործություններով:

Նրա օրոք էր, երբ 1933 թվականին նա, ելնելով Եսայի 33.10 համարից, ուր ասվում է՝ «Իմ վկաներս դուք եք, նաև իմ ընտրած ծառան», «Դիտարանի ընկերությունը» կնքեց «Եհովայի վկաներ» անունով:

Նրա օրոք էր, երբ կազմակերպչական կուռ կառույցի շնորհիվ՝ շոշափուկները տարածելով՝ գրկեց ողջ աշխարհը, ամեն տեղից ու ամեն ինչից տեղեկատվություն պահանջելով մասնաճյուղերից:

Նպատակ ունենալով ստեղծել միակ աստվածիշխանական պետություն-կազմակերպությունը աշխարհում, մնացած բոլոր կազմակերպություններն ու պետությունները հռչակեցին որպես սատանայի կազմակերպություններ: Համաձայն Եհովայի վկաների վարդապետության, Աստծու ներկայությունը այս աշխարհում իրականացվում է միայն ու միայն նրանց կազմակերպության՝ Դիտարանի ընկերության միջոցով: Նրանց հրատարակած Դիտարանների տիտղոսաթերթում այդպես էլ նշվում է. «Դիտարանը ծանուցում է Եհովայի թագավորությունը»: Հայտնի է 1918 թվականի դեպքը, երբ Ռուտերֆորդին և նրա կողմնակիցներին ձերբակալեցին պետությանն անհնազանդություն ու բանակում չծառայելու քարոզների տարածման համար: Նրանց ազատ արձակեցին Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո՝ 1919 թվականին:

Նրա հիմնական գործը՝ «Աստծու քնարը», լույս է տեսել 1921 թվականին: «Աստծու քնարը» Ռուտերֆորդի անդրանիկ գործն է, որը Ռասելի երկերի հետ այսօրվա Դիտարանների բովանդակության կորիզն է հանդիսանում:

Նա իր մահկանացուն կնքեց 1942 թվականի հունվարի 8-ին:

Ռուտերֆորդի ժամանակ Եհովայի վկաները սկսեցին թշնամական և անհանդուրժող դիրք գրավել բոլոր եկեղեցիների ու կրոնական հարանվանությունների նկատմամբ, որակելով բոլորին որպես սատանայական: Նրա ժամանակ էր, երբ պարտադիր համարվեց տներ այցելելը և ավետարանչության այդ «պլանները» կատարելը:

Ռուտերֆորդին հաջորդեց Նաթանայել Նորը, որը շարունակեց իր նախորդների՝ երկու «Ռ»-երի գործը, այն տարբերությամբ միայն, որ ինքը գրչի հետ սեր չունենալով, ոչինչ չէր գրում, ինչպես նախորդ երկուսը: Այդ իսկ պատճառով, նրա օրոք, Դիտարանները սկսվեցին հրատարակվել անստորագիր, անհեղինակ, ամեն իրավունք վերապահելով կազմակերպության նախագահին:

Նորը մահացավ 1977 թվականին:

Նաթանայել Նորին հաջորդեց Ֆրեդերիկ Ֆրանցը, որը կազմակերպությունը ղեկավարեց մինչև 1992 թվականը: Ֆրանցի օրոք ավելի խիստ ու կուռ կառուցվածքային որոշումներ ընդունվեցին, և այդ բնական է, քանի որ մոտենում էին նախորդ նախագահների մարգարեական գուշակությունների ժամանակները, և այդ ամենից անկախ, պետք էր պահել Եհովայի պետություն-կազմակերպությունը:

Այսօրվա նախագահն է ծերունի Միլտոն Հենշելը, որը հավանաբար պիտի պատասխան տա կամ բացատրի, թե ինչու իր նախորդների մարգարեությունները չիրականացան:

1996 թվականի տվյալներով այդ հսկայական հարյուրամյա կազմակերպությունն ամբողջ աշխարհում ունի մոտ 13 միլիոն անդամ (4, էջ 93):

## 4. ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Այս հսկայական մեքենայի գլուխը գտնվում է Բրուկլինում, ՆյոI Յորքի արվարձանում, և այդպես էլ կոչվում է՝ Ղեկավար մարմին: Ղեկավար մարմինն է տալիս բոլոր հրահանգները, ցուցումները, որոնք անհրաժեշտ են կազմակերպություն-պետության գործունեության ու կենսունակության համար:

Այսօր Ղեկավար մարմինը բաղկացած է Տասներկու «օծյալ» ծերունիներից՝ երկնային դասից (տե՛ս ստորև), որոնց նախագահն է Հենշելը:

Այս երկնային դասին պատկանողները կամ օծյալները համարվում են 144,000 օծյալների դասի անդամներ (տես ստորև), որոնք մահվանից հետո անմիջապես պիտի վերանան երկինք՝ երկնային դասին միանալու համար: Կազմակերպության անդամները այդ դասին անվերապահորեն հնազանդվում են: Որևէ հասարակ անդամի համար այդ երկնային դասը ամենամեծ և միակ հեղինակությունն է համարվում: Նրանցից եկած ամեն մի հրահանգ համարվում է Աստվածային՝ անձամբ Եհովայից եկած:

Երկրորդ նախագահը ասում էր, որ ինքը Եհովայի բերանն է, որ իր միջոցով Եհովան է խոսում, հրահանգներ ուղարկում մարդկությանը: Այդ նույն դիրքորոշումը չի փոխվել և նույն տեսակետն է իշխում նաև այսօր:

Ստորին օղակներ են համարվում ժողովները, իսկ հավաքատեղին՝ Թագավորական սրահ ու ոչ՝ եկեղեցի: Այս ժողովները ղեկավարում են վերակացուները կամ ծերերը: - Ժողովների վերակացուները կամ ծերերը ունեն իրենց օգնական սպասավորները (սարկավագներ):

Քսան ժողովների միությունը կազմում է շրջանը, որը ղեկավարում է շրջանային վերակացուն:

Տարին երկու անգամ շրջաններում անց են կացվում համաժողովներ: Շրջաններն էլ միավորվում են ավելի մեծ տարածքային միավորման մեջ՝ իրենց համապատասխան վերակացուով (եպիսկոպոսով):

Բոլոր նոր ցուցումները, որ գալիս են Ղեկավար մարմնից, ներկայացնում են այս միավորման համաժողովներին, որոնք իրենց հերթին նույնը ներկայացնում են ստորին օղակներին և այդպիսով Եհովայի հրահանգները հասնում են հասարակ վկաներին:

Մարզային ժողովների միավորումը ճյուղ է կոչվում, ճյուղերի միավորումը՝ Գոտի (զոնա) և ամենավերին օղակը՝ Կենտրոնակայան (շտաբ)՝ Բրուկլինում:

Բոլոր աղանդների նման, Եհովայի վկաների շարժումը ընդունում է, որ ամբողջ աշխարհում միակ ճիշտը իրենք են: Մնացած բոլոր գոյություն ունեցողները՝ կաթոլիկ, ուղղափառ, բողոքական եկեղեցիները կեղծ են և Աստծուն թշնամի: Նրանց բոլորի ետևում կանգնած է սատանան և նրանց բոլոր քարոզներն ու վարդապետությունները սատանայական են: Համաձայն Եհովայի վկաների Նիկիայի ժողովից հետո, երբ ընդունվեց Ս. Երրորդության դավանանքը, բոլոր եկեղեցիները մերժվեցին Եհովայի կողմից:

Դիտարաններում և ընդհանրապես նրանց վարդապետության մեջ ամենուր «եկեղեցի» բառը փոխարինված է նրա հոմանիշով՝ ժողովով, դրանով շեշտելով, որ եկեղեցի աշխարհում գոյություն չունի, այլ գոյություն ունի Եհովա Աստծու կազմակերպություն, իսկ եկեղեցին դա երկնային 144,000 օծյալներն են:

Եկեղեցու մասին Եհովայի վկաների այս թյուր պատկերացումից էլ բխում են նրանց գործունեության ձևերը և համոզմունքները:

Ամեն մի Եհովայի վկա համարվում է ավետարանիչ: Ավետարանչություն ասելով նրանք հասկանում են գրքեր տարածելը մարդաշատ վայրերում, մետրոների կայարաններում, փողոցներում: Պարտադիր է համարվում նաև պատահական տների դռները թակելը և «բարի լուրը» քարոզելը:

Ամսական 100 ժամից ավելի ավետարանչություն անող «ավետարանիչը» կոչվում է - Պիոներ. այսինքն, պիոները միջին հաշվով օրական 3-4 ժամ պետք է դրսում գրքեր տարածի: Այս ցուցանիշը բավականին բարձր է, և լավ կազմակերպելու դեպքում, նրանք կարող են մի քանի տարում իրենց ավետարանը կամ բարի լուրը՝ Բրուկլինից բխած հրահանգները, հասցնել մեկ միլիոնանոց քաղաքի բոլոր բնակիչներին: Մի կարևոր հանգամանք ևս. պիոներական կազմակերպությունը այդ ամենը կատարում է ոչ թե սիրուց դրդված, այլ որպես պարտականություն, քանի որ հակառակ դեպքում կզրկվեն հետագա աստիճաններով բարձրանալու հնարավորությունից: Ավետարանիչների միջին տարեկան պլանը՝ 1200 ժամն է համարվում:

Գործունեության այս ձևը բնորոշ է տիպիկ կուսակցական կազմակերպություններին՝ բանակային խստագույն կանոնադրությամբ ու օրենքներով հանդերձ:

Եհովայի վկաները, որպես միակ Աստվածային պետության ներկայացուցիչներ, մերժում են բոլոր պետությունների օրենքներին ու կարգերին հնազանդվելը, համարելով այդ հավասարազոր սատանային երկրպագելու: Հենց այս պատճառով է, որ նրանց շարժումը շատ պետություններում արգելված է:

Նրանք մերժում են ցանկացած պետական, ազգային տոներ, իրադարձություններ, համարելով դրանք կռապաշտության դրսևորում: Ավելին, որևէ անհատի հետ կապված հիշարժան օրերն էլ համարվում են հեթանոսության դրսևորում ու մերժվում են (ծննդյան օր, մահ և այլն):

Եթե որևէ մեկը «բռնվում» է նման վայրերում, ապա նրան կտրում են, հեռացնում են կազմակերպությունից: Այս շատ նման է 20-30-ական թվականների կոմերիտական-կուսակցական կազմակերպություններին, որոնք եկեղեցում մոմ վառելու համար անդամներին հեռացնում էին կոմերիտմիությունից կամ պիոներիայից:

Երկնային օծյալ դասի ամեն մի հրահանգի հանդեպ այլ կարծիք ունենալը դատապարտելի է՝ անհնազանդություն է դիտվում բուն Եհովային:

Սուրբ Գրքի միակ մեկնաբանը համարվում է Կազմակերպությունը, անդամները պետք է միայն հասկանան այն, ինչ հրահանգում է Կազմակերպությունը: Այլ մեկնություններ տալը որակվում է սատանայական:

Դիտարանի համարներից մեկում կարդում ենք.

«Եթե մենք քայլում ենք ճշմարտության լույսով, մենք կճանաչենք ոչ միայն Եհովա Աստծուն որպես Հայր, այլ նաև նրա Կազմակերպությանը որպես մեր մայրը» (Դիտարան, V, 1957):

Այս առումով Դիտարանի քարոզությունների առանցքը կազմում է այն իրողությունը, որ առանց Կազմակերպության կամ Կազմակերպությունից դուրս անհնար է հասկանալ Ս. Գիրքը:

Բայց, քանի որ Ս. Գիրքը միշտ չէ, որ բավարարում էր Եհովայի վկաներին և այդ փաստը կարող էր առաջ բերել անհամաձայնություններ Դիտարանի քարոզած դրույթներին, ապա անհրաժեշտություն զգացվեց «վերաձևել» այն: Այդ առումով երրորդ նախագահի՝ Նորի մեծագույն ծառայությունը համարվում է Եհովայի վկաների վարդապետության համեմատ Ս. Գրքի մի նոր թարգմանության ու հրատարակության ձեռնարկումը, որն իրականացվեց 1952 թվականին: Այդ թարգմանությունը անվանեցին «Նոր Աշխարհի թարգմանություն» (New World Translation - NWT), այդպիսով մնացած բոլորը որակելով ոչ ճիշտ արտահայտող Եհովայի կամքը:

## 5. ԵՀՈՎԱՅԻ ՎԿԱՆԵՐԻ ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴԱՎԱՆԱՆՔԸ

Եհովայի վկաների վարդապետության կորիզը հիմնականում խարսխված է ադվենտիստների վարդապետության վրա, լրացված երկու «Ռ»-երի քարոզություններով:

Եհովայի վկաների վարդապետության մեջ կարելի է առանձնացնել հետևյալ հիմնական սկզբունքները, որոնք կազմում են նրանց աստվածաբանության կորիզը.

- Արտասովոր ձգտում դեպի Հին Կտակարանը: Դա երևում է ամենուրեք. հրատարակած ցանկացած գրքույկում, ամսագրում, թերթիկում: Բավական է աչքի անցկացնել մեջբերումները. 90%-ը Հին Կտակարանից է: Անգամ ցուցադրական նկարներում, երբ որևէ վկա Ս. Գիրքը բացված վիճակում քարոզում է անցորդներին՝ մատնացույց անելով ինչ որ տեղ Ս. Գրքից: Գրքի բացվածքից կարելի է եզրակացնել, որ այն բացված է Հին Կտակարանի որևէ գրքում: Նոր Կտակարանը նրանց համար անարժեք է: Հիսուս Եհովայի վկաների համար 144000-ից մեկն է՝ Առաջինը, կամ ինչպես ոչ վաղ անցյալում ասում էին՝ առաջինը հավասարների մեջ:

- Ս. Երրորդության մերժում: Սուրբ Հոգին ներկայացվում է որպես Եհովայի զորությունը, գործոն ուժը: Ամենուրեք այն պետք է գրվի փոքրատառով, որպեսզի չհասկացվի նրա անձ լինելը, այլ շեշտվի նրա հասարակ անունը: Հիսուս Քրիստոսին ներկայացնում են միայն որպես մարդ: Հետևաբար ինքստինքյան վերանում են քրիստոսաբանական հարցերն ու վեճերը:

- Պատմական բոլոր եկեղեցիների գլուխը, համաձայն Եհովայի վկաների, սատանան է:

- Եկեղեցին ոչ նյութական կառույց է, և միայն 144000 անդամ ունի, որոնք հոգի են և - մարմին չունեն:

- Հիվանդագին ձգտում, ցանկություն աշխարհի վախճանի օրը՝ Արմագեդոնի օրը իմանալու համար: Նրանց բոլոր անդամները, արդեն 130 տարի է, հավատում են, որ իրենցից ամեն մեկը գիտե այդ օրը և կարող հաստատ ասել և ապացուցել: Այդ գիտուններին այսօր ավելացել են հայազգի եհովական գիտունները: Այդ մեթոդը շատ օգտակար է անդամներին ակտիվ վիճակում պահելու համար, Բրուկլինն էլ ամեն կերպ խրախուսում է այդ: Ընդ որում նրանք այսօր էլ վստահաբար կապացուցեն, որ այդ օրը ուր որ է կգա, «սարերի ետևում չէ»: Հաշվարկային թվաբանական համակարգերը, որոնց միջոցով նրանք որոշում են Արմագեդոնի օրը, նրանց հրամցնում են «վերևից»՝ Կառավարությունից, որպեսզի խառնաշփոթություն չլինի և անդամները ինքնագործունեությամբ չզբաղվեն:

Պատմությունը ցույց է տվել, որ ցանկացած կրոնական կամ ոչ կրոնական շարժում նման է եղել իր իսկ առաջնորդին: Մերօրյա եհովականներն էլ բացառություն չեն. նրանցից ամեն մեկը ձգտում է նմանվել երկու «Ռ»երին կամ ցուցաբերել ստրկական հնազանդություն Ղեկավար Մարմնին:

### 5.1. ԱՍՏՎԱԾ

Ս. Երրորդությունը (Տրինիտարիզմ), որպես անընկալելի մերժվեց եհովականների կողմից: Ինչպես վերը նշեցինք, ցանկացած վերբանական (իռացիոնալ) գաղափար հետ այսու մերժվելու է եհովականների կողմից: Այդպիսով, Եհովայի վկաների աստվածաբանները միտումնավոր սահմանափակում են իրենց աստվածաբանությունը պարզունակ պատկերացումների շրջանակներում:

Այդպես էլ պետք է լիներ. միայն այդ ձևով կարելի է ընդգրկել ինչքան կարելի շատ անդամներ: Թերթելով Եհովայի վկաների թերթիկները, Դիտարանները, մանավանդ - Ռասելի ու Ռուտերֆորդի երկերը, զարմանալ կարելի այն պարզունակության վրա, որով ներծծված է ամեն էջ, ամեն մի նախադասություն: Այդ պարզունակությունը կարելի է հետևյալ պարզ նախադասությամբ ներկայացնել. «Ես ամեն ինչ գիտեմ»:

Եհովայի վկան գիտե Ս. Գրքում թաքնված ամեն ինչ. նա կարծում է, որ այդ մենաշնորհը իրեն տվել է անձամբ Եհովան: Իսկ տրամաբանությունը շատ պարզ է. Աստված չէր կարող այնպիսի բան գրել իր խոսքում, որ մարդ չհասկանար, իսկ այն ամենը, ինչ անհասկանալի է, չի կարող գրված լինել Աստծու կողմից. դրանց հեղինակը սատանան է: Ռուտերֆորդը հենց այդպես էլ աղաղակում է. «Ս. Երրորդության հեղինակը սատանան է»:

Այսպես, եթե Սուրբ Երրորդությունը մի Աստված է, ինչպես քարոզում են քրիստոնյաները, ապա կստացվի, որ 3=1, որը ճիշտ չէ, ուրեմն չի կարելի Հովհ. 1.1-2 համարները համարել Երրորդության հիմնավորող փաստարկ, թե չէ կստացվի որ Աստված ունի երեք գլուխ (10, էջ 101):

Հաճախ, փաստելու համար, որ Նախնական եկեղեցին չէր ընդունում Երրորդության գաղափարը, Եհովայի վկաները ակնարկում են Արիոսին, մինչդեռ հենց Արիոսի ժամանակներում ճշտվեց Ս. Երրորդության հիմնարար վարդապետությունը, որը հիմքը հանդիսացավ քրիստոնեական վարդապետության:

Ահա Եհովայի վկաների հիմնական հարցադրումները Ս. Երրորդության վերաբերյալ.

1. Եհովան Երրորդություն (տրինիտար) չէ, նա «միակ ճշմարիտ Աստվածն է» (Հովհ. 17.3, Մարկ. 12.29):

2. Հիսուս Աստված չէ, նա Եհովայի որդին է և ենթակա է նրան (Ա Կորնթ. 11.3):

3. Հայրը մեծ է, քան Որդին (Հովհ. 14.28):

4. Սուրբ Հոգին անձ չէ, այն Եհովայի գործուն ուժն է, զորությունը (Ծննդոց 1.2, Գործք 2.18):

Որպես կանոն, Եհովայի վկաները պնդում են, որ այս սկզբունքները հիմնավորվում են Ս. Գրքով և, որն ավելի է արժանի ուշադրության, հղում են կատարում նախանիկիական հայրերին, համոզելով, որ նրանք էլ չէին ընդունում Ս. Երրորդության գաղափարը:

Եվ, ինչպես ընդունված է արևմտյան վայ-քարոզիչների կողմից, թերթիկներում ու ամսագրերում զետեղում են գիտա-բանասիրական բնույթի պնդումները, որոնք հրամցվում են ստադիոններում կամ հրապարակներում հավաքված պատահական մարդկանց և այդպիսով համոզում, որ Նախնական եկեղեցին էլ չէր ընդունել Ս. Երրորդության գաղափարը: Սա շատ հայտնի արևմտյան «ՇՈՈՒ»-ի սկզբունքն է, որ շատ է տարածվում և վերջին ժամանակներում կիրառություն գտնում նաև մեզանում: Հավաքներ կազմակերպելով ստադիոններում կամ դահլիճներում, նրանք հաշվետվություններ են ներկայացնում, թե այսքան մարդ ապաշխարեց, դարձի եկավ, փրկվեց և այլն: Եվ հենց նման հավաքույթներում էլ սկսում են ամբոխին նախանիկիական հայրերի և դասական հունարենի մասին բարդ-բարդ ու խճճված բաներ քարոզել, համոզելով, որ իրենք ճիշտ են: - Մարդիկ, որ առաջին անգամ են լսում Որոգինեսի[48] անունը այդ շոուների ժամանակ, կսկսեն հետագայում մեզ ապացուցել, որ նա էլ ճշմարիտ Եհովայի վկա է եղել, մինչդեռ Եկեղեցին, հանձինս իրենց առաջնորդների, սկսել է հունական հեթանոսական գաղափարներ տարածել:

«Հարկավո՞ր է հավատալ Երրորդությանը» տխրահռչակ գրքույկում (11, էջ 7) բերվում են մեջբերումներ նախանիկիական հայրերից, ապացուցելու, որ նրանք չեն ընդունել Ս. Երրորդության գաղափարը: Թվարկում են Հուստինոս վկային, Իրենիոսին, Կղեմես Ալեքսանդրացուն, Տերտուղիանոսին[49], Որոգինեսին և այլն: Վստահ լինելով, որ ոչ մի Եհովայի վկա չի բացի Եկեղեցու պատմության նախանիկիական շրջանին վերաբերող և ոչ մի գիրք, քանի որ դա արգելված է եհովականների մոտ և միայն Դիտարանի նշանը (գրիֆը) ունեցող գրքերն են նրանք կարդում, Կենտրոնակայանը առանց կասկածի պնդում է իրենը:

---

[48] III դ. ամենաբեղուն եկեղեցական գործիչը:

[49] II դ. ամենահայտնի եկեղեցական գործիչները, որոնց ջատագովական, աստվածաբանական, դավանաբանական գործերը հաստատել և զորացրել են եկեղեցին:

Մինչդեռ այդպես չէ, թեկուզ հենց Տերտուղիանոսից կարելի է բերել այս ձևակերպումը.

«Երեք դեմքերից ամեն մեկը - Աստված է և երեքը միասին՝ մեկ Աստված» (12, էջ 183):

Իսկ Որոգինեսի աստվածաբանությունը ուղղակի Ս. Երրորդության դավանության խոստովանությունն է (13, էջ 154-155):

Այժմ քննարկենք վերը բերած համարները:

1. Հովհ. 17.3:

Հավիտենական կյանքը այս է, որ ճանաչեն քեզ միակ ճշմարիտ Աստված, նաև Հիսուս Քրիստոսին, որին դու ուղարկեցիր:

Մարկ. 12.29:

Եվ Հիսուս ասաց նրանց. «Ամենից առաջինն է՝ լսի՛ր, Իսրայե՛լ, մեր Տեր Աստվածը միակ Տերն է»:

Այս համարներով Եհովայի վկաները փորձում են ապացուցել, որ Աստված Երրորդություն չի կարող լինել: Երկու դիտողություն.

ա. Ընդհանուր առմամբ, Եհովայի վկաների հետ բանավիճելիս, անիմաստ է զանազան այլ համարներ բերել Ս. Գրքի ուրիշ գրքերից, քանի որ այդ մեթոդը արդյունք չի տա: Հարկավոր է, որպես կանոն կամ սկզբունք, իրենց իսկ բերած համարների շրջանակում մնալով, հերքել նրանց փաստարկները կամ տրամաբանական կառույցները: Այս մեթոդը ավելի օգտակար է և արդյունավետ:

բ. Եհովայի վկաները չեն սիրում, երբ հարցեր են տրվում Երրորդության մասին: Նրանք ուղղակի խուսափում են պատասխանելուց կամ շրջանցում են հարցը՝ փոխելով նյութը: Նրանց աստվածաբանությանը բնորոշ է հետադարձ տրամաբանությունը. սկզբում ամեն ինչ հրահանգավորվում է, հետո՝ տրամաբանորեն կառուցվում կամ ապացուցվում այդ հրահանգը այնպես, որ մի երկրորդ լուծում տալը անհնարին է դառնում: Այս է ամբողջատիրական (տոտալիտար) աղանդների աստվածաբանական հենքը:

«Հարկավո՞ր է հավատալ Երրորդությանը» գրքույկն Եհովայի վկաների աստվածաբանությունը ներկայացնող «ամենափայլուն» գրքույկն է: Նախ հրահանգում է ընթերցողներին. «Երրորդությունը մերժե՛ք» և ապա հանգստացնում ընթերցողներին, որ նրանք դատապարտության չեն ենթարկվի, քանի որ մերժել են Երրորդությունը, իսկ շուտով, «Երբ Աստված այս իրերի չար դրության վերջը տա, Երրորդություն դավանող քրիստոնեական աշխարհը պատասխանատվության կկանչվի: Այն կդատապարտվի Աստծուն անարգող իր գործերի և ուսմունքների համար»: Ոչ ավել, ոչ պակաս:

Հովհ. 17.3 համարը տրամաբանական շարունակությունն է նախորդ՝ 17.2 համարի, ուր Հիսուս ասում է, որ իրեն տրված է իշխանություն հավիտենական կյանք տալու նրանց, ում Հայրը տվել է Իրեն: Այդ հավիտենական կյանքը ճանաչելն է միակ ճշմարիտ Աստծուն և Հիսուս Քրիստոսին: Այսինքն հավիտենական կյանքը Աստվածճանաչողությունն է, Հորը ճանաչելը որպես միակ ճշմարիտ Աստված, ի տարբերություն մյուս «աստվածների» (Հռոմ. 1.13, 1 Կորնթ. 8.5-6), նաև՝ Հիսուս Քրիստոսին ճանաչելն է: Այստեղ

Աստծուն վերաբերող «միակ ճշմարիտ» բառերը առանձնացնում են Հորը՝ մյուս «աստվածներից» և Հայր Աստծուն ճանաչելը՝ հավիտենական կյանքը, դա նույն Հիսուս Քրիստոսն է և հետևաբար միակ ճշմարիտ Աստված և Հիսուս Քրիստոս նույնանում են (տե՛ս TB, h. 3, այդ համարի մեկնությունը, նաև (45, Ճ 280):

Իսկ Մարկ. 12.29 համարը մեջբերում է Բ Օր. 6.4 համարը[50], որը ամեն մի հրեա օրական երկու անգամ պիտի արտասաներ, ցույց տալով մեկ Տիրոջ՝ Աստծու գոյությունը, ի տարբերություն նրանց շրջապատող այլ ազգերի տերերի և աստվածների (Ա Կորնթ. 8. 5-6): Այդ համարը ամենևին չի վերաբերում Աստծու ներքին էությանը, այսինքն, այստեղ չկա հակասություն Ս. Երրորդության դավանանքի և Աստծու մեկ լինելու միջև (տե՛ս ստորև, III.5.4-ի երրորդ օրինակը):

2. Ա Կորնթ. 11.3:

Ուզում եմ, որ դուք իմանաք, թե ամեն մարդու գլուխ Քրիստոսն է, կնոջ գլուխը՝ մարդը և Քրիստոսի գլուխը՝ Աստված:

Հովհ. 14.28:

Լսեցիք, որ ձեզ ասացի, թե՝ գնում եմ և կգամ ձեզ մոտ. եթե ինձ սիրեիք, ապա դուք ուրախ պիտի լինեիք, որ ես Հոր մոտ եմ գնում, որովհետև իմ Հայրը մեծ է, քան ես:

Այս համարներն էլ շահարկում են եհովականները, դրանք ներկայացնելով որպես Երրորդությունը մերժող փաստարկներ: Հիմնականում նրանք նշում են «Իմ Հայրը մեծ է» դարձվածքը:

Այս հատվածում Հիսուս աշակերտներին պարզաբանում է, թե ինչու իրենք՝ աշակերտները պետք է ուրախ լինեն Հոր մոտ՝ երկինք գնալու համար: «Հիսուս մարդ եղավ և դրա համար էլ Հորը իրենից մեծ է ասում[51]», բայց բնությամբ հավասար է Հորը և համագո է նրան, «որովհետև Հայրական էությունից է ծնված»[52]:

Հարմար է այդ համարներին ավելացնել մեկ համար էլ նույն Հովհաննեսի ավետարանից՝ 10.3-ը, որից եհովական աստվածաբանները ուղղակի խուսափում են.

«Ես և Հայրը մի ենք»:

Այս այն հզոր համարն է, որ ցույց է տալիս Հիսուսի և Հոր նույնականությունը:

Բնագրային համարը հետևյալ տեսքն ունի.

ego kai ho pater hen esmen.

Այստեղ օգտագործված է «մի» բառի hen ձևը, որը չեզոք սեռի է և ոչ թե արական սեռի՝ heis ձևն ունի: Սա նշանակում է, որ «մի»-ն ցույց է տալիս այդ երկուսի՝ Հոր և Հիսուսի մեկ լինելը բնությամբ, էությամբ, հակառակ դեպքում հունարենն պիտի օգտագործեր heis ձևը, որը գտնում ենք, օրինակ, Գաղատ. 3.28-ում.

---

[50] * Այս համարը ունի հատուկ անվանում՝ Շեմա (=լսի՛ր), որով սկսվում է Բ Օր. 6.4-ի եբրայերենը:

[51] * Աթանաս Ալեքսանդրացու մատենագրությունը, Վենետիկ, 1899, էջ 55-56, նաև TB, h. 3, համապատասխան համարի մեկնությունը, ինչպես նաև՝ Համապատում, § 273:

[52] «Եթե իմ նկատմամբ ձեր սերը ճշմարիտ և հաստատուն է, պիտի ուրախանաք, որ Երկնավոր Հոր մոտ գնալով Նրա կամքը կատարած և Նրա հրամանը գործի դրած կլինեմ, ինչպես որ ամենքը պարտավոր են կատարել Մեծի հրամանը», - գրում է Օրմանյանը (45, § 273):

«որովհետև դուք ամենքդ մեկ եք ի Հիսուս Քրիստոս»:

Այստեղ «մեկը» heis ձևով է հանդես գալիս, և, բովանդակությանն համապատասխան, ցույց է տալիս միությունը Քրիստոսով, բայց ոչ ամենևին նույնություն ներքին բնությամբ (20, էջ 80):

«Հարկավո՞ր է հավատալ Երրորդությանը» գրքույկը միտումնավոր հղումը կատարում է Ա Կորնթ. 3.6-8 համարներին, որը բովանդակությամբ կապ չունի ո՛չ բնության և ո՛չ էլ էությունների նույնությունների հետ (էջ 24): Ավելին, պնդում է, որ Հիսուսին ընդդիմացող հրեաները սխալ էին հասկացել Հիսուսին և ուզում էին քարկոծել նրան:

Հարկավոր է վարժվել եհովական աստվածաբանների նման դատողությունների ընթացքին. ամենուր, երբ Ս. Գիրքը չի ջատագովում իրենց վարդապետությունը, նրանք պնդում են, որ կա՛մ թարգմանությունն է սխալ և կամ էլ՝ Հիսուսին շրջապատողները ոչինչ չեն հասկացել, հունարեն չեն իմացել, եբրայերեն չեն իմացել և այլն[53]: Հետագայում դեռ կհանդիպենք այդ «սկզբունքներին» (տե՛ս ստորև, IV.5.4.-ի օրինակները): Նոր Կտակարանում անհնար է ցույց տալ մի համար, ուր Հիսուսի խոսքերը հրեաները սխալ հասկացած լինեին. անգամ խաչելության դրվագում, «Էլոի»-ն ճիշտ հասկանալով՝ միտումնավոր մեկնեցին այն որպես՝ «Էլիա», այսինքն՝ «Եղիա», որը համապատասխանում էր իրենց ուզածին, քանի որ եթե Հիսուս Եղիային է կանչում, ուրեմն Եղիան դեռ չի եկել, իսկ այդ պարագայում Հիսուս չէր կարող մեսիան լինել: Նման նուրբ բառախաղ կարող էին անել միայն Հիսուսին շատ լավ հասկացող հրեաները:

## 5.2. ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ

Եհովայի վկաների աստվածաբանությունը Հիսուս Քրիստոս ասելով պատկերացնում է երեք փուլային վիճակներ. նախամարդկային վիճակ (pre-human), մարդկային (human) և հետմարդկային (post -human):

Համաձայն նրանց աստվածաբանության առաջին վիճակը՝ մինչ Մարիամից ծնվելն է (pre-human), երբ նա գոյություն է ունեցել որպես Աստծու Բան կամ Լոգոս, ընդ որում նրան ստեղծել է Աստված, ուստի նա Աստված լինել չէր կարող, և բոլոր ստեղծվածներից առաջինն էր՝ Միքայել հրեշտակապետը (14, առաջաբանը, 15, էջ 18):

Հիսուս Քրիստոսի երկրորդ վիճակը մարդկային (human) վիճակն է: Եհովայի վկաների աստվածաբանները չեն օգտագործում մարդեղացում (incarnation) բառը, քանի որ այդ դեպքում հարկ կլիներ ընդունելու նաև Նրա աստվածությունը:

Հիսուսի ծնունդը կամ աշխարհ գալը նրանք ներկայացնում են այսպես. «Նա (այսինքն՝ Եհովան), Իր հոգեղեն Որդու՝ Բանի կատարյալ կյանքը փոխադրեց հրեա մի կույսի՝ Մարիամի արգանդը: Երիտասարդ կինը հղացավ ու հարմար ժամանակ որդի

[53] * Ի միջի այլոց Ռասելի դասական լեզուների իմացության-չիմացության հարցը քննվել է անգամ դատարանում, երբ նա՝ Ռասելը դատի է տվել ոմն Ռոսսի, իր մասին հրապարակած մի թերթիկի առիթով (թերթիկի վերնագիրն է՝ «Որոշ փաստեր ինքնակոչ հովիվ Ռասելի մասին»): (4)-ը բերում է քաղվածք դատական արձանագրությունից. փաստաբանի այն հարցին, թե՝ Գիտե՞ արդյոք հունարեն այբուբենը, նա պատասխանում է դրական, բայց երբ նրա ձեռքն են տալիս հունարեն Նոր Կտակարան և խնդրում են կարդալ վերնագիրը, նա հրաժարվում է, ասելով, որ հունարեն չգիտե (տե՛ս նաև 5, էջ 78-79):

ծնեց, որը Հիսուս կոչվեց: Տրամաբանորեն, կյանքի Ստեղծիչը կարող էր այդպիսի հոյակապ հրաշք կատարել» (15, էջ 18): Այստեղ արծարծված քրիստոսաբանական հարցերը նորություն չեն եկեղեցու համար, պարզապես «վաղուց մոռացված հինն է», որը վերընձյուղվել է ամերիկյան մայրցամաքում, XIX դարի երկու «հովիվների» գործերում, որոնք, ըստ կենսագրերի, անգամ բավարար աստվածաբանական կրթություն չեն ստացել: - Խոսքն այստեղ արիոսականության և էբիոնիտականության[54] մասին է, որոնց վերաբերյալ եկեղեցու դիրքորոշումը հաստատվել է դեռ Ա Տիեզերական ժողովում:

Քրիստոսի երրորդ՝ հետմարդկային (post-human) վիճակը, համաձայն եհովական աստվածաբանների, եղել է հոգեղեն և ոչ թե նյութական, ինչպես Նիկիական Հանգանակում:

Այսպես, եհովականները ընդունում են, որ Եհովան Հիսուս Քրիստոսին հարություն է տվել հոգևոր մարմնով, իսկ Հիսուսի մարմինը լուծվել կամ վերցվել է խորհրդավոր ձևով՝ Եհովայի կամքով, որին նրանք անվանում են անիհիլացում, որ թարգմանվում է ոչնչացում: Հնարավոր է երկու տարբերակ.

1. Մարմինը գոլորշիացել է կամ գազի վերածվել.

2. Հրեշտակները պահել են մարմինն այնպես, որ ոչ մեկը չիմանա, թե որտեղ է այն գտնվում (ինչպես Մովսեսի մարմինը)[55]:

Այս անտրամաբանական եզրահանգումները միայն խճճում են հարցը, ոչ մի լուծում չտալով:

Կարելի է հարյուրավոր համարներ նշել Ս. Գրքից, ուր ցույց է տրված Հիսուսի Աստված լինելը. ցանկացած Համաբարբառում կարելի դրանք մեկ առ մեկ նշել: Բայց ստորև կնշենք միայն այն համարները, որոնք շահարկում են իրենք՝ եհովականները, որպեսզի ապացուցեն Հիսուս Քրիստոսի ստեղծված լինելը, ցույց տան, թե Հիսուս Աստված չէ, այլ մարդ է միայն:

1. Առակաց 8. 22-31:

Այստեղ, եհովական աստվածաբանները առանձնացնում են հատկապես 22-րդ համարը, ուր ասվում է, թե՝ «Տերը ինձ ստեղծեց իր գործը սկսելուց առաջ», և հայտարարում, թե՝ Հիսուս ստեղծված է, արարված է, աստված չէ: Ի միջի այլոց, Դիտարանի համարյա բոլոր համարներում անպայման կգտնեք Առակաց 8.22 համարը՝ համապատասխան մեկնաբանությամբ:

«Բանը Աստծու սիրելի ճարտարապետն էր, որ Եհովայի կողքին աշխատեց բոլոր բաները շինելու համար և նկարագրված է որպես անձնավորված իմաստություն» (16, էջ 39): Ուրեմն, եզրակացնում են Եհովայի վկաները, այդ անձնավորված իմաստությունը - Հիսուսն է՝ Աստծու Բանը, որը, ինչպես տեսնում ենք, ստեղծված է:

Այդ նույն բանն էր պնդում և Արիոսը IV դարում և նույն այդ համարն էր մեջբերում: - Բայց, իրականում, այդ համարի մեջ եկեղեցու հայրերը տեսել են մարգարեություն Հի-

[54] * Հետառաքելական շրջանի աղանդներից, որն Քրիստոսին համարում է բնական կերպով ծնված մարդ և միայն Հովհաննեսի մկրտությունից հետո է Նա Մեսիա է դարձել:

[55] * Բ Օր. 34.6:

սուսի՝ որպես Աստծու Բանի մարդեղացման մասին, կապելով այն Հովհաննեսի ավետարանի նախաբանի՝ 1.1-5-ի հետ, քանի որ ինչպես այստեղ անձնավորվում է իմաստությունը, այդպես էլ Լոգոսը, անձնավորվում է Հովհաննեսի ավետարանում: Իհարկե - Լոգոսի մասին վարդապետությունը, առանց Նոր Կտակարանի, անհնար է պատկերացնել, այն էլ հենվելով միայն առակների գրքի վրա: 8.22-ի «ստեղծելը» բառը գալիս է LXX[56] թարգմանությունից, ուր եբրայերեն qanah բայը թարգմանվել է այդպես, չնայած որ բայն ունի շատ ուրիշ իմաստներ, ինչպես օրինակ, «գնել», «ունենալ», «տիրել»: Դրա համար էլ Աստվածաշնչային Ընկերության հրատարակություններում այդ համարի թարգմանությունը այս տեսքն ունի.

«Տերն ինձ ուներ իր գործը սկսելուց առաջ»:

Նույն այդ բայը օգտագործված է Ծննդ. 14.19 և 22 համարներում: Երկու համարներում էլ «երկնքի ու երկրի Տերը» և «Աստված» բառերը կապվում են qanah-ով («երկնքի ու երկրի Տեր եղող (qanah) Աստված»): Այսինքն, Առակ. 8.22-ից հետևում է, որ Իմաստությունը, եթե անգամ այն անձնավորվում է, ապա դա նույն Ինքն է՝ Որդին, որին Հայրը կնքեց՝ Աստված: Իմաստության հավիտենական գոյությունը՝ ստեղծագործությունից առաջ, անշուշտ, նույնացվում է Արարչի հետ, այնպես, ինչպես Հովհաննեսի Նախաբանում[57]:

(Ի միջի այլոց, ինչպես նշեցինք, այս համարի «ստեղծել» բայը գալիս է LXX թարգմանությունից, որը Եհովայի վկաները համարում են պարականոն, ոչ վավերական:)

Միջնադարյան հայ մեկնիչներն էլ նույն բանն էին սովորեցնում. «Այստեղ, աշխարհի լինելուց առաջ մարդեղացման խորհուրդն էր ձևավորվում, որը պիտի լիներ ապագայում» (Համամ Արևելցի, Մեկնություն Առակաց գրքի, Երևան, 1994, էջ 181):

Հիսուսի աստվածության հետ կապված մի այլ խումբ հինկտակարանյան համարներ էլ կան, որոնք շատ են սիրում մեջբերել եհովական աստվածաբանները, ապացուցելու - Հիսուսի ստեղծված լինելը: Դրանք են.

1. Եսայի 7.14. «Տերը Ինքը պիտի նշան ցույց տա քեզ. ահա կույսը պիտի հղանա ու որդի պիտի ծնի և նրա անունը Էմանուել պիտի կոչվի»:

2. Եսայի 9.6. «Քանզի մեզ համար մանուկ ծնվեց, մեզ մի որդի տրվեց, որ իշխանությունն իր ուսերի վրա պիտի լինի,Նրա անունը պիտի կոչվի Սքանչելի, Խորհրդակից, Հզոր Աստված, Հավիտենականության Հայր, Խաղաղության իշխան»:

3. Միքիա 5.2. «Եվ դու Բեթղեհեմ Եփրաթա, թեև Հուդայի հազարավորների մեջ փոքրիկ ես, բայց քեզանից պիտի դուրս գա նա, որ Իսրայելի վրա իշխան պիտի լինի, և նրա ելքը հնուց, հավիտենական օրերից է»:

Եսայի 7.14-ի «Էմանուել»-ը նշանակում է՝ Աստված մեզ հետ, և այստեղ խոսք անգամ չկա այլ աստվածների մասին, ուրեմն, այստեղից հետևում է, որ Էմանուելը և Աստված՝ նույնանում են:

---

[56] * Հին Կտակարանի հունարեն թարգմանությունը, կատարված 70 (=LXX) թարգմանիչների կողմից մ.թ.ա. III-II դդ., Ալեքսանդրիայում:

[57] * TB, հ. 1, Առակ. 8.22-ի մեկնությունը, նաև Տաթևացու «Ոսկեփորիկը», էջ 50-51:

Այս մարգարեությունը կատարվեց ոչ թե Աքազի ժամանակ՝ այդ ժամանակի հզոր կայսրության՝ Ասորեստանի գերիշխանության ժամանակներում, այլ մեկ ուրիշ գերհզոր կայսրության՝ Հռոմի գերիշխանության ժամանակ:

Եսայի 9.6-ում բացահայտվում է 7.14-ի մարգարեության մանրամասները: Մանուկ ծնվեց, մեզ որդի տրվեց, որ Սքանչելի է, Խորհրդակից, Հզոր Աստված, Հավիտենականության Հայր, Խաղաղության Իշխան: Այս բոլոր հատկանիշները միայն Աստծուն է վերագրվում: Սքանչելի է, քանի որ մանուկը, որ տրվեց մեզ նույն Խորհրդակիցն է, որ Աստծու խոսքերը պիտի բերի աշխարհ, որովհետև Աստծու խոսքը և Նա նույնն են: Նա Հզոր Աստված է, որովհետև հաղթելու է աշխարհին: Այդ նույն «հզոր» բառը օգտագործված է նաև շատ ուրիշ տեղերում (Բ Օր. 10.17, Եսայի 10.2, Երեմ. 32.18), ուր նկատի է ունենում Աստծուն:

Նա Հավիտենականության Հայրն է, հետևաբար Նա կարող է հավիտենականություն պարգևել ուրիշներին. Նա նաև Խաղաղության իշխանն է, ուստի կարող մեղավոր մարդկության և Աստծու միջև խաղաղություն հաստատել:

Այստեղից կարելի միայն մի եզրակացության հանգել.

Մանուկ, Որդի, Սքանչելի, Խորհրդակից, Հզոր Աստված, Հավիտենականության - Հայր, Խաղաղության Իշխան, Աստված, Եհովա բառերը նույնական են:

Չնայած նրան, որ Եհովայի վկաները խուսափում են ճշգրիտ պատասխաններից, այս համարներին նրանք տալիս հետևյալ բացատրությունը (4, էջ 137-138):

Ճիշտ է, ասում են նրանք, այստեղ խոսքը Հիսուսի մասին է, բայց այստեղ գրված չի, որ նա Աստված է: Ճիշտ է, նա «հզոր» աստված է, բայց «Ամենազորը» չէ:

Ռուտերֆորդը այսպես է գրում. «Հավիտենականության Հայր ասածից այն գաղափարն ենք ստանում, թե սերունդ է լինելու, որը հավիտենական կյանք է ունենալու: Ուրեմն այս խոստումը ցույց է տալիս, թե Կառավարություն պիտի հաստատվի, որի տակ մարդկությանը պիտի պարգևի հավիտենական կյանքի առանձնաշնորհը» (9, էջ 214):

Ռուտերֆորդի այս անտրամաբանական կառույցը բացարձակ կապ չունի մարգարեության բովանդակության հետ, քանի որ խոսքն այստեղ Հիսուսի մասին է, ու ոչ թե՝ 144000-անոց ինչ որ Կառավարության, որոնք հավիտենականություն պիտի բաշխեն աշխարհին:

Շարունակելով քննել վերը նշված համարները, Եհովայի վկաներն ասում են, որ այդտեղ բացակայում է «հզոր»-ի գերադրական «ամենա» նախածանցը և որ միայն «ամենահզոր Աստված» կապակցության դեպքում է խոսքը գնում Եհովայի մասին (4, էջ 137):

Բայց այդ պնդումին կարելի առարկել Եսայի 10.21 և Ելք 3.6 համարներով.

«Մնացորդը՝ Հակոբի մնացորդը Հզոր Աստծուն պիտի դառնա» (Եսայի 10.21)

և

«Ես եմ քո հորդ Աստվածը, Աբրահամի Աստվածը ու Հակոբի Աստվածը» (Ելք 3,6):

Առաջին մեջբերման մեջ պարզ է, որ խոսքը գնում է Եհովայի մասին և «հզոր» բառը այդտեղ չունի գերադրական «ամենա» նախածանցը: Երկրորդ մեջբերումից հետևում է, որ այդ «Հզոր Աստվածը» նաև Հակոբի Աստվածն է: Այսպիսով ստացվում է, որ Հզոր Աստվածը դա Հակոբի Աստվածն է, որը Եհովան է:

Բայց քանի որ Հիսուս Քրիստոսն է Հզոր Աստվածը, ապա՝ Հիսուս Քրիստոս նույն Եհովան է:

Այս տրամաբանական շղթան կարելի շարունակել. Երեմիա 32.18 համարում մարգարեն ասում է. «Դու Մեծ ու Հզոր Աստված ես», ուր օգտագործված է «հզորի» երկու ձևերն էլ, թե առանց գերադրական նախածանցի և թե՝ գերադրականով: Ուրեմն, նույնությունների շղթան կընդունի այս վերջնական տեսքը. «Հիսուս Քրիստոս» նույն Հզոր Աստվածն է, նույն Մեծ ու Հզոր Աստվածն է և Եհովան է:

Իսկ Ռուտերֆորդի տրամաբանական շղթան որդեգրելով, որն ի միջի այլոց եհովականների մոտ ընդունված է, կստացվի, որ գոյություն ունեն երկու Աստված, որոնք տարբերվում են իրարից. մեկը «հզոր Աստվածն» է, մյուսը՝ «Ամենազոր» Աստվածը:

Երրորդ մարգարեությունը առաջին երկու մարգարեությունների իրականացման տեղի մասին է: Բայց այդ համարում միայն տեղի մասին չի ասվում: Համարը հասկանալու բանալին նրա վերջին հատվածն է. «Նրա ելքը հնուց, հավիտենական օրերից է»: Այդ նշանակում է, որ Իշխանը նա է, որ միշտ եղել է, գոյություն է ունեցել հավիտենական ժամանակներից: Իսկ այդպիսի սահմանում կարող էր տալ միայն նա, ով Իշխանն է բոլոր ժամանակների, այսինքն՝ Աստված: Մարգարեն այս համարում խոսում է երկու տեղերի մասին. մեկը՝ հավիտենականության մեջ է՝ սկիզբը, և մյուսը՝ Բեթղեհեմում: Իշխանի համար այդ երկու «տեղերն» էլ Նրա ծննդավայրն են. սկզբում Բանը և Բեթղեհեմում՝ մարդեղացումը (տես նաև 4, էջ 138):

Հիսուսի Աստվածության վերաբերյալ ամենահայտնի տեղերից մեկն էլ Հովհ. 1.1-5 հատվածն է, որն, անշուշտ, ամենից շատ է շահարկվում Եհովայի վկաների կողմից:

Եհովայի վկաների վարդապետության համաձայն «մեկը, որ ուրիշի մոտ է, չի կարող ինքն այդ ուրիշը լինել» (11, էջ 27): Այդ գրքույկն, այնուհետև շարունակում է. «Երրորդության կողմնակիցները պնդում են, թե դա (Հովհ. 1.1) նշանակում է, որ «Բանը» (հունարեն՝ հո լոգոս), որն երկիր եկավ որպես Հիսուս Քրիստոս, ինքն Ամենակարող Աստվածն էր»: Այնուհետև գրքույկը բերում է զանազան մարդկանց (որոնց անունները հայ ընթերցողին ոչինչ չեն ասում) կարծիքներ, որոնք թարգմանել են Հովհ. 1.1 այնպես, ինչպես իրենք են ցանկանում, այսինքն, այսպես.

«Սկզբում էր Բանը, և Բանը Աստծու մոտ էր և Բանը աստված էր» կամ «Սկզբում էր - Բանը, և Բանը Աստծու մոտ էր և Բանը աստվածային էր» կամ էլ՝ դրա նման:

Բայց գրքույկի հիմնական նպատակը հետո է երևում.

"Հովհաննես 1.1-ում հունարեն թեոս (աստված) բառը հանդիպում է երկու անգամ: Առաջին դեպքում դա մատնացույց է անում Ամենակարող Աստծուն, որի մոտ էր Բանը («և Բանը (հո լոգոս) Աստծու (թեոս բառի ձև) մոտ էր): Այդ առաջին թեոս-ի առջևում գտնվում է հունարեն որոշիչ հոդի տոն ձևը, որը մատնացույց է անում որոշակի առարկայի կամ անձի, տվյալ դեպքում Ամենակարող Աստծուն:

Իսկ երկրորդ դեպքում թեոս-ը Հովհաննեսի 1.1-ում հոդ չունի: Ուստի, արտահայտությունը բառացի կթարգմանվի «և աստված էր Բանը»: Եվ ինչպես արդեն տեսանք, բազմաթիվ թարգմանություններ այդ երկրորդ թեոս-ը (անվանական ստորոգյալ) ներկայացնում են որպես՝ «աստվածային», «աստվածանման» կամ «աստված»":

Եվ, վերջնական եզրակացությունն է.

"Այսպես ուրեմն, Հովհաննեսի 1.1-ը ի հայտ է բերում Բանի որպիսությունը, թե նա «աստվածային» էր, «աստվածանման» կամ «աստված», սակայն՝ ո՛չ Ամենակարող Աստված: Դա ներդաշնակ է ամբողջ Աստվածաշնչի հետ, որը Հիսուսին այստեղ կոչում է «-Բանը»՝ Աստծո Պատգամավորի իր կատարած դերի համար և ներկայացնում է որպես մի հնազանդ ստորադաս անձ, որը երկիր ուղարկվեց իր Վերադասի՝ Ամենակարող Աստծու կողմից" (նույն տեղում, էջ 27):

Ինչպես տեսնում ենք, այս պարզունակ տրամաբանության ամբողջ շղթան հիմնված է այն փաստի վրա, որ Հովհ. 1.1-ում հանդիպող երկրորդ թեոս-ը որոշյալ հոդ չունի, ուստի և չի կարող նույն նախադասության մեջ առաջինը հանդիպող թեոս-ի հետ նույնը լինել:

Անգամ այս դեպքում, համաձայն Եհովայի վկաների, ստացվում է, որ գոյություն ուներ Ամենազոր Աստված (առաջին թեոս-ը) և ինչ-որ փոքր աստված (երկրորդ անհոդ թեոս-ը) կամ աստվածներ, այսինքն, այն, ինչ մերժում են թե՛ Հին և թե՛ Նոր Կտակարանները: Ելքը այս դեպքում միակն է. երկրորդ թեոս-ը պիտի ներկայացնել կամ որպես ածական՝ աստվածային կամ էլ ստորադաս՝ աստվածներ իմաստ արտահայտող ձևով, ոըը ոչ մի Եհովայի վկա չի կարող ապացուցել:

Մինչդեռ նման տրամաբանությունը հակասում է հին հունարենի քերականությանը, և ավետարանիչը, համենայն դեպս ավելի մոտ կանգնած լինելով հին հունարենին, չէր կարող սխալ կանոններ օգտագործել, մանավանդ, եհովականների երկրորդ թեոս-ի հետ կապված խնդրի դեպքում, որն առանց հոդի է. եթե Հովհաննեսը ուզենար արտահայտել Եհովայի վկաների հենց այդ գաղափարը, ապա նախադասությունն ամենևին այդ կառուցվածք չէր ունենա, այլ ուրիշ ձևով այդ միտքը կարտահայտվեր:

Այդտեղ ենթական է թեոս-ը և ստորոգյալը՝ էր, իսկ բնագրում այսպես է

«և Աստված էր Բանը» (ճիշտ այնպես, ինչպես մեր գրաբարը՝ և Աստուած էր Բանն):

Ինչպես հայտնի է, հին հունարենը չունի չեզոք անորոշ հոդ՝ նման անգլերենի a կամ an-ի, որը սահմանում է նույն տեսակի առարկաների խումբը կամ ընտանիքը (17, & 936 և 18, էջ 21): Որոշյալ հոդերը երեքն են՝ արական՝ ho, իգական՝ e և չեզոք՝ to: Ըստ որում, համաձայն քերականության կանոնների, եթե ենթական (Աստված) նախորդում է բային (էր) ապա հոդը չի գրվում (17, & 936), ինչպես և Հովհ. 1.1-ում է: Հետևաբար թարգմանել - Հովհ. 1.1 համարը այնպես, ինչպես որ անում են Եհովայի վկաները, քերականորեն սխալ է

Թեոս բառը առանց հոդի Նոր Կտակարանում շատ տեղերում է օգտագործվում և այդ տեղերում այն ուղղական հոլովով է հանդես գալիս: Եթե այդ տեղերում փոխենք ուղղականը սեռականի կամ տրականի, անհեթեթություն կստացվի: Օրինակ, Մատթ. 3.9-ում գրված է.

«Բայց ասում եմ ձեզ, որ Աստված կարող է այս քարերից Աբրահամի որդիներ հանել»:

Հունարեն բնագրում Աստված (թեոս) բառը հոդ չունի, և ոչ մեկի մտքով էլ չի անցնում այստեղից եզրակացնել, որ խոսքը գնում է աստվածներից մեկի մասին (տե՛ս նաև - Մատթ. 6.24, Ղուկ. 1.35, 78, Հովհ. 1.6, 12-13, 18, Հռոմ. 1.7 և այլն):

## 5.3. ՍՈՒՐԲ ՀՈԳԻ

Եհովայի վկաների աստվածաբանության համաձայն Սուրբ Հոգին որպես Ս. Երրորդության անձ, գոյություն չունի: Ռասելական աստվածաբանությունը չկարողանալով - Սուրբ Հոգի-անձը պատկերացնել որպես Աստված կամ որպես Երրորդության երրորդ անձը, այն ընկալեց որպես անդեմ գործող ուժ, զորություն, մի բան, որին չի կարելի դիմավորել, անհատականացնել, այսինքն՝ անուն տալ:

Եկեղեցու պատմությանը, անշուշտ, ծանոթ են այս կարգի հերձվածներ, որոնք երևան եկան նախանիկիական ժամանակներում, ինչպես օրինակ մոդալիստ միապետականությունը (մոնարխիականություն)[58], սաբելականությունը:

Այդ պատմական հերձվածները Սուրբ Հոգու մասին ունեին ինքնուրույն աստվածաբանություն, որի առանցքն ի սկզբանե Ս. Երրորդության մերժումն էր, ինչպես Եհովայի վկաների աստվածաբանության մեջ է, բայց այն տարբերությամբ, որ սաբելականները հավատում էին Աստծու՝ Արարչի երեք տարբեր դրսևորումների, որոնք անկախ էին, և - մեկը հաջորդում էր մյուսին: «Հայրը գործում է երբեմն Որդի և այդպես էլ կոչվում է, և ընդհակառակը. Որդին գործում է երբեմն իբրև Սուրբ Հոգի և այդպես էլ կոչվում է, և ընդհակառակը. Հոգին գործում է երբեմն իբրև Հայր և այդպես էլ կոչվում է, և ընդհակառակը» (42, էջ 157):

Եհովայի վկաների պարագայում աստվածաբանական դրությունը այլ է. նրանք զրկում են Սուրբ Հոգուն դեմքից, վերագրելով միայն անդեմ զորություն, միջնորդ գործող ուժ, որպես արտացոլումը Աստծու զորության և այն բոլոր սուրբգրային համարները, ո- րոնք փաստում են Սուրբ Հոգու՝ որպես Աստծուն համագո անձի, ուղղակի սխալ են թարգմանում, աղավաղում կամ էլ նենգափոխում են, մեկնաբանելով այնպես, որ այն դեմք չունենա: Այդ նպատակով Եհովայի վկաները, իրենց բոլոր հրատարակած թերթիկներում և գրքերում «Սուրբ Հոգի» անունը գրում են փոքրատառով՝ «սուրբ հոգի» (դրան հակառակ, սատանայի անունը միշտ գրում են մեծատառով):

Եհովայի վկաների պատկերացմամբ Սուրբ Հոգին չէր կարող անձ լինել, քանի որ - Վերնատանը նա միաժամանակ նստեց 120 հոգու վրա:

«Մի դեպքում սուրբ հոգին երևաց աղավնու տեսքով, մյուս դեպքում՝ բոցեղեն լեզուների, սակայն, ոչ մի անգամ չերևաց անձի կերպարանքով» (11, էջ 21): Եվ, ավարտելով նյութը, գրքույկը հռչակում է հետևյալ բանաձևը.

«Սուրբ հոգին Աստծու գործուն ուժն է»:

Նույն գրքույկը բերում է մի քանի այլ վկայություններ էլ Ս. Գրքից և նույն տրամաբանությամբ եզրակացնում, որ Աստծու Հոգին չի կարող դեմք ունենալ և հետևաբար անձ լինել, այլ՝ «որոշ չափով կարելի է այն նմանեցնել էլեկտրականության՝ ուժի, որը գործադրվում է տեսակ-տեսակ գործեր կատարելու համար» (11, էջ 20):

---

[58] * Մոդալիստ միապետականությունը քարոզում է, որ Հիսուս Ինքը Ամենակարող Հայրն է՝ Նրա մի երևույթը՝ մոդուսը, որից էլ շարժման անունը, և դրա համար էլ նրանց կոչում են նաև «հայրաչարչարներ» (Patripassianismus):
Սաբելականությունը մոդալիստ միապետականությունը վերածեց Երրորդության. ըստ նրանց Հայրը, Որդին և Սուրբ Հոգին միևնույն Աստվածության երևույթներն են:

Սուրբ Հոգու անձ լինելը մերժելու տրամաբանությունը շատ հատկանշական է Եհովայի վկաներին և նրանց տրամաբանական կառույցներին: Այսպես, չնայած որ Սուրբ -Հոգին որոշ տեղերում հանդես է գալիս «դեմքի հատկանիշերով», բայց «նկատի առեք, որ երբեք սուրբ գրողները այս հոգին չեն պատկերացրել կամ ներկայացրել որպես առանձին անձ» (էջ 21) և եզրակացնում են.

«Ըստ Ա Հովհ. 5.6-7 համարների, ոչ միայն հոգին, այլ նաև «ջուրը և արյունը» հանդես են գալիս որպես վկաներ: Սակայն պարզ է, որ ջուրը և արյունը անձեր չեն, այնպես էլ, ուրեմն, սուրբ հոգին անձ չէ» (նույն տեղում):

Այսպիսի տրամաբանությամբ Սուրբ Գիրքը մեկնաբանել չի կարելի: Օրինակի համար, երբ Հիսուս հանդարտեցրեց փոթորիկը, նա հրամայեց ծովին. «Դադարի՛ր, լռի՛ր» (-Մարկ. 4.39): Մի՞թե կարելի է այստեղից եզրակացնել, որ ծովն ու քամին անձնավորված են, դեմք ունեն, քանի որ Հիսուս նրանց դիմեց երկրորդ դեմքով: Հակառակն էլ չի կարելի պնդել. եթե Սուրբ Հոգին որևէ հատվածում հանդես է գալիս անդեմ գոյականների հետ միասին, ապա դա ամենևին չի նշանակում, որ այդ գոյականների դեմքն էլ նույնը պիտի լինի:

Փորձեք հենց նույն այդ գրքույկի բերած համարներում Սուրբ Հոգին փոխարինել «գործուն զորությամբ», ինչպես պնդում են Եհովայի վկաները, և կտեսնեք, թե ինչ անհեթեթություն կստացվի:

Օրինակ.

«Երբ նրանք Տիրոջ պաշտոնի մեջ էին և ծոմ էին պահում, Սուրբ Հոգին ասաց. «Առանձնացրեք ինձ Բառնաբասին և Սողոսին այն գործի համար, որին ես կանչել եմ նրանց»:

Եթե Սուրբ Հոգին և նրան վերաբերող դերանունները, որոնք Եհովայի վկաները միշտ դնում են երրորդ դեմքով, փոխարինենք «գործուն զորությամբ» ապա կստանանք անհեթեթություն:

Ահա մի քանի համարներ, որոնք անառարկելիորեն ցույց են տալիս Սուրբ Հոգու Աստված լինելը, դիմավոր լինելը. Գործք 5.3-4, 13.2, 4, Հովհ. 14.16-17, 26, 16.7-14:

Եհովայի վկաները, սակայն, այս փաստարկներին էլ են տալիս իրենց «տրամաբանական» պատասխանները, ասելով, որ «Աստվածաշունչը անձնական դերանուններ գործածելով, միայն հետևում է քերականական կանոններին, ոչ թե ուսմունք է արտահայտում» (11, էջ 22):

Բնական է, որ այդ դեպքում հարց կառաջանա, թե ե՞րբ է ուսմունք քարոզվում ու ե՞րբ՝ քերականություն. ո՞վ պիտի որոշի այդ: Անշուշտ, եհովականները կպատասխանեն, որ այդ որոշողը Բրուկլինում ապրող օծյալ ծերակույտն է՝ 144,000 «երկնային սրբերի ժողովը»:

Ընդհանրապես, Եհովայի վկաներին բնորոշ է հանրությանը (շուկային) «լայն սպառման» ապրանքներ (գաղափարներ) հրամցնելը և Ս. Գրքի խորախորհուրդ համարները ամբոխային կոչերով և գովազդային հոգեբանությամբ ապացուցելը: Դրա համար նրանց լայն սպառման ապրանքները՝ Դիտարանները, թերթիկները, գրքույկները միշտ պարունակում են բնագրային զանազան ընթերցումներ, մեջբերումներ, որոնք ինքնին ոչինչ չեն ասում, այլ միայն «գիտականության» տպավորություն են ստեղծում:

## 5.4. ԴԱՐՁՅԱԼ ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Եհովայի վկաների վարդապետության աքիլեսյան գարշապարը՝ ամենախոցելի տեղը, Ս. Երրորդության դավանանքն է, որն իր մեջ ընդգրկում է Հիսուս Քրիստոսի Աստվածությունը և Սուրբ Հոգու Աստված լինելը: Եթե Եհովայի վկաները ընդունեն որևէ մեկը, ապա նրանց ողջ աստվածաբանությունը փուլ կգա, հօդս կցնդի: Դրա համար էլ Եհովայի վկաների հետ զրուցելիս կամ որևէ կերպ առնչություն ունենալիս, պետք է աշխատել Ս. Գրքից ներկայացնել հարյուրավոր համարներից նրանք միայն, որոնց մեջ ավելի բացահայտորեն է արտահայտվում այդ փաստը: «Լայն սպառման» հոգեբանությամբ գրված և մատուցված Դիտարանները միայն «ամբոխավարական» տրամաբանութամբ են հյուսված և դրանց վրա է խարսխված նաև Եհովայի վկաների վարդապետությունը, ուստի պետք է ձգտել ներկայացնել այդտեղ պարունակող տրամաբանական «եզրահանգումների» անտրամաբանական լինելը, ցույց տալ, որ Ս. Գրքին բոլորովին խորթ են դրանք, պատմականորեն նորություն չեն, որ ժամանակին Եկեղեցին տվել է դրանց վերջնական պատասխանը: Հետաբար, XIX դարում «ժողովարանային» կրթություն ստացած Ռասելը, և մի քանի դասարանի կրթություն ունեցող Ռուտերֆորդը չէին էլ կարող իրենց մակերեսային ընկալումներով տեսնել Ս. Գրքում պարունակվող խորախորհուրդ գանձերը:

Ստորև բերում ենք Ս. Երրորդության վերաբերյալ ամենահայտնի համարները[59]:

1. Մատթ. 28.19, Մկրտության բանաձևը: «Գնացե՛ք ուրեմն աշակերտ դարձրեք բոլոր ազգերին, նրանց մկրտեցե՛ք Հոր և Որդու և Սուրբ Հոգու անունով»:

Եհովայի վկաները դատում են այդպես. «օրինակ՝ Սամվել, Գրիգոր և Սահակ չի նշանակում, որ այս երեքը մեկ են» (11, 23): Կամ, իրենց բնորոշ տրամաբանությամբ ասում են, թե «անուն» բառը միշտ չէ, որ անձնական անվան իմաստով է գործածվում, օրինակ, «օրենքի անունով» ասելիս անձի չենք ակնարկում, այլ նկատի ունենք այն, ինչ որ օրենքը իրենից ներկայացնում է, այսինքն՝ հեղինակությունը» (11, էջ 22): Հետևաբար, «սուրբ հոգու անունով» նշանակում է ընդունել հոգու հեղինակությունը և ընդունել, որ այն Աստծուց է առաջանում և գործում է նրա կամքով» (նույն տեղում):

Բայց այդ տրամաբանությամբ բանաձևը վերածվում է բառերի անիմաստ շարանի. «մկրտեցե՛ք ... զորության գործուն ուժի հեղինակությամբ», մանավանդ որ քերականորեն սխալ է բանաձևից առանձնացնել այդ մի հատվածը, քանի որ այդ համարի երեք հատվածները կապված են իրար հետ «և»-ով: Ահա այսպես է Ուղղափառ դավանանքը տալիս այս բանաձևի բացատրությունը. Ս. Երրորդության անունները՝ Հայր, Որդի և - Սուրբ Հոգի շաղկապված են «և»-ով, որն արտահայտում է միությունը և եզակի դրված «անունով» բառով, որ վերաբերում է այդ միությանը, որովհետև եթե երեքը մեկ չլինեին և

[59] * Տաթևացու «Ոսկեփորիկը» (Երևան, 1995) ամբողջությամբ նվիրված է Սուրբ Երրորդության ջատագովությանը: Ուստի աշխատել ենք բերել այնպիսի օրինակներ, որոնք չեն ընդգրկված «Ոսկեփորիկում»:

երեքը մեկ անուն չունենային, ապա այդ անունը կդրվեր բոլորի առաջ, ինչպես և ուզում են ներկայացնել Եհովայի վկաները, և կունենար այս տեսքը.

«Հոր անունով, Որդու անունով և Սուրբ Հոգու անունով»:

Երբ Պետրոսը բժշկեց կաղին, ասաց. «Նազովրեցի Հիսուս Քրիստոսի անունով» (-Գործք 3.6), այդ անվան մեջ Քրիստոսի զորությունը, էությունը տեսնելով: Իսկ բերված բանաձևում «անվան» եզակի թիվն էլ հենց այդ է ցույց տալիս՝ երեքի էությունների միությունը (19, Հ 60), հակառակ դեպքում «անուն» եզակիի փոխարեն կօգտագործվեր «անուններ» հոգնակին:

2. Հովհ. 5.18: «Դրա համար առավել ևս ուզում էին նրան սպանել, որովհետև ոչ միայն չէր պահում շաբաթը, այլ նաև Աստծուն կոչում էր իր Հայրը և իր անձը Աստծուն հավասար էր դասում»:

Եհովայի վկաները պնդում են, որ այստեղ «Հիսուս պաշտպանվում էր հրեաների անհիմն մեղադրանքից, որոնք, ինչպես և Երրորդության կողմնակիցները, սխալ եզրակացությունների էին հանգել» (11, էջ 25):

Այսինքն, Հովհաննես ավետարանիչը, Հիսուսի ժամանակակից ընդդիմախոսները և Երրորդության կողմնակիցները սխալ էին հասկացել, նրանք պետք է հասկանային այնպես, ինչպես XIX դարում Ռասելը, որն, բարեբախտաբար, արդեն չի կարելի շտկել: -Մինչդեռ ընդդիմախոս հրեաները շատ լավ և ճիշտ էին հասկացել Հիսուսին: Եհովայի վկաները սիրում են այդ համարին միացնել նաև Փիլիպ. 2.6 համարը.

«Որը Աստծու կերպարանքով էր, բայց Աստծուն հավասար լինելը հափշտակություն չհամարեց»:

Եհովայի վկաները, քննելով այս համարները, եզրակացնում են, որ առկա է թարգմանական սխալ, քանի որ երկու դեպքում էլ Հիսուսին ներկայացնում են Աստծուն՝ Եհովային, հավասար, մինչդեռ, ըստ նրանց, այդ պետք է հասկանալ այսպես. «տվյալ դեպքում, - ասում են նրանք, - կատարելապես պարզաբանում է միտքը՝ վերադասի ու ստեղծիչի՝ Եհովա Աստծու հանդեպ, խոնարհության և հնազանդության կարևորությունը» (11, էջ 26):

Ինչպես տեսնում ենք, Դիտարանական այս մեկնությունները ոչ թե մեկնություն են, այլ՝ կարգախոսներ՝ դատարկ կոչեր, դատավարական գործառնությունից քաղված (-Ռուտերֆորդը մասնագիտությամբ դատավոր էր):

Մինչդեռ ավետարանական հատվածը պարզորոշ և միանշանակ ասում է, թե՝ Հովհաննես ավետարանիչն է ասում, թե՝ ի՞նչ են հրեաները ասում Հիսուսի մասին, և ոչ թե՝ հրեաները: Քանի որ հրեական մտածողությամբ Հիսուսին Աստծու Որդի համարելը նույնն է թե համարել Աստծուն հավասար: Իսկ այդ փաստը այլ ձևով մեկնել կամ հասկանալ հնարավոր չէ, և հենց այդ շրջանցելու համար Եհովայի վկաները միտումնավոր «սխալ» են հասկանում բերված տողերը (4, էջ 150):

Ընդհանրապես հրեաները երբեք Աստծուն չէին անվանում «մեր Հայրը» կամ՝ «Հայր մեր», իսկ եթե անգամ ասեին՝ «Հայր մեր», ապա անպայման կավելացնեին՝ «որ երկնքում ես» հավելումը, որը պարզ տեսնում ենք Տերունական աղոթքի մեջ: Այս համարում, սակայն, Հիսուս Քրիստոս այդպես չի վարվում, այլ ուղղակի ասում է՝ «իմ Հայրը»՝ ա-

ռանց վերոհիշյալ հավելման, որն, անշուշտ, հրեաները չէին կարող սխալ հասկանալ, ինչպես պնդում է Եհովայի վկաների այդ տխրահռչակ գրքույկը (տե՛ս նաև 20, էջ 81):

3. Բ Օր. 6.4: «Լսի՛ր, Իսրայել, մեր Տեր Աստվածը մեկ Տեր է»:

Արդեն քանիցս առիթ ենք ունեցել հիշատակելու այդ համարը՝ Շեման, բայց Եհովայի վկաները, ամեն անգամ հղում են կատարում հենց այս համարին, և աղաղակում, թե - Շեմայում խոսք անգամ չկա Աստծու Երրորդության մասին: Սակայն հենց այդ համարն էլ հերքում է Եհովայի վկաների հենց այդ պնդումը, եթե, իհարկե, անաչառ կերպով քննության ենթարկվի: Ուստի հարմար է բերել այդ համարի բնագրային քննությունը (4, էջ 120):

Այստեղ օգտագործված «մեկ» բառը եբրայերեն բնագրի ehodh բառի թարգմանությունն է, որը, եբրայերենում ունի «մեկ»-ի իմաստ, բայց ոչ «ատոմական», այսինքն՝ անբաժանելի, բացարձակ «մեկ» նշանակությամբ, այլ այն բաղադրյալ մեկություն է նշանակում: «Ատոմական», անբաժանելի, կամ բացարձակ մեկությունը արտահայտելու համար եբրայերենը օգտագործում է yahidh բառը:

Օրինակ, Ծննդ. 6.24-ում.

«Դրա համար այրը պիտի թողնի իր հորը և մորը և իր կնոջը պիտի հարի ու մեկ մարմին պիտի լինեն»:

Այստեղ անգամ բովանդակությունն է հուշում, որ «մեկը» պետք է բաղադրյալ լինի, և, իրոք այդպես է. բնագրում օգտագործված է ehodh բառը:

Ուրեմն, հենց Շեման է իր մեջ ընդգրկում Երրորդության (տրինիտար) գաղափարը և միությունը:

Ընդհանրապես, Եհովայի վկաների հետ առնչվելիս, ավելի հարմար է բերել այնպիսի համարներ Հին Կտակարանից, որոնք փաստում են Երրորդությունը, որպեսզի ցույց տրվի, որ անգամ Հինկտակարանյան շրջանում Երրորդության գաղափարը առկա է եղել:

4. Ս. Երրորդությունը փաստող շատ կարևոր մի վկայություն բերված է Օրմանյանի մոտ (19, ճ 62), ուր համադրվում են երեք սուրբգրային վկայություններ. Եսայի 6.8-10, - Հովհ. 12.37-41, Գործք 28.25-27:

«Այն տարին, երբ մեռավ Օզիա արքան, տեսա Տիրոջը, որ նստած էր բարձր ու վերացած աթոռին, իսկ տաճարը լի էր փառքով:

Եվ լսեցի Տիրոջ ձայնը, որն ասում էր. «Ո՞ւմ ուղարկեմ, և կամ ո՞վ կգնա այդ ժողովրդի մոտ»:

Նա ասաց. «Գնա՛ և հայտնիր այդ ժողովրդին. «Լսելով պիտի լսեք, բայց չիմանաք, տեսնելով պիտի տեսնեք, բայց չճանաչեք», քանզի այդ ժողովրդի սիրտը կարծրացել է, ծանր են լսում իրենց ականջներով, իրենց աչքերն էլ փակել են, որպեսզի չլինի թե երբևէ աչքերով տեսնեն ու ականջներով լսեն, սրտով իմանան ու դարձի գան և ես էլ բժշկեմ նրանց» (Եսայի 6.8-10):

«Թեպետև նա այնքան նշաններ էր արել նրանց առաջ, նրանք չէին հավատում նրան:

Չէին կարողանում հավատալ և այն բանի համար, որ Եսային վերստին ասում է. «Նրանց աչքերը կուրացրեց և նրանց սրտերը կարծրացրեց, որպեսզի աչքերով չտեսնեն ու սրտով չիմանան և դարձի չգան, ու ես նրանց չբժշկեմ»: Եսային այս ասաց, որովհետև տեսավ նրա փառքը և խոսեց նրա մասին» (Հովհ. 12.37-41):

«... Պողոսն ասաց այս մի խոսքն էլ. «Սուրբ Հոգին Եսայի մարգարեի բերանով լավ խոսեց մեր հայրերին՝ ասելով. «Գնա ժողովրդի մոտ և ասա. լսելով պիտի լսեք ու չպիտի իմանաք, և տեսնելով պիտի տեսնեք ու չպիտի տեսնեք. որովհետև այդ ժողովրդի սիրտը կարծրացել է, և իրենց ականջներով ծանր են լսում ու իրենց աչքերը փակել են, որպեսզի երբեք աչքերով չտեսնեն ու ականջներով չլսեն և հոգով չիմանան և դարձի չգան, ու ես էլ դրանց չբժշկեմ» (Գործք 28.25-27):

Այս երեք հատվածներում նույն աստվածային պատգամն է ասում թե՛ Եսայի մարգարեն, թե՛ Հովհաննես ավետարանիչը և թե՛ Պողոս առաքյալը, սակայն Եսայու մոտ այդ խոսքերը ասում է Հայր Աստված, Հովհաննեսի մոտ՝ Հիսուս, իսկ Պողոսի մոտ՝ Սուրբ - Հոգին:

Այսինքն, բոլոր երեքն էլ նույն Աստվածությունն են և անհնար է այլ մեկնություն տալ:

5. Հովհաննես 8.58: «Հիսուս ասաց նրանց. «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, նախքան Աբրահամի լինելն եմ ես»:

Այս համարի մեկնությունը Եհովայի վկաների աստվածաբանական հենքի վրա խարսխված գտնում ենք իրենց իսկ տխրահռչակ գրքույկում (11, էջ 26), որը ցույց է տալիս, որ եհովական աստվածաբանները ոչ մի բանի առաջ չեն կանգնի ժխտելու համար Ս. Երրորդությունը, Հիսուսի Աստվածությունը, Սուրբ Հոգու Աստվածությունը:

Ինչպես հայտնի է, Նոր Կտակարանում հանդիպող այն տեղերում, ուր Հիսուս ներկայանում է «Ես եմ» տիտղոսով, ընդգծվում է Նրա Աստծուն հավասար լինելը, որովհետև դա նույն Ռենական[60] անունն է (Ելք 3.14), որի մասին ավելի մանրամասն կխոսենք «Աստծու անունը» բաժնում: Այդ մտքի հետ չհաշտվելով, եհովական անանուն աստվածաբանը գրում է. «ԵՍ ԵՄ տիտղոսը, որն առկա է այս համարում (Հովհ. 8.58), որևէ այլ բան չի նշանակում, այլ միայն այն, որ Հիսուս ուզում է ասել, թե ինքը գոյություն է ունեցել մինչև Աբրահամը և ուրիշ ոչինչ» (11, էջ 26):

"Այստեղ ևս կոնտեքստը ի հայտ է բերում տվյալ համարի ճշգրիտ իմաստը. այդ անգամ հրեաները ուզում էին քարկոծել Հիսուսին, որովհետև նա պնդում էր, թե՝ Աբրահամին է տեսել, թեպետ, ինչպես նրանք ասում էին, նա դեռ հիսուն տարեկան չկար: Ուստի, Հիսուսի բնական հակազդեցությունն էր իր հասակի մասին նրանց ճշմարտությունն ասել: Դրա համար էլ, նա պարզապես նրանց ասաց, թե «Ես կամ՝ (գոյություն ունեմ) նախքան Աբրահամի լինելը»" (նույն տեղում):

---

[60] * Ռենական - կրճատված «Որ Էն» (=Աստված) խոսքից, աստվածային:

Հիսուս խոսում է երկնային բաների մասին, իսկ Եհովայի վկաների անանուն աստվածաբանները այն հասկանում են որպես տեղեկություններ Հիսուսի տարիքի, հասակի մասին: Սա բազմիցս նշած «միտումնավոր սխալ հասկանալու» սկզբունքն է:

Հին Կտակարանի շատ տեղերում՝ Ելք 3.14, Բ Օր. 32.39, Եսայի 43.10, Աստված հայտնում է Իրեն, որպես «ԵՍ ԵՄ», «Է»: Անգամ LXX թարգմանիչները այդ թարգմանել են «ego eimi»՝ հունարեն՝ Ես եմ, այսինքն՝ ինչպես Հովհ. 8.58-ում:

Ընդդիմախոս հրեաները հենց այդ էլ շատ լավ հասկացան, երբ քարեր վերցրին՝ քարկոծելու Հիսուսին: Եթե հրեաները Հիսուսի պատասխանը հասկանային որպես տեղեկություն նրա հասակի մասին՝ չէին դիմի նման ծայրահեղ քայլի, օրենքը թույլ չէր տալիս: Իսկ հրեաները որոշեցին քարկոծել Հիսուսին, քանի որ Հիսուսի ասածից հետևում էր, որ Նա նույն Աստվածն է՝ «Ես եմ Աստվածը, Եհովան»: Իսկ օրենքը այդ դեպքում թույլ էր տալիս քարկոծել: Իսկ անանուն աստվածաբանը գրում է, որ Հիսուս վիրավորեց նրանց՝ անվանելով ստախոս (Հովհ. 8.55): Բայց Հիսուս Մատթեոս ավետարանի 23-րդ գլխում (13-36 համարներ) հրեաներին հանդիմանում էր ավելի սաստող ու վիրավորող խոսքերով՝ անվանելով նրանց կեղծավոր, մարդասպան, բայց հրեաների մտքովն անգամ չանցավ քարկոծելու Հիսուսին դրա համար, որովհետև խնդիրը վերաբերում էր իրենց, այլ ոչ թե՝ Աստծուն:

Օրենքը հրեաներին թույլ էր տալիս քարկոծել միայն հետևյալ հինգ դեպքերում.

1. Ղևտ. 20.27: Թույլատրվում է քարկոծել վհուկներին ու կախարդներին:

2. Ղևտ. 24.10-23: Թույլատրվում էր քարկոծել Աստծուն հայհոյելու դեպքում:

3. Բ Օր. 13.5-10: Թույլատրվում էր քարկոծել սուտ մարգարեություն անելու համար, որը կռապաշտության էր տանում:

4. Բ Օր. 21.18-21: Թույլատրվում էր քարկոծել ծնողներին անհնազանդ ու անառակ զավակներին:

5. Բ Օր. 22.21-24, Ղևտ. 20.10: Թույլատրվում էր քարկոծել պոռնկության և բռնաբարության դեպքում (4, էջ 141):

Միայն և միայն այս դեպքերում էր թույլատրվում օրինավոր կերպով քարկոծել հանցագործին: Ավետարանական բոլոր պատմություններում, ուր ընդդիմախոս հրեաները փորձում էին քարկոծել Հիսուսին, նրանք վարվում էին օրենքի այդ սահմաններում, համարելով, որ Հիսուս ոչ թե վիրավորում է իրենց անձը, այլ հայհոյում է Աստծուն՝ Եհովային, ուստի, 2-րդ կետի համաձայն նրանք համարում էին, որ թույլատրելի է քարկոծելը: Նույն իրավիճակն է նաև Հովհ. 10.30 համարում, երբ դարձյալ հրեաները փորձեցին քարկոծել Հիսուսին. հետևաբար, թե՛ Հովհ. 8.58, թե՛ Հովհ. 10.30 համարներում հրեաները ճիշտ հասկացան Հիսուսի խոսքերը՝ այսինքն, որ Ինքը հավակնում է ներկայանալ որպես նույն Եհովան, նույն Աստվածը:

Եհովայի վկաների անանուն աստվածաբանը պնդում է նաև, թե Հովհ. 8.58 համարում Հիսուս օգտագործում է «պատմական ներկա» եղանակը՝ հիշելով Աբրահամին, իսկ այդ դեպքում կարելի է «ԵՍ ԵՄ»-ը թարգմանել որպես «Ես եղել եմ» ձևով, ինչպես որ եհովական տխրահռչակ NWT թարգմանության մեջ: Իսկ սա արդեն նշանակում է բռնանալ բնագրի վրա և հարմարեցնել այն սեփական կարծիքին, մինչդեռ Հիսուս այդ համարում չի կիրառել և ոչ մի «պատմական ներկա» եղանակ, Նրա խոսքն անգամ պատմողա-

կան բովանդակություն ու բնույթ չուներ, ընդհակառակը, նա խոսեց ներկայով՝ ուղղակի և բացահայտ, այնպես, որ այլ կարծիքները կամ բազմիմաստ նշանակությունները բացառվեն (4, էջ 142), իսկ «Ես եմ»-ը Աստծու անունն էր, ու ոչ թե պատմական ներկայով նախադասություն, ուր «Ես»-ը ենթական է, իսկ «եմ»-ը ստորոգյալը:

Այսպիսով, այս համարը ամենահեղինակավորը կարելի է համարել՝ ցույց տալու - Հիսուսի հավասարությունը Հորը՝ Եհովային, իսկ անանուն աստվածաբանների ջանքերը՝ հակառակն ապացուցելու համար, փաստորեն տրամաբանական չեն:

6. Կողոս. 1.15: «Որ աներևույթ Աստծու պատկերն է, բոլոր ստեղծվածների անդրանիկը»:

Եհովայի վկաները այս համարին կցում են նաև Հայտն. 3.14 համարը.

«Այսպես է ասում Ամենը, հավատարիմ ու ճշմարիտ Վկան, Աստծու արարածների սկիզբը»:

Եհովական աստվածաբանները պնդում են, որ այս երկու համարները անժխտելիորեն ապացուցում են Հիսուսի ստեղծված, արարված լինելը: Նրանք գրում են. «Սկիզբը (հունարեն արհի[61]) անկարելի է մեկնաբանել, որ նշանակի, թե Հիսուս Աստծու արարչությունը «սկսողն» էր: Աստվածաշնչի իր գրություններում Հովհաննեսը ավելի քան քսան անգամ գործածում է հունարեն արհի բառի տարբեր ձևերը և միշտ պարզապես՝ «սկիզբ» իմաստով: Այո՛, Հիսուսը Աստծու կողմից ստեղծվեց որպես նրա աներևույթ արարածների սկիզբը (11, էջ 14):

Ինչպես տեսնում ենք, Եհովայի վկաների աստվածաբանը դարձյալ պնդում է Հիսուսի նախամարդկային՝ հրեշտակային գոյությունը, որպես Միքայել հրեշտակապետ: - Բայց, այստեղ դարձյալ ու դարձյալ փաստվում է Նրա «սկզբում» լինելը ու ոչ թե արարածների առաջին լինելը: Հայտն. 3.14 համարը նույն արհի բառն է օգտագործում, ինչ որ Հովհ. 1.1-ում:

Բայց Կողոս. 1.15-ում օգտագործված բառը՝ prototokos (պրոտոկոս), որը թարգմանվում է անդրանիկ, ունի այլ նշանակություն ևս, ինչպես օրինակ՝ նախապատիվ լինել, գերադաս կամ գերազանց լինել (Lampe, էջ 1202):

Այսինքն, անդրանիկությունը այստեղ ժամանակագրական առաջնություն չի նշանակում, այլ՝ դիրքերի տարբերության որոշակիությունը: Օրինակ, Ծննդ. 25.33-ում Եսավը վաճառում է իր անդրանիկությունը Հակոբին, որն անհնարին կլիներ, եթե այն ունենար միայն ժամանակային առաջնության գաղափար: LXX թարգմանության մեջ այդ համարում թարգմանիչները օգտագործել են նույն prototokos (պրոտոկոս) բառը:

Նույնն ենք տեսնում նաև Ելք 4.22-ում. «Եվ ասա փարավոնին. Տերը այսպես է ասում. Իսրայել իմ որդին, իմ անդրանիկն է»:

Այստեղից ամենևին չի հետևում, որ Իսրայել ազգը բոլոր ազգերի միջից ամենաառաջին ազգն է եղել, քանի որ ինքը՝ Աբրահամը դուրս եկավ ասորիների միջից (Ծննդ. 11

---

[61] * Ավելի ճիշտ ձևն է՝ արխե: Հավանաբար գրքույկը հայերեն են թարգմանել ռուսերեն հրատարակությունից, իսկ ռուսերենում համապատասխան ձևը արհի է:

գլուխ), իսկ Իսրայելը դեռ չէր կազմավորվել: Բայց Իսրայելը անդրանիկն էր, քանի որ նա ընդունեց Աստծու օրհնությունները (4, էջ 146):

Հենց այս իմաստով էլ Կողոս. 1.15-ը Հիսուսին անվանում է անդրանիկ, իսկ Իսահակը Եբր. 11.17 համարում Աբրահամի համար խոստումի որդին էր, թեև անդրանիկը՝ առաջին ծնունդը նա չէր, այլ Իսմայելն էր:

## 5.5. ԱՍՏԾՈՒ ԱՆՈՒՆԸ - ՏԵՏՐԱԳԱՄԱՏՈՆԸ ԿԱՄ ՏԵՏՐԱԳՐԱՄԱՆ

Եհովայի վկաների աստվածաբանների և այդ հսկա կազմակերպության բոլոր անդամների ամենասիրած հարցը, որ նրանք բարձրացնում են պատեհ կամ անպատեհ առիթով, Աստծու անվան հետ կապված խնդիրն է: «Դուք գիտե՞ք Աստծու անունը, մենք եկել ենք այստեղ, որ ձեզ հայտնենք այդ անունը, որ դուք էլ փրկվեք», - քարոզում են նրանք բոլորին, ում որ կարողանում են համոզել իրենց առաքելության արշավի ընթացքում:

Այսօրվա հրապարակի վրա եղած եհովական լայն սպառման հոգեբանությամբ տպագրված գրեթե բոլոր գրքույկներում կամ գրքերում, որն էլ որ թերթեք, անպայման կգտնեք մի քանի էջ այդ մասին, անկախ այն բանից, թե ի՞նչ է գրքի բովանդակությունը: Այդ «անվան» հետ կապված նյութերում, միօրինակությամբ ու նույնաբանություններով (տավտալոգիա), դարձյալ անանուն աստվածաբանը «ապացուցում» է, որ Աստծու անունը պատմական բոլոր եկեղեցիները միտումնավոր կերպով թաքցրել են ժողովրդից, դրանով իսկ կատարելով սատանայի կամքը: Եվ միայն հիմա, իրենք, Եհովայի վկաները, հստակ առաքելություն ունեն «աշխարհին տանել Աստծու անունը»[62], որպեսզի մարդկությունը զուրկ չմնա այդ շնորհից և փրկվի: Եվ, բնական է որ դրան կհետևի նույն ու ամեն անգամ կրկնվող այն միտքը, թե բոլոր եկեղեցիները դեմ են Աստծուն, մանավանդ՝ կաթոլիկները:

«Ի՞նչ էր մեր երկնավոր Հոր անձնական անունը:

Արդ, Աստծու անունը ԵՀՈՎԱ է: Սակայն շատերը, որոնք ցանկանում են Աստծուն պաշտել, շատ անհարգալից կերպով են վարվում այդ անվան հանդեպ: Ոմանք նույնիսկ իր անունը Աստվածաշնչի թարգմանություններից դուրս են գցել և այն փոխարինել գլխագիր «ՏԵՐ» և «ԱՍՏՎԱԾ» տիտղոսներով» (21, էջ 16-17):

Հենց այդպես էլ Եհովայի վկաների մունետիկները կսկսեն խոսել ձեզ հետ, երբ բախեն ձեր տան դռներն ու դուք նրանց ներս հրավիրեք: Մինչդեռ հենց այդտեղից էլ սկսվում է Եհովայի վկաների մոլորությունները, սխալ տրամաբանական լուծումներ տալու և իրենց ուզածը փաստելու բռնազբոսիկ մոտեցումները:

Աստծու անունը Հին Կտակարանի եբրայերեն բնագրում գրվում է չորս տառերի համադրությամբ՝ YHWH, որն էլ այդ պատճառով կոչվում է տետրագրամատոն կամ պարզապես՝ տետրագրամա՝ քառատառ գրություն: Հայտնի է, որ եբրայերենը, ինչպես և սեմական բոլոր լեզուները, չեն ունեցել ձայնավոր հնչյունների համար համապատասխան նշանագրեր, ինչպես հնդեվրոպական լեզուները: Հետագայում, վանկերում ձայնավորի

[62] * Հատկանշական է, որ իրենք իսկ «Եհովայի» անունը վերցրել են բավականին ուշ՝ 1933 թվականին (Տե՛ս III.3):

հնչողությունը ապահովելու համար, ներմուծվել են որոշակի նշաններ, որոնք դրվել են բաղաձայների վերևում, ներքևում կամ՝ մեջտեղում: Օրինակ, Արարատ հատուկ անունը, որը հիշատակում է Ծննդոց գիրքը (Ծնն. 8.4), արտահայտվում է երեք բաղաձայնեբով՝ RRT, որը կարելի է կարդալ թե՛ աՐաՐաՏ, թե՛ ուՐաՐՏու: Նույն ձևով էլ տետրագրաման կարելի կարդալ թե՛ որպես ԵՀոՎա, թե՝ ԵաՀՎե, թե՛ ԵաՀոՎաի և այլն: Ո՞րն է ճիշտը: Միանշանակ չի կարելի ասել, քանի որ ավանդությունն այդ հնչողությունը չի պահել և ոչինչ չի փոխանցել: Երբ ընթերցելու ժամանակ հրեաները հանդիպում էին տետրագրամային, այն շրջանցում էին՝ համաձայն Տասնաբանյայի երրորդ պատվերի, և այն փոխարինում համապատասխան հոմանիշ՝ Ադոնա (=Տեր), Սաբաովթ (=զորություն) և այլ բառերով: Ուրեմն կարելի է վստահորեն պնդել, որ մինչև հիմա հայտնի չէ տետրագրամայի իրական հնչողությունը, իսկ այն, ինչ այսօր հրամցնում են Եհովայի վկաները և որոշ թարգմանություններում օգտագործվում են (Եհովա, Եահվե), մոտավորություններ են, որոնք տետրագրամայի ճշգրիտ հնչողությունը չեն: Համեմատության համար, որպես օրինակ, կարելի է բերել հայերենում «է» և «ե», «ո» և «օ» տառերի հնչողության հարցը բառի մեջ: Այսօր այդ զույգերը նույն ձևով են հնչում, իսկ թե ինչպես են հնչել բառի մեջ Մաշտոցի ժամանակ, անհայտ է (օրինակ «սեր» և «սէր», «հոտ» և «հոտ» բառերում): Այսինքն, լեզվաբանական առումով, տեսականորեն, հնարավոր է, որ լեզուն կորցնի իր ինչ-ինչ միավորների պատմական հնչողությունը, այն փոխարինելով տվյալ ժամանակում գործածվող հնչողությամբ: Իսկ եբրայերենում առավել ևս հնարավոր է նման երևույթ, քանի որ առկա էր Տասնաբանյայի ազդեցությունը և, անշուշտ, այս դեպքում լեզվաբանությանը գումարվում է աստվածաբանությունը՝ դավանանքը:

LXX թարգմանիչները, տետրագրաման թարգմանել են հունարեն Կիրիոս (=Տեր) բառով, իսկ եբրայական Էլոհիմը՝ Թեոս (=Աստված) բառով: Բնական է, որ տետրագրամայի մասին խոսելիս պիտի հասկանանք Հինկտակարանյան աշխարհը, իսկ Նոր Կտակարանում տետրագրաման բացակայում է, քանի որ այն գրվել է հունարենով:

Այս է պատմական իրողությունը: Ինչպես տեսնում ենք, այդ պարզությունն ու փաստական վավերականությունը հանգիստ չի թողել եհովական աստվածաբաններին, որոնք ամեն հարցում անհանդուրժող վերաբերմունք ունեն քրիստոնեության հանդեպ: - Տետրագրամայի խնդիրն էլ խառնելով, նրանք բաբելական խառնաշփոթություն ստեղծեցին: Նաև սկսեցին պնդել, որ թե՛ հին Կտակարանում՝ այսինքն LXX թարգմանության մեջ և թե՛ Նոր Կտակարանում օգտագործվել է տետրագրաման, իսկ արտագրող գրիչները այն փոխարինել են համապատասխան համարժեքներով: Հայտնի է, որ Աքվիլան (II դար) և Որոգինեսը (III դար) իրենց թարգմանություններում օգտագործել են տետրագրաման (4, էջ 125), բայց ոչ թե «հնչեցրել», ինչպես հետագայում արեցին թարգմանիչները KJV անգլերեն թարգմանության մեջ: Իսկ LXX-ում տետրագրաման օգտագործվել է մեզ հայտնի հարյուրավոր ձեռագրերից ընդամենը մեկում, այն էլ՝ միայն Բ Օրինացի երկրորդ կեսի մեջ: Նոր Կտակարանի և ոչ մի ձեռագրում, ինչպես հայտնի է, չի օգտագործվել տետրագրաման: Երկու դեպքում էլ, ամենուր, Աստծու անունը թարգմանվել է Կիրիոս (Տեր) և Թեոս (=Աստված) բառերով, ինչպես մեր գրաբար Աստվածաշունչը: Պարզ է, որ միանգամայն անընդունելի է Նոր Կտակարան ներմուծել տետրագրաման՝ Եհովա հնչողությամբ, Տեր և Աստված բառերի փոխարեն:

Եհովայի վկաների աստվածաբանները նշում են, որ Մատթեոսի ավետարանը գրվել է եբրայերեն լեզվով և, հետևաբար, այնտեղ առկա պիտի լիներ տետրագրաման, իսկ թարգմանիչները կամ գրիչները միտումնավոր այն փոխարինել են հունարեն համարժեքներով:

Նախ այս պնդումը, անշուշտ, լուրջ փաստարկ չէ, որովհետև չկա պահպանված եբրայերեն բնագիրը, այլ այդ մասին կա միայն մի քանի վկայություն որոշ հեղինակների մոտ (Պապիաս, Եվսեբիոս, Իրինեոս[63]), որոնք ենթադրում են, որ Մատթեոսի ավետարանի հունարեն տարբերակը թարգմանությունն է արամերենից:

«Նկատի ունենալով Մատթեոսի ավետարանի լեզուն, ոճը և շարահյուսությունը, հնարավոր չի թվում, որ այս ավետարանը լինի արամերեն լեզվով գրված ավետարանի թարգմանությունը: Հնարավոր է, որ նույն ավետարանիչը հունարենի է վերածել արամերեն տեքստը և այն հարստացրել նոր նյութերով» (22, էջ 39-40): Այսինքն, բուն՝ իսկական իմաստով բնագիր կարելի է համարել հունարեն լեզվով Մատթեոսի ավետարանը: Իսկ Եվագրիոս Պոնտացին անգամ տետրագրաման հունարեն չի թարգմանել, այլ տվել է «Pipi» հունարեն ձևը (23, էջ 1082):

Իրականում Եհովայի վկաները Աստծու անվան հետ կապված խառնաշփոթությունները միտումնավոր են ստեղծում և մի նպատակ են հետապնդում. ցույց տալ կամ ապացուցել, որ Հիսուս Քրիստոս Աստված չէ: Նախ, արդեն 2000-ամյա եկեղեցու ցանկացած անդամի, անկախ ազգությունից, եթե հարց տանք, թե՝ ի՞նչ է Աստծու անունը, կստանանք միանշանակ պատասխան.

«Աստծու անունը Հիսուս Քրիստոս է»:

Եհովայի վկաների սուրբգրային նորագույն հայտնությունները մեզ նորից ետ, դեպի Մովսեսի ժամանակներն են տանում, և զանազան մեկնողական հնարանքներ բանեցնելով՝ ապացուցում կամ համոզում, անշուշտ նպատակ ունենալով մոռացության տալ Հիսուս Քրիստոս հայտնված Աստծու Որդուն, նույն Ինքը՝ ԵՀՈՎԱՅԻՆ:

Տերունական աղոթքի՝ «Հայր մերի» երկրորդ հատվածը՝ «սուրբ լինի Քո անունը», ամենևին չի նշանակում իմանալ կամ կարողանալ վերարտադրել ճշգրտությամբ տետրագրամայի պատմական հնչողությունը, որը կլուսավորի ու կմաքրի, ինչպես պնդում է եհովական անանուն աստվածաբանը (24, էջ 31), այլ ծանոթանալ, ճանաչել Աստծուն, նրա էությունը, խոսքը, սրբությունը և այլն: Իսկ հնչողության հարցը ավելի գիտական բնագավառին է վերաբերում, և վարդապետություն չի կարելի ստեղծել անհայտ ու չիմացած բաների վրա հիմնվելով:

Աստծու անունը «սուրբ պահելը» հենց Տասնաբանյայի երրորդ պատվերի կիրառումն է մեր կյանքում, ու ոչ թե պատեհ-անպատեհ տետրագրամայի սխալ հնչողությամբ Աստծու անունը հասարակ անվան հավասարեցնելը, արժեզրկելը: Եհովայի վկաները, իրենց բռնած դիրքով, փաստորեն հենց այդ են անում. Աստծու անունը սուրբ պա-

[63] * Պապիաս - Բ դարի եկեղեցական հայրերից:
Եվսեբիոս - հայտնի «Եկեղեցական Պատմության» հեղինակը:
Իրինեոս - Բ դարի մեծագույն աստվածաբանը:

հելու փոխարեն, այն ավելի անիմաստ ու դատարկ տեղը օգտագործում են՝ շատ հասարակ անուններին հավասարեցնելով այն:

Եհովայի վկաների աստվածաբանները համոզում են, որ տետրագրաման չարտասանելը Հիսուսի ժամանակ ուղղափառ հրեաների մոլորություններից էր, նրանք պարտավոր էին արտասանել այն, բայց չէին արտասանում Աստծու անունը (24, էջ 14): Իսկ -Հիսուս, չընդունելով այդ մոլորությունը և սխալ կարծիքը, այն օրը, երբ նա ժողովարանում կարդաց Եսայի մարգարեի հայտնի հատվածը (Եսայի 61, 1-2), նա անպայման բացահայտ կերպով արտասանել է այդ հատվածում առկա Աստծու անունը, այսինքն՝ -Տետրագրաման: Եվ, որպես եզրակացություն, անանուն աստվածաբանը գրում է. «Եթե -Հիսուս չարտասաներ Աստծու անունը կամ այն փոխարիներ Տեր և Աստված բառերով, ապա դա կնշանակեր, որ նա հետևել է հրեա կրոնական առաջնորդների ոչսուրբգրային ավանդություններին, որը հնարավոր չէ» (24, էջ 15): Հետևաբար, պնդում են նրանք, եթե -Հիսուս արտասանել է տետրագրաման, մենք էլ պետք է նույնը անենք:

Սա եհովականներին բնորոշ հետադարձման սկզբունքն է. անցյալը վերապատմելը՝ ներկայի պահանջարկների համաձայն, այսինքն՝ «սրբագրել» անցյալում կատարված դեպքերը, որը անտրամաբանական է:

Տետրագրամայի հնչողության այսօրվա ձևը Եհովայի վկաները վերցրել են KJV հրատարակությունից, ուր առաջին անգամ այն չթարգմանվեց և որպես Jehovah փոխարինեց տետրագրամային:

Վերջապես, Եհովայի վկաները տետրագրամայի գործածությանը ավելի ցայտուն հիմնավորում տալու համար բերում են մեկ ուրիշ փաստարկ ևս. ցույց են տալիս, որ տետրագրամայի պահպանելը ավելի հասկանալի է դարձնում տեքստը և հղում են կատարում Սաղմոս 110.1 (109.1) համարին:

"«Տերը ասաց իմ Տիրոջս...» ձևը տավտալոգիա է (անհարկի կրկնություն), ուրեմն ավելի ճիշտ է ընդունել «Եհովան ասաց իմ Տիրոջս...» ձևը" (24, էջ 25):

Սա հենց այն համարն է, որը Հիսուս բերում է ապացուցելու և ցույց տալու, որ Մեսիան և Հայրը նույնն են (Մատթ. 22.41-45): Եվ ակնհայտ է, որ հենց այդ փաստը ժխտելու համար անանուն աստվածաբանը առաջարկում է իր տարբերակը, քանի որ այդ դեպքում Դավթի ասած «իմ Տերը» և «Եհովան» կարելի է բացահայտորեն ներկայացնել որպես տարբեր բաներ, այսինքն, Դավթի ասած «իմ Տերը» և «Եհովան» չեն կարող նույնը լինել:

Մինչդեռ թե՛ տերունական պատասխանը, թե՛ Դավթի խոսքերը բացահայտ նշում են, որ Աստծու Որդին կամ Մեսիան՝ «իմ Տերը» և «Տերը» նույնն են: Հիսուս ուզում էր հասկացնել, որ Մեսիան միայն «Դավթի որդին» չէ, Մեսիան նաև Դավթի Տերն է, այսինքն՝ Աստված[64]:

Հայտնի է, որ Հիսուսի ասածը մեջբերում է LXX թարգմանությունից (Սաղմոս 110.1 (109.1)-ից) նույնությամբ (ու ոչ եբրայերենից), ուր երկու տեղում էլ հունարեն «Տեր» (kirios) բառն է դրված: Իսկ Սաղմոսի համապատասխան համարում բնագիրն առաջին տեղում դնում է տետրագրաման, իսկ երկրորդ տեղում՝ Ադոնի, մի անգամ ևս ցույց տա-

[64] * Շնորհալի, Մեկնություն Մատթեոսի, էջ 481-482, նաև TB, h. 3, համապատասխան համարի մեկնությունը:

լով, որ Տետրագրաման դա նույն Ադոնի՛ն է, նո՛ւյն Մեսիան և նո՛ւյն Ամենակարող Աստվածը:

Արդեն քանիցս նշվել է, որ անանուն աստվածաբանները սիրում են սովորեցնել Հիսուսի ժամանակակից հրեաներին, իսկ այստեղ հանդգնում են նաև սովորեցնել Հիսուսին՝ թե Նա ինչպես պետք է մեկնաբաներ Սաղմոսի այդ հատվածը: Անշուշտ, նման մոտեցումը ոչ միայն անընդունելի է, այլ նաև անտրամաբանական:

Այն ինչ արձանագրված է Սուրբ Գրքում, չի կարելի խմբագրել համաձայն մեր հասկացածի, Ս. Գիրքը Աստծու խոսքն է, և գերադաս է մարդկային ձգտումներից ու ցանկություններից: Անգամ Պիղատոսը իր գրածը չփոխեց միայն նրա համար, որ այն հաճելի չէր հրեա առաջնորդներին (Հովհ. 19.22): «Ինչ գրեցի, գրեցի», - ասաց Պիղատոսը: Չի կարելի այսօր՝ քսան դար անց, պահանջել Պիղատոսից, որ նա չգրեր «Հրեաների թագավոր»՝ այսինքն՝ Մեսիա, Աստծու Որդի (դարձյալ հետադարձման սկզբունքը): Եհովայի վկաների աստվածաբանական միտքը հենց այս հենքի վրա է կանգնում և սրբագրում այն, ինչ անհնար է. սովորեցնում է հրեաներին, թե ինչ պիտի ասեին, իսկ Հիսուսին՝ թե ինչպես պիտի կարդար Սաղմոսի հատվածը և այլն: Ավելին, «եթե»-ների վրա են կառուցում իրենց վարդապետությունը, մի բան, որն անընդունելի է:

Աստծու անվան հետ կապված Եհովայի վկաների սկզբունքները այն աստիճան ծայրահեղ են, որ չեն ենթարկվում անգամ առողջ տրամաբանությանը: Աստծու հայտնությունը մարդկությանը, ինչպես հայտնի է, ունի աստիճանական բնույթ: Աստված սկզբում իրեն հայտնեց Աբրահամին, Մովսեսին, մարգարեներին և, ի վերջո, Հիսուս Քրիստոսի կատարյալ հայտնությամբ Ինքը՝ Աստված, հայտնվեց:

Աստծու հայտնությունը տրվում էր տարբեր աստիճաններով և մակարդակներով, որոնք, ընդհանրապես կարելի է բաժանել երկու մասի՝ Հինկտակարանյան հայտնություններ և Նորկտակարանյան հայտնություններ: Այս աստիճանականությունը չընդունելը և ժխտելը շատ բնորոշ է XIX-XX դարերի աղանդներին, որովհետև հակառակ դեպքում իմաստազուրկ են լինում իրենց «նորագույն» հայտնությունները՝ ռասել-ռուտերֆորդյան պարզունակ մեկնաբանությունները: Այդպիսի մոտեցումը նրանց տանում է դեպի նախնական աստիճանը և այնտեղից՝ այդ ստորին մակարդակից, նրանք փորձում են նկարագրել և սրբագրել պատմությունը և կանխատեսել ապագան:

Այս տրամաբանությունը, որ պայմանականորեն կարելի է անվանել «մանկություն հիշելու» սկզբունք, բնորոշ է ոչ միայն ռասելականությանը, այլ՝ համարյա բոլոր ոչ ուղղափառ կրոնական շարժումներին: XIX դարի երկու «Ռ»-երը սկսում են մեկնել Ս. - Գիրքն, այնպես, կարծես 1900 տարի գոյություն ունեցող քրիստոնեական եկեղեցին գոյություն չի ունեցել և Հիսուսից հետո, երբ նա ժողովարանում ընթերցեց Եսայի 61.1 համարը, առաջին անգամ Ս. Գիրքը բացել է Ռասելը:

Այս է պատճառը, որ Եհովայի վկաները չեն սիրում օգտագործել Հին Կտակարան կամ Նոր Կտակարան անվանումները, չնայած Պողոս առաքյալի բացահայտ խոսքերին (Գաղատ. 4.24) և գերադասում են օգտագործել «Քրիստոնեական եբրայական և հունարեն գրություններ» անվանումները, բնականաբար ենթադրելով, որ առաջինը՝ Հին Կտակարանն է, իսկ երկրորդը՝ Նոր Կտակարանը:

## 5.6. ՄԱՐԴԸ ԵՀՈՎԱՅԻ ՎԿԱՆԵՐԻ ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Եհովայի վկաների վարդապետության մարդաբանությունը նորություն չէր, այն նույնությամբ ընդօրինակել է ադվենտիստական պատկերացումները, չնչին փոփոխությամբ: Այսպես, նրանք ընդունում են, որ

- մարդը իր մեջ հավիտենական ոչինչ չունի.
- մարդը երկու մասից է բաղկացած՝ նյութական մարմին և կենդանության հոգի.
- մարդու մահվամբ այս երկու մասերն էլ վերանում են, մարդը զնում է չգոյություն.
- հոգին մարդու մեջ կապված է անքակտելիորեն նյութի հետ և նրա հետ էլ «չգոյանում» է.
- եթե մարդու մեջ ոչինչ հավիտենական չկա, ապա նա անասունից չի տարբերվում, «բավական պարզ է, որ մարդը մեռնում է անասունի պես» (25, էջ 93):

Իսկ «հույն փիլիսոփաները, ինչպես Պլատոնը, սովորեցնում են, թե հոգին անմահ է» (25, էջ 92), մինչդեռ Սուրբ Գրիքը այդպիսի բան չի սովորեցնում, պնդում են Եհովայի վկաների անանուն աստվածաբանները և հայտարարում բարձրաձայն, որպես անառարկելի փաստ, թե՝ «Հոգին մահվանից հետո չի ապրում» (նույն տեղում):

Հիսուս Քրիստոսի աստվածությունը ժխտելուց հետո, երկրորդ սկզբունքը, որն ամենուր ու ամեն առիթով գրում ու քարոզում են եհովականները, մարդուն «անհոգի» ներկայացնելն է: Անկախ գրքույկի բովանդակությունից, եհովական թերթիկներում կամ գրքույկներում անպայման կգտնենք առնվազն մի քանի էջ այն մասին, որ՝

- մարդը անասունի նման է և հոգի չունի,
- մարդու հոգին մեռնում է մարդու հետ,
- հոգու անմահությունը Ս. Գիրք է թափանցել հեթանոս հույներից՝ ի մասնավորի՝ Պլատոնից և հետևաբար մերժելի է, քանի որ այդ նույնն էր ասում նաև սատանան Եդեմական պարտեզում:

Այս է ռասելական-ադվենտիստական նորագույն մարդաբանությունը, կամ «բարի լուրը», որ եհովական պիոներները բերում են մեր տները և քարոզում հրապարակներում:

Եհովական աստվածաբանների այս մարդաբանությունից, բնականաբար, հետևում են բազմաթիվ եզրակացություններ, որոնք և կազմում են ռասելականության վարդապետության հիմնական աստիճանները: Դրանք են դժոխքի չգոյությունը (մարդը անհոգի է և մահվանից հետո անհիհիլացվում է, ուրեմն դժոխքի գոյությունը ավելորդ է), Դատաստանի չգոյությունը և դրան հարակից շատ հարցեր, որոնք կներկայացվեն հաջորդ բաժիններում:

Բնական է, որ այն բոլոր բացահայտ սուրբգրային համարները, որոնք ցույց են տալիս հոգու անմահությունը, դրախտի, դժոխքի, դատաստանի գոյությունը, Եհովայի վկաների համար լոկ այլաբանական պատկերներ են:

«Սակայն որոշ մարդիկ (այդ մարդկանց մեջ է նաև Հիսուս, որ բերեց այդ օրինակը) կարող են բերել Ղուկաս 16.19-31 համարներում Հիսուսի նկարագրած հարուստ մարդը, որ «չարչարանք»-ի բոցի մեջ տանջվում է: Այստեղ Հիսուս նկարագրում է, թե ինչպես

իբրև դասակարգ՝ հրեա կրոնական առաջնորդները այլաբանորեն պիտի «մեռնեն» Աստծու հաճությունը ունենալուց, և տագնապի մեջ պիտի լինեն, երբ այստեղ՝ երկրի վրա, ապրում էին, ինչպես և եղավ, երբ լսեցին իրենց դեմ Հիսուսի հռչակած պատգամը: Աստվածաշունչը ոչ մի բան չի ասում մահվանից հետո դժոխային կրակում Աստծու կողմից մարդկանց չարչարվելու մասին» (25, էջ 98):

Վերջապես, «հոգին ի՞նչ է» հավիտենական հարցին Եհովայի անանուն աստվածաբանը պատասխանում է. հոգին ինքնին ապրող ֆիզիկական անձն է, ոչ թե իր հոգևոր մի մասը (25, էջ 89): «Աստված հոգին շինեց գետնի հողից իր շինած մարդու բերանին կենդանության շունչ փչելով: Այսպիսով մարդը շնչող կամ ապրող հոգի եղավ» (նույն տեղում): Այսինքն, հոգին և արարածը՝ շնչող արարածը նույնն են, և, հետևաբար, հոգին էլ մահվամբ մեռնում է, գնալով այնտեղ, որտեղից վերցվել էր: Այսինքն, մարդ արարածը, չնայած լինելով Աստծու պատկերը և նմանությունը, աստվածային ոչինչ չունի իր մեջ, նա բաղկացած է միայն «ներկայից»: Երբ վրա է հասնում մահը, մարդն էլ է վերանում՝ իր հոգու հետ միասին, նա վերանում է, գնում է դեպի չգոյություն:

Եհովայի վկաները սիրում են այս պատկերը անվանել անիհիլացիա բառով, որ նշանակում է ոչնչացում, վերացում, անհետացում:

Հոգու անմահությունը, ըստ Եհովայի վկաների, առաջին մեծագույն սուտն է, որի կենսագրությունը սկսվում է եդեմական պարտեզում. «Ոչ թե անշուշտ պիտի մեռնեք...» (Ծննդ. 3.4), - ասաց սատանան Եվային: Այսինքն, ըստ եհովականների, անմահության գաղափարը սատանան ներարկեց, իրականում նրանք պիտի մեռնեին, ոչնչանային: Այնուհետև այդ սուտը տարածվեց աշխարհով մեկ՝ Նեբրովթի միջոցով և բոլոր հավիտենականության հավատացող կրոնները, փաստորեն, կրկնեցին սատանայի այդ հնարած սուտը (25, էջ 91):

Այս է, կարճ ի կարճո, Եհովայի վկաների վարդապետությունը մարդու, մարդու հոգու մասին: Այդ գրքույկի վերնագիրն էլ՝ «Բարի լուր քեզ ուրախացնելու համար» ցույց է տալիս, որ պետք է ուրախանանք այն բանի համար, որ անասունների նման անհոգի և ոչ-հավիտենական արարածներ ենք ստեղծվել:

Հաջորդ աստվածաբանական կետը այն է, որ Աստված այնքան է սիրում մարդուն, որ նրան չի տանջի, հետևաբար ոչ դժոխք կա, ոչ էլ՝ դատաստան, այլ կա միայն դրախտ, դրախտային կյանք և որ այս սերնդից (Ռուտերֆորդի ժամանակակիցներից) միլիոնավորներ պիտի ապրեն դրախտում, եթե հավատան իրենց բարի լուրին:

Այս վարդապետությունն հաստատելու համար անանուն աստվածաբանները դիմում են նույն մեթոդներին, ինչ որ Հիսուսի Աստված լինելը մերժելու դեպքում: Այդ «ապացույցները», որպես կանոն, հետևյալ կառուցվածքն ունեն.

ա. Բերվում է տերմինների եբրայերեն և հունարեն ձևերը, ցույց տրվում, որ այդ բառերը երբեք չեն արտահայտում այն իմաստը, ինչը ընդունել են բոլոր կրոնները: Բառերի ստուգաբանությունը նրանց սիրելի զբաղմունքն է. նրանք ստուգաբանում են բառը՝ գնալով պատմության խորքերը, և այնտեղից քաղած իմաստը վերագրում բառարմատին (տե՛ս օրինակ III.7 բաժինը):

բ. Մեջբերումները կատարում են NWT եհովական թարգմանությունից, և ասում, որ - Սուրբ Գիրքն հենց այդ է ասում. մնացած թարգմանությունները ճիշտ չեն արտահայտում բնագրի իմաստը:

գ. Սուրբգրային այն դրվագներում, ուր բովանդակությունը բացահայտ դեմ է եհովական աստվածաբանությանը, ներկայացնում են որպես այլաբանություն՝ ալեգորիա:

Ստորև բերում ենք սուրբգրային այն տարածված համարները և նրանց քննությունը, որոնք այս կամ այն կերպ եհովականները, որպես ապացույց, բերում են, ժխտելու համար հոգու անմահությունը, դժոխքի չգոյությունը, դատաստանի անիմաստությունը:

1. Ժողովող 9.5: «Նրանք, որ կենդանի են, գիտեն, թե իրենք մեռնելու են, իսկ մեռածները ոչինչ չգիտեն, և այլևս վարձ չկա նրանց համար, որովհետև մոռացվել է իրանց հիշատակը»:

Եբրայերեն nephesh (նեֆեշ) բառը, որ շունչ, հոգի է թարգմանվում, հունարենում միշտ թարգմանվել է psiche (փսիխե) բառով: Այդ երկու բառերը բազում իմաստներ ունեն և որևէ մեկ իմաստ այդ բառերին վերագրել չի կարելի, առանց հաշվի առնելու տեքստը, ուր օգտագործվում են այդ բառերը:

Այդ բառերի հետ միասին Եհովայի վկաները սիրում են օգտագործել նաև եբրայերեն sheol (շեոլ=գերեզման) բառը, այն նույնացնելով հունարեն hades (հադես=դժոխք) բառի հետ, սահմանափակելով դրանց իմաստը միայն «գերեզման» իմաստով:

Եբրայերեն rouach (րուախ) բառն էլ Հին Կտակարանում օգտագործվում է հոգի իմաստով և հունարեն թարգմանության pnevma (պնեվմա) բառի համարժեքն է՝ նույն նշանակությամբ:

Այսպիսով՝ շունչը հունարեն psiche-ն է և եբրայերեն nephesh-ը, իսկ հոգին հունարեն pnevma-ն և եբրայերեն rouach-ը:

Անշուշտ, Ժողովողի այդ համարը չպետք է քննել առանձին, հանելով այն իր տեղից, այլ այն պետք է իր տեղում քննել՝ տեքստի հետ միասին, ինչպես նշեցինք վերևում: - Միայն այսպիսի մոտեցման դեպքում կարելի հասկանալ, թե ի՞նչ է ուզում ասել Ժողովողը:

Ժողովող 9.1-10 համարները կազմում են մի ամբողջական հատված, ուր Ժողովողը ցույց է տալիս, թե ինչ իմաստ ունի կյանքը և ինչի կարելի է հանգել, երբ այն հասնի իր վախճանին:

Քանի հնարավորություն կա իմաստավորելու կյանքը՝ ապրելով հույսով և փրկության ավետիսով՝ երջանկություն է, իսկ «մեռած առյուծի» ճակատագրին արժանանալու դեպքում՝ ապրած կյանքը, կենդանության ժամանակ արդեն իսկ «հիշատակը մոռանալու» կյանք է և, իհրավի, նրանք վարձ չեն առնի և հիշատակը հավիտյան կմոռացվի:

Կյանքի և մահվան իմաստի այդ հավիտենական խնդիրը, ի վերջո, իր հանգուցալուծումն է ստանում մի քիչ հետո՝ Ժողովող 12.7 համարում.

«Նրա աճյունը, ինչպես որ հող էր, հող պիտի դառնա, և հոգին, որ Աստված էր տվել, պիտի վերստին նրա մոտ գնա»:

Ս. Գիրքը մարդուն ներկայացնում է որպես Աստծու պատկերով և նմանությամբ ստեղծված, և հենց այդ է մարդու և կենդանիների միջև եղած հիմնական տարբերությունը: Աստծու ստեղծած ամեն ինչ իր վրա կրում է հավիտենականության կնիքը և անհնար է այն վերացնել: Նյութական աշխարհն էլ, որպես Աստծու արարչության արգասիք, չի ոչնչանում, չի գնում դեպի չգոյություն, քանի որ արարչության համայնապատկերում գոյություն չունի չգոյություն (նյութի պահպանման օրենքը): Եվ մարդն էլ, որ պսակն է արարչության, չի կարող վերափոխվել չգոյության, այդ հակասում է առողջ տրամաբանության և Աստվածային հիմնադիր օրենքներով արարված Տիեզերքին (Եբր. 11.1-2):

Ելնելով Պողոսի հայտնի խոսքերից (Ա Թեսաղ. 5.23)՝, ուր նա ասում է, որ «խաղաղության Աստվածն ինքը թող սրբացնի ձեզ ամբողջապես, և ձեր ամբողջ հոգին, շունչը և մարմինը (հունարենում՝ pnevma, psiche և soma) թող անարատ պահվի մինչև մեր Տեր - Հիսուս Քրիստոսի գալուստը», կարելի եզրակացնել, որ մարդը դիտարկվում է որպես այդ երեքության միությունը, ուր հոգին և շնչավոր մասը ներկայանում են որպես անանցանելի գոյացություններ: Սուրբ Գրքում հաճախ այս երկուսը որպես մեկ է ներկայացվում, դիտարկելով այդ երկուսը որպես միևնույնի երկու տարբեր երեսները և, ըստ այդմ էլ, մարդը ներկայանում է որպես հոգի և մարմին (Մատթ. 10.28, 26.41): Բայց անգամ այդ դեպքերում հոգի ասելով հասկացվում է այն հավիտենականը, որ գոյություն ունի մարդու մեջ, մի գոյացություն, որը մարմնից բաժանվելու ժամանակ, այսինքն, մահվան դեպքում, չի կորչում, չի անհետանում, չի վերանում, չի անհիհլացվում: «Անմահ Աստծու անմահ պատկերն է մարդը», - ասում է Եղիշեն (Եղիշե, Մատենագրություն, էջ 222): Աստված հոգի է, և ուրեմն նրա պատկերն ու նմանությունն էլ հոգևոր է (26, էջ 98):

Մարդու էության վերաբերյալ գոյություն ունեցող տեսակետները երկուսն են՝ երկմասնյա (dichotomia) և եռամասնյա (trichotomia): Առաջին տեսակետի համաձայն մարդը կազմված է երկու մասից՝ մարմին և հոգի, իսկ «հոգի», «շունչ» բառերը հոմանիշ են, ընդ որում Ս. Գրքում կան բազմաթիվ օրինակներ, ուր անհատ-մարդը ներկայացվում է որպես մարմնի և հոգու միություն:

Եռամասնյա տեսակետի համաձայն մարդու կազմությունը բաղկացած է երեք մասից՝ հոգի, շունչ և մարմին, ինչպես գրում է Պողոս առաքյալը (1 Թեսաղ. 5.23 և Եբր. 4.12): Այդ համարներում Պողոս առաքյալը միաժամանակ օգտագործում է այդ երկու բառերը՝ հոգին և շունչը, որոնց հունարեն համարժեքներն են pnevma-ն ու psiche-ն: Այս երկու համարներից էլ եզրակացնում են, որ հոգին և շունչը ամենևին էլ նույն բանը չեն: - Մարմինը ներկայացնում է արտաքին, երևացող նյութական մասը, հոգին՝ բարձրագույնը, աստվածայինը, իսկ շունչը մարմնին կենդանություն տվողն է, այդ երկուսը իրար կապողը: Մարմինը շնչի պատյանն է, իսկ շունչը՝ հոգու:

Նույն դատողությամբ կարելի է բերել անգամ մարդու քառամասնյա կազմությունը հաստատող համար Ս. Գրքից: Այսպես, Մարկ. 12.30-ում Հիսուս ասում է.

«Դու պիտի սիրես քո Տեր Աստծուն քո ամբողջ սրտով, քո ամբողջ հոգով (psiche), քո ամբողջ մտքով և քո ամբողջ զորությամբ»:

Եթե հաշվի առնենք, որ այստեղ խոսում է Հիսուս անձամբ, ապա այս համարը ոչնչով չի զիջում Պողոս առաքյալի՝ եռամասնյան հիմնավորող խոսքերին:

Միջնադարյան մեկնիչները, որպես կանոն, երկմասնյա տեսակետի կողմնակիցներն են, նրանք «հոգու» վերլուծությունը չեն սահմանափակում միայն երկու մասով (հոգի ու շունչ): Հոգին պատկերն է Աստծու (47, էջ 251) և հետևաբար այնքան էլ դյուրին չէ այն ճանաչել և վերլուծման ենթարկել, ինչպես այդ անում են արդի աղանդավորները, հրամցնելով վերին աստիճանի պարզունակ «մոդելներ»: Երբ կազմավորվում է մարմինը՝ շունչն է երևում (47, էջ 255), իսկ երբ կազմավորվում է մարդը՝ բանական հոգին է երևան գալիս: Սբ. Երրորդության հետ համեմատելով, Տաթևացին մարդուն ներկայացնում է նաև որպես միտք, բան, հոգի, քանի որ «մարդ երրորդությամբ է կատարյալ» (47, էջ 271): Այսինքն, երբեք մարդու հոգին չի տրոհվում առանձին-առանձին անկախ մասերի, այլ այդ բոլոր մասերը դիտարկվում է որպես մեկ և մի գոյացություն (substantia)

1 Թեսաղ. 5.23 համարում ուշադրության արժանի է նաև օգտագործած բայաձևերի եղանակը: Այսպես «թող սրբացնի» ձևը հունարենում ունի hagiasai ձևը, որը հունարենում ըղձական եղանակի անցյալ կատարյալ ժամանակի ձևն ունի (aorist optative): Իսկ դա նշանակում է մի գործընթաց, որը սկսվել է նույն թղթի 4.7 համարում (սկիզբը), ավարտին է հասցվելու ապագայում (aorist) և ընթացքի մեջ է ներկայում (ըղձականը): Նույն եղանակաձևն ունի նաև նույն համարում «պահվի» բայը՝ teretheie, որը ցույց է տալիս, որ մարդու «ամբողջ» էությունը՝ ներքին մարդը, հոգևորը և արտաքին՝ մարմինը անարատ են պահվելու մինչև Դատաստանի՝ Քրիստոսի Գալստի օրը (Տե՛ս TB, h. 3, համապատասխան համարի մեկնությունը):

Անշուշտ, Պողոս առաքյալը նման «շրայլ» մաղթանք չէր կարող հայտնել մահվանից հետո մեռնող, չգոյություն գնացող հոգու և շնչի մասին:

Այսպիսով, Եհովայի վկաների վարդապետությունը հոգու մահկանացու լինելու և -մարդ արարածին աստվածային նմանությունից զրկելու մասին սուրբգրային հիմնավորում չունի: Ժողովողի գրքից մի հատված առանձին դիտարկել և դրա վրա վարդապետություն ստեղծելը, լուրջ հիմնավորում չի կարող համարվել:

Մարդուն «կենդանուն» հավասարեցնելու Եհովայի վկաների այս վարդապետությունը չունի նաև նորկտակարանյան հիմնավորում, թեև Եհովայի վկաները պնդում են հակառակը: Անգամ միջնադարյան մեկնիչները, այս հարցի շուրջ չեն ծավալվել, բավարար համարելով որպես անառարկելի ապացույց աղքատ Ղազարոսի պատմությունը (Ղուկ. 16. 19-31): Եհովայի վկաների անանուն աստվածաբանները այդ դրվագն էլ են այլ կերպ հասկանում՝ այդ ամենը ներկայացնելով որպես այլաբանություն:

«Եվ դժոխքում գտնվելով չարչարանքի մեջ...»:

«Իհարկե, քանի որ դժոխք չկա, այլ այստեղ դժոխքը (հադես) մարդկության գերեզմանն է ու ոչ թե տանջանքի վայրը, պարզ է, որ այդ ամենը առակ է» (27, էջ 88):

Հաջորդ տրամաբանական քայլը, որ հետևում սրան, այս է.

«Չէ՞ որ դժոխքն ու երկինքը իրարից հեռու են, և դժոխքում գտնվողը չէր կարող խոսել երկնքում գտնվողի հետ...»: Այսինքն, ասում է Եհովայի վկաների անանուն աստվածաբանը, այստեղ պատկերվածը առակ է, և ոչ թե «իրական դեպքերի նկարագրություն», և, հետևաբար, այս առակը չի սովորեցնում, որ հոգիները տանջվում են մահվանից հետո

կրակե դժոխքում (նույն տեղում): Այնուհետև գրքույկը տալիս է այդ այլաբանության բացատրությունը, այսինքն, ներկայացնում է, որ

- հարուստի կերպարի մեջ մամնավորված են կրոնական առաջնորդները, որոնք մերժեցին Հիսուսին:

- Ղազարոսը աղքատ ժողովուրդն է, որ ընդունեց Հիսուսին:

- Աբրահամը Եհովան է, որն ընդունում է աղքատներին:

- կրոնական առաջնորդները այլաբանորեն տանջվում են, երբ իրենց հանդիմանում են իրենց չար արարքների համար, որ գործել են նրանք երկրի վրա:

Առակի մեկնության նման կառույցը, արդեն սկզբից իսկ մերժելի է, քանի որ անաչառ չէ, այլ «հրահանգավորված է», թե ինչ պետք է տեսնել և հասկանալ առակում: Այսինքն,

- հոգին մեռնում է մարմնի հետ և անմահ չէ:

- մարդը մեռնում է և գնում չգոյություն:

- Դատաստան, դժոխք, դրախտ չկան և այլաբանորեն պետք է ընդունել այդ բառերը:

- Դժոխքը՝ գերեզմանն է, այսինքն՝ շեոլը, հողը, երկրի ընդերքը:

Ի սկզբանե ընդունելով այս մեկնակետերը, պարզ է, որ Նոր Կտակարանը Եհովայի վկաների համար կմնա որպես փակ, կնքված մի գիրք: Այսինքն, ոչ թե պետք է Ս. Գիրքը կարդալ, այլ՝ Ռասելի բազմահատոր երկերը, ուր և գտնում են այսօրվա անանուն աստվածաբանները իրենց անհրաժեշտ բոլոր հարցերի պատասխանները:

## 5.7. «ԱՂՔԱՏ ՂԱԶԱՐՈՍԻ» ԱՌԱԿԻ ՄԱՍԻՆ

Ավետարանական առակների ամենամակերեսային ծանոթությունն անգամ, ի հայտ է բերում այն հետաքրքիր փաստը, որ Հիսուսի բոլոր առակները, ինչքան էլ դրանց վերագրենք այլաբանություն, զուրկ չեն եղել իրական հիմքից: Ավետարանական առակներին բնորոշ չի եղել ժողովրդական (ֆոլկլորային) պատումներից եկող հեքիաթային տարրերը: Առակներում երբեք չենք գտնի այնպիսի խոսքեր, ուր արջն է խոսում կամ այսինչ թռչունը խորհուրդ տալիս: Աղքատ Ղազարոսի առակն էլ բացառություն չի կարող կազմել, մանավանդ որ այս միակ առակն է, ուր օգտագործվում են հատուկ անուններ, այն էլ շատ հայտնի. Հայր Աբրահամ, Ղազարոս: Ուստի, ինչքան էլ որ այլաբանորեն դիտենք առակը, չենք կարող այդ փաստը շրջանցել: Դա կհակասի Հիսուսի առակների ոճին և խրատա-բարոյական նպատակներին, կրոնական հայտնությունները բացատրելու Նրա եղանակներին:

«Որդյա՛կ, հիշիր, որ դու այնտեղ ստացար քո բարիքները, քո կյանքի ընթացքում, իսկ Ղազարոսն էլ՝ չարչարանքները: Այժմ սա այստեղ մխիթարվում է, իսկ դու այդտեղ տանջվում ես» (Ղուկ. 16.25):

Ինչքան էլ այլաբանություն համարենք այս առակը, անհնար է ընդունել, որ հոգին չգոյության վիճակին է գնալու: Ի վերջո, Ժողովող 9.6 համարում չի ասվում, որ մահվանից հետո հոգին գնում է չգոյություն կամ մեռնում է մարմնի հետ, այլ միայն ասում է, որ մահվամբ մարդը դադարում է արդարություն և կամ բարություն գործելու հնարավորությունից (հմմտ. Ժողովող 3.17, 11.19, 12.14):

Նույնն էլ կարելի ասել առակի երկրորդ մասի վերաբերյալ՝ դժոխքի գոյության և տանջանքի իրական լինելու մասին:

Այս առակի միջնադարյան մեկնաբանությունները շատ այժմեական են, և հաճախ օգտակար է բերել Եհովայի վկաների հետ շփվելիս: Ահա Քարոզգրքի՝ աղքատ Ղազարոսի առակի մեկնությունից (Ձմերան հատոր, էջ 400) մի քանի եզրահանգումներ՝ հոգու մահվանից հետո գիտակից վիճակում գտնվելու վերաբերյալ.

- եթե հոգին՝ կապված լինելով մարմնին, ներգործում և իմաստություն է տալիս, ապա որքան առավել մարմնից ազատվելիս նա կպայծառանա գիտությամբ:

- հոգու վիճակը ավելին է տեսնում, քանի որ ճանաչեց Աբրահամին, որն ապրել էր շատ դարեր առաջ:

Հաջորդ «հիմնավոր» փաստարկը, որ բերում են Եհովայի վկաները, ապացուցելու համար, թե մահվանից հետո մարդ զնում է չգոյություն՝ Ղազարոսի հարության դրվագն է (Հովհ. 11.1-44): Նրանք պնդում են, որ եթե Ղազարոսը իր կյանքի չորս օրվա ընթացքում գոյություն ունենար, ապա անպայման կպատմեր մարդկությանը հուզող այդ մեծագույն հարցի մասին, մինչդեռ նա ոչինչ չպատմեց, ուստի, այնտեղ ոչ մի կյանք էլ չկար, եզրակացնում են Եհովայի վկաների անանուն աստվածաբանները (27, էջ 79-80): Դարձյալ բնդհարվում ենք Եհովայի վկաների «եթե»-ական սկզբունքի հետ:

Այն, ինչ գրված է բացահայտ՝ չընդունել, դիտել այլաբանություն, իսկ այն, ինչ չկա ու չի ասվել՝ ընդունել որպես ճշմարտություն - Եհովայի վկաների աստվածաբանության հիմնաքարն է: Ինչպե՞ս կարելի է վարդապետություն ստեղծել կամ հիմնավորել ենթադրական խոսքերի վրա: Իսկ լուծումը միանգամայն պարզ է. այն ինչ չի ասել Ղազարոսը, դեռ չի նշանակում, որ եթե խոսեր, ապա պիտի ասեր Եհովայի վկաների վարդապետությունը հաստատող խոսքեր, այսինքն, չգոյությունից իր վերադառնալու մասին: Այո՛, Ղազարոսը լռեց, բայց այդ լռությունը շատ բան ասաց: Մեկնիչներն ասում են, որ նա իր կյանքի մնացած օրերին այլևս երբեք չժպտաց, որովհետև տեսել էր արդեն, գիտեր, թե ուր պիտի գնան նրանք, ովքեր չեն ընդունելու Հիսուսի վարդապետությունը: Հենց այդ էր պատճառը, որ Հիսուս լաց եղավ (Հովհ. 11.35):

Հունարենում երկու բառ կա, որ թարգմանվում է կյանք, ապրել բառերով: Bios-ը (բիոս) նշանակում է մարմնական կյանքը նյութական աշխարհում, մեզ շրջապատող մարմինների՝ արևի, լուսնի, մթնոլորտի շրջապատում, որոնք, պարզ է, փոխկապված են իրար հետ: Եվ բնական է, մարդու մահվամբ մեռնում է bios-ը, կյանքը այդ չափման մեջ մահանում է:

Մյուս բառը, որ դարձյալ կյանք է թարգմանվում՝ zoe-ն (զոե) է, որը բնորոշում է մարդու կյանքը հոգևոր ոլորտում, հավիտենական չափման մեջ: Դա կյանքն է, որ տրվել է մարդուն Արարչի կողմից, և այս կյանքը մահանալու ենթակա չէ, այն երբեք չի մեռնում (Lampe, էջ 297, 593, նաև 4, էջ 558):

Այսպես, բնագրում zoe-ն օգտագործված է հետևյալ համարներում. Մատթ. 25.46, Ղուկ. 16.25, Հովհ. 5.39, 6.51, Գործք 17.25, Հռոմ. 5.18, Կողոս. 3.4 և այլն:

Իսկ bios-ն օգտագործված է հետևյալ համարներում. Մարկ. 12.44, Ա Պետր. 4.2, Գործք 26.4, Ղուկ. 21.34, Ա Կորնթ. 6.3 և այլն:

Առաջին խմբում օգտագործված կյանքը (զոե) միշտ «հավիտենական» բառի հետ է, անանցն է (մանավանդ՝ Կող. 3.4-ում): Եթե այս խմբի համարներում կյանքը-զոեն փոխվի կյանք-բիոսով, համարները կկորցնեն իրենց նշանակությունն ու իմաստը: Իսկ երկրորդ խմբում կյանք-բիոսն է ընդգծված, այս անցողիկ կյանքը, որ տրված է մարդուն՝ ճանաչելու կյանք-զոեն, իմաստավորելու համար կյանք-բիոսը:

Եհովայի վկաների աստվածաբանները միտումնավոր նույնացնում են այս երկու բառերը, և դրանով իսկ, ընդունում, որ կյանքը անցնում է միայն նյութական ոլորտում, որից դուրս գալիս այն վերանում է: Իհարկե, այդ դեպքում չեն մոռանում հիշել, որ այդ հավիտենական սկզբունքը գալիս է սատանայի ծառա Պլատոնից, որից ազդված հրեաները ընդօրինակելով հեթանոս հույն փիլիսոփային, հավատացել են հոգու անմահությանը (27, էջ 89):

Մարդու մեջ հավիտենականության գոյության մասին կարելի շատ ու շատ փաստարկներ բերել, բայց եթե Արարչի նմանությունն ու պատկերը բավարար չի համարվում, ապա ինչ փաստարկ էլ որ բերվի, Եհովայի վկաների համար համոզիչ չի լինի: Դա կարելի է բացատրել հետևյալ կերպ.

- Եհովայի վկան չունի մտքի, կամքի ազատություն դրսևորելու ունակություն: Նրանց վարդապետությունը հենց այդ է ոչնչացնում անդամների մեջ:

- Եհովայի վկան Ս. Գրքին նայում է ոչ թե իր աչքերով, այլ՝ Դիտարանի հրահանգավորված աչքերով, այսինքն, այս դեպքում նա կարիք չունի Ս. Գրքի, եթե պիտի տեսնի այն, ինչ ուզում է տեսնել: Ավելին, օծյալ Կառավարությունն է որոշում, թե որ հատվածը ինչպես հասկանալ կամ ինչպես մեկնաբանել:

- այլախոհության ցանկացած դրսևորում պատժվում է հեռացմամբ:

Հետևաբար, Եհովայի վկաների հետ շփվելիս, եթե հաջողվի կասկած առաջացնել օծյալ Կառավարական որոշումների հանդեպ և հավատ ներշնչել Ս. Գրքի հանդեպ, դա կլինի նրա «ստրկությունից»՝ Կառավարությունից ազատվելու և իրեն գտնելու սկիզբը:

Դա կլինի Եհովայի վկայի համար Ելք եգիպտական (ռասելական) գերությունից:

## 5.8. ԵԿԵՂԵՑԻՆ

Ինչպես բոլոր աղանդները, այնպես էլ Եհովայի վկաները, համարում են, որ միայն իրենք են ճշմարիտ եկեղեցին ամբողջ աշխարհում: Մնացած բոլորը, որ իրենց եկեղեցի են համարում, պիտի կործանվեն Արմագեդոնի պատերազմում (տե՛ս ստորև) և միայն իրենք պիտի վերապրեն Արմագեդոնը:

Եհովայի վկաները չեն սիրում օգտագործել եկեղեցի բառը (հունարեն eklezia) և այն փոխում են կազմակերպություն, համայնք կամ ժողով բառերով: Նույն ձևով էլ նրանք չեն սիրում օգտագործել Հին և Նոր Կտակարան բառերը, փոխարինելով այն «եբրայական» և «հունարեն» գրություններով: Նպատակը պարզ է. կտակարանը կտակելու հետ կապ ունեցող բառ է և ինչ որ ձևով կապ ունի կտակը իրականացնողի՝ եկեղեցու հետ, որը հիմնադրեց Հիսուս Քրիստոս, մի բան, որն իրենց աստվածաբանության համար ձեռնտու չէ:

Եհովայի վկաները եկեղեցի ասելով հասկանում են միայն «վերստին ծնունդ» ունեցած այն անդամներին, որոնց թիվը 144000 պետք է լինի: Մնացածները՝ «ուրիշ հոտն» են կազմում, որոնք էլ աշխարհում Եհովայի վկաների հսկայական կազմակերպություն-պետությունն են ներկայացնում:

Այսպիսով, Ադամից մինչև մեր օրերը ապրած մարդկանց թվից (որը կազմում է մոտ 60 միլիարդ[65]) միայն 144000-ի համար է գրված Հովհաննեսի ավետարանը, մանավանդ երրորդ գլուխը, քանի որ միայն նրանք վերստին ծնվելով՝ մահվանից հետո երկնային կյանք պիտի մտնեն, մնացածները՝ դեպի չգոյություն:

Այսպիսով, «Աստծու մեսիական ընտրությամբ, նրանք որոնք 144000-ի առաջին անդամներն էին, երկնքի մեջ Հիսուս Քրիստոսի հետ իշխող թագավորներ պիտի լինեն» (16, էջ 93):

Հետևաբար, Եհովայի վկաները Աստծու թագավորություն ասելով պատկերացնում են մի կառավարություն, որի գլուխը կանգնած են 144000 թագավորներ, որի «դեսպանատունը» այսօր աշխարհում ներկայացնում է Նյու Յորքի արվարձանում գտնվող Բրուկլինյան Դիտարանի կազմակերպությունը, որի Ղեկավար մարմինը, բնական է, դարձյալ այդ օձյալ դասից է:

Բայց ավետարանական և ոչ մի դրվագում Հիսուս չի ներկայացնում Աստծու Թագավորությունը որպես Կառավարություն՝ աշխարհիկ իմաստով: Հենց այս առումով էլ դժվար է Եհովայի վկաների կազմակերպությունը դիտել որպես եկեղեցի, ինչը և իրենք մեծ սիրով ընդունում են: Այդ տարօրինակ կազմակերպությանը ավելի հարմար է տալ «կուսակցական-պետություն» անվանումը, քան՝ կրոնական կազմակերպություն անվանումը (27, էջ 112-117): Իրենց հրատարակած բոլոր գրքերում Եհովայի վկաները սիրում են բերել Ղուկ. 17.21 համարը՝ ցույց տալու համար, որ Աստծու Թագավորությունը հենց այն է, ինչ իրենք քարոզում են (16, էջ 91, 27 և այլուր): Այսպես, երբ Հիսուս ասաց, թե «Աստծու թագավորությունը ձեր մեջն է», ապա, համաձայն Եհովայի վկաների, այդ ամենևին չի նշանակում, որ նա խոսում էր հոգևոր թագավորության մասին, այլ այն, որ Ինքը՝ Հիսուս Քրիստոս, որպես Աստծու Թագավորություն, նրանց մեջ է գտնվում, այսինքն, Հիսուս Քրիստոսի ֆիզիկական ներկայությունն է իրենց մեջ:

Այդ համարում օգտագործված «ներսում» բառը հունարեն «entos» (էնտոս) բառն է, որ նշանակում է մեջ, մեջտեղ և այդ երկու իմաստն էլ ունի: Այսպես, Մատթ. 23.26-ում, ուր նույն entos բառն է օգտագործված, անհնար է պատկերացնել այն ֆիզիկական տեղի իմաստով: Ուրեմն, հատվածի բովանդակությունն է պահանջելու, թե entos-ը ինչ իմաստով պետք է հասկանալ, հակառակ դեպքում անհեթեթ եզրահանգումների կարելի է գալ, ինչպես օրինակ, Մարկ. 12.34-ի «Աստծու Թագավորությունից հեռու չես» արտահայտության դեպքում. Հիսուս Քրիստոս անձի մոտ կանգնածը (տեղանքի իմաստով) թագավորությանը մոտ է կանգնած և նրանից հեռու կանգնածը՝ հեռու:

Ղուկ. 17.21 համարի entos-ը հոգևոր թագավորության մասին է, քանի որ հաջորդ համարներում (23-26) այդ միտքն ավելի է պարզաբանում: Իսկ այն, որ ընդդիմախոս փա-

65 * Որոշակի մեթոդներով կարելի է մոտավոր հաշվել մինչ այսօր ապրած մարդկանց թիվը մոտ 6.000-10.000 տարվա ժամանակահատվածում, որը և բերված է (30, էջ 421): Այդ գրքում նշված է 40 միլիարդ թիվը, որին ավելացնելով 50%-ը մենք վերցրել ենք 60 միլիարդ թիվը:

րիսեցիների մեջ Հիսուս Քրիստոս չէր կարող խոսել «ներքին» թագավորության մասին, ինչպես պնդում են Եհովայի վկաները, ճիշտ չէ, քանի որ շատ ընդդիմախոսներ (օրինակ՝ Նիկոդեմոսը) Հիսուսի հետևորդներից դարձան, մինդեռ շատ հետևորդներ՝ աշակերտները, փախան փորձությունների ժամանակ: Ընդհանրապես, այդ դրվագը միջնադարյան մեկնիչները նույնպես հասկացել են այն իմաստով, որ ամեն մի հավատացյալի մեջ է հայտնվում Աստծու թագավորությունը (28, էջ 136):

Այսպիսով, ավանդական պատկերացումը եկեղեցու մասին, որն այն ներկայացնում է որպես հավատացյալների հավաքը՝ միաբանված առաքելական վարդապետությամբ և ուսուցումներով (Գործք 2.41-43), որը փաստագրված է նաև Նիկիական հանգանակում, ամեննին չի համապատասխանում Եհովայի վկաների՝ եկեղեցու մասին ունեցած պատկերացումներին:

Մարդկության դասակարգումը, ըստ Եհովայի վկաների, շատ չի տարբերվում անցնող դարաշրջանի ցեղային դասակարգումներից՝ ոմանց գերադասելով, իսկ ոմանց էլ՝ ստորադասելով: Ընտրյալները՝ 144000 օծյալները կամ վերստին ծնվածները, նրա՛նք են թագավորական ազգը, նրանք մնացած միլիարդավորներին պիտի իշխեն, որոնք ստրուկի նման հնազանդվելու են նրանց: Այդ հասարակարգը, այդ եգիպտական պետությունը նրանք անվանում են դրախտ երկրի վրա:

Միայն այդ 144000 հոգին են, որ մահվանից հետո չեն գնալու չգոյություն, այլ միանգամից գնալու են երկինք, իսկ մնացած բոլորը, անխտիր, մեռնելուց հետո անհիհլացվելու են: Այդ 144000-ի հավաքագրումը սկսվել է 1914 թվականին (տե՛ս ստորև):

Եհովայի վկաները հավատում են, որ դեռ առիթ կա օծյալների այդ դասին միանալու, բայց շուտով, մի քանի տարի հետո, այդ թիվը կլրանա և «հաստիքացուցակում» այլևս ազատ տեղ չի մնա: Այդ նշանակում է, որ կսկսվի Արմագեդոնը: Միայն այս կերպ կարելի է բացատրել Կազմակերպության պիոներների հարձակվողական (ագրեսիվ) խառնվածքը:

### 5.9. ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ

Եհովայի վկաները ընդունում են միայն երկու խորհուրդ. մկրտություն և հաղորդություն: Մկրտությունը կատարում են միայն ընկղմամբ, որը խորհրդանշում է նախնական մեղքից մաքրվելը և ջրից դուրս գալը՝ հավատով հարություն առնելը և հնազանդությունը (հարության ուղղափառ գաղափարը խորթ է նրանց): Մանկամկրտությունը նրանք չեն ընդունում, քանի որ երեխան չի կարող հնազանդվել որևէ կազմակերպության և ենթարկվել նրա կանոններին (7, էջ 156):

Իսկ օծյալ խավը՝ 144000-ը, վերապրում են նաև «սուրբ հոգու մկրտությունը», «վերստին ծնունդը» և մահվանից անմիջապես հետո գնում երկինք՝ Հիսուսի մոտ, 144000-ից համար Առաջինի մոտ: Նա նաև այդ զորամիավորման գլխավոր հրամանատարն (չմոռանանք, որ եհովականները չեն ընդունում Հիսուսի Աստված լինելը): Սրանք «փոքր հոտն» են: Մկրտվածների մնացած մասը՝ «այլ ոչխարները» (Հովհ. 10.16) կամ «մեծ բազմությունը» (Հայտն. 7.9) կազմում են ներկայիս Եհովայի վկաները, որոնք պետք է վե-

րապրեն Արմագեդոնը: Մկրտությունը նրանք կատարում են համաձայն մկրտության բանաձևի, բայց իրենց թարգմանությամբ, այսինքն, ոչ թե՝

«հանուն Հոր և Որդու և Սուրբ Հոգու» (Մատթ. 28.19),

այլ՝

«հանուն Հոր, հանուն Որդու, հանուն սուրբ հոգու», քանի որ նրանք մերժում են Ս. Երրորդությունը:

Հաղորդությունը Եհովայի վկաները կատարում են տարին մեկ անգամ՝ Զատկի օրը, բայց ոչ թե քրիստոնեական զատկի, այլ՝ հրեական:

Նրանք այդ հիմնավորում են այնպես, որ Զատիկը լինում է տարին մեկ անգամ, ուստի և հաղորդության սեղանն էլ տարին մեկ անգամ պետք է լինի: Հաղորդության արժանի են համարվում միայն 144000-ի անդամները, իսկ «այլ ոչխարներին» արգելում են հաղորդություն տալ: Քանի որ Եհովայի վկաները հավատում են, որ դարասկզբի ծնվածներն են միայն 144000-ի մեջ մտնելու, հաղորդություն ընդունողները, որպես կանոն, 80-90 տարեկան ծերունիներ են: Իսկ ի՞նչ կլինի հետո, երբ այդ ծերունական գլխավոր կենտրոնակայանը այլևս անդամ չունենա, իսկ Արմագեդոնը այդպես էլ չսկսվի, ինչպես եղավ նրանց պատմության նախորդ տարիներին, երբ ամեն տասնամյակը մեկ, սկսած 1799 թվականից, նշում էին Արմագեդոնի նոր թվականը:

Հավանաբար, այսօրվա Եհովայի վկաների ծերակույտը ունի իր գաղտնի որոշումները, թե ինչպես դուրս գա «ծերունական» այդ շրջանակից և հրաժարվի ռասելա-ռուտերֆորդյան «միլիոնավորները պիտի մահ չճաշակեն» կարգախոսից, ու, միևնույն ժամանակ, չհրաժարվի իր հիմնական սկզբունքներից: Կարելի է միայն պատկերացնել, թե ինչպիսի հնարավոր լուծումներ կգտնեն Բրուկլինում՝ երիտասարդացնելու իրենց ծերացած Ղեկավար Մարմինը:

Հետաքրքրական է, որ Եհովայի վկաները հաղորդության օրը նշում են որպես «Հիսուսի մահվան հիշատակի օր», իսկ այդ օրվան մասնակցելը պատվաբեր մասնակիցների համար, քանի որ նրանք այդ դեպքում Եհովայի աչքին լավ են երևալու (29, էջ 7-8):

Այո՛, իրականությունն այդ է, Եհովայի վկաների համար Հիսուս մեռած է, մինչդեռ քրիստոնյաների համար Նա հարություն է առել մարմնով և Հոր Աջ կողմում է: Կենդանի Հիսուսի համար նշել Նրա մահվան հիշատակի օրը, նույնն է թե համարել Նրան մեռած: Այս է Եհովայի վկաների ամբողջ աստվածաբանությունը:

## 5.10. ՎԱԽՃԱՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Եհովայի վկաների վախճանաբանական հայացքները ուրվագծել են Ռասելն ու Ռուտերֆորդը և մինչ այսօր նրանց հաշվարկներն են ընդունվում ու դեպքերի նրանց նկարագրած ընթացքն են համարում ճշմարիտ և այդ են քարոզում:

Վախճանաբանական պատկերացումները, որպես կանոն, անխտիր կերպով հիմնված են ինչ-ինչ հայտնութենական տարրերի վրա, որն էլ, դարձյալ կարելի ասել՝ որպես կանոն, սխալ է դուրս գալիս: Եվ, որպես հետևանք այդ հայտնությունների, կրոնական շարժման հետևորդներին է բաժին ընկնում «հուսահատության» ամբողջ ծանր բեռը և դրանից դուրս գալու ճանապարհների որոնումը:

Ռասելը, լինելով ադվենտիստ շարժման ծնունդ, իր կյանքի ընթացքում միշտ սրբագրել է իր հաշվարկներն ու աշխարհի վախճանի օրը որոշելու եղանակները:

Ռասելական շարժումը այն համառ շարժումներից եղավ, որ չընդունեց իր դավանանքի որևէ էական կամ վճռական սրբագրում՝ մինչև այսօր մնաց նույն մակարդակի վրա, առանց ձանձրանալու նույն բանը կրկնելով՝ արդեն 120 տարի, Դիտարանի ամեն հերթական համարում և տարածվող թերթիկներում:

Այսօր ադվենտիստները, չնայած կրում են գալստական անունը (ադվենտուս լատիներեն նշանակում է գալուստ), այլևս չունեն աշխարհի վախճանը գուշակելու մոլուցքը և կարծես այն հանձնել են իրենց հոգեզավակին՝ Ռասելականությանը: Ադվենտիստները իրենց շարժումը տեղափոխեցին հինկտակարանյան օրենքների լաբիրինթոս և այսօր ավելի Շաբաթ - Կիրակի փոխհարաբերությունների մասին են քարոզում, քան աշխարհի վախճանի: Այդպիսով, նրանք սուտ մարգարեություն անելուց ազատվեցին, իսկ ռասելականությունը չունեցավ այդ համարձակությունը, ու մինչ հիմա աշխարհի վախճանի նոր օրեր ու ժամանակներ է նշում:

Ստորև կփորձենք համառոտ ներկայացնել Եհովայի վկաների վախճանաբանական հայացքները:

Աստծու նպատակը, համաձայն Եհովայի վկաների աստվածաբանության, ոչ թե մարդկության փրկությունն է, այլ մի Կառավարության ստեղծում, որի թագավորը, կամ ինչպես իրենք են ասում՝ Ֆելդմարշալը Հիսուս Քրիստոսն է (29, էջ 19): Ռուտերֆորդը այդ հիմնավորում է Եսայի 9.6-7-ում «հավիտենականության Հայր» դարձվածքը մեկնելիս, որի մասին արդեն խոսել ենք (9, էջ 214):

Եհովայի վկաները պնդում են, որ Գողգոթայի վրա հիմք դրվեց այդ Կառավարության: Հովհ. 14.19-ի վրա հիմնվելով նրանք ընդունեցին, որ Հիսուսին ոչ ոք այլևս չի տեսնի, ուրեմն, եզրակացրեցին նրանք, Հիսուս մեռելներից հարություն է առել որպես հոգևոր էակ, իսկ աշակերտներին և ժողովրդին 40 օրվա ընթացքում երևացել է այդ նպատակի համար ստեղծված հատուկ մարմնով: Ուրեմն, Հիսուսի Երկրորդ Գալուստի մասին խոսք լինել չի կարող, Նա չի գալու այնպես, ինչպես 1900 տարի քարոզվել է քրիստոնյաների կողմից, այլ Գալուստը փոխարինվելու է ներկայությամբ: Այս հայտնագործության համար հիմք ծառայեց հունարեն paroussia = գալուստ բառը, որը Եհովայի վկաների աստվածաբանները ամենուր թարգմանեցին որպես ներկայություն (9, էջ 221):

Այսպիսով, Գալուստի վարդապետությունը չեզոքացնելուց հետո, Եհովայի վկաների աստվածաբանները ապահովվեցին իրենց աշխարհի վախճանի մասին ժամ ու թվական գուշակելուց և միևնույն ժամանակ հիմնավորեցին Գալուստների նախկին թվականները՝ փոխարինելով դրանք ներկայությամբ:

Իսկ ինչ վերաբերում է վերջին ժամանակների սկսման ժամանակներին, ապա այդ կարելի է համեմատաբար հեշտությամբ լուծել: Մանավանդ որ կարելի է ստորաբաժանել վերջին ժամանակների սկզբնավորման կամ Քրիստոսի ներկայության ժամանակահատվածը առաջին փուլի, երկրորդ փուլի և այդպես շարունակ: Այդպիսով, Գալուստը կարելի է դնել Քրիստոսի ծննդից սկսած մինչև այսօրվա ժամանակաշրջանի ցանկացած հատվածում, իսկ հետո միշտ էլ կարելի է որևէ հիմնավորում տալ:

Այդպես էլ եղավ:

Ելնելով Դանիել 11.40-41 համարներից, ուր ասվում է, որ «երբ ժամանակի վախճանը գա, նա պիտի կռվի Հարավի թագավորի դեմ: Հյուսիսի թագավորը կառքերով, հեծյալներով ու բազում նավերով զորք պիտի հավաքի նրա դեմ, պիտի մտնի նրա երկիրը, պիտի կործանի այն, անցնի և մտնի Սաբայիմ երկիրը, և շատերը պիտի տկարանան:

Սրանք են ահա, որ պիտի փրկվեն նրա ձեռքից. Եդոմը, Մովաբը և ամոնացիների իշխանությունը», Ռուտերֆորդը եզրակացրեց (9, էջ 231-232).

- Նապոլեոնի եգիպտական արշավանքը այս մարգարեության հստակ կատարումն է:

- Հարավի թագավորը Եգիպտոսն է:

- Հյուսիսի թագավորը Անգլիան է:

Նապոլեոնը կռվում էր Մուրադ Բեյի զորքի դեմ Եգիպտոսում և ջախջախեց նրան: - Նելսոնը ջախջախեց Նապոլեոնի ծովային ուժերը: Եվ Նապոլեոնը 1799 թվականի նոյեմբերին վերադարձավ Ֆրանսիա, և 1799 թվականը եղավ «վերջին ժամանակվա» սկզբնավորությունը:

Երկրորդ հանգրվանը Ռուտերֆորդը դնում է Սեդեկիայի կործանման թվականը (մ.թ.ա.[66] 606 թ.) և համարում սկիզբը Նաբուգոդոնոսորի կայսրության:

Երրորդ հանգրվանը Ռուտերֆորդը դնում է օստգոթերի կործանման թվականը, որից սկսած իբրև թե պապականությունը ահռելի և սոսկալի է եղել:

Ինչպես տեսնում ենք, այս երեք հանգրվանները պայմանական բնույթ ունեն և որևէ հիմնավորում տալ, որպես «ճակատագրական»՝ անհնար է:

Նախ Դանիել 11.40-41 միայն արտաքնապես է նման Նապոլեոնի եգիպտական արշավանքին, մանրամասներում չի համապատասխանում և համաձայնում տեքստին: Օրինակ, անգլիացիները (հյուսիսի թագավորը) Աբուքիրում ջախջախեցին ֆրանսիացիների միայն նավատորմը, և ոչ թե՝ «կառքերով, ձիավորներով երկրները մտան ու կոխելով անցան»: Հայտնի է նաև, որ անգլիական հետևակը եգիպտական արշավանքի ընթացքում ընդհանրապես չի հանդիպել ֆրանսիական հետևազորին:

Ֆրանսիական բանակը Երուսաղեմ չմտավ, այլ պաշարեց Սեն Ժան Դակր ամրոցը, և, չկարողանալով այն գրավել, վերադարձավ Եգիպտոս: Իսկ մարգարեությունը անպայման պետք է ուղղակիորեն կապված լինի Ս. Երկրի կամ Ս. քաղաքի՝ Երուսաղեմի հետ (42-45 համարներ):

Երկրորդ հանգրվանն էլ պայմանական է, այն կարելի ցանկացած տարեթիվ տեղափոխել: Մինչդեռ Սեդեկիայից ավելի կարևոր, այդ ժամանակների շրջադարձային կետ կարելի է համարել Տաճարի կործանումը, որը տեղի ունեցավ մ.թ.ա. 585 թվականին, իսկ

---

[66] * Եհովայի վկաները իրենց գոյության սկզբնական շրջանում օգտագործում էին թվականության Ք. Թ. և Ք. Ա. ձևերը, ինչպես օրինակ Ռուտերֆորդը իր «Աստծու Քնարում», բայց մերօրյա հրատարակություններում Եհովայի վկաները «ստեղծել» են մի նոր, ոչնչով չհիմնավորված և ոչ մի տեղ չկիրառվող թվականություն՝ հասարակ դարաշրջան և հասարակ դարաշրջանից առաջ: Բնականաբար ենթադրում ենք, որ դրանք փոխարինում են մ.թ. և մ.թ.ա. ձևերին: Հավանաբար Եհովայի վկաների նպատակն է եղել «Փրկչական թվականություն» անվանումից Հիսուսի անունը «արտաքսել»:

այդ դեպքում Ռուտերֆորդի հաշվարկները չեն համապատասխանի իրենց ուզած՝ սպասված թվականներին (տե՛ս ստորև):

Վերջապես երրորդ հանգրվանը ժամանակները դասակարգելու բացառիկ օրինակ է: V-VII դարերում Հռոմեական կայսրության ամենակարևոր և շրջադարձային դեպքերի փոխարեն վերցվել է կամայական թվական՝ 539 թ., որը օստգոթական վերջին թագավորի մահվան թվականն է: Ավելի հիշարժան ու կարևոր է, անշուշտ, 486 թվականը՝ Հռոմեական կայսրության կործանման թվականը: Բայց, հակա-կաթոլիկական ոգին թելադրում էր Ռուտերֆորդին ամեն ինչ կապել Հռոմի պապերի հետ, և այդ թվականը՝ 539 թ. հաշվարկվեց որպես մի թվական, որից սկսած պապերը ստացան անսահմանափակ իշխանություն:

Այսպիսի ներածականից հետո Ռուտերֆորդը անցնում է թվաբանական հաշվարկների, իր նախորդի՝ Ռասելի նման և նրա սկզբունքներով (9, էջ 233), որն էլ իր հերթին ընդօրինակել էր ադվենտիստական «թվաբանությունից» (տե՛ս հաջորդ գլուխը):

Նախ ընդունվում է, որ մեկ օրը դա անպայման մեկ տարին է, կամ ինչպես ասում են՝ մեկ մարգարեական տարին: Բայց թե ինչ տարվա մասին է խոսքը, անհասկանալի է: Եթե հրեական տոմարական տարին է, ապա հայտնի է, որ այն չունի հաստատուն երկարություն, փոփոխական է: Այդ տարին 19 տարվա պարբերության մեջ ունի 353, 354, 355 օր (հասարակ տարվա համար) և 383, 384, 385 օր՝ նահանջ տարվա համար: Այնպես որ, ենթադրել, թե Դանիել մարգարեն իր ժամանակ օգտագործել է տարվա եգիպտական կամ հռոմեական երկարությունը՝ ճիշտ չէ:

Հետևաբար այն ենթադրությունը, որ Դանիելի «ժամանակը» «երեսուն օրերից բաղկացած տասներկու ամիսներ կամ 360 օր է նշանակում» (9, էջ 233) Դանիելի և նրա ժամանակակիցների մոտ զարմանք կառաջացներ:

Երկրորդ քայլը արդեն հասկանալի է, թե ինչը պետք է լինի. երեք ժամանակը և կես ժամանակը կկազմի 3x360+180=1260 օր, որը հավասարեցվում է 1260 տարվա, այսինքն՝ 3,5 տարին կազմում է 1260 տարվա ժամանակահատված:

Երրորդը արդեն վճռական քայլն է. եթե մ.թ. 539 թվականից սկսենք հաշվել 1260 տարի, ապա կստանանք՝ 539+1260=1799 թ., որը Նապոլեոնի եգիպտական արշավանքի թվականն է կամ «վերջին ժամանակվա» սկիզբը:

Այսպիսով, 360 օր երկարություն ունեցող միավորը, որը տարի է ընդունվում, հավասարեցվում է 365 օր երկարություն ունեցող մեկ ուրիշ՝ արեգակնային տարվա միավորին և սկսում են այդ միավորով հաշվարկել ժամանակի ընթացքը, որն, իհարկե, անիմաստ արդյունքի կբերի:

Հետևաբար, այս մեթոդը, որը հեղեղեց XIX դարի ամերիկյան մայրցամաքը, ամենաանիմաստ և անհեթեթ մեթոդն է մարգարեական կանխատեսումների իրականացման ժամանակները ճշտելու բազմադարյան պատմության մեջ:

Պատմության և ընդհանրապես ժամանակագրության հարցերով զբաղվողները լավ գիտեն, թե տոմարական ինչպիսի խճճված լաբիրինթոս է ներկայացնում մեզ մի ընդհանուր տոմարի բացակայությունը, և որ ինչքան սխալներ են սողոսկում ժամանակագրություն կազմելիս, տարբեր ազգերի տոմարները իրար հետ համադրելիս: Եվ միայն

վերջերս են առաջարկվել բացարձակ տոմարական դարաշրջաններ, որպեսզի, գոնե մեկ օրվա ճշգրտությամբ որոշվի այս կամ այն պատմական դեպքի ճշգրիտ ժամանակը: - Բայց դա միշտ չէ, որ հաջողվում է. եթե չկան կողմնակի տիեզերական երևույթների արձանագրություններ (խավարումներ, գիսաստղերի երևալ և այլն), ապա դժվար է ճշտությունն ապահովել: Մասնագետ տոմարագետները լավ գիտեն, որ տոմարական բացարձակ դարաշրջաններ օգտագործելիս պետք է հրաժարվել տարվա գաղափարից, և ընդունել որպես միավոր՝ օրը, և, մի որևէ սկզբնակետից սկսել հաշվարկը:

Բայց, Ռասելյան-Ռուտերֆորդյան սկսնակ-սիրողական տոմարական գաղափարներով հաշվել ժամանակագրական, պատմական դեպքերի, ինչպես նաև ապագայում կանխատեսվող իրադարձությունների ճշգրիտ տոմարական տվյալները, ուղղակի անընդունելի է:

Եհովական առաջնորդները Դանիել 12.12 համարի խոսքերի հիման վրա մեկ այլ մարգարեական ժամանակահատված էլ են հայտնաբերում՝ 1335 օրեր («Երանի նրան, ով կհամբերի ու կհասնի հազար երեք հարյուր երեսունհինգ օրվան») և գումարելով ստանում.

մ.թ. 539 թ. + 1335 = մ.թ.1874 թ.

«ուր, ըստ Ս. Գրոց ժամանակագրական հաշվի, տեղի էր ունենալու Տիրոջ երկրորդ ներկայությունը»:

Այսպիսով, ստացվում է, որ 1799-1784 թվականներին տեղի է ունեցել նախապատրաստական աշխատանքներ, և, սկսած 1874 թվականից, սկսվելու է հունձ (9, էջ 238), «ուր Ինքը, Հիսուս ներկա պիտի լինի»: Այսինքն, 1874 թվականը Հիսուսի երկրորդ ներկայության շրջանն է սկսվում:

Այս «հունձ» հիմնավորելու համար Եհովայի վկաները բերում են զանազան փաստարկներ, գիտական հայտնագործությունների մի երկար շարան ներկայացնում, որ իբր տեղի է ունեցել 1799-1874 թվականների ընթացքում և բնորոշ է հենց այդ ժամանակահատվածին: Այդ անշուշտ, հարմարեցնելու նման մի բան է: Կարելի է բերել շատ ավելի կարճ ժամանակահատված, օրինակ՝ XX դարի առաջին տասնամյակը, որի ընթացքում ավելի շատ ու կարևոր հայտնագործություններ են արվել, քան ռուտերֆորդյան այդ 75 տարիների ընթացքում: Զավեշտալին այն է, որ ռասելականները, որոնք շատ հեռու էին կանգնած բնագիտությունից, բնագիտության պատմությունից, քաղաքակրթության զարգացման ընթացքը ներկայացնում են որպես ապացույց իրենց հաշվարկների ճշմարտության:

Ինչպես Հիսուս աշխարհում քարոզեց 3,5 տարի, այնպես էլ այդ՝ 1874 թվականից սկսած իր ներկայությունը տևելու է 3,5 տարի ու ավելացնելով այդ ժամանակահատվածը, ստացվում է՝ 1874+3,5 = 1878 թ.: Այդ թվականից սկսած, ըստ Եհովայի վկաների, Հիսուս իր «ներկայության շրջանում ավետարանական դարի հունձի համար պատրաստություն էր տեսնում» (9, էջ 240): «Իսկ քանի որ հրեական հունձը 40 տարվա շրջան էր, ապա գլխավոր հունձը պիտի լրանար 1918 թվականին՝ 1878+40=1918 թ.»:

Բայց, զգուշավոր Ռուտերֆորդը ավելի հեռուն է գնում իր անորոշությամբ: Նա, հավանաբար դատավոր լինելով, խուսանավելու տեղ է ապահովել և որոշ զգուշավորություն է ցուցաբերում, ասելով, որ հունձքի ավարտին պիտի հաջորդի նաև «հասկաքաղը»,

«երբ քրիստոնյաների մի մասը ներս պիտի ընդունվեն» և, պիտի ավարտվի հեթանոսների շրջանը[67]:

Այնուհետև Ռուտերֆորդը ներկայացնում է այդ հունձի շրջանը՝ իր նախորդի՝ Ռասելի գործունեության սկսելով, որը իր կազմակերպության՝ «Սուրբ Գրոց ուսումնասիրողների միության» հիմնադրումով (1884) մինչև իր մահը՝ 1916 թ., զբաղվել է հունձի հարցերով, իրենց՝ Ռուտերֆորդին և մյուս հետնորդներին թողնելով «հասկաքաղի» գործը:

Եվ, վերջապես, Ռուտերֆորդը բերում է մեկ այլ հաշվարկ ևս, որն հաստատում է վերը բերված հաշվարկների ճշտությունը:

Սկսելով մ.թ.ա. 606 թվականից, երբ Սեդեկիան գահընկեց արվեց, հաշվում են 2520 (=7 մարգարեական տարի՝ 7x360=2520) տարիներ և ստանում են.

մ.թ.ա. 606 թ. + 2520 տարի = մ.թ. 1914 թ.

երբ ավարտվելու է հեթանոսների շրջանը՝ որի հիմնադիրը համարվում է Նաբուգոդոնոսորը:

Այստեղ 2520 մարգարեական ժամանակահատվածը հաշվում են ըստ Դանիել 4.16-ում հիշված «յոթ ժամանակների»: Իսկ հեթանոսների ժամանակը ըստ Ղուկաս 21.24 համար «ազգերի ժամանակները» արտահայտությունն է, ու «ազգերը» Եհովայի վկաները սիրով չեն թարգմանում, թողնելով հունարենը՝ հեթանոս բառը, որը ազգ է թարգմանվում:

Այսպիսով, ստացվում է մի թվական, որի մասին մինչև այսօր, համարյա բոլոր հրատարակություններում նշում ու քարոզում են: Չեք գտնի մի թերթիկ, մի նյութ, անկախ բովանդակությունից, ուր չտեսնեք այդ 1914 թվականը: Ամենուր, շոուների նման, հեռուստատեսային գովազդների նման, ամեն տեղ, այդ 1914 թվականն է ներկա: Քանի որ - Հիսուսի Երկրորդ գալուստ հասկացողությունն արդեն գոյություն չունի Եհովայի վկաների վարդապետության մեջ, այդ թվականը, չնայած որ անձամբ Ռասելը հավատում էր, որ այն պիտի լինի աշխարհի վախճանի թվականը, գեղեցիկ ձևով ներկայացրեցին որպես Աստծու երկնային Կառավարության թագավոր և ֆելդմարշալ Հիսուսի գալուստը Երկնային Սրբարան և Թագավորության սկիզբ (27, էջ 141):

Սրբարանը մաքրելու համար ֆելդմարշալին պետք է 3,5 տարի, այսինքն այնքան, ինչքան նա քարոզեց երկրի վրա: Այդ տրամաբանությամբ ստանում ենք 1914+3,5 տարի = 1918 թ., երբ ավարտվելու է հունձը և սկսվել է հասկաքաղը:

Ամփոփենք. Եհովայի վկաների տարեգրությունը կամ հայտնաբերած հիշարժան թվականներն են.

1799, 1874, 1878, 1914, 1918, որոնց հետագայում կավելանան նաև մի քանի թվականներ ևս:

Ոչ մի մարգարեություն չկատարվեց, վախճանը վրա չհասավ, փոխարենը տրվեց բացատրություն, թե ինչպես հասկանալ այդ ամենը: Տեղափոխությունները Երկնքում, սատանայի անկումը երկիր և Հիսուսի՝ ֆելդմարշալի հրամանատարությունը ստանձ-

---

[67] * Ղուկ. 21.24:

նելը, հեթանոսների ժամանակի ավարտը 1914 թվականին, այս է նրանց «մեծագույն» հայտնագործությունները:

Ի՞նչ է ստացվում: Ահա մի քանի հետևություններ.

- Հիսուսի Երկրորդ գալուստը իմաստազուրկ եղավ, այն պարզապես գոյություն չունի, որովհետև այդպիսի երևույթ չկա ու չի լինելու: Հիսուս հոգևոր մարմնով իջել է Երկնային սրբարան, և, աշխարհ գալու կարք չունի: Երբ հավաքագրվեն 144000 երկնային զորահրամանատարները, սկսվելու է Արմագեդոնը՝ պատերազմը չարի դեմ:

- «Քրիստոս, որ իր մարմինը զոհեց, այլևս երբեք չի կարող ետ վերցնել այն ու մարդ դառնալ» (27, էջ 142): Ուրեմն, նա որպես հոգևոր մարմին կարող է վերադառնալ և 1914 թվականին այդպես էլ եղավ: Նա իջավ երկինք և այնտեղից սկսել է ղեկավարել Կառավարությունը, այսինքն, հավաքում է իր հավատարիմ հոտը՝ 144000 օծյալներին:

- Եվ ինչպես Մատթ. 21.12-13 համարներում Հիսուս տաճար մտավ՝ մաքրելու այն, այդպես էլ 1914 թվականին Հիսուս Երկնային տաճարը մտավ՝ այն սրբելու համար: 3,5 տարվա այդ գործունեությունը ավարտվեց 1918 թվականին, որին հաջորդեց Առաջին հարությունը, ինչպես գրված է Հայտն. 20.6 համարում:

- Այդ երանելի ժողովուրդը հենց օծյալ խավն է, փոքր հոտը, ընտրյալները, որոնք հարություն են առնելու և միանալու են իրենց գլխավոր հրամանատարին՝ ֆելդմարշալ Հիսուսին: Այս հարությունը, ուրեմն, ֆիզիկական չէ, այլ հոգևոր հարություն է, որին արժանանալու իրավունքը միայն 144000 հոգու համար է վերապահված: Եհովայի վկաները հավատում են, որ երբ ընտրվի այդ խավի վերջին մարդը, այսինքն՝ 144000-երորդը, Եհովայի այդ վերջին օծյալ վկայի մեռնելուց ու միանգամից հոգիով հարություն առնելուց հետո Հիսուս, իր զորքով կիջնի երկիր՝ պատերազմելու աշխարհի և, մանավանդ, քրիստոնեական եկեղեցու դեմ: Նա ջախջախելու է բոլորին. աշխարհի բոլոր կառույցներն ու կազմակերպությունները, եկեղեցիներն ու պետությունները և սկսվելու է Հազարամյան կամ Հազարամյա թագավորությունը: Այս է Արմագեդոնը (Հայտն. 16.16):

- «Ներկայիս ապրող մարդկությունից միլիոնավորներ ամեննին պիտի չմեռնեն» (9, էջ 334). սա է Եհովայի վկաների կարգախոսը, մարգարեությունը, որի կատարման հնարավորությունը գնալով նվազում է, դառնում քիչ հավանական, քանի որ այդ ծերունիները մի քանի տարի անց կմեռնեն, և, Կառավարությունը կմնա առանց Ղեկավար Մարմնի, կամ էլ մեջտեղ կբերեն մեկ այլ՝ հերթական բացատրությունը, թե ինչու այդ միլիոնավորները մահ ճաշակեցին, բայց Արմագեդոնը չտեսան: Անգամ ավելի ուշ հրատարակություններում անանուն աստվածաբանը նույն բանն է քարոզում առանց փոփոխության. «1914 թվականին ապրողներից ոմանք կտեսնեն այս ամենի վախճանը և կվերապրեն այն» (27, էջ 154, 1989 թ. հրատարակություն):

Այսպիսով, եթե մի քանի տարի հետո, երբ մահանան այն Եհովայի վկաները, որոնք ծնվել են մինչև 1914 թվականը (Ռուտերֆորդի մարգարեությունը հենց նրանց է վերաբերում), այսինքն նրանք, ովքեր այսօր 85 տարեկան և ավել են, բայց Արմագեդոնը այդպես էլ տեղի չունենա, Եհովայի վկաների ողջ մարգարեական համակարգը կարելի է նրանց վարդապետության հետ միասին պատմության գիրկը նետել, որպես, կրոնական մոլե-

ռանդ՝ կարճատև կյանք ունեցող շարժումներից մեկը և այլևս չանդրադառնալ նրանց աստվածաբանությանը:

Բայց չշտապենք, ցանկացած իրադրության մեջ նրանք կարողանում են իրենց կենսունակությունը պահպանել:

Ուրեմն, սպասենք հերթական կեղծ-մարգարեության, որը մեկ սերունդ ևս պիտի հետաձգի ռասելական մարգարեությունների կատարումը:

Լավագույնը, հավանաբար կլինի «ոսկե միջինը», կամ մի մարգարեական որոշում «կկայացվի», կամ մի լույսի շող կստանան Երկնային սրբարանից, որով կպահպանեն ռասելա-ռուտերֆորդյան մարգարեական համակարգը՝ նրանց տալով մի նոր մեկնություն, մի նոր հաշվարկման համակարգ: Հավանաբար նման տարբերակներ այսօր արդեն մշակվում են Բրուկլինում:

Ռուտերֆորդը այնքան վստահ էր իր մարգարեական շնորհի վրա, որ առանց վարանելու 1921 թվականին գրեց, որ շուտով տեսնելու են նաև Աբրահամին, Իսահակին, Հակոբին (Եբր. 11-րդ գլխում հիշատակված հավատարիմները): Նրանք պիտի վերադառնան որպես իշխաններ և կառավարիչներ երկրի վրա (9, էջ 341-342): Այս առումով էլ նրանց ժողովարանները կոչվեցին իշխանական սրահներ (kingdom hall) և այդպիսի մի սրահ էլ Ռուտերֆորդը պատրաստեց հենց այդ նահապետների համար:

Այսպիսով ստացվում է, որ 1914 թվականից հետո, Աստծու թագավորությունը երկու մակարդակներով է հանդես գալիս. երկնային մակարդակ՝ որ անտեսանելի է և երկրային մակարդակը, ուր Տիրոջը ներկայացնող հին հավատարիմ մարգարեներն են երևան գալու (9, էջ 342):

Այս վերջին մարգարեությունը Եհովայի աստվածաբանները հիմնավորում են Զաքարիա 14.4-5 համարներով, ուր ասվում է, որ

«Պիտի փախչեք՝ ինչպես երկրաշարժից փախաք, Հուդայի թագավոր Ոզիայի օրերում: Իմ Տեր Աստվածս պիտի գա, բոլոր սուրբերը քեզ հետ պիտի լինեն»:

Քրիստոսի Երկրորդ Գալստյան մասին այս բացահայտ մարգարեական համարը այն մասին է, որ Նա՝ Քրիստոս, գալու է ոչ թե աներևույթ, ինչպես ընդունում են Եհովայի վկաները, այլ բացահայտ՝ մարմնով: Եվ հենց այս համարից է հետևում, այն, որ եթե ընդունենք թե Հիսուս եկել է, ապա պարզ է, որ վաղ թե ուշ պիտի գան նաև հին մարգարեները: Այսինքն ոչ թե համարն է սխալ մեկնաբանվում, այլ մեկնակետն է սխալ ընտրվում, իսկ այդ դեպքում կարելի ամեն անհեթեթ գաղափարի հանգել:

Այսպիսով, Ռուտերֆորդը հաշվարկեց, որ 1925 թվականին (1918 թվականին ավելացված մի յոթնյակ) երեք հավատարիմ մարգարեները՝ Աբրահամը, Իսահակը և Հակոբը պիտի վերադառնան աշխարհ և նրանց համար պատրաստեց Բեթ-Սարիմ դղյակը - Կալիֆորնիայի հարավում (եբրայերեն՝ իշխանական սրահ, ինչպես և անվանում են իրենց ժողովարանները):

1914 թվականից սկսած, ամեն յոթ տարին մեկ՝ Եհովայի վկաները մի նոր լույսի շող էին ստանում, ուր նրանց Ղեկավար Մարմինը ցուցումներ էր տալիս, թե Սուրբ Գրքի այս կամ այն համարը ինչպես հասկանալ կամ մեկնաբանել:

Հատկանշական է, որ Ս. Գիրքը, փաստորեն, հասկանում է միայն Ղեկավար Մարմինը՝ Կառավարությունը, որը «լույսի շողեր» ստանալուց հետո այդ «լույսը» Դիտարանի միջոցով սփռում է աշխարհին: Նրանք հավատում են, որ Եհովան է այդ լույսը տալիս և - գաղտնիքները բացում: Օրինակ, 1936 թվականին, Վաշինգտոնյան ժողովում մի լույս երևաց և նրանք հասկացան, որ հավաքագրումը ավարտվել է, 144000 օծյալները արդեն ընտրվել են, «փոքր հոտը» կազմվել է: Այժմ «Մեծ բազմության» հավաքագրելու ժամանակն է սկսվում (21, էջ 151): Եվ այդ նույն սցենարով մնացած բոլոր հարցերում: Ստացվում է, որ 144000 օծյալները չեն ուզում զիջել իրենց աթոռները, իսկ նորերին էլ՝ «մեծ բազմությունն» են շնորհել:

Այսպիսով, միակ Կազմակերպությունը, որ հիմնված է Աստվածաշնչի վրա, դա Եհովայի ծառաներն են, որոնք ունեն 144000 ընտրյալ թագավորներ, և 1914 թվականից սկսած ղեկավարում են աշխարհը և պատրաստվում հարձակման՝ Արմագեդոնի պատերազմի ժամանակ:

Մինչ 1935 թ. մկրտված Եհովայի վկաները՝ որոնց տարիքը 70-ից անց է, 12000 է (3, էջ 109), իսկ սա նշանակում է, որ Արմագեդոնին ժամանակ չի մնացել, քանի որ նրանց թիվը ամեն տարի պիտի պակասի:

## 5.11. ԱՐՄԱԳԵԴՈՆ, ՀԱԶԱՐԱՄՅԱ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԵՏԱԳԱ ԴԵՊՔԵՐԸ

Եվ այսպես, համաձայն Եհովայի վկաների, «Քրիստոսի մարմինը», «փոքր հոտը», «Օծյալները», «վերստին ծնվածները», «Աստծու Իսրայելը» կամ «նոր Երուսաղեմը» նոր երկնքում բնակություն հաստատելով կամ գրանցվելով՝ Հիսուս Քրիստոս Ֆելդմարշալի հետ պիտի պատերազմ սկսեն և բնաջնջեն չարը՝ սատանային իր արբանյակների հետ միասին կապեն ու երկիրը վերածեն դրախտի՝ նոր երկրի, ուր պիտի ապրի Մեծ բազմությունը և նրանք, որ հավատարիմ են մնացել Եհովային կամ Բրուկլինյան կազմակերպությանը:

Արմագեդոնի ժամանակ, ի տարբերություն մյուս պատերազմների, երբ սպանվում են թե՛ բարի, թե՛ չար մարդիկ, պիտի ոչնչացվեն միայն չար մարդիկ, որոնք չեն ընդունել Եհովայի օրենքը (27, էջ 155):

Այսինքն, Արմագեդոնից հետո աշխարհը կմաքրվի չարությունից և աշխարհում կմնան միայն նրանք, ովքեր ծառայում են Եհովային:

Ի՞նչ պիտի լինի աշխարհում այդ ժամանակ. խաղաղություն, առանց պատերազմ կյանք, ոճիրն ու հանցագործությունները վերացած, բնակարանային հարմարավետ պայմաններ, աշխատանքի պայմաններ բոլորի համար, սննդի առատություն, այլ խոսքով՝ դրախտ (27, էջ 156-158), կամ նոր երկիր: Հատկանշական է, որ համաձայն Եհովայի վկաների այդ ամենը լինելու է այս աշխարհում՝ երկիր մոլորակի վրա:

Այս պարզունակ ուտոպիզմը, որ քարոզում են Եհովայի վկաները, շատ բաներով մեզ հիշեցնում են ուտոպիստ սոցիալիստ Կամպանելայի ու Մորի[68] քարոզներին, այն տար-

[68] * XV-XVI դդ. ուտոպիստ սոցիալիստներ, որոնք իրենց երկերում «իդեալական» հասարակարգեր են նկարագրել:

բերությամբ, որ ուտոպիստների Կառավարությունը երկրի վրա էր ապրելու՝ իր քաղաքացիների հետ:

«Արմագեդոնը» վերապրածները պիտի վերականգնեն ավերակ դարձած երկիրը, զբաղվեն գյուղատնտեսությամբ՝ ենթարկվելով Կառավարության որոշումներին (27, էջ 159), Աստված պիտի օրհնի երկիրը, պաշտպանի մարդկանց հիվանդություններից, համաշխարհային ավերածություններից և այլն:

Այս ժամանակ է, որ գիշատիչները դառնալու են «բարի» և կենդանական աշխարհում էլ է հաստատվելու այդ թագավորությունը:

Եհովայի վկաները սիրում են այդ ամենը ներկայացնել պատկերավոր՝ զանազան նկարներով, որոնցով լցնում են իրենց հրատարակությունների դատարկ էջերը, և, որպես կանոն, պատկերում են այնտեղ ժպտացող մարդկանց «սառը» դեմքեր՝ ընդգրկելով անպայման բոլոր ցեղերից մեկական ներկայացուցիչ, որոնք ի մի հավաքված, շրջապատված առյուծներով (մեկ առյուծ պարտադիր կերպով կգտնեք ցանկացած նկարում) գիրք են կարդում, կամ Դիտարանի «հերթական» համարը: Այդ Հազարամյակում մարդիկ չեն ծերանալու, չեն հիվանդանալու, այլ ամեն «առավոտ վեր կենալով՝ էլ ավելի երիտասարդ են լինելու» (27, էջ 165):

Այս ժամանակներում տեղի է ունենալու նաև մեռածների հարություն. նրանք ովքեր մեռել են մինչ Արմագեդոնի սկսվելը, պիտի հարություն առնեն: Այսպես, երբ բազմաթիվ ժողովուրդներ «վերակառուցեն իրենց տները, բնականաբար պիտի մտածեն իրենց ընտանիքի մյուս՝ մեռած սիրելի անդամների մասին, պիտի ուզեն նրանց տեսնել և նրանց վերակենդանացման համար աղոթել Տիրոջը» (9, էջ 344):

Բայց դրանով չի վերջանալու հարության այս գործընթացը: Միլիարդավոր մարդիկ ապրել ու մեռել են առանց ճանաչելու ու լսելու Ռասելին և անտեղյակ են Բրուկլինյան - Կառավարության հրահանգներից: Ուրեմն, նրանք էլ պիտի հարություն առնեն և պիտի տրվի մի պատեհություն ևս, որպեսզի նրանք էլ լսեն Եհովայի վկաների քարոզությունները, սովորեն Եհովային հնազանդվել և ապացուցեն, որ իրենք սիրում են Աստծուն (27, էջ 171):

Այսինքն, մարդկությանը մի երկրորդ պատեհություն է տրվելու՝ փրկվելու համար, ու այդպիսով Եհովայի վկաների երկիրը կամ Նոր երկիրը վերածվելու է մի նոր Քավարանի: Բայց սա դեռ վերջը չէ: Բոլորը չէ, որ պիտի հարություն առնեն: Նրանք, ովքեր իրենց կյանքում, ծանոթ լինելով Աստծու կամքին, մերժել են Նրան, հարություն չեն առնելու, նրանց փրկություն չկա, նրանք գտնվում են մի տեղ, որը կոչվում է գեհեն: Բայց, որպեսզի այդ գեհենը չշփոթենք դժոխքի հետ և չընդունենք այն որպես մի վայր, ուր գնում են հոգիներ մեռնելուց հետո, այդ դժոխքը եհովական անանուն աստվածաբանները անվանում են «սիմվոլիկ գեհեն»: Այդ սիմվոլիկ գեհենը գնաց Հուդան և բոլոր «սուրբ հոգու դեմ հայհոյողները» (27, էջ 171): Հետևաբար, ըստ Եհովայի վկաների, հարություն են առնելու միայն հադեսից կամ շեոլից, ու ոչ թե՝ գեհենից (սիմվոլիկ):

Իսկ թե ո՞վ է որոշելու, թե մեռնելուց հետո մարդը, որը անհիհլացվելու է, գնալու է չգոյություն, շեո՞ղ է մտնելու, թե՝ սիմվոլիկ գեհեն, որպեսզի հետագայում «իմանա», թե որտեղից է հարություն առնելու: Պատասխանը միանշանակ է. Եհովան գիտի, իսկ մենք

պետք է ամեն ինչ անենք, որպեսզի այդ սիմվոլիկ գեհեն չընկնենք, այլ ընկնենք շեոլ-չգո-յություն:

Այստեղ կարևոր է չշփոթել ռասելական հարությունը՝ վերամարմնավորումը (re-incarnation) քրիստոնեական հարոIթյան հետ. դրանք տարբեր բաներ են:

Սամանակակից սոցիալ-տնտեսական, նաև էկոլոգիական հարցերը չեն անտեսվե-լու. Կառավարությունը պիտի ոչնչացնի մարդու բոլոր թշնամիներին. «վայրի խոտը, փուշն ու տատասկը, բերքը փչացնող որդերը, բոլորն էլ պիտի ոչնչացվեն: Ամեն ինչ, որ հիվանդություն է առաջ բերում, պիտի ոչնչացվի: Այո՛, բոլոր անապատները պիտի ո-ռոգվեն և վարդի պես ծաղկեն, որպեսզի մարդու կարիքները առատորեն հայթայթվեն» (9, էջ 350):

Այսպիսով, Եհովայի վկաները մարդկությունը իր ներկայով և անցյալով, բաժանում են հետևյալ շերտերի կամ խավերի.

1. Գերագույն խավը կամ 144000 օծյալները, որոնք մեռնելուց հետո անմիջապես հոգ-նոր մարմին են ստանալու և գնալու են երկինք: Դրանք կազմելու են Նոր երկնքի քաղա-քացիները և նման են լինելու Հիսուս Քրիստոսին ամեն ինչում:

Նրանք ծնվել են մինչև 1935 թվականը և երբ նրանցից ամենավերջինը մեռնի և եր-կինք գնա, կսկսվի Արմագեդոնը: Սա կոչվում է Առաջին հարություն:

2. Նոր երկրի քաղաքացիները կամ նրանք, ովքեր մահ չեն ճաշակելու և Արմագեդո-նը վերապրելուց հետո ապրելու են երկրի վրա՝ օրեցօր ավելի երիտասարդանալով: Ս-րանք Եհովայի վկաներն են կամ «մեծ բազմությունը», «ուրիշ ոչխարները»:

3. Նոր երկրի գրանցում կարող են ստանալ նաև մեռյալների մի որոշ մասը, որոնք չեն լսել Եհովայի վկաների քարոզները: Նրանք ևս պիտի հարություն առնեն, սա Երկ-րորդ հարությունն է. եթե նրանք հնազանդ գտնվեն 144000 օծյալներին և Արմագեդոնը վերապրած Եհովայի վկաներին, նրանք այլևս չեն մեռնի: Սա կյանքի հարությունն է: Իսկ նրանք, ովքեր չեն հնազանդվի այդ Կառավարությանը նույն պահին կոչնչացվեն, ա-ռանց սպասելու Հազարամյակի վերջին:

Մեռյալների մնացած մասը՝ որ սիմվոլիկ գեհենում են գտնվում, չեն վերակենդանա-նալու:

### 5.12. ԱՐՄԱԳԵԴՈՆԻՑ ՀԵՏՈ

Եհովայի վկաների վարդապետության համաձայն, մարդ մեռնելով ազատվում է մեղքից և մեղքի հետևանքներից: 144000 թագավորները, Հազարամյակի ժամանակ դառ-նում են դատավորներ և սկսում են Դատաստանը: Դատաստանի օր ասելով Եհովայի վկաները հասկանում են ոչ թե օրացուցային օր՝ 24 ժամ տևողությամբ, այլ՝ ժամանա-կաշրջան, որը սկսվել է 1914 թվականին և ավարտվելու է Հազարամյակի վախճանին: -Հարություն առածներին նոր, օծյալ և արդար դատավորները դատելու են ոչ թե նախկին

կյանքում գործած մեղքերի համար, այլ Հազարամյակի ընթացքում իր ապրած կյանքի, արած գործերի համար:

Ադամական մեղքի վարձը արդեն հատուցվել է, և մարդը մեռնելով, այսինքն, գնալով չգոյություն, ազատվել է այդ մեղքից, հետևաբար Հազարմյակի ընթացքում նա նոր կյանք պիտի ապրի և այդ ապրած օրերի համար պիտի դատապարտվի, եթե, իհարկե, լսելով Եհովայի վկաների քարոզությունները չի հնազանդվել Կառավարությանը:

Իսկ Հազարամյակի վերջում՝ ավարտին, բոլորը պիտի փորձվեն նորից, որպեսզի ստուգվեն, թե արդյո՞ք հավատարիմ կզտնվեն Եհովային, երբ փորձությունը գա:

Ուրեմն, սատանան իր արբանյակներով հանդերձ, դարձյալ ազատ է արձակվելու, որպեսզի նորից փորձի Հազարամյակում ապրող մարդկանց: Եհովային կամ 144000 հազար թագավոր-դատավորներին հետաքրքրում է, թե արդյոք նրանց ենթակաները պիտի դիմանա՞ն այդ փորձություններին, Եհովային հավատարիմ կզտնվե՞ն: Փորձությունն ավարտվելուց հետո սատանան՝ իր արբանյակներով նետվելու է «ծծմբե լիճը», որն էլ երկրորդ մահն է: Բոլոր նրանք, ովքեր չեն դիմացել՝ միանալու են սատանային և այդ «սիմվոլիկ կրակե լիճն» են նետվելու, իսկ մնացածները նույն Նոր երկրում շարունակելու են հավիտյան ապրել (27, էջ 182-183):

### 5.13. ՄԵԾ ԲԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԵՀՈՎԱՅԻ ՎԿԱՆԵՐԻ «ՆՈՐԱԳՈՒՅՆ ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»

Եհովայի վկաների մեկնողական արվեստը ինքնատիպ, միայն իրենց բնորոշ տրամաբանական հենքի վրա է խարսխված: Ծանոթ չլինելով արդեն դասական համարված որոշ հատվածների մեկնություններին, ռասելական մեկնողական արվեստը ինչպես որ հարմար է գտնում, այնպես էլ անում է: Մակերեսային ընկալումները, մանավանդ նորկտակարանային համարների միայն տառը՝ արտաքին երեսը հասկանալով՝ նրանց անանուն աստվածաբանները փորձում են ներկայացնել Ս. Գիրքը:

Այսպես, քննելով Հայտն. 7.9-17 համարները, Եհովայի վկաները բացահայտում են, որ «երկար ժամանակ այս «մեծ բազմության» ինքնությունը հասկացված չէր, մինչև 1923-ին հասկացվեց Մատթ. 23.31-41-ի «ոչխարների» և Հովհ. 10.16-ի մեջ հիշված «ուրիշ ոչխարների» ինքնությունը և պարզվեց, որ դրանք վերաբերում են հիմա ապրողներին, «որոնք երկրի վրա հավիտյան ապրելու պատեհություն կարող էին ունենալ» (31, էջ 103-104):

Իսկ 1931 թվականին էլ Եհովայի վկաները հասկացան, որ Եզեկիելի 9.1-11 համարներում կնիք ընդունողները այդ ոչխարներն են, իսկ Հայտ. 7.9-17-ի «մեծ բազմությունը»՝ Հիսուսի այծերի և ոչխարների առակում հիշված ոչխարներն են:

Այսպիսով, յոթը տարի պահանջվեց, որպեսզի Եհովայի վկաների աստվածաբանները հայտնաբերեին ոչխարների մասին այդ «մեծ գյուտը»: Բայց «մեծ բազմության» անդամները 144000-ից տարբեր են, նրանք, ըստ Հայտնության գրքի, «Աթոռի առաջն» էին, այսինքն՝ երկնքում: Եվ միայն այս փաստը բավարար է ի չիք դարձնելու այդ «հայտնագործությունները»: Չնայած դրան Եհովայի վկաների աստվածաբանական միտքը հայտարարեց, որ «Մեծ բազմությունը» երկրի վրա ապրող Եհովայի վկաներն են: Բայց այդ

դեպքում մնում է անհասկանալի «Աթոռի առաջ» դարձվածքը, որն ամեն կերպ պիտի «վտարվեր» երկնքից: Եհովականները այդպես էլ արեցին:

Նրանք պնդեցին, որ «Աթոռի առաջ» արտահայտությունը ամենևին չի նշանակում, որ նրանք երկնքում են. «բոլոր ազգերը երկնքի մեջ լինելու պետք չունեն Քրիստոսի գահի առաջ լինելու համար» (31, էջ 104):

Այսինքն, Եհովայի վկաների աստվածաբանությունը ամեն կերպ և ամեն գնով պաշտպանում է Երկնքի թագավորությունը, որպեսզի հանկարծ որևէ օտար չմտնի այնտեղ. այն վերապահված է միայն 144000 օծյալների համար:

Իսկ այլ բան հուշող սուրբգրային համարները ուղղակի այլաբանորեն են գրված, և «պետք չունեն» Գահի առաջ գտնվելու:

Կարելի է ասել, որ Հիսուս Քրիստոս, ըստ այդ աստվածաբանական դիրքորոշման, իր ներկայությամբ սկսեց մաքրել երկնային Սրբարանը, բոլորին դուրս քշելով այնտեղից՝ ներս թողնելով միայն 144000 օծյալներին, ընտրյալներին: Հասարակ մարդկանց տեղը երկիրն է:

Այս է 1914 թվականի խորհուրդը:

Ամփոփենք. «լույսի այդ շողերը» Եհովայի վկաները ստացել են այն ժամանակ, երբ արդեն սահմանազատվել էին երկիրը, երկինքը, նոր երկիրը, նոր երկինքը, ուստի 1923-1935 թվականներին դատավոր Ռուտերֆորդը նորություն չէր ստացել, այլ տեսել էր այն, ինչ ուզում էր տեսնել: Այս հետադարձման սկզբունքը սուրբգրային համարները հարմարեցնելու, շահարկելու սկզբունքն է, իսկ տրամաբանական քայլեր՝ այդ ապացուցելու համար, միշտ էլ կարելի է կառուցել:

«Աթոռի առաջ» արտահայտությունը՝ նույն Հայտնության գրքում, չունի այնպիսի բացատրություն, որ հնարավոր լինի մեծ բազմության և Աթոռի միջև «մեծ հեռավորություն» տեսնել (Հայտն. 4.5-6): Իսկ եթե ուզում ենք ֆիզիկական տարածություն տեսնել այդ արտահայտությունների միջև, որպեսզի Սրբարանը սուրբ մնա, բավական է այդ ամենը հայտարարել «սիմվոլիկ» նշանակություն ունեցող:

Բայց Հայտն. 4.4-ում, ուր ասվում է, որ «Աթոռի առջև յոթ բորբոքված կրակե լամպեր կային», անհնար է Աթոռի և լամպերի միջև թե՛ տարածություն տեսնել, թե՛ ժամանակահատվածի գոյություն:

Մինչդեռ, բերված համարները ահա արդեն 2000 տարի է խոսում են ներդաշնակորեն, առանց որևէ «սիմվոլիկ լույսի շողերի». «ոչխարները» կամ «Մեծ բազմությունը» դա Եկեղեցին է:

Չի կարելի փրկված եկեղեցին, հաղթանակած եկեղեցին բաժանել երկու մասի, մեկը՝ հոգևոր դասը, դարձնել հրեշտականման ու երկինք տանել, իսկ մյուսը՝ մնացորդը, թողնել երկրի վրա:

## 5.14. ԴԱՐՁՅԱԼ ԵՀՈՎԱՅԻ ՎԿԱՆԵՐԻ ՎԱԽՃԱՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ելնելով Հովհ. 16.19 համարից, Եհովայի վկաները պնդում են, թե երբ Հիսուս ասաց, որ «այլևս ինձ չեք տեսնի», ուզում էր ասել, որ Իր հարությունը հոգևոր մարմնով եղավ և

ոչ թե՝ ֆիզիկական (27, էջ 142): Ուրեմն, եզրակացնում են Եհովայի վկաները, Հիսուս նույն ձևով էլ պիտի գա, ներկա լինի հոգևոր մարմնով, նա այլևս չի կարող վերադառնալ տեսանելի ձևով:

Իսկ ի՞նչ եղավ այդ դեպքում Հիսուսի մարմինը:

Եհովայի վկաներ դավանում են, որ ինչպես Մովսեսի մարմինը անհետացավ և ոչ ոք չտեսավ այն, այդպես էլ անհետացավ Հիսուսի մարմինը (հմմտ. Բ Օր. 34.5): Այսպիսով, - Հիսուսի մարմինը կար ու չկա՝ վերացավ, իսկ այն, ինչ տեսան աշակերտները և այն ինչ շոշափեց Թովմասը, Հիսուսի մարմինը չէր, այլ մասնավոր այդ բանի համար «Հիսուս նյութականացվել էր» (27, էջ 144), ինչպես Հին Կտակարանի ժամանակներում, երբ Աբրահամին հայտնվում էին հրեշտակները:

Այս դավանանքը Եհովայի վկաների վարդապետության ամենախոցելի ու թույլ տեղերից մեկն է: Նախ, նույն Հովհ. 14.19 համարում Հիսուս ասում է, որ ոչ միայն իրեն չպիտի տեսնեն, այլ՝ քիչ հետո դարձյալ կտեսնեն, ինչպես և եղավ Հովհ. 20.19 և այլ տեղերում՝ Հիսուսի հարությունից հետո:

Երկրորդ՝ հարություն ասելով Ս. Գիրքը երբեք չի տալիս հոգևոր հարության գաղափարը, այլ՝ մեռելներից մարմնով հարության մասին է ասում, որի համար կարելի է բերել բազմաթիվ վկայություններ: Անգամ հրեաները հավատում էին մարմնապես հարություն առնելուն, երբ ուզում էին իմանալ, թե ո՞վ է Հովհաննես Մկրտիչը (Հովհ. 1.19-23):

Եվ ինչպես Հիսուս համբարձվեց, այնպես էլ պիտի վերդառնա, այսինքն, վերադարձն էլ է լինելու տեսանելի և ոչ թե՝ անտեսանելի:

Եհովայի վկաները իրենց հարության գաղափարը հաստատելու համար դարձյալ սկսում են իրենց մեթոդաբանությամբ մեկնել ու համոզել, որ գալուստը դա ներկայությունն է նշանակում. Մատթ. 24.26-28 հատվածում օգտագործվող հունարեն բառը parousia-ն է, որը թարգմանվում է ներկայություն բառով:

Նախ parousia բառը միայն ներկայություն չի թարգմանվում, այն ունի նաև «գալուստ»-ի իմաստը և կիրառության տեսակետից հենց ա՛յդ իմաստն է արտահայտում (Lampe, էջ 1043): Այսպես, Փիլիպ. 1.26-ում Պողոսը գրում է.

«Որպեսզի ինձնով ձեր պարծանքը առավել լինի Քրիստոս Հիսուսով, երբ ես վերստին գամ (=parousia) ձեզ մոտ», ուր դարձյալ օգտագործված է parousia հունարեն բառը, և այն անհնար է այս հատվածում թարգմանել ներկայության կամ անտեսանելի ներկայության իմաստով:

Նույնն է պարագան նաև Փիլիպ. 2.12 համարում.

«Ուրեմն, իմ սիրելիներ, ինչպես միշտ հնազանդվել եք, երբ եկել եմ (=parousia) ձեզ մոտ, այնպես էլ հնազանդ եղեք առավել ևս այժմ, երբ հեռու եմ ձեզանից», ուր parousia-ն անտեսանելի ներկայության իմաստով անհնար է մեկնել:

Քրիստոսի գալուստը որպես «երջանիկ հույս», Պողոս առաքյալը գրում է Տիտոս 2.13-ում, օգտագործելով epiphania բառը (4, էջ 153), որը նշանակում է միայն տեսանելի հայտնություն, տեսանելի ցուցադրություն, և ոչ մի կերպ չի կարելի այն ըմբռնել որպես անտեսանելի, կամ ինչպես ասում են Եհովայի վկաները՝ ճանաչողական իմաստով:

Հին Կտակարանում երբեք մեսիայի գալը չեն պատկերացրել անտեսանելի ներկայության իմաստով: Ընդհակառակը, Զաքարիան (12.10) բացահայտ է վկայում, որ Գալուստը տեսանելի է լինելու: Իսկ 14.4-ում մարգարեն ուղղակի ասում է, որ «այդ օրը նրա ոտքերը Ձիթենյաց լեռան վրա պիտի կանգնեն» և ինչպես էլ մեկնաբանվեն այդ տողերը, անհնար է պատկերացնել անտեսանելի կերպով ներկայություն Ձիթենյաց լեռան վրա այնպես, որ «ոտքերը կանգնեն լեռան վրա»:

Ռասելականությունը և նրա հետևորդների քարոզությունները ի չիք կդառնան եթե հաջողվի նրա հետևորդներին համոզել, որ Քրիստոսի հարությունը եղել է նյութական, ֆիզիկական մարմնով: Ուստի ոչ թե պետք է բանավիճել, այլ ցույց տալ այն համարները, որոնք անհնար է հասկանալ այլաբանորեն: Իսկ Դիտարանը հենց այդ էլ անում է. ամեն համար, որը չի փաստում Եհովայի վկաների աստվածաբանության ճշտությունը, ներկայացվում է որպես այլաբանություն: Օրինակ, Էմավուսի ճամփորդների դրվագը (Ղուկ. 24.39-44) և Հովհ. 2.19-22 համարները, ուր Հիսուս խոսում է տաճարի մասին:

Իսկ Հովհաննեսի ավետարանում Թովմասի պատմության դրվագը ուղղակի շրջանցվում է Եհովայի վկաների գրքույկներում և, անմիջապես, փոխելով համարը, այլ տեղերում են փնտրում այդ հատվածի մեկնությունը:

«Ոչ, իհարկե Հովհ. 20.24-27 համարները չեն ապացուցում Հիսուսի մարմին ունենալը հարությունից հետո, քանի որ Ս. Գիրքը պարզ ասում է, որ «Քրիստոս մեռավ մարմնով, բայց կենդանացավ հոգիով» (1 Պետրոս 3.18): Մարմին և արյունը չեն կարող ապրել երկնքում...» (27, էջ 144):

Ինչպես տեսնում ենք, ստացվում է, որ Հովհաննեսի այդ հատվածը կարծես Ս. Գրքին չի պատկանում, իսկ Պետրոսի ասածն էլ այդ նյութի հետ կապ չունի: Այդ համարների ավելի լուրջ, անաչառ քննությունը ամեն բան պարզ բացատրում է, միայն թե իրենց տեղերից չհանվեն այդ հատվածները: Այսպես, Պետրոսի ասածից ամենևին չի հետևում, որ Քրիստոս հարություն առավ ոչ նյութական մարմնով, այլ այն, որ հարություն առավ Հոգիով, այն հոգիով, որը, ասում է Պողոս առաքյալը՝ «Քրիստոսին մեռելներից հարություն տվեց, և պիտի կենդանացնի ձեր մահկանացու մարմիններն էլ իր Հոգիով, որ ձեր մեջ է բնակվում» (Հռոմ. 8.11):

Իսկ Պողոսի այն խոսքերը, թե՝ «մարմին և արյուն Աստծու թագավորությունը չեն կարող ժառանգել», ցույց է տալիս, որ եկեղեցուց դուրս ոչ մեկը չի կարող երկինք մտնել, քանի որ այդտեղ «մարմին ու արյունը» ասածը նշանակում է աշխարհի սկզբունքներով ապրող մարդը (Ա Կորնթ. 15.50): Իսկ Պողոսի ասած «հոգևոր մարմինը» չի նշանակում հոգևոր աննյութական մարմին, այլ, հակառակը, փառավորյալ մարմին, անմահ մարմին, որն առանց նյութական աշխարհի օրենքները խախտելու կարող է անցնել տարածության միջով:

Իսկ թե ինչո՞ւ Նրան չճանաչեցին Էմավուսի ճամփորդները և Մարիամը, պարզ է դառնում Ղուկ. 24.16 համարից, ուր ավետարանիչը բացատրում է, թե՝ «նրանց աչքերը բռնված էին, որ չճանաչեն նրան»:

## 6. ԵՀՈՎԱՅԻ ՎԿԱՆԵՐԻ «ՆՈՐ ԱՇԽԱՐՀԻ» ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Բրուկլինի տաճարի երրորդ նախագահի ամենամեծ գործը եղավ այն, որ 1945-950 թվականներին հրատարակության պատրաստեց Ս. Գրքի «Նոր Աշխարհի» թարգմանությունը, որն չընդունվեց ոչ մի եկեղեցու և մանավանդ մասնագետների կողմից: Այն վավերական են համարում միայն իրենք՝ Եհովայի վկաները: Այդ է պատճառը, որ դեռ չկա ՆԱ-ի (Նոր Աշխարհի) թարգմանությունները այլ լեզուներով:

Ամեն թարգմանություն ունի իր սկզբունքները, նպատակը և ընթերցողը: Անշուշտ, Ս. Գրքի թարգմանությունը բարդ գործ է, մանավանդ որ ցարդ գոյություն ունեցող բոլոր թարգմանությունների համար որդեգրվել է այն հիմնարար սկզբունքը, ըստ որի պետք է աշխատել առավելագույնս հարազատ մնալ բնագրի լեզվին, բնագրի ոգուն: Միակ չափանիշը, որը թույլ կտա ստուգել թարգմանության որակը, պետք է լինի բնագիրը, ու ոչ թե թարգմանչի մտավոր կարողություններն ու համոզումները:

Եհովայի վկաների այդ թարգմանությունը չի որդեգրել այդ հիմնական սկզբունքը, այլ որդեգրել է Կազմակերպության գաղափարը այն մասին, որ բոլոր թարգմանությունները սխալ են ու ճիշտ չեն արտահայտում բնագրի իմաստը: Այդպիսի մոտեցմամբ կատարված թարգմանությունը, հետևաբար, չի կարելի որակել որպես թարգմանություն, այլ՝ որպես «բռնաբարված թարգմանություն», երբ ամեն ինչ հարմարեցվում է արդեն իսկ գոյություն ունեցող վարդապետությանը (հետադարձման սկզբունքը):

Այսպես, բոլոր պատմական եկեղեցիների առաջին գործը եղել է Ս. Գրքի թարգմանությունն իրագործելը՝ հարազատ մնալով վերոհիշյալ սկզբունքին: Մինչև դավանական վեճերի սկիզբը, այսինքն՝ մինչև Քաղկեդոն, արդեն կատարվել էին թարգմանությունները այդ ժամանակաշրջանի համարյա բոլոր գործածական լեզուներով: Այդ է եղել բոլոր ազգային եկեղեցիների առաջին գործը, և բացառություններ այս կանոնից համարյա չկան, բացի Եհովայի վկաների շարժումից: Դիտարանի հիմնադրումից 70 երկար ու ձիգ տարիներ հետո, երբ արդեն հղկվեցին նրանց աստվածաբանական հարցերը, դավանանքի հետ կապված խնդիրները հստակվեցին, որոշվեց հրատարակության պատրաստել ՆԱ թարգմանությունը, քանի որ գոյություն ունեցող Ս. Գրքերից ոչ մեկը չէր բավարարում նրանց: Այդ թարգմանությունը, փաստորեն, Ս. Գիրք չի և կապ չունի Ս. Գրքի հետ այն առումով, ինչպես ընկալում են այդ քրիստոնյաները: ՆԱ թարգմանությունը, ոչ թե Աստծու խոսքն է մարդկությանը, այլ Կառավարության Ղեկավար մարմնի հրահանգները մարդկությանը:

Ստորև բերում ենք այն սկզբունքները, որոնց հետևել են ՆԱ թարգմանիչները.

ա. Ամենուր, հինկտակարանյան տետրագրաման փոխարինել ԵՀՈՎԱ-ով, իսկ Նոր Կտակարանում հունարեն Թեոսը դարձյալ թողնել որպես ԵՀՈՎԱ:

բ. Ամենուրեք, ուր Հիսուսի Աստված լինելն է փաստվում կամ ակնարկվում, այն թարգմանվել է կամայականորեն, միայն թե Աստված լինելը չերևա:

գ. Դժոխք կամ դրախտ հասկացություններ չկան:

դ. Մահվանից հետո մարդու հոգին մեռնում է:

ե. Սուրբ Հոգին Աստված լինել չի կարող, ամենուր այն պետք է գրել անդեմ ձևով, կամ դերանուններով՝ տալով զորության իմաստ:

զ. Գալուստ բառը ամենուր փոխարինվում է ներկայություն բառով:

է. Խաչել և խաչ բառերը թարգմանվում է ցցահանել, ցից բառերով:

ը. Հիսուս Քրիստոսին երկրպագություն մատուցելու գաղափարները թարգմանել որպես հարգել կամ պատվել:

Այսպիսի կոպիտ ու անիմաստ պայմաններին չի համաձայնվի ոչ մի թարգմանիչ, քանի որ այդպիսի պարագաների դեպքում վերանում է բնագրի գաղափարը, և շարադրվում նոր տեքստ, նոր գիրք: Եհովայի վկաները, հենց այդ էլ նկատի ունեին, երբ գործածությունից հանեցին «Կտակարան» բառը, փոխարինելով այն «եբրայական գրություններ»-ով (Հին Կտակարանը) և «քրիստոնեական հունարեն գրություններ»-ով (Նոր Կտակարանը): Եվ դա արվեց հասկանալի պատճառներով. խոսք լինել չի կարող երկու տեսակ կտակների մասին, քանի որ Եհովան մեկ է, և Հիսուսի Աստված լինելը կարող է ի հայտ գալ «Նոր Կտակարան» արտահայտության մեջ: Բոլոր Եհովայի վկաները համոզված են, որ միայն իրենց գրություններն են ճիշտ արտահայտում Եհովայի կամքը, ոչ թե՝ բնագիրը:

Պողոս առաքյալը, իր թղթերում, շատ հաճախ է օգտագործում «Հինը» և «Նորը», երկու կտակարանները (Գաղատ. 4.24, 2 Կորնթ. 3.6, Եբր. 9.16-17, Եբր. 8.8) և այս լիովին հիմնավորում է Սուրբ Գրքին «Հին Կտակարան» և «Նոր Կտակարան» անվանումներ տալը:

ՆԱ թարգմանության որակի մասին պատկերացում կազմելու համար, բերում ենք մի քանի ցցուն օրինակներ (ավելի մանրամասն այս հարցերի մասին տե՛ս 32-ում):

1. Ծննդոց 1.2:

«Երկիրը անձև ու պարապ էր, և խավար կար անդնդի վրա, և Աստծու Հոգին շրջում էր ջրերի վրա»:

ՆԱ թարգմանության մեջ Հոգին փոխարինված է «զործուն ուժով».

«Երկիրը անձև ու պարապ էր, և խավար կար անդնդի վրա, և Աստծու գործուն ուժը շրջում էր ջրերի վրա»:

Սուրբ Հոգին այստեղ զրկվում է անձ ու դեմք լինելու հատկություններից և, վերանալով, բացառում է անգամ Երրորդության գաղափարը: Ստացվում է, որ Եհովայի վկաներին վախեցնում է «Հոգի» բառը, քանի որ ամենուր այն դիմազրկում են և փոխարինում երրորդ դեմքի դերանուններով, առանց հաշվի առնելու բովանդակությունը:

2. Ա Կորնթ. 12.10:

«Մյուսին՝ զորավոր գործերի կարողություններ, մյուսին՝ մարգարեություն, մյուսին՝ հոգիները զանազանելու շնորհ,...»:

ՆԱ-ում հատվածն այս տեսքն ունի.

«Մյուսին՝ զորավոր գործերի կարողություններ, մյուսին՝ մարգարեություն, մյուսին՝ ներշնչյալ արտաբերումների ընտրություն...» (32, էջ 44):

Իսկ 1 Հովh. 4.1 համարի ՆԱ տարբերակը լեզվի ցանկացած ուսուցիչ կգնահատեր «անբավարարից» էլ ցածր.

«Սիրելիներ, մի հավատացեք ամեն մի հոգու, այլ փորձեցեք հոգիները, թե արդյո՞ք Աստծուց են, որովհետև բազում սուտ մարգարեներ են երևան եկել աշխարհում»:

Այս պարզ ու հասկանալի համարը ՆԱ-ում հետևյալ տեսքն ունի.

«Սիրելիներ, մի հավատացեք ամեն ներշնչյալ արտահայտությունների, այլ փորձեցեք ներշնչյալ արտահայտությունները, թե արդյո՞ք Աստծուց են, որովհետև բազում սուտ մարգարեներ են երևան եկել աշխարհում» (32, էջ 45):

3. Եբր. 1.6:

«Թող երկրպագեն Նրան Աստծու բոլոր հրեշտակները»:

Քրիստոսին Աստված լինելուց զրկելու համար էլ՝ Նրան ոչ թե երկրպագում են, այլ՝ հարգանք մատուցում.

«Թող հարգանք մատուցեն Նրան Աստծու բոլոր հրեշտակները»:

4. Մատթ. 25.46:

«Եվ նրանք պիտի գնան դեպի հավիտենական տանջանք, իսկ արդարները՝ հավիտենական կյանք»:

Դժոխքը նույնպես այն գաղափարներից է, որից վախենում են Եհովայի վկաները, և ամեն անգամ հանդիպելիս այդ բառին, փոխարինում են կամ անդունդ բառով, կամ՝ գերեզմանով, կամ՝ որևէ այլ, անգամ դժոխքի հետ կապ չունեցող բառով:

Վերը նշված համարը ՆԱ-ում հենց այդ է ի հայտ բերում.

«Եվ նրանք պիտի գնան դեպի հավիտենական բաժանում, իսկ արդարները՝ հավիտենական կյանք»:

Այդ նույն սկզբունքով, մի գրչի հարվածով, 2 Պետրոս 2.9-ի «տանջանքների մատնելու համար» արտահայտությունը դառնում է՝ «բնաջնջելու համար», «դժոխքի բանալիները» դառնում են «անդունդի բանալիներ» (Հայտն. 20.1-3), «մեռնելը» դառնում է «մահվան հանդիպել» (1 Կորնթ. 6.14), «մեղանչող անձը» դառնում է՝ «մեղանչող հոգի» (Եզեկ. 18.4): Վերջինում միտումնավոր են «անձ» բառը փոխարինել «հոգի» բառով, որպեսզի ցույց տան, թե հոգին է մեռնում:

## 7. ԽԱՉԸ ԵՎ ԵՀՈՎԱՅԻ ՎԿԱՆԵՐԸ

ՆԱ թարգմանական կարողությունները լավագույնս ի հայտ է գալիս մեկ ուրիշ բառի՝ խաչ բառի հանդեպ ունեցած վերաբերմունքից: Խաչի թշնամիներ միշտ եղել են, սկսած առաքելական ժամանակներից, բայց XIX դարի Եհովայի վկաներին կարելի դասակարգել, որպես խաչի նորագույն թշնամիներ:

Քանի որ Եհովայի վկաների աստվածաբանության մեջ, ինչպես էլ այն դիտարկենք, չկա փրկություն, այն իմաստով, ինչպես ընկալում են դասական և անգամ նորագույն քրիստոնեական եկեղեցիները, ապա պարզ է, որ պետք է անարգվի նաև այս «բառը»: -Թերևս անանուն թարգմանիչները և Դիտարանի հրատարակիչները գործյան հանգույցի

պես են լուծում այդ հարցը՝ ուղղակի վերացնում են «խաչը», տալով դրան, ինչպես և կարելի էր սպասել, համապատասխան հիմնավորում:

Այսպես, 1936 թվականին Դիտարանի ընկերությունը «լույսի ճառագայթումով» հայտնաբերեց, որ մինչև այդ օրը սխալ է հասկացվել «Խաչ»-ը, ուստի այն ամենուր պետք է փոխարինվի «ցից» բառով, իսկ համապատասխան բայը՝ «խաչել», «ցից հանել» ձևով (33, էջ 26):

Այդ հիմնավորում են նույն ձևով, ինչ ձևով մնացած վարդապետական կետերը, այսինքն՝ «Մանկությունը հիշելու» սկզբունքով: Իսկ դրա համար երկնային լույսի շող պետք չէր, ինչպես պնդում են Եհովայի վկաները. նրանց ամեն քայլը կարելի է կանխատեսել, ավելին, անգամ՝ հաշվարկել:

Հայտնաբերելով, որ «խաչ» բառը հունարենում (=stavros) առաջացել է փայտ, գերան արմատից, նրանք ամենուրեք այն փոխարինում են ցից բառով, նկատի ունենալով փայտե գերանը: Եհովայի վկաների բոլոր հրատարակություններում, խաչելության պատկերը հենց այդ առումով է, որ տարբերվում է ավանդականից: Նրանց մոտ Հիսուս գամված է ձեռքերը գլխավերևում, մի ուղղաձիգ գերանի վրա, ու ոչ թե Չ-ձևի խաչի վրա: Անգամ տալիս են դրան տեսական հիմնավորում, պնդելով, որ խաչի Չ ձևը ծագում է քաղդեացիներից և խորհրդանշում է Թամուզ աստծուն (33, էջ 26):

Եվ, որպես հետևանք, Եհովայի վկաները խաչել բայը թարգմանում են որպես «ցից հանել», միտումնավոր մոռանալով, որ դրանով գռեհկացնում են բովանդակությունը, մանավանդ որ թե՛ հայերենում, թե՛ այլ լեզուներում այն ամեննին ուրիշ իմաստ՝ գռեհիկ իմաստ ունի, գռեհկաբանություն է: Հե՛նց այս է, որ կարելի է որակել որպես հայհոյություն Սուրբ Հոգու հանդեպ:

Հիսուսի ժամանակներում, Հռոմեական կայսրության մեջ, որպես մահապատժի գործիք օգտագործվող խաչափայտերը, հռոմեական իրականության մեջ նույնքան սովորական էին, որքան հրեական իրականության մեջ քարկոծելը: Այսինքն, Նոր Կտակարանում խաչը արտահայտում է բարոյական առաքինություն՝ նեղություն կրելու, անարգանքը կրելու իմաստով և հենց այս իմաստն նկատի ուներ Հիսուս, երբ ասում էր մինչև խաչվելը՝ վերցրու խաչդ և արի իմ ետևից: Իսկ հռոմեական իրականությանը հայտնի խաչելության գործիքներից և ոչ մեկը չի համապատասխանում Եհովայի վկաների ցցին: Դրանք ընդամենը երեքն են եղել. T - ձևի, X - ձևի և Չ - ձևի, որոնցից ոչ մեկն էլ նման չէ ուղղաձիգ գերանի:

## 8. ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ, ԱՐՅՈՒՆԸ ԵՎ ԵՀՈՎԱՅԻ ՎԿԱՆԵՐԸ

Եհովայի վկաները գիտություն ասելով հասկանում են ամեննին ոչ այն, ինչ արտահայտում է այդ բառը: Ոչ միայն «գիտություն», այլ այդ բառի հոմանիշներն էլ այլ ձևով են հասկանում կամ մեկնաբանվում: Այսպես, «Եհովայի վկաները և կրթությունը» գրքույկում, բացատրելով կրթության նպատակները, գրում են.

«Քանի որ Եհովայի վկաները շատ լուրջ են վերաբերվում Աստվածաշնչի կրթական գործունեությանը, նրանք ցանկանում են կատարելագործել իրենց կարողությունները Աստվածաշնչի ուսմունքները ուրիշներին բացատրելու համար» (34, էջ 11): Այսպիսով,

կրթություն ստանալը Եհովայի վկաները հասկանում են Եհովայի թագավորության ծանուցելը աշխարհին: Եվ, որպես օրինակ, բերում են տոների հետ կապված օրինակը. մարդու ծննդյան օրը նշելը հեթանոսական սովորություն է, ուստի Եհովայի վկաները գիտություն ունենալով, հրաժարվում են ծննդյան օրերը նշելու հեթանոս սովորությունից (34, էջ 14-15):

Նույն վերաբերմունքն ունեն նաև Քրիստոսի ծննդյան տոնի վերաբերյալ: Նրանց գիտականությունն այն է, որ ապացուցում են, թե Հիսուս ծնվել է ոչ թե դեկտեմբերի 25-ին, ինչպես ընդունված է արևմուտքում, այլ հոկտեմբերին, քանի որ դեկտեմբերին ցուրտ է, և հովիվները չէին կարող դրսում իենց հոտերի պահպանությամբ զբաղվել, մինչդեռ աշնանը՝ հոկտեմբերին ավելի հարմար եղանակ է և իրեական նոր տարվան մոտ: Ռուտերֆորդը գրում է. «ծնունդը հոկտեմբերի 1-ին տեղի ունեցավ» (9, էջ 94):

«Իսկ ծննդի արարողությունը, որ կա այժմ Եվրոպայում, իրականում քրիստոնեական չէ, այլ հեթանոսական ծիսակատարություններ են...» (34, էջ 17):

Անշուշտ այսպիսի «գիտական» մոտեցումները ցույց են տալիս Եհովայի վկաների աստվածաբանական մտքի սնանկությունը: Գիտությունը ոչ թե հիմնվում է հարմար լինելու կամ չլինելու սկզբունքի վրա, այլ միանգամայն հակառակը՝ քննում է փաստերը, արձանագրված պատմական տեղեկությունները և նոր միայն վերլուծում ու ընդհանրացնում:

Ծննդաբանությամբ է սկսվում Ս. Գիրքը, ծննդաբանությամբ է սկսվում Նոր Կտակարանը: Ծննդյան օրվա արարողության նկարագրությամբ է սկսվում Ղուկասի ավետարանը, մանրամասնորեն նկարագրելով Հովհաննես Մկրտչի ծննդի հետ կապված արարողությունը: Եհովայի անանուն աստվածաբանները այդ ամենը հեթանոսություն են համարում...

Ս. Գիրքը, հասկանալի է, որ գիտության այս կամ այն բնագավառին վերաբերող դասագիրք չէ, բայց երբ Ս. Գիրքը խոսում է գիտության վերաբերող հարցերի մասին, այսինքն, երբ բերում է գիտությանն առնչող հարցեր, ապա միշտ Ս. Գիրքը ճիշտ է դուրս եկել, ինչքան էլ որ այն կասկածի տակ է դրվել ժամանակի ընթացքում:

Բնագիտության պատմությունը ցույց տվեց, որ ժամանակի ընթացքում մարդկանց բնագիտական պատկերացումները փոփոխվում են, այսինքն, բացարձակ չեն: Իսկ Ս. - Գիրքը, որպես մեկ անգամ գրի առած Աստծու խոսքը, փոփոխության ենթակա չէ, և, բնականաբար, դարերի ընթացքում եղել են ժամանակներ, երբ Ս. Գրքում առկա վկայությունները չեն համապատասխանել մարդկանց բնագիտական պատկերացումներին: Իսկ դա հենց ապացույց է, որ Ս. Գիրքը ճշմարիտ է, քանի որ այդ պատկերացումները ժամանակի ընթացքում փոխվել են և, ի վերջո, հանգել Ս. Գրքի արտահայտած տեսակետներին:

Եհովայի վկաները, իրենց շարժմանը գիտականության երանգ տալու համար, առանձնահատուկ ուշադրություն են դարձնում արյան մասին իրենց ունեցած պատկերացումներին: «Լույսի ճառագայթումներ» ստանալով, այս բնագավառից շատ հեռու կանգնած շրջանային դատավորն ու ընդհանրապես որևէ մասնագիտություն չունեցող Ն. Ռն-

րը սկսում են գիտական թեզեր առաջ քաշել և քարոզել՝ ստիպելով շարքային անդամներին այն ընդունել անվերապահորեն, որպես Եհովայի հրաման: Այդ չհիմնավորած հարկադրական պահանջները, բժշկագիտական տեսանկյունից վտանգ են ներկայացնում - Կազմակերպության անդամների, նրանց ընտանիքների, ժողովրդի, պետության համար: Կազմակերպության անդամները, կուրորեն ենթարկվելով այդ «գիտական» պահանջներին, իրենց դատապարտում են մահվան՝ ինքնասպանության:

Արյունը և գիտությունը արյան մասին՝ հեմատոլոգիան, այն աստիճանի բարդ է, որ այդ բնագավառի հարցերը և խնդիրները լուրջ գիտական հետազոտությունների բնագավառին են վերաբերում և ոչ թե՝ հանրամատչելի կրոնական տարածվող գրքույկների նյութ է, որը պարտադիր է համարվում Եհովայի վկաների համար: Անանուն աստվածաբանները դարձյալ հրահանգավորում են իրենց հետևորդներին, թե ինչպես վարվեն կամ ինչ անեն արյան հետ կապված խնդիր ունենալու դեպքում:

Ելնելով հինկտակարանային մի քանի համարներից (Ղևտ. 17.10, Բ Օր. 12.23-25, Եզեկ. 33.25), ուր արգելվում է միսը արյամբ ուտելը, Եհովայի վկաները եզրակացնում են, որ չի կարելի

1. պատվաստումներ կատարել,
2. տրանսպլանտացիա անել (մարմնի մասերի վերապատվաստումը),
3. արյան փոխներարկում անել (35, էջ 18-19):

Այսինքն, ըստ Եհովայի վկաների դավանանքի, պատվաստումը, տրանսպլանտացիան ու արյան ներարկում նշանակում է արյուն ուտել, մարդակերություն է, որն էլ արգելել է Եհովան:

Արյուն թափելը ընդհանրապես նշանակում է սպանել, և Ծննդ. 9.6 համարը արգելում է այն: Բայց այստեղից չի հետևում, որ վիրաբույժները, ատամնաբույժները մարդասպաններ են, քանի որ ինչքան էլ մաքուր աշխատեն, միևնույն է, անխուսափելիորեն, թեկուզ աննշան քանակի, արյուն «կթափվի»:

Իսկ եթե երեխաներին արգելվի պատվաստումներ անել, և համաճարակի դեպքում նրանք զոհվեն, մի՞թե այդ արգելողները մարդասպան չեն համարվի: Ավելին, ոչ թե մարդասպան, այլ Մողոքին զոհ մատուցող ամոնացիներին կնմանվեն (Ղևտ. 18.21, 4 Թագ. 23.10):

Նույնը կարելի է ասել նաև արյան փոխներարկման մասին: Եհովայի վկաները, որպես կանոն, արգելում են իրենց կազմակերպության անդամներին ներարկումներ անելը, համարելով դա համազոր միսը արյամբ ուտելու, որն արգելվել է Առաջին առաքելական ժողովում (Գործք 15.22-29):

Անշուշտ այս հակագիտական, հակաբժշկական քարոզչությունը Եհովայի վկաների ամբողջատիրական վարդապետության դրսևորման ցայտուն արտահայտությունն է:

Նրանք ավելի հեռուն են գնում. քարոզում են, որ արյան փոխներարկման հետևանքով մարդը կարող է իր կենսաբանական հատկանիշերը փոխել, մի բան, որը չունի գիտական հիմնավորում:

Այսպիսով, արյան խնդիրը Եհովայի վկաների մոտ ունի շատ հիմնավոր արմատներ, և, այս մասին խոսելիս պետք է աշխատել կենսաբանական հիմնավորում տալ և ժխտել այդ կարծիքները: Այսպես, «ուտելու» կենսաբանական շղթան կարելի է բաժանել հետևյալ փուլերի.

ա. նախապատրաստական - բերանի խոռոչում սննդի ծամելը

բ. մարսողական - ստամոքսի գործունեությունը

գ. օրգանիզմի սնուցում - արյան շրջանառության միջոցով համապատասխան անհրաժեշտ նյութերը բաշխվում են օրգանիզմի մեջ:

Այս մեխանաիզմը միայն առաջին մոտավորությամբ է ներկայացնում ուտելու ընթացքը, քանի որ այն շատ ավելի բարդ է և անգամ շատ բաներ ցայսօր անհասկանալի են:

Խնդիրը հետևյալն է. արդյոք «ուտել» կարելի համարել այն պրոցեսը, երբ արտաքին միջամտության շնորհիվ սնուցում է տրվում օրգանիզմին՝ շրջանցելով ա և բ կետերը (պատվաստման ընթացքը): Իհարկե ո՛չ: Ոչ մի բժիշկ չի համաձայնվի այն բանին, որ կարելի է վերը նշված ուտելու մեխանիզմը առանձին-առանձին էլ համարել ուտել: Այդ դեպքում արևի տակ կանգնելն էլ ուտել կնշանակի, քանի որ մաշկի միջոցով որոշ վիտամիններով սնունցվում է օրգանիզմը, կամ երաժշտություն լսելը, որի հետևանքով դարձյալ մարդու օրգանիզմում որոշ կենսաբանական փոփոխություններ կարող են առաջանալ, կամ վախենալը, սիրելը, և այլ ստրեսային՝ մարդուն հաճախ հանդիպող իրավիճակները, երբ նույնպես հնարավոր է կենսաբանական ակտիվ նյութերի առաջացում օրգանիզմում: Իհարկե, Եհովայի վկաները կարող են հակաճառել, թե պատվաստման դեպքը մի քիչ այլ է, քանի որ ներարկվում է կենդանական ծագում ունեցող նյութ (որոնք, ի միջի այլոց արյան հետ կապ չունեն): Բոլոր դեպքերում, անկախ պատվաստման նյութի տեսակից, պատվաստումը երբեք չի նշանակում արյուն ուտել:

Այսպիսով, պատվաստումն արգելողները, նույն սկզբունքով պիտի արգելեն նաև զբոսնել արևի տակ, վախենալ, սիրել, գիրք կարդալ, երաժշտություն լսել և այլն:

Եթե պատվաստումը գոնե ինչ որ ձևով կարելի է ուտելու շղթայի թեկուզ վերջին օղակին հարմարեցնել, ապա տրանսպլանտացիան վերը նշված ուտելու շղթայի և ոչ մի հատվածին չի կարելի հարմարեցնել, այն բացարձակ կապ չունի մովսիսական «արյան մեջ ուտելու» հետ: Եթե կարելի է արհեստական օրգան տեղադրել (մարդու ձեռքի գործ), ի՞նչ է, մի՞թե չի կարելի կենդանական օրգանի տեղափոխություն կատարել (Աստծու ձեռքի գործը):

Մի քանի այլ օրինակներ, որոնք օգտակար է բերել «արյուն չուտելու» օրենքը պահողների համար:

Ատամնաբուժական օրինակը. պարզ է, որ ինչքան էլ մաքուր աշխատի ատամնաբույժը, անհնար է, որ ատամը հանելիս կամ բուժելիս բերանի խոռոչը չարյունոտվի: Այստեղ եհովականները կարող են հակաճառել, թե սեփական արյունը կարելի է ուտել, բայց Եհովայի վկաների վարդապետությունից պարզորոշ հետևում է, որ արյունը մարմնից դուրս գալիս, պետք է թափվի, սեփական, թե՝ ուրիշի, նշանակություն չունի:

Ուրեմն, Եհովայի վկաները պետք է մինչև կյանքի վերջ առողջ ատամներ ունենան, որ հանկարծ չդիմեն բժշկի:

Հեմոդիալիզի օրինակը: Երիկամների հիվանդություն ունեցող շատ-շատերի կյանքը այսօր, XX դարի վերջին, պահպանվում է հեմոդիալիզի միջոցով: Մարդու երիկամները, չկարողանալով մաքրել (ֆիլտրել) արյունը զանազան թույներից, շատ արագ դատապարտում են հիվանդին մահվան: Ժամանակակից բժշկությունը այդ հիվանդությունը բուժում է հեմոդիալիզի միջոցով: Հիվանդի արյունը դուրս են հանում մարմնից, անց են կացնում այդ արհեստական երիկամի միջով ու, ֆիլտրելով արյունը, այն նորից ներարկում են հիվանդին:

Այս, առայժմ միակ բուժման մեթոդը, բազմաթիվ հիվանդների կյանք է փրկել: Սակայն, համաձայն Եհովայի վկաների դավանանքի, այդ բոլոր հիվանդները «պարտավոր են մեռնել», քանի որ արյունը դուրս հանելով մարմնից, համաձայն եհովականների, այն պետք է անպայման թափել: Հետևաբար մերօրյա եհովականները պարտավոր են առողջ երիկամներ ունենալ, հակառակ դեպքում նրանք իրենք իրենց կդատապարտեն մահվան:

Իրականում, սակայն, Կազմակերպության անդամներից շատերը համաձայնվում են հեմոդիալիզի միջոցով իրենց կյանքը փրկել, քան՝ անիմաստ տեղը «նահատակվել»: - Շատ շարքային եհովական հիվանդներ արտաքուստ համաձայնվում են Կազմակերպության ղեկավարների պահանջներին, բայց «Եհովայի աչքին հավատարիմ գտնվելու» փոխարեն, երբ ղեկավար «եղբայրները» հեռանում են, նրանք անմիջապես համաձայնվում են բժշկի պահանջներին, խնդրելով միայն, որ այդ մասին չիմանան իրենց «ավագ եղբայրները»[69]:

Այսպիսով, «Արյան վարդապետությունը» ոչ այլ ինչ է, եթե ոչ՝ «մժեղը քամելու, իսկ ուղտը կուլ տալու» փարիսեցիական սկզբունք:

Բայց քանի որ ամեն բան հնարավոր չէ կանխատեսել, Եհովայի վկաների Կառավարությունը պահանջում է, որ տանից դուրս գալիս ամեն Եհովայի վկա իր հետ ունենա «բժշկական փաստաթուղթ», ուր ինքը արգելում է իրեն արյուն ներարկել՝ ինչ էլ որ լինի իր հետ և բժիշկներին ազատում է պատասխանատվությունից:

Ստորև ներկայացնում ենք այդ փաստաթղթի համառոտ թարգմանությունը[70].

«Ես........................ պատվիրում եմ, որ արյուն չներարկեն ինձ, եթե անգամ բժիշկները գտնեն, որ այդ անհրաժեշտ է իմ կյանքի և առողջության համար:........

Ես բժիշկներին և բուժող անձնակազմին ազատում եմ այն պատասխանատվությունից, որ կարող է հետևել արյան ներարկումից իմ հրաժարվելուց: Եթե ես լինեմ անգիտակից վիճակում, ներքևում նշված Եհովայի վկաներին լիազորում եմ հետևել, որ իմ ցանկությունը կատարվի»:

---

69 * Երևանի հիվանդանոցներից մեկի գլխավոր բժիշկը տողերիս հեղինակին պատմել է բազմաթիվ դեպքեր, երբ «ավագ եղբայրները» պահանջել են հիվանդ եհովականին «մեռնել» և չդիմել հեմոդիալիզի սատանայական մեթոդին՝ Եհովայի աչքին հաճելի լինելու համար, բայց, իրականում, շարքային եհովականները համաձայնվել անգամ օտար արյան ներարկմանը, խնդրելով միայն այդ «կոնֆիդենցիալ» գաղտնիքը չբացել:

70 Медико-социальныепоследствия деструктивной деятельности тоталитарных сект, Минздрав РФ, Москва, 1998, էջ 57:

Ամբողջատիրության այս բացահայտ դրսևորումը Եհովայի վկաներին ոչ թե ազատ է դարձնում՝ ավետարանական իմաստով, այլ՝ ստրուկ, զրկելով նրանց ազատությունից ու գերի դարձնելով Կառավարությանը:

## 9. ԵՀՈՎԱՅԻ ՎԿԱՆԵՐԸ ԵՎ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Հռոմ. 13.1-7 հատվածում Պողոս առաքյալը բացահայտ և պարզ ներկայացնում է քրիստոնյայի դիրքորոշումը պետության հանդեպ: Այս համարները այնքան հստակ են պարզաբանում այդ հարցը, որ լրացուցիչ որևէ պարզաբանության կարիք չի զգացվում: - Պատմությունը ցույց տվեց, որ անգամ Հռոմի դաժան կայսրերի իշխանության ժամանակ եկեղեցու առաջնորդները չխախտեցին Պողոսի այս պատվերը, և, պետությանը հնազանդություն քարոզելով՝ հաղթող դուրս եկան:

Մինչդեռ Եհովայի վկաների տեսակետը միանգամայն հակառակ է Պողոս առաքյալի պատվերին, քանի որ նրանք ընդունում են.

- որ բոլոր պետությունները սատանայի կազմակերպություններն են, հետևաբար ենթարկվել որևէ պետության նշանակում է սատանայի կամքը կատարել:

- որ միակ կազմակերպությունը, որին պետք է ենթարկվել Դիտարանի կազմակերպություն է, որը Եհովա Աստծու միակ ներկայացուցչությունն է աշխարհում:

Որպեսզի չհակադրվեն Պողոս առաքյալի խոսքերին, Եհովայի վկաները պետք է ինչ-որ կերպ վերափոխեն Պողոսի խոսքերը, այն հարմարեցնելով իրենց դավանանքին:

Հենց այդպես էլ եղավ. լույսի ճառագայթ իջավ և Եհովայի վկաները «հասկացան» թե ինչպես պետք է հասկանալ Հռոմ. 13.1-7 հատվածը:

«1962-ին, լույսի փայլուն ճառագայթ եղավ, Հռոմ. 13.1-ի կապակցությամբ, ուր ասվում է. «Ամեն մարդ իր վրա եղած իշխանություններին թող հնազանդ լինի»: Աստվածաշունչի նախկին աշակերտները հասկանում էին, որ այստեղ հիշված իրենց «վրա եղող իշխանություններ»-ը աշխարհական իշխանություններն էին: Նրանք այս համարը այնպես էին հասկանում, որ եթե քրիստոնյան պատերազմի ժամանակ զորակոչի ենթարկվի, պետք է զինվորական համազգեստը հագնի, զենքը վերցնի ու ճակատ գնա՝ խրամատների մեջ: Քանի որ քրիստոնյան չի կարող իր ընկերոջ սպանել, ենթադրվում էր, որ վատագույն դեպքում նա պետք է օդ կրակեր» (36, էջ 27-28): Այստեղ Դիտարանը հղում է կատարում և բացատրում, որ «վրա եղած իշխանությունները ոչ թե աշխարհական պետություններն են, այլ՝ Եհովան», ուրեմն ոչ թե իշխանություններին պետք է ենթարկվել, այլ՝ Եհովային:

«Քրիստոնյաները Կայսրին՝ իրենց վրա եղած իշխանություններին հնազանդ են այնքանով, քանի նրանք Աստծու օրենքին հակառակ գործել չի պահանջում» (36, էջ 28):

Դրա համար էլ, «վրա»-ն թարգմանելով «վերև» ՆԱ թելադրում է, որ հնազանդ պետք է լինեն Եհովայի իշխանությանը՝ վերին իշխանությանը (16, էջ 131-133):

Ստացվում է, որ Պողոսի այդ հայտնի խոսքերը պետք է հասկացվի համաձայն նոր լույսի շողերի. Ս. Գրքի հեղինակությանը գալիս է փոխարինելու Բրուկլինյան լույսի շողերը:

Նույն ձևով էլ հստակ դիրքորոշում է քարոզվում որևէ պետության բոլոր խորհրդանիշերի հանդեպ՝ Դրոշ, Օրհներգ, Զինանշան, որոնց պատվի արժանացնելը դիտվում է կռապաշտություն, երկրպագություն արձանին, կուռքին:

## 10. Post Scriptum
## ԿԱՄ ՀԵՏԳՐՈՒԹՅՈՒՆ

Եհովայի վկաները մեզանում ամենազործունյաներն են. անխոնջ կատարում են վերադասի՝ բրուկլինյան «տաճարի» հրամանները, վերին աստիճանի հանդուգն են պահում իրենց, խոնարհություն չունեն, իրենք իրենց իմաստուն են համարում և ցանկացած բնագավառում իրենց հեղինակություն համարում:

Նրանց հետ շփվելը դժվարանում է նրանով, որ նրանք վստահ են, թե Ս. Գիրքը հասկանում են միայն իրենք, բոլոր մութ հարցերի պատասխանները մատչելի են միայն իրենց:

Այդ ինքնատիպ մեկուսացումը կրոնական մոլեռանդություն (ֆանատիզմ) է սերմանում Եհովայի վկաների մեջ՝ դարձնելով նրանց ռոբոտներ՝ Կառավարության Ղեկավար մարմնի հլու կամակատարներ: Այդ առումով նրանց շարժումը վտանգ է ներկայացնում ցանկացած պետության, ժողովրդի համար:

Նրանց գործունեության հիմնական շրջանակները՝ 18-25 տարեկան երիտասարդներն են, այսինքն՝ ուսումնական բոլոր հաստատությունները՝ դպրոցից սկսած:

Եհովայի վկաների պիոներները ծրագրավորված կերպով այցելում են բնակարանները, քարոզում են հրապարակներում:

Նրանց հետ հանդիպելիս հարկավոր է նրանց ուշադրությունը հրավիրել հետևյալ կետերի վրա.

- Բրուկլինյան ոչ մի մարգարեություն չի կատարվել մինչ այսօր:
- եթե 1935 թ. ավարտվել է «հավաքագրումը», ապա Արմագեդոնը ուշանում է:
- մարդը անասունի նմանությունն ու կերպարը չունի, այլ՝ Աստծու նմանությունն ու պատկերն է կրում իր վրա:
- մարդը անհոգի չէ, նա հոգի ունի:
- Ս. Գիրքը պետք է կարդալ առանց «Դիտարանական» ցուցումների:
- Հիսուսի Աստվածության մասին համարները գրել թղթի վրա և «նվիրել» տուն այցելած Եհովայի վկաներին:
-1914 թվականը «չարդարեցրեց» իրեն, հեթանոսների ժամանակ՝ այն առումով, ինչպես որ ընդունում էր Ռասելը, սխալ դուրս եկավ:
- Եհովայի վկաների դավանանքում «հավատք» հասկացողություն գոյություն չունի, այն փոխարինել են «գիտությունով», որը ոչ թե մարդկային իմացությունն է, այլ՝ բրուկլինյան հրահանգներին հնազանդվելը:

## IV. ՄԻԼԼԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ ՅՈԹՆԵՐՈՐԴ ՕՐՎԱ ԱԴԵՆՏԻՍՏՆԵՐ

### 1. ՀԱՄԱՌՈՏ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Անցյալ դարում, ամերիկյան մկրտչական եկեղեցու անդամներից ոմն Վիլիամ Միլլեր (1772-1849) իր առաքելությունը համարեց Դանիել մարգարեի գրքի մեկնաբանությունը տալ, և սկսեց միայն այդ մասին գրել ու քարոզել, ավետելով աշխարհի վախճանի մոտալուտ լինելը, իսկ հետագայում՝ նշեց նաև վախճանի ժամանակը՝ թվականը, ամիսը, օրը: Ինչպես հայտնի է, Դանիելի գիրքը լի է խորհրդավորությամբ, որոնց մեկնությունները և բացատրությունները երբեք լիարժեք չեն կարող համարվել, քանի որ ժամանակի ընթացքում՝ նոր պատմական դեպքերի իրականանալու ժամանակ է միայն հնարավոր լինում այն հասկանալ այս կամ այն մարգարեությանիմաստն ու նշանակությունը: Դանիելի մոտ, անշուշտ, վախճանաբանական հայտնություններն են, որ գրավել են ու գրավում են մարդկանց, չնայած որ մեծ մասը պատմության թատերաբեմում արդեն կատարված մարգարեությունների ցանկին կարելի վերագրել: Այսօր էլ, վերջին օրը իմանալու ձգտումը գրավում է շատերին:

Աղանդավորական շարժումների պատմությունը ցույց է տալիս, որ շարժման առաջնորդները՝ իրենց վերապահելով Ս. Գրքի մեկնաբանման մենաշնորհը՝ խմբակներ են կազմել և սկսել են զբաղվել Ս. Գրքի սերտողությամբ՝ «ձեռնոց» նետելով իրենց ժամանակի բոլոր եկեղեցիներին: Շատերն են փորձել համախոհներ գտնել, և միշտ ձգտել են ավելի ու ավելի մեծացնել նրանց թիվը: Շարժման համախոհներ գտնելու նպատակով «հայտնաբերում էին» նորանոր ուղիներ, ինքնատիպ և գրավիչ վարդապետություններ: Այդպիսի վարդապետություններից մեկն է աշխարհի վախճանի մոտալուտ լինելու քարոզությունը, Հիսուսի Երկրորդ գալստի օրվա ու ժամվա կանխատեսումը: Այդ հավիտենական խնդիրը՝ սկսած առաքելական ժամանակներից, հուզել է եկեղեցուն և գրեթե բոլոր դարերում էլ եղել են մունետիկներ, որոնք գուշակել են վախճանի օրը, ժամը, տարին:

1818 թվականին Միլլերը հաշվարկեց աշխարհի վախճանի թվականը և սկսեց ի լուր աշխարհի հայտարարել այդ մասին: Ս. Գիրքը սովորեցնում է, որ այդ մասին ոչ մեկը չի կարող իմանալ, հետևաբար անիմաստ է այդ մասին կանխատեսումներ անելը: Բայց այդ պարզ ավետարանական ճշմարտությունը չկասեցրեց մունետիկներին: Նրանք շարունակում էին պնդել վախճանի՝ իրենց հաշված թվականի ճշգրտությունը, ապացուցում էին, որ միայն այդպես է հնարավոր, հիմնավորում էին զանազան մեջբերումներով...

Միլլերը աշխարհի հետագա գոյության համար «շնորհել» էր ընդամենը 25 տարի. 1843 թվականին Հիսուսի Երկրորդ գալուստով աշխարհը իր վերջը պիտի գտներ:

Նրա հաշվարկման մեթոդաբանությունը այս էր.

Դանիել 8.14 համարը հիմք ընդունելով, Միլլերը ենթադրեց, որ այդ 2300 օրերը կարելի է համարել տարիներ, և Սրբարանի մաքրության սկսվելը՝ վախճանի օրը: Հաշվարկման համար մեկնակետ ընդունեց մ.թ.ա. 457 թվականը, և հաշվելով 2300 տարի՝ գտավ, որ 1843 թվականին (2300-457=1843) վրա է հասնելու աշխարհի վախճանը:

Եվ ինչքան մոտենում էր այդ թվականը, կրքերն այնքան ավելի էին բորբոքվում: Միլլերին միանում են շատ նվիրված մարդիկ, որոնք համոզված էին նրա հաշվարկների իսկության մեջ և չէին կասկածում:

1843 թվականի գալով շատերը հուսահատվեցին, բայց համառ Միլլերը շարունակեց իր պրպտումները և գալստյան օրը շտկելով՝ տեղափոխեց այն մեկ տարով: 1844 թվականի հոկտեմբերի 21-ը՝ հրեական տոմարով նոր տարվա օրը պետք է լիներ աշխարհի վախճանի օրը:

Այդ օրն էլ եկավ ու անցավ, բայց Հիսուսի գալուստը տեղի չունեցավ: Միլլերին համակրողներից շատերը հեռացան, Միլլերին և նրա ընկերներին հեռացրեցին մկրտչական եկեղեցուց, իսկ այդ օրը դարձավ պատմական օր՝ «Մեծ հուսախաբություն» անվանումով: Մեծ հուսախաբության օրը մեծ մարգարեի մարգարեությունը չիրականացավ. ճիշտ է, հետագայում բացատրություններ տրվեցին և ամեն կերպ փորձեցին «հուսախաբության օրը» դուրս հանել գործածությունից, բայց չստացվեց:

Վախճանաբանական խնդիրների վերաբերյալ Միլլերի տեսակետը ընդհանրապես սուրբգրային չէ, ինչքան էլ որ հակառակը պնդեն հետագայի միլլերականները: Ավետարանը շատ պարզ ասում է, որ ոչ ոք չգիտի օրն ու ժամը կամ ժամանակը (Մարկ. 13.32-37), իսկ Միլլերը հակառակն էր պնդում, նշելով անգամ օրը՝ 1844 թվականի հոկտեմբերի 22-ը:

Մեծ հուսախաբությունից հետո, բնականաբար, պետք է տրվեր ինչ-որ բացատրություն, թե ինչու չեկավ աշխարհի վերջը կամ վախճանը: Բնականաբար, շարժման ղեկավարներից ոմանք սկսեցին հայտնություններ ունենալ, ուր, իբր, Աստված տալիս է այդ ամենի բացատրությունը:

Այսպես, Հայրում Էդսոնը, ղեկավարներից մեկը, Մեծ հուսախաբության հաջորդ օրն իսկ հայտնություն է ստանում, որ 1844 թվականի հոկտեմբերի 22-ին ոչ թե Երկրորդ Գալուստն է տեղի ունեցել, այլ Երկրորդ Գալուստի սկիզբն է եղել: Այսինքն, ըստ այդ հայտնության Հիսուս դեռ գործեր ուներ կատարելու Երկնային Սրբարանում, նա դեռ պետք է սկսեր մաքրել Սրբարանը, որից հետո միայն տեսանելի կերպով իջներ աշխարհ:

Էդսոնի այս հայտնություն-հայտնագործությունը տրամագծորեն հակառակ է Միլլերի ասածին: Միլլերը գրում էր. «Ես հավատում եմ, որ բոլոր նրանք, ովքեր ձգտում են հասկանալ և պատրաստ լինել Նրա Գալուստին, կարող են իմանալ այդ ժամանակը: Ես համոզված եմ, որ այն լինելու է 1843 թվականի մարտի 21-ի և 1844 թվականի մարտի 21 միջև՝ համաձայն ժամանակի հրեական հաշվարկի: Քրիստոս կգա՝ բոլոր սրբերի հետ՝ հատուցելու ամեն մի մարդու» (7, էջ 521): Հետևաբար Միլլերը վստահ էր, որ Հիսուսի գալուստը կլինի այնպես, ինչպես ասել էր ինքը, այսինքն, որպես հատուցման օր, որպես վախճանն աշխարհի, և այդ օրը ամենևին չպիտի լիներ ինչ-որ նախապատրաստական աշխատանքներ սկսելու օր: Երբ չիրականացան Միլլերի մարգարեությունները և նա՝ իր համախոհների հետ վտարվեց եկեղեցուց, շարժման ղեկավարությունն անցավ Միլլերի ընկերներին, որոնք իրենց հերթին մի քանի ոչ սուրբգրային մարգարեություններ անելուց հետո, ձևավորեցին մի նոր՝ միակ «ճշմարիտ» մնացորդ եկեղեցին: Այդ մնացորդ եկեղեցին էլ դարձավ «Յոթներորդ օրվա ադվենտիստների» եկեղեցին:

Հայրում Էդսոնի մեկնությունը Միլլերի նշած օրվա վերաբերյալ, որակապես փոխեց շարժման աստվածաբանությունը, հարմարեցնելով այն նրա մեկնություններին: 1844 թվականը հռչակվեց որպես «հետաքննական դատաստանի» սկսման օր, երբ Հիսուս Երկնային Սրբարանում պետք է որոշեր, թե ով պետք է հարություն առնի Առաջին հարության ժամանակ և ով պետք է մնա գերեզմանի մեջ և բաժին դառնա Երկրորդ հարությանը:

Շարժման մարգարեներից Ելենա Ուայտը, Ժ. Բեյթսը[71] իրենց գործերում հռչակեցին - Շաբաթ օրվա անփոփոխ լինելու վարդապետությունը և հայտարարեցին, որ սատանայի ամենամեծ հաղթանակն այն է, որ Հռոմի եկեղեցին Շաբաթը փոխարինեց Կիրակի օրով: Ավելին, Ժ. Բեյթսը, առաջ գնալով հայտարարեց, որ Հայտնության 7-րդ գլխում նշած կնիքը՝ շաբաթ օրը պահելն է և միայն 144000 հոգի են շաբաթը պահողները, որոնք կազմում մնացորդ եկեղեցին՝ Աստծու հավատարիմները, իսկ Հայտնության 14.6-12-ում նշված գազանն ու պատկերը պաշտողները՝ Հռոմի եկեղեցին է խորհրդանշում, որը շաբաթ փոխարինել է կիրակիով:

Միլլերը մահացավ 1849 թվականին, իր գուշակած աշխարհի վախճանի օրվանից մի քանի տարի հետո, իսկ նրա համախոհ ընկերները շարունակեցին զարգացնել ու լրացնել Միլլերի վախճանաբանական հայացքները, և 1855-1863 թվականներին վերջնականապես ձևավորեցին այդ շարժումը որպես անկախ կրոնական շարժում՝ «Յոթներորդ օրվա ադվենտիստ եկեղեցի» անունով:

## 2. ԵԼԵՆԱ ՈՒԱՅՏ ՄԵԾ ՄԱՐԳԱՐԵՈՒՀԻՆ

Միլլերից հետո ադվենտիստական շարժման պատմության մեջ երկրորդ դեմքը Ելենա Ուայտն է, մարգարեուհին, որի քարոզությունների ու հայտնությունների ներքո ձևավորվեց ադվենտիստական եկեղեցին:

Ադվենտիստները հավատում են, որ Սուրբ Հոգու պարգևներից մեկը՝ մարգարեության ոգին, բնորոշ պետք է լինի մնացորդ եկեղեցուն: Այդ էլ արտահայտվեց Ուայտի ծառայությամբ, որի մարգարեությունները, պատգամները նոր հիմնադրված եկեղեցու համար հանդիսացան ճշմարտության աղբյուր (37, գլ. 17):

Ադվենտիստները այսօր էլ պնդում են ու ապացուցում, որ Ելենա Ուայտը միայն օգնել է մարդկությանը ճանաչել Սուրբ Գիրքը, Հիսուս Քրիստոսին, նրա՝ թվով 2000 հայտնություններն ու տեսիլքները օգնելու են մարդկանց հասկանալու սուրբգրային ճշմարտությունները:

Այսինքն, չնայած որ ադվենտիստները սկզբունքորեն իրենց կանոնի մեջ չեն մտցնում Ուայտի գրությունները, ընդունելով այն փաստը, որ Հայտնության գրքով կնքվեց Ս. Գիրքը, բայց ընդունում են նրա մարգարեությունների և հայտնությունների աստվածային ծագումը և նրա միջոցով Ս. Գիրքը հասկանալու մեթոդը:

[71] * Միլլերի կողմնակիցները և շարժման ղեկավարները:

Բայց հենց այդ մոտեցումը ավելին է նշանակում, քան Կանոնի մեջ ընդգրկելը: Այդ նշանակում է վերաիմաստավորել Ս. Գիրքը այդ երկերի լույսով, այլ խոսքով, կանոնն է ստորադասվում է այդ գրություններին:

Իրենց հավատամքում[72] Ուայտի մարգարեությունների ճշմարիտ լինելը ցույց տալու համար, բերվում է երկու փաստ կամ երկու մարգարեություն, որոնք, իբր, կատարվել են: Դրանք են. ա. հոգեպաշտության[73] աճը և բ. Կաթոլիկ եկեղեցու և Բողոքական եկեղեցու համագործակցությունը (37, էջ 225):

Այդպիսով կանոնականացնելով այդ երկու մարգարեությունները, ինքնըստինքյան ենթադրում են մյուս հազարավոր մարգարեությունների կանոնականացումը: Մինչդեռ, այդ երկու գուշակությունները ոչ թե մարգարեություններ էին, այլ ընդամենը կանխատեսվող երևույթներ, դրանց մարգարեանալու կարիքն անգամ չկար և իրենց բնույթով մի նշանակալի բան չեն էլ ներկայացնում իրենցից: Հին աշխարհում մերժված բոլոր կրոնական, մանավանդ արևելյան օկուլտ շարժումները, պարզ է որ պիտի նոր երկրների ձգտեին, որն էլ եղավ ամերիկյան մայրցամաքը: Ինչպես ժամանակին կենտրոնական Եվրոպայում բողոքականության հալածումը ստիպեց նրանց տեղափոխվել օվկիանոսից այն կողմ, նույնն էլ կարելի էր ենթադրել հոգեպաշտության՝ սպիրիտիզմի մասին: Այս էր պատճառը, որ ադվենտիստները որդեգրեցին հոգեքնածության վարդապետությունը (տե՛ս ստորև), իբր պաշտպանելով իրենց շարժումը այդ հեթանոսական, նոր վերածնունդ ապրող վիուկությունից: Հետևաբար, չի կարելի այս ակնհայտ երևույթի կանխատեսմանը տալ մարգարեականի աստիճան, մանավանդ որ միջին դարերի պատմությանը ծանոթ ամեն մեկը լավ գիտե, թե ինչպես և ինչ աստիճան են բոլոր դարերում հոգեպաշտները ակտիվացել և հետո, ընդհատակ անցել կամ վերացել: Ի միջի այլոց, XX դարի առաջին կեսի սպիրիտիզմի նոր հրդեհն ավելի ուժգին էր, քան XIX դարի ամերիկյան համաճարակը[74]: Եվ ընդհանրապես, բոլոր հակա-քրիստոնեական շարժումները իրենց ավելի ազատ ու անարգել գտան ամերիկյան մայրցամաքում:

Այսպիսով, կրոնական առումով հոգեպաշտությունը, որպես շարժում կամ կրոնական ուղղություն միշտ էլ եղել է այնպիսի վիճակում, որ պարբերաբար, պարարտ, նպաստող պայմանների առկայության դեպքում միշտ աճել ու բռնկվել է, բայց հետո՝ շատ շուտով մարել: Ավելի ուշադրության արժանի կլիներ Ուայտի մարգարեությունները, եթե նրանք կանխատեսեին XIX-XX դարերի աթեիզմի զարթոնքն ու աճը, որի նախադեպը չէր եղել անցյալում:

Ուայտի հաջորդ մարգարեությունը՝ կաթոլիկ և բողոքական եկեղեցիների համագործակցության մասին, անշուշտ դարձյալ չի կարելի դասել մարգարեությունների շարքին, քանի որ այդ էլ կարելի էր «հաշվարկել» և, հետևաբար, տրամաբանորեն ենթադրել ու կանխատեսել: Իսկ իրականում այդ «մարգարեությունը» բողոքական եկեղեցուն պարսավելու ու նրանից «վրեժխնդիր» լինելու ցանկությունն էր, քանի որ երբ չիրակա-

---

[72] * Նշված գրքի վերնագիրը հենց այդպես էլ հնչում է՝ «Յոթներորդ օրվա ադվենտիստները հավատում են...»:

[73] ** Հոգեպաշտություն կամ սպիրիտիզմ, որը լայն տարածում գտավ ամերիկյան մայրցամաքում այդ տարիներին:

[74] * XX դ. սպիրիտիզմը լայնորեն տարածվեց աշխարհով մեկ. մեջտեղ եկան զանազան «անվանի» մեդիումներ, առաջացան նմանատիպ շարժումներ. աստղագուշակություն, ՉԹՕ-ի ջատագովներ (UFO-ուֆոլոգներ), էքստրասենսներ և այլն:

նացան Միլլերի մարգարեությունները, նրանք՝ Միլլերն ու իր համախոհները վտարվեցին բողոքական եկեղեցուց. ուստի, պարզ է որ բողոքականներն էլ պետք է դասվեին սատանայի կնիքը ունեցող կաթոլիկ եկեղեցու շարքին, որն էլ արվեց Ուայտի այդ «հայտնությամբ»: Իսկ համագործակցությունը նրանց միջև նույնն է, ինչ որ այսօր: Հռոմեական եկեղեցին լինելով ամենահզորը աշխարհում, միշտ էլ կարողացել է համագործակցել բոլոր կրոնական ուղղությունների հետ: Իսկ Եկեղեցիների Համաշխարհային - Խորհրդի գոյությունը և գործունեությունը ամեննին չի նշանակում բողոքական ու կաթոլիկ եկեղեցիների մերձեցում:

Այսպիսով, ադվենտիստական նորաստեղծ եկեղեցին, ուշադրությունը բևեռելով Ուայտի մարգարեական շնորհի վրա, նրա 70-ամյա մարգարեություններով լեցուն գործունեության վրա, սնվեց և իր վարդապետությունը խարսխեց դրանց վրա: Իսկ ինչ վերաբերում է Ս. Գրքին, ապա այն անցավ երկրորդ՝ հետին պլան. հիմա Ս. Գիրքը պետք է իրենց ստեղծած վարդապետությունը հիմնավորելու նպատակին ծառայի (հետադարձման սկզբունքը):

### 3. ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Ընդհանուր առմամբ ադվենտիստական եկեղեցին Ս. Երրորդությունը դավանող կրոնական շարժումներից է, ի տարբերություն նրանց հոգեզավակ՝ միադավան Եհովայի վկաների: Ադվենտիստական եկեղեցու վարդապետությունը շատ բաներով նման է բողոքական եկեղեցու վարդապետությանը, քանի որ նրանից են առաջացել: Հաճախ նրանց վարդապետությունների միջև տարբերությունները այն աստիճան աննշմարելի են, որ դժվարությամբ են զանազանվում: Բայց վարդապետական մի քանի ցայտուն կետերում, հիմնականում վախճանաբանական հարցերում, տարբերությունները շատ են զգալի, և հենց այդ կետերով էլ նրանք տարբերվում են մնացած քրիստոնեական եկեղեցիներից:

Այդ կետերն են. մարդու հոգու անմահության խնդիրը, Շաբաթի խնդիրը, Երկրորդ գալստյան հետ առնչվող հարցերը (երկնային Սրբարանի մաքրագործումը, հետաքննական դատաստանը, փրկության ծրագիրը և նման հարակից հարցեր): Բացի այս հիմնական դրույթներից, ադվենտիստները առանձնանում են մյուսներից նաև ծիսական մանր հարցերում, հիմնականում ձգտելով ամեն ինչի հիմնավորումը գտնել Հին Կտակարանում: Հինկտակարանամետությունը XIX դարում ամերիկյան բոլոր աղանդներին բնորոշ ընդհանուր սկզբունք դարձավ:

Հայաստանում նրանք սիրում են տարածել իրենց գրքույկները, տալով դրանց «Աստվածաշնչի ձեռնարկ» կամ «Աստվածաշնչի դասագիրք» անվանումները, դրանով ցույց տալով, թե իրենք են Աստվածաշնչի ուսուցման հեղինակավոր կազմակերպությունը, մինչդեռ այն, ինչ սովորեցնում ու հրատարակում են՝ Միլլերի, Ուայտի քարոզներն ու հայտնություններն են, իրենց եկեղեցու դավանանքի շարադրումը, որն առաջին հայացքից թվում է խիստ սուրբգրական, բայց իրականում՝ նույն միլլերականությունն է՝ պարզունակ տրամաբանությամբ ու հավաստումներով:

Հայերենով հրատարակած գրականության լեզվից կարելի եզրակացնել, որ դրանք բոլորն էլ թարգմանություններ են ռուսերենից (տե՛ս 38, 39):

## 3.1. ՀՈԳԵՔՆԱԾՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ ՄԱՀՎԱՆ ՈՒ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

Հոգեքնածության վարդապետությունը (soul sleeping) մասնակի ներկայացվեց նախորդ գլխում՝ Եհովայի վկաների վարդապետական դրույթները քննարկելիս, որոնք, փաստորեն, որդեգրել են ադվենտիստների տեսակետը:

Ուայտի պարզունակ դատողությունը հոգիների մեռնելու մասին (38, էջ 29) նույնպես փոխանցվել է ռասելականներին, որոնք անգամ բերված օրինակներն են ընդօրինակել (-Ժողովող 9.6 և այլն):

Հոգեքնածության նյութի մասին խոսելիս, որպես կանոն, հարկ կլինի անխուսափելիորեն առճակատման գնալ Յոթներորդ օրվա ադվենտիստների հետ, քանի որ միշտ և ամենուրեք՝ Եհովայի վկաների նման, նրանք էլ հոգու անմահության գաղափարը համարում են սատանայի կողմից ներմուծված մեծագույն սուտը (38, էջ 27):

Իրենց հավատամքը շարադրելիս Յոթներորդ օրվա ադվենտիստները բերում են մի քանի համարներ Ս. Գրքից, որպես ապացույց հոգեքնածության վարդապետության ճշմարտացիության (37 գլ. 7): Ստորև բերում ենք այդ համարներից մի քանիսը:

1. Թվեր 31.19: Այս համարում ասվում է, որ մարդասպանը կամ պղծության դիպած մեկը պետք է բանակից դուրս գտնվի և մաքրվի.

«Ով որ մարդ է մեռցրել և ով որ մեռածի է դիպչել երրորդ օրը և յոթներորդ օրը թող մաքրվի...»:

Եվ գործի դնելով արդեն հայտնի «լեզվաբանական» մեթոդը, Յոթներորդ օրվա ադվենտիստները գրում են, որ այս համարի բնագրում «մարդ» բառի տեղ օգտագործված է nephesh բառը (Ով որ nephesh է մեռցրել....), որին համապատասխանում է հոգի բառը, ուստի, համաձայն այդ համարի այն ենթակա է մեռնելու (37, էջ 82-83): Ինչպես տեսնում ենք, այդ համարից բխող եզրահանգումը կապ չունի համարի բովանդակության հետ: Եբրայական nephesh-ը միայն «հոգի» իմաստով չի գործածվում, այլ շատ հաճախ է գործածվում «մարդ» իմաստով, ինչպես և թարգմանվել է: Իսկ բովանդակությունից դուրս, տեքստից դուրս, որևէ համարի քննարկումը ճիշտ չէ: Երբ անտեսվում է բովանդակությունը, եզրահանգումները կարող են լինել միանգամայն տարօրինակ. այսպես 2 Թագ. 12.13 համարում Նաթան մարգարեն ասում է Դավիթ թագավորին. «Տերն էլ քո մեղքերը ներեց, պիտի չմեռնես»: Եթե այդ հատվածը դիտարկվի բովանդակությունից դուրս, ապա կարելի է այդտեղից եզրակացնել, որ Դավիթն ընդհանրապես պիտի չմեռնի:

2. Դատ. 16.30: «Իմ անձս փղշտացիների հետ թող մեռնի» (37, էջ 82): Քանի որ եբրայերեն բնագիրը այստեղ դարձյալ օգտագործում է nephesh-ը (Իմ nephesh-ը փղշտացիների հետ թող մեռնի), ուրեմն, ինչպես պնդում են ադվենտիստները, այստեղից կարելի է եզրակացնել, որ այդ nephesh-ը ենթակա է մեռնելու, այսինքն, մարդու հոգին մահվան ենթակա է: Ինչպես առաջին օրինակում, այստեղ էլ, բովանդակությունից դուրս գալու ցայտուն օրինակն է, նման հետևությամբ:

Ի վերջո, ի՞նչ է մահը: Այս հարցի պատասխանից էլ կախված է վերը բերված համարների մեկնաբանությունը: Յոթներորդ օրվա ադվենտիստները տալիս են մահվան հետևյալ սահմանումը.

«Մահը ոչնչացում չէ, այն քնած, անգիտակցական վիճակ է, երբ անձը սպասում է հարության» (37, էջ 352):

Բայց հե՛նց այդ սահմանման մեջ հակասություն կա. ի՞նչ է նշանակում անգիտակից վիճակ. այդ ի՞նչ անգիտակից վիճակ է, երբ այդ վիճակում գտնվող մեկը կարող է սպասել, այսինքն՝ նա այնքան էլ անգիտակից վիճակում չի գտնվում: Իսկ Յոթներորդ օրվա ադվենտիստները ամենուր պնդում են, որ սուրբգրային ոչ մի համար չկա, որ փաստի մահվանից հետո մարդու «գիտակից» վիճակի գոյությունը: Իսկ այն բացահայտ օրինակները, ինչպես օրինակ Ժող. 12.7-ն է, նրանք ընդունում են որպես այլաբանություններ:

«Ոչ Հին Կտակարանում nephesh-ը և ոչ էլ Նոր Կտակարանում pnevma-ն երբեք չի նշանակում մահվանից հետո հոգու գիտակցական գոյությունը: Այն ավելի հաճախ օգտագործվում է «կենդանության շունչ» իմաստով, որը նույնպես օգտագործվում է անասունների համար» (37, էջ 313): Եվ, շարունակելով այդ գաղափարը, Յոթներորդ օրվա ադվենտիստները մարդու կենդանական բնությունը հավասարեցնում է անասնականին՝ ոչնչացնելով մարդու մեջ Աստծու պատկերն ու նմանությունը:

Ստորև ներկայացնում ենք հոգեքնածության վարդապետությունը ժխտող բազմաթիվ համարներից ամենահայտնիները:

1. Ղազարոսի հարության դրվագը (Հովհ. 11-րդ գլուխ):

25-26 համարներում Հիսուս շեշտում է, որ Իրեն հավատացողը թեև մեռնի՝ պիտի ապրի և հավիտյան պիտի չմեռնի: Այսինքն, մարդու կյանքում ժամանակային խզում, անդունդ, չի կարող լինել մինչև հարություն և, ինչպե էլ մեկնենք այդ երկու համարները, չենք կարող այնտեղ հայտնաբերել անգիտակցական ժամանակահատվածի գոյություն: Ավելին, հունարեն բնագիրը 26-րդ համարում օգտագործում է կրկնակի ժխտում, որով - Հիսուս ավելի ցայտուն է արտահայտում ՉՄԵՌՆԵԼՈՒ սկզբունքը (4, էջ 557-559):

Այսպես, բնագիրն ունի այս կառուցվածքը.

«Ով ապրում է և հավատում է ինձ չի (=հունարեն hou me) մեռնի հավիտյան» (թե hou-ն և թե me-ն ժխտական մասնիկներ են):

Ինչպես տեսնում ենք, այստեղ ժխտական չի-ն բնագրում կրկնակի ժխտում է ընդգրկում՝ hou (առաջին ժխտումը) և me (երկրորդ ժխտումը), այսինքն, «չի մեռնի» արտահայտությունը ունի «ոչ մի դեպքում չի մեռնի» ձևը: Իսկ այդ սաստող, հաստատական ոճն ասում է, որ հոգին մարմնի մեռնելուց հետո երբեք չի մեռնի, այն արթուն վիճակում է գտնվելու: «Ոչ մի դեպքում չի մեռնի» արտահայտության մեջ անհնար է «հայտնաբերել» ժամանակային միջանկյալ խզում:

Այստեղ, իհարկե, Յոթներորդ օրվա ադվենտիստները կբերեն այն փաստարկը, որ հենց այդ նույն գլխում Հիսուս մեռածին քնած է անվանում (Հովհ. 11.11), դրանով ցույց տալով, թե իբր հոգին քնում է մեռնելիս, անցնում անգիտակից վիճակի: Այդ հեշտությամբ է բացատրվում. պետք է ցույց տալ, որ Նոր Կտակարանում հաճախ է ննջել և մեռնել բայերը նույնացվում են, ինչպես օրինակ Ստեփանոսի քարկոծման դրվագում. «Տեր,

այս մեղք մի համարիր նրանց, - այս ասելով՝ ննջեց» (Գործք 7.59)։ Պարզ է, որ այդ համարում «ննջելը» մեռնելն է նշանակում, իսկ նախորդ՝ 7.58 համարում Ստեփանոսն աղոթում է. «Տեր Հիսուս, ընդունիր իմ հոգին»։ Ուրեմն, Ստեփանոսի մեռնելը անգիտակից վիճակին անցնել չի նշանակում, այլ Հիսուս պետք է ընդուներ նրա հոգին։ Այդ երկու համարները ոչ մի կերպ չի կարելի մեկնաբանել այնպես, որ Ստեփանոսը պիտի մեռներ, հոգին քներ ու, հարությունից հետո միայն, միանար Հիսուսին։

Ավելին, Նոր Կտակարանը Հիսուսին չհավատացողներին էլ է «մեռելներ» անվանում, ու ոչ թե՝ անգիտակից վիճակում գտնվողներ։ Օրինակ Մատթ. 8.22-ում, ուր Հիսուս ասում է. «Թող մեռելները թաղեն մեռածներին» (4, էջ 560-561)։ Անգիտակից վիճակում գտնվող մեռելը չի կարող գործ անել։

2. Այլակերպության տեսարանը (Մատթ. 17.1-13)։ Հայտնի է, որ Մովսեսը մահացել էր, և այդ ինչպիսի անգիտակից վիճակում էր նա գտնվում, որ խոսում էր Հիսուսի հետ (համար 3)։

3. Փիլիպ. 1.21-24։

«Քանի որ ինձ համար կյանքը Քրիստոս է, իսկ մեռնելը՝ շահ։ Ապա եթե այս մարմնի կյանքը արդյունավոր գործի համար է, ես չգիտեմ, թե որն ընտրեմ։ Ճնշված եմ երկուսից էլ. մեկնել (այսինքն՝ մարմնից դուրս գալ) և Քրիստոսի հետ լինելը ավելի լավ եմ համարում. իսկ մնալ այս մարմնի մեջ՝ առավել կարևոր է ձեզ համար»։

Յոթներորդ օրվա ադվենտիստները այս հատվածը մեկնում են այսպես. այստեղից դեռ չի երևում, որ մեռնելուց անմիջապես հետո, Պողոս առաքյալը պիտի միանա Հիսուսի հետ, այլ ցույց է տալիս նրա ցանկությունը, ձգտումը հեռանալ և իհարկե, վերջում, լինել Հիսուսի հետ։

Նախ, այդ դեպքում անհասկանալի է դառնում համեմատությունը. ստացվում է, որ - Պողոսը անգիտակից վիճակին անցնելը գերադասում է Հիսուսի համար այս աշխարհում աշխատելուց, որն անընդունելի է։ Ընդհակառակը, Պողոսն ուզում է ասել, որ մահվանից հետո սպասվող վիճակը՝ Քրիստոսի ներկայության մեջ անցնելն է, և այդ, ինչի հետ էլ որ համեմատվելու լինի, ամենալավագույնը կհամարվի։

23-րդ համարում «մեկնել» բայը Յոթներորդ օրվա ադվենտիստները բացատրում են որպես մեկնելու ընթացք, այսինքն, Պողոսի ասածը, իբր, չի նշանակում նույն պահին կատարվող երևույթ, այլ՝ շարունակական բնույթ ունի։ Այս տրամաբանությունը, ինչպես պարզ երևում է հատվածի բովանդակությունից, իրենց վարդապետությանը համարեցնելու միտում ունի։ Մինչդեռ այդ համարի բնագրային քննությունը այլ բան է ասում (4, էջ 560)։

Այսպես, հունարենն ունի այս ձևը (լատինատառ տառադարձությամբ).

eis to analusai kai sun christo einai:

ուր analusai (մեկնել) և einai (լինել) բայերը արտահայտված են նույն անորոշ դերբայական ձևով, ընդ որում այդ երկուսի համար օգտագործվում է մեկ որոշյալ հոդ՝ to, և երկու բայերն էլ կապված «kai» (=և)-ով, որը նշանակում այդ երկու բայերի միաժամանակյա գործողության մեջ լինելը։ Եթե «մեկնելը» ունենար ոչ անմիջականորեն կատարվելու

իմաստ, ապա նախադասությունը կունենար այլ կառուցվածք: Այսինքն, ինչ-որ ժամանակահատված կամ ժամանակաշրջան «խցկել» «մեկնել» և «լինել» բայերի միջև, և մեկնաբանել այդ այնպես, որ երկրորդ բայի իրականացման և առաջին բայի իրականացման ժամանակների միջև որոշակի ժամանակ պետք է անցնի, բացառվում է:

### 3.2. ՇԱԲԱԹ ՕՐՎԱ ԽՆԴԻՐԸ

Յոթներորդ օրվա ադվենտիստները առանձնահատուկ, ինչ որ տեղ նաև ծայրահեղ վերաբերմունք ունեն շաբաթ օրվա հանդեպ: Ավելին, Ղեռան քարոզի մի քանի համարներից ելնելով նրանք եզրակացնում են, որ Օրենքը (Հին Կտակարան) ուժի մեջ է մնում քրիստոնեական դարաշրջանում և որ Քրիստոս դիտավորություն չուներ փոխելու դրությունը (39, էջ 63): Եվ, շարունակելով, նրանք պնդում են, որ Տասնաբանյայի Չորրորդ պատվերը արժանի է հատուկ ուշադրության, իսկ այն փոխողները՝ հատուկ պարսավանքի: Հենց այստեղից է գալիս Յոթներորդ օրվա ադվենտիստների թշնամական վերաբերմունքը Հռոմի եկեղեցու հանդեպ, մանավանդ՝ Հռոմի պապի: Յոթներորդ օրվա ադվենտիստները սիրում են պապին նույնացնել Հայտնության գազանի հետ և շաբաթ օրը չպահողներին՝ գազանի կնիքը ընդունողների հետ:

Յոթներորդ օրվա ադվենտիստներին բնորոշ է նաև ձգտումը հինկտակարանյան սկզբունքներին. բայց ինչո՞ւ, այդ դեպքում, միայն Չորրորդ պատվերն է առանձնացվում: Չէ՞ որ Հին Կտակարանը միայն Տասնաբանյայով չի սահմանափակվում: Թլփատության խախտումն էլ պատժվում էր մահվամբ, ինչպես շաբաթի խախտումը:

Մատթ. 12.8, Ղուկ. 6.5, Մարկ. 2.28 համարներում շեշտվում է, որ Մարդու Որդին շաբաթվա տերն է, իսկ Հայտ. 1.10-ում գրված է. «Եվ կիրակի օրը՝ Հոգին իմ վրա եկավ...»: - Համադրելով այս համարները, (39)-ի հայերեն թարգմանության հեղինակն եզրակացնում է.

«Նոր Կտակարանի հայերեն թարգմանիչները[75] վստահ են եղել, որ Տիրոջ օրը կիրակին է: Սակայն հունական բնագրում, ինչպես նաև այլ լեզուներով թարգմանություններում ասվում է. «Եվ Տիրոջ օրը եղա հոգում», իսկ Տիրոջ օրը, ըստ Ս. Գրքի համարվում է միայն շաբաթը: Ոչ մի ուրիշ օր երբեք Տիրոջ օր չի կոչվել» (39, էջ 65-66):

Ռուսերենից հայերեն թարգմանած այդ դասագրքի հեղինակները հավանաբար օգտագործել են միայն ռուսերեն թարգմանությամբ Ս. Գիրքը և երբեք էլ հունարեն բնագիրը չեն բացել, հակառակ դեպքում կտեսնեին, որ բոլոր գոյություն ունեցող թարգմանություններից միայն հայերենն է, որ ճշգրտորեն է թարգմանել հունարեն բնագիրը: Հունարենը Հայտն. 1.10-ում օգտագործում է «te kiriake hemera», որը թարգմանվել է «կիրակի օրը»՝ քանի որ հայերենում կիրակի-ն հենց նշանակում է Տիրոջ օր՝ Տերունական օրը: Իսկ պնդումը, թե Տիրոջ օրը միայն շաբաթն է եղել, դարձյալ ճիշտ չէ, քանի որ բոլոր օրերն են Տիրոջը: Իսկ ավետարանիչների մեջբերումները ուղղակի սխալ հասկանալու կամ՝ միտումնավոր կերպով սխալ հասկանալու սկզբունքի արդյունքն է: Այսպես, բեր-

[75] * Հավանաբար նկատի ունի արևելահայերեն հրատարակության պատրաստողներին:

ված երեք մեջբերումները համատես[76] ավետարաններից համարյա նույնն բանն են ասում և նույն իմաստն ունեն, բայց Մարկոսի մեջբերման մեջ մի բառ կա, որը բացակայում մյուս երկուսի մեջ: Դա «նաև» բառն է: Այսինքն, Մարդու Որդին նաև շաբաթ օրվա տերն է. մնացած օրերն էլ Տիրոջ օրերն են, և, ընդհանրապես, ժամանակի ամեն պահ, ամեն հատված Տիրոջն է պատկանում:

Քրիստոնեությունը և մովսիսականությունը՝ հրեականությունը տարբեր բաներ են և առաջինն է իմաստավորում երկրորդին, հոգեղինացնում այն: Եկեղեցու հաստատման ժամանակներից սկսած այդ փոխհարաբերության հարցը հուզել է Քրիստոսի եկեղեցուն և միշտ էլ, ըստ արժանվույն, եկեղեցին լուծում է տվել այդ խնդրին:

I դարում Քրիստոնեական եկեղեցու վերաբերմունքը Օրենքի հանդեպ եղավ ոչ թե Օրենքի տառից կառչելը, այլ նրա հոգին, իմաստը վեր հանելը: Պողոսի աստվածաբանության մեջ այս շերտը ցայտուն երևում է Կողոս. 2.13-17, Հռոմ. 13.8-10, Գաղատ. 4.9-11, Հռոմ. 14.4-13 համարներում, քանի որ տառը, գիրը (կամ Օրենքը) սպանում է, բայց հոգին ապրեցնում (Բ Կորնթ. 3.6):

Շաբաթի անհրաժեշտությունը Յոթներորդ օրվա ադվենտիստները համարում են շաբաթվա յոթներորդ օրվա առավելությունը մյուս օրերից, որպես հիշատակ արարչագործության, երբ Աստված հանգստացավ այդ օրը և սրբեց այն: Յոթներորդ օրվա ադվենտիստները հենց այդպես էլ՝ տառացի հասկանում են շաբաթ օրվա իմաստն ու նշանակությունը, անտեսելով շաբաթ հասկացողությունը: Մինչդեռ Շաբաթը միայն օր հասկացողությունը չէ, այլ նաև դադարի, հանգստի իմաստ ունի: Շաբաթը, ըստ Տաթևացու, նշանակում է հրաժարվել, դադարել մեղքից, աշխարհիկ գործերից և վերադառնալ հոգևոր գործերին (41, էջ 16-17):

Նոր Կտակարանը լրացրեց շաբաթվա հասկացողությունը, հոգեղինացրեց այն, հանգիստը փոխարինեց լույսով, ոչ թե շաբաթը փոխեց կիրակիով, ինչպես կարծում են, այլ - Տերունական օրը՝ կիրակին ընդունեց որպես նվիրումի, հոգևոր ծառայության օր, լույսով քայլելու շրջան, քանի որ

- Հիսուս կիրակի օրը հարություն առավ,
- Լույսը առաջին օրը ստեղծվեց,
- Առաջին օրը ծնվեց եկեղեցին՝ Վերնատանը, Հոգեգալստյան օրը,
- ըստ Գործք 20.6-7 համարների Տրովադայում քրիստոնյաները հաղորդության սեղան էին բացել շաբաթվա առաջին օրը՝ միաշաբթի օրը, այսինքն՝ կիրակի օրը,
- Ա Կորնթ. 16.1-2 համարներում քրիստոնյաները շաբաթվա առաջին օրն էին հավաքվում՝ հանգանակություն անելու՝ աղքատներին օգնելու համար:

Տերունական օրը՝ կիրակին ընդունված է եղել նաև եկեղեցու շատ հայրերի և վարդապետների կողմից, ինչպես օրինակ՝ Իգնատիոսի, Իրինեոսի, Տերտուղիանոսի, Որոգինեսի: Դիդախեն, Եվսեբիոսի Պատմությունը, Բառնաբասի թուղթը և շատ ու շատ ուրիշ աղբյուրներ պարունակում են վկայություններ կիրակի օրը Տիրոջ սեղան պատրաստելու մասին (5, էջ 175-177, 4, էջ 570):

[76] * Համատես (սինոպտիկ) առաջին երեք ավետարանները:

### 3.3. ՎԱԽՃԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Վախճանաբանական հարցերի շուրջ ծավալված վեճերն ու քննարկումները, փաստորեն առաջ բերեցին ադվենտիստական շարժումը: Ադվենտիստ եկեղեցու վախճանաբանությանը բնորոշ է ընդհանուր քրիստոնեական դավանանքին խորթ և օտար հասկացություններ, որ նույնիսկ վիճահարույց է դառնում շարժումը որևէ քրիստոնեական շարժմանը դասելու հարցը:

Յոթներորդ օրվա ադվենտիստների վախճանաբանական հայացքները՝ պատկերացումները վերջին օրերի մասին, ընդգրկում է հետևյալ դրույթները.

- Եկեղեցին վերջին օրերին հեռանալու է Աստծու օրենքից, բայց մի փոքր մասը՝ մնացորդը, հավատարիմ է մնալու Աստծուն: Նրանք ծանուցելու են աշխարհին վախճանի և դատաստանի օրվա մոտալուտ լինելու, Քրիստոսի Երկրորդ գալստյանը պատրաստ գտնվելու և դիմավորելու անհրաժեշտության մասին: Այդ մնացորդ եկեղեցին - Յոթներորդ օրվա ադվենտիստների եկեղեցին է: Նրա հիմնական նպատակը Հայտնության 14-րդ գլխի երեք հրեշտակների պատգամները քարոզելն է (Հայտն. 14.6-12):

1844 թվականին, 2300 մարգարեական տարիներ հետո, Հիսուս տեղափոխվեց Երկնային Սրբարան և դրանով սկսվեց նրա ծառայության վերջին փուլը, որին հաջորդելու է Նրա տեսանելի գալուստը: Այդտեղ Հիսուս սկսել է քննական դատաստանը և Երկնային Սրբարանն էլ, երկրային սրբարանի նման, մաքրվելու է Հիսուսի արյունով: Այդ քննության ընթացքում որոշվելու է, թե մեռածներից ովքեր են հարություն առնելու հարության ժամակ, այսինքն, ովքե՞ր են այն հավատարիմները, որոնք անցնելու են երկինք և Հիսուսի հետ թագավորելու են ամբողջ Հազարամյակի ընթացքում: Այդ հավատարիմները ընտրվելու են ոչ միայն մեռելներից, այլ նաև այդ պահին ապրողներից: Նրանք, ովքեր պահել են Աստծու պատվիրանները և պատրաստվել են դիմավորելու Հիսուսին՝ վերաբնակվելու են Աստծու հավիտենական թագավորության մեջ, առանց մահ ճաշակելու:

- Երկրորդ՝ տեսանելի գալուստով սկսվելու է Հազարամյա թագավորությունը: Այդ ժամանակ տեղի է ունենալու Առաջին հարությունը, իսկ ապրողներից հավատարիմները հափշտակվելու են երկինք:

- Հազարամյա թագավորությունը Առաջին և Երկրորդ հարությունների միջև ընկած ժամանակահատվածն է: Այդ ժամանակահատվածում Հիսուս և արդարները գտնվելու են երկնքում և դատելու են մեղավորներին:

- Հազար տարի երկիրը մնալու է դատարկ, ավերված վիճակում, սատանան կապվելու է այդ ժամանակ և նետվելու է երկիր՝ իր հրեշտակների հետ միասին:

- Հազար տարին լրանալուց հետո, Հիսուսի հետ երկնքից Երուսաղեմ են իջնելու փրկվածները: Հազար տարին սիմովոլիկ տարիներ չեն, այլ՝ ճշգրիտ տոմարական հազար տարվա ժամանակաշրջան:

- Հազար տարվա ավարտին հաջորդելու է Երկրորդ հարությունը՝ մեղավորների հարությունը, որոնք արժանանալու են սատանայի և նրա հրեշտակների ճակատագրին:

- Նոր երկրում, ուր արդեն թագավորում է Աստված, հավիտյան ապրելու են փրկվածները, ուր այլևս չի լինելու մահ, ցավ, հիվանդություն (37, 23-27 գլուխներ, 40, էջ 58-73)։

Պատմական դեպքերի նման հաջորդականությունը Յոթներորդ օրվա ադվենտիստները համարում են միակ սուրբգրայինը և միակ ճիշտը։ Եվ, որպես կանոն, Յոթներորդ օրվա ադվենտիստները սիրում են այդ ամենին զուգահեռ ներկայացնել նաև պարզունակ թվաբանական հաշվարկներ, որոնք, իբր թե պիտի հաստատեն այդ ամենի ճշմարտացիությունը։ Բնականաբար պետք է մեջբերեին Դանիել մարգարեին, ուր կարելի է գտնել խորհրդավոր զանազան պարբերություններ, մարգարեական տարիներ, ժամանակահատվածներ, որոնք կարելի է նույնացնել օրերի, տարիների հետ։ Այդպես էլ եղավ. ելնելով Դանիել 9.24-25-ից, Յոթներորդ օրվա ադվենտիստները ընդունեցին, որ «Երուսաղեմը նորից շինելու հրամանը» տրվել է մ.թ.ա. 538-37թթ., Աքեմենյան Կյուրոսի կողմից, ուստի մարգարեական ժամանակները սկսվում են հաշվել հենց այդ ժամանակվանից։ Բայց, որպես հաշվարկման սկիզբ այդ թվականը չի ընդունվում։

Կյուրոսի հայտնի հրամանին համարժեք է ընդունվում մեկ ուրիշ հաշվարկման կետ՝ Արտաքսերքսեսի հրամանը՝ Երուսաղեմի տաճարի շինության վերաբերյալ՝ մ.թ.ա. 457 թվականին։

Սկսելով հաշվարկը այդ մեկնակետից ստանում ենք հետևյալ թվականները (37, էջ 41).

<¬7x7¬> <¬62x7 ¬> <¬7տարի ¬>
| | | | ||
457 թ.408 թ. մ.թ. 0 մ.թ.27 31/2 31/2 34թ.
<¬490 տարի ¬>

Վերջին յոթնյակի երկրորդ կեսը՝ 31 թվականին Հիսուսի մկրտությունից մինչև նրա «կտրվելն» է՝ խաչելությունը, որը տևեց 3,5 տարի։

Այսպիսով, ստանալով Հիսուսի՝ Օծյալի առաջին գալուստի հետ կապված թվականները, Միլլերը համոզված էր իր հաշվարկի զրոյական կետի՝ սկզբնակետի ճիշտ ընտրության մեջ։ Հետևաբար, եթե ճիշտ է ստացվում Առաջին գալուստի հանգամանքները, ուրեմն ճիշտ կլինի նաև Երկրորդ հաշվարկային թվականը՝ Գալուստի թվականը։

Այս անգամ վերցնում են Դանիելի 8.14 համարի 2300 մարգարեական օրերը, որոնք, ընդունելով հավասար մարգարեական 2300 տարիների, սկսում են հաշվել այդ նույն 457 թվականից (37, էջ 323).

<¬490 տարի ¬> <¬1810 տարի ¬>
| | |
457 թ.մ.թ.341844թ.

Մեկ այլ ժամանակահատված էլ են նշում Յոթներորդ օրվա ադվենտիստները, որի ընթացքում, մինչ Հիսուսի գալուստը, պետք է հալածանքի ենթարկվի Աստծու ժողովուր-

դը: Այդ ժամանակահատվածը կապելով Հայտնության 12.6-14 հատվածում նշված 1260 օրերի հետ, նույնացնում են այդտեղ նկարագրված կնոջը եկեղեցու հետ, իսկ վիշապին՝ Հռոմի պապի գերիշխանության հետ: Ընդունելով, որ մ.թ. 538 թվականին Հռոմի պապը ազատվեց օստրոգոթական վերջին կայսրից, և նրա իշխանությունը դարձավ անսահմանափակ՝ նա սկսեց հալածանքը ճշմարիտ եկեղեցու դեմ: Այդ թվականը ընդունելով սկզբնակետ՝ 1260 օրվա կամ 1260 մարգարեական տարիների պարբերության համար, կստանանք 538+1260=1798 թ.: Այսինքն, այդ գերիշխանության ավարտը հենց այդ թվականին պիտի լիներ: Իսկ այդ թվականին Նապոլեոնի զորքերը գրավեցին Հռոմը և պապին գերի տարան Ֆրանսիա, որտեղ էլ նա մահացավ: Այսպիսով, ըստ Յոթներորդ օրվա ադվենտիստների, 1798 թվականից սկսվում է նոր դարաշրջան, որը կանխագուշակելու էր աշխարհի վախճանի մոտալուտ լինելը (37, էջ 158-161):

Հետևաբար, ըստ Յոթներորդ օրվա ադվենտիստների, ավարտվում է վիշապի՝ Հռոմի պապի իշխանությունը և Յոթներորդ օրվա ադվենտիստները մարգարեանում են նոր եկեղեցու աճի և տարածման մասին: Այսինքն, նրանք փորձում են այդ ժամանակահատվածը լցնել մարգարեությունների կատարմամբ, որպեսզի ցույց տան իրենց թվաբանական հաշվարկների ճշմարտությունը:

Այսպես, նրանք պնդում են, որ այդ շրջանում Ավետարանը ամբողջ աշխարհում քարոզելու սկիզբը դրվեց, որովհետև 1804 թվականին հիմնադրվեց Աստվածաշնչային ընկերությունը, որը սկսեց զբաղվել Աստվածաշնչի թարգմանությամբ աշխարհի տարբեր լեզուներով: Տիեզերական նշաններ էլ եղան, որոնք նախորդեցին 1844 թվականին (37, էջ 340-344), և այդ նշանները նրանք համարեցին հաստատումն իրենց հայտնաբերած ժամանակահատվածի: Տիեզերական նշաններից նրանք առանձնացնում են 1833 թ. նոյեմբերի 13-ին դիտած աստղային անձրևը[77], որը ադվենտիստական հավատամքը ներկայացնում է մարգարեության (Հայտն. 6.3, Մատթ. 24.29) կատարում (37, էջ 341):

1833 թվականին Ամերիկայում դիտված աստղային կամ ասուպների անձրևը Լեոնիդների հայտնի անձրևն է, որը պարբերաբար դիտվում է ամեն տարի նոյեմբեր ամսին: Ադվենտիստները 1833 թվականն առանձնացնում են այդ անձրևի հորդառատության պատճառով, որն այդ թվականին կազմում էր ժամում 60,000 երկնաքար[78]: Բայց նույն ուժգնության անձրևներ դիտվել են նաև 1901 թ., 1934 թ. և 1966 թ.: Իսկ 1966 թվականին անձրևի ուժգնությունը գերազանցել է 1833 թվականին մի քանի անգամ և կազմել է 140,000 ասուպ մեկ ժամվա ընթացքում: Այսպիսով, 1833 թվականի մարգարեականությունն էլ լուրջ փաստարկ չի հանդիսանում:

Եզրակացություն: 1844 թվականի առանձնացումը, որպես Հիսուսի մուտքը Երկնային Սրբարան, որի հետևանքով երկրի վրա՝ մինչ այդ թվականը պիտի նախորդեն հասարակական, ֆիզիկական, կրոնական առանձնահատուկ երևույթներ, չի հիմնավոր-

[77] Լեոնիդ են անվանում Առյուծի համաստեղությունից դիտվող աստղային անձրևը: Վերջերս դիտվեց նույն լեոնիդների շատ «առատ» անձրևը (13 նոյեմբերի 1999), որը դարձյալ շատերին առիթ տվեց «մարգարեանալու» աշխարհի վախճանի մասին:

[78] Տե՛ս Асфрономический календарь, Постоянная часть, М, 1973, էջ 577, լեոնիդներին վերաբերող տողը՝ N 43:

վում ո՛չ պատմական, ո՛չ գիտական փաստարկներով և ոչ էլ, ինչպես տեսանք, Ս. Գրքով:

### 3.4. ՂԵՎՏԱՑԻՆԵՐԻ 16-ՐԴ ԳԼՈՒԽԸ ԿԱՄ ՔԱՎՈՒԹՅԱՆ ՆՈԽԱԶԻ ԵՎ ԱԶԱԶԵԼԻ ԽՆԴԻՐԸ

Ղևտ. 16-րդ գլուխը ամենախորհրդավոր գլուխն է ղևտական արարողակարգը ներկայացնող Ղևտական գրքում: Տարին մեկ անգամ, Քավության օրը, քահանայապետը հատուկ ծեսով ու զոհաբերություններով մտնում էր Սրբության Սրբոց՝ իր և Իսրայելի ժողովրդի մեղքերի համար քավության կարգը կատարելու և այդպիսով մաքրելու Իսրայելը մեղքից:

Այս արարողակարգում երկու այծերի՝ նոխազների դերը շատ խորհրդանշական է: - Քահանայապետը վիճակով առանձնացնում էր նոխազներից մեկը՝ Տիրոջ համար և մյուսը՝ ազատ արձակելու համար: Վիճակների վրա հենց այդպես էլ գրվում էր՝ «Տիրոջ համար» (եբրայերեն՝ laehovah) և «արձակման համար» (եբրայերենում՝ laazazel): Բոլոր թարգմանություններում, այդ թվում նաև LXX-ում և հետևաբար նաև գրաբարում, azazel-ը թարգմանվել է «արձակման համար» ձևով:

Քահանայապետը առաջին նոխազը զոհում էր, իսկ երկրորդը՝ ազատ արձակում, ընդ որում մինչ այդ ձեռքերը դնելով նոխազի վրա, խոստովանում էր իր և Իսրայելի մեղքերը և քավության նոխազը բաց էին թողնում դեպի անապատ:

Այդ դրվագի առաջին քրիստոնյա մեկնիչը՝ Պողոս առաքյալը, մեկնելով Եբրայեցիների 9-10 գլուխները, համեմատում է Քավության օրը Գողգոթայի վրա կատարված Քրիստոսի քավչարար փրկագործության խորհրդի հետ. թե՛ քահանայապետը, և թե՛ այդ երկու նոխազները խորհրդանշում են Քրիստոսին: Ա՛յս է Պողոսի ասածը:

Կան նաև այլ մեկնություններ, որոնք հիմնականում «քավության նոխազ»-ի՝ Ազազելի իմաստային թարգմանությունների վրա են հիմնված: Ոմանք ենթադրում են, թե Ազազելը աշխարհագրական վայրի անուն է, ուր արձակվում էր նոխազը, ոմանք էլ ընդունում են, որ Ազազելը հատուկ անուն է՝ դևերի իշխանի անունն է և ներկայացուցիչն է մեղքի սկզբնաղբյուր հանդիսացող Օձի՝ սատանայի կամ բուն ինքը՝ սատանան է:

Տաթևացին այդ երկու նոխազների բացատրությունը տալիս է հետևյալ կերպ (47, էջ 369). երկու նոխազները մեր Տիրոջ օրինակն են հանդիսանում՝ երկուսը միավորված մեկ անձի մեջ՝ Աստված և մարդ: Ընդ որում այս դրվագը ի սկզբանե սահմանել է Հայրը՝ փրկության ծրագիրը իրականացնելու համար և Խաչելության օրինակն են հանդիսանում: Երկու նոխազները զոհվում են մեր մեղքերի համար, իսկ քավության նոխազը (ազազելը), որի գլուխը կապում էին կարմիր ժապավենով, ցույց է տալիս Հիսուսի մեռնելը մեր մեղքերի համար: Մեր մեղքերը բարձելով նոխազի վրա՝ անապատ էին բաց թողնում նրան, խորհրդանշելով Հիսուսի՝ Հոր մոտ մեկնելը՝ փրկության գործը կատարելուց հետո:

Ղևտ. 16-րդ գլխում արծարծված հարցերը և Հիսուսի փրկագործության փոխհարաբերությունը միանգամայն այլ կերպ են մեկնաբանվում Յոթներորդ օրվա աղվենտիստ-

ների կողմից, որոնք, որպես կանոն, ամենածայրահեղ և ամենաանհաջող լուծումներ են ընդունում:

Ընդունելով «արձակվող նոխազի» բնագրային Ազազելը որպես հատուկ անուն, ադվենտիստները այն նույնացնում են սատանայի հետ (37, էջ 318), իսկ առաջին նոխազը նույնացվում է Հիսուսի հետ՝ որ իր թափած արյունով Սրբության Սրբոց է մտնում, քավության գործը կատարելու համար:

Այսպիսով, այդ տեսակետի համաձայն, Փրկագործության Տիեզերական խորհրդում մեջտեղ է գալիս սատանան՝ Ազազելը, որի վրա բարձելով Իսրայելի մեղքը՝ նրան ազատ էին արձակում դեպի անապատ: Սատանան առաջին մեղքի պատճառը դարձավ, և այդ արարողությամբ առաջին մեղքի հետևանքները՝ Իսրայելի մեղքերը նորից ետ՝ սատանայի վրա էին բարձում:

Ստացվում է, որ այդ տրամաբանությամբ Քրիստոսի փրկագործությունը, որն բովանդակ և ամփոփ պիտի լինի և անթերի, կիսատ է. այն ամբողջանում է սատանայի մասնակցությամբ: Այդ պատճառով էլ արդի շատ մեկնիչներ մերժում են այդ տեսակետը և azazel բառը մեկնում են ոչ թե որպես հատուկ անուն, այլ որպես բարդ բառ՝ az=նոխազ և azel=հեռացնել, արձակել արմատներից բաղկացած:

Այսպիսով Քրիստո՞ս, թե՝ Ազազե՞լ հարցի պատասխանը միանշանակ է: Նախ Ազազել բառի ստուգաբանությունը հստակ չէ (այն որպես հատուկ անուն ներկայացնելը կարծիքներից մեկն է), ուստի դրա վրա չի կարելի հիմնվել, մանավանդ որ Պողոս առաքյալի մեկնաբանություններում բացակայում է Ազազելի ադվենտիստական տեսակետը: - Հետևաբար, Հին Կտակարանի առաջին մեկնիչի կարծիքով, Ղևտ. 16-րդ գլուխը ամբողջությամբ վերաբերում է Հիսուս Քրիստոսին: Հին Կտակարանի խորհուրդները Պողոսը նույնացնում է միայն ու միայն Հիսուսի հետ, և փրկագործության մեջ Քրիստոսի դերը չի կարելի բաժանել մեկ ուրիշի՝ Ազազել=սատանայի հետ:

### 4. Post Scriptum
### ԿԱՄ ՀԵՏԳՐՈՒԹՅՈՒՆ

Յոթներորդ օրվա ադվենտիստների հետ շփումները, որպես կանոն, ավարտվում են վիճաբանությամբ, բայց օգտակար է հետևյալ սուրբգրային համարների վրա նրանց ուշադրությունը հրավիրել:

Շաբաթի վերաբերյալ:

Կողոս. 2.13-17: Այստեղ Պողոսը ներկայացնում է Հին Օրենքը, որպես ստվեր, իսկ բուն մարմինը՝ Քրիստոսն է, իսկ ստվերով չի կարելի առաջնորդվել, երբ Բուն մարմինը արդեն առկա է:

Քանի որ 2.16-ում օգտագործված է շաբաթներ (հոգնակի թվով), Յոթներորդ օրվա ադվենտիստներ պնդում են, որ Պողոսի ասածը վերաբերում է շաբաթվա ծիսական կարգի վերացմանը, բայց ոչ՝ Տասնաբանյայի IV պատվերին: Նոր Կտակարանում շաբաթ օրվա մի քանի կիրառությունից երևում է, որ Նոր Կտակարանում ընդհանրապես շաբաթներ՝ sabbata (հոգնակի) օգտագործված է միայն եզակիի՝ sabbaton իմաստով,

ընդգրկելով իր մեջ նաև շաբաթվա հետ կապված ողջ ծիսակարգը: Բայց Ղուկ. 4.31 համարում դարձյալ հանդիպում ենք շաբաթ բառին՝ հոգնակի թվով, ուր խոսքը գնում է շաբաթ օրվա մասին՝ եզակիի իմաստով: Գործք 20.7 համարում էլ շաբաթը եզակի թվով է՝ շաբաթ օրվա իմաստով:

Sabbata (հոգնակի) բառը առաջացել է արամերեն Sabbatha-ից, պահպանելով արամերենի վերջին a-ն, որը հունարենում տալիս է բառին հոգնակի թվի տեսք[79]: Այսինքն, կարելի է եզրակացնել, որ Նոր Կտակարանում օգտագործված հոգնակի թվով շաբաթները (sabbata), ընդհանրապես ունեն եզակիի իմաստ, և, նորագույն թարգմանություններում արդեն հոգնակի sabbata-ները թարգմանվում են եզակի թվով (օրինակ Աստվածաշնչային ընկերության NIV հրատարակությունը):

Մյուս հայտնի համարներն են. Գաղատ. 4.9-11, Հռոմ. 13.8-10, Հռոմ. 14.4-13:

Տոմարական դրությունը: Շաբաթ օրվա հետ կապված մեկ այլ հարց է այդ օրվա տոմարական դրության հարցը: Նախ, շաբաթ օրը դիտել այսօր որպես Առաջին շաբաթ օրվա «իրավահաջորդը», չի կարելի ոչ մի փաստարկով հաստատել: Տոմարական խառնաշփոթությունները, հակասությունները, տարբերությունները թույլ չեն տալիս հստակորեն պնդել, որ այսօրվա շաբաթ օրը նույն Առաջին Շաբաթ օրվա իրավական հաջորդն է:

Քննական դատաստանի և Սրբարանը մաքրելու վերաբերյալ օգտակար է բերել հետևյալ համարները. Մատթ. 25.31-33, Մատթ. 13.24-30, Ա Պետր. 4.5: Այս համարները նշում են մի որոշակի օր՝ հարությունից հետո, ապագայում, երբ լինելու է Դատաստանը և ակնարկ անգամ չկա այն մասին, որ Դատաստանը պիտի լինի մինչ Ընդհանրական հարությունը:

[79] * Աճառյան, Արմատական բառարան, III հատոր, Երևան, 1977:

## V. ՀՈԳԵԳԱԼՍՏԱԿԱՆ ԿԱՄ ՊԵՆՏԵԿՈՍՏԵԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ

### 1. ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

XIX դարի ամերիկյան մայրցամաքում առաջացած կրոնական շարժումների ընդլայնումը և տարածումը ամերիկյան մայրցամաքից դուրս սկսվեց արդեն XX դարի սկզբին: - Նոր աշխարհը Հին աշխարհի նմանողությամբ վերաստեղծելը, փաստորեն, այդ շարժումների մեջ բացահայտ կերպով է արտահայտվում:

Ժ. Սմիթի հայտնությունները Երուսաղեմն ու Իսրայելը տեղափոխեցին օվկիանոսից այն կողմ՝ արևմուտք, Միլլերն ու Ռասելը գուշակեցին աշխարհի վախճանի օրը, նշեցին տեղը, ուր պետք է իջներ Հիսուս: Սկզբունքորեն ամերիկյան մայրցամաքի «ինքնահաստատման» ծրագրերը ի չիք դարձան և, բնականաբար, պետք է սրան հետևեին նոր շարժումներ, որոնք, ծնունդ առնելով արևմուտքում, թույլ չտային այդ նույն սխալներն ու հուսախաբության տանող քարոզությունները:

Այդպես, XIX դարի վերջին օրը՝ 1900 թ. դեկտեմբերի 31-ին, ամերիկյան մայրցամաքում ծնունդ առավ հերթական կրոնական շարժում, որը բնականաբար, ընդունելով մնացած բոլորի սխալ լինելը և միայն իր ճշմարիտ լինելու սկզբունքը, ինքնատիպ դարձավ իր վերին աստիճանի մակերեսային աստվածաբանական մտքով: Այդ շարժմամբ էր, որ հիմք դրվեց մակերեսային կրոնական շարժմումների, որոնք չունենալով ոչ մի սուրբգրային հիմնավորում, աճեցին՝ հիմնավորվելով և արմատավորվելով անհատների անձնական փորձառությունների վրա, ցանկացած քամուց շեղվելով և տարուբերվելով դավանական լաբիրինթոսներում, ամեն անգամ ընդլայնվելով և տարածվելով՝ նորանոր անդամներ ներգրավելով, որոնց կրոնական արմատները նույնքան մակերեսային են... Հոգեգալստական կամ Պենտեկոստեական շարժումն էր, որ ծնվեց XX դարի արշալույսին...

Բայց այս շարժումը ևս, մյուսների նման, նորություն չէր եկեղեցու համար. այն ունեցել էր իր նմանակները անցյալում, որոնց համար Պատմությունը տվել էր իր վերջնական գնահատականը: Դա մոնատանականությունն[80] էր և բարեշրջման ժամանակների ծնունդ հանդիսացող բազում կրոնական շարժումներ:

II դարի կեսին, Փռյուգիայում նորադարձ նախկին մի հեթանոս քուրմ, Մոնտանոս անունով, իրեն հռչակեց մարգարե (42, էջ 84): Երկու մարգարեուհի՝ Մաքսիմիլլան ու Պրիսկիլլան, Մոնտանոսի համախոհներն էին: Այդ նոր պարակլետը՝ մխիթարիչը[81], հայտարարում էր, որ Հիսուս Քրիստոս պիտի իջնի Փռյուգիայում՝ Պեպուզա քաղաքի մոտ և նա սկսում է իր համախոհների հետ հավաքվել և սպասել նրան: Նշենք, որ Սմիթը, -

---

[80] * Բ դարի կեսերին Փռուգիայում առաջացած մի նոր մարգարեական շարժում՝ հայտնութենաբանական և վախճանաբանական բնույթի:

[81] * Հովհ. 14.26 համարի խոստումի իրականացումը:

Միլլերը Հիսուսին «իջեցնում էին» ամերիկյան մայրցամաքում, իրենց բնակավայրերի մոտ, ինչպես Մոնտանոսը:

Մոնտանականների քարոզությունները աշխարհի վախճանի օրվա մոտալուտ լինելու մասին, պահանջում էր նորանոր հայտնություններ՝ դրան սպասող և իրեն հավատացող ժողովրդի համար: Փռյուգիացի մարգարեն, որպես Վերջին օրերի աստվածային հայտնությունները աշխարհին հայտնող մարգարե (հմմտ. Ժոզեֆ Սմիթի հետ), ներկայացավ որպես «խողովակ», որի միջոցով այդ հայտնությունները տրվում էին աշխարհին: Ընդ որում, այդ հայտնությունները տրվում էին մարգարեին և մարգարեուհիներին հուզավառության (էկզալտիկ) վիճակում գտնվելիս: Պաշտամունքի ժամանակ ընկնելով մտահափշտակության (էքստազ) մեջ, այդ մարգարեները սկսում էին խոսել, իրենք էլ չիմանալով թե ինչ, իսկ ներկաները գրի էին առնում այդ խոսքերը և այն ներկայացնում որպես Աստծու խոսք, որպես նոր հայտնություն:

Եվսեբիոս Կեսարացին, գրելով մոնտանականների մասին, այսպես է նկարագրում նրանց. «Շամբշաբար, անճահիս (անպատշաճ) և օտարաձայն բարբառէին» (43, էջ 376): «Շամբշաբար» բառը թարգմանվում է մոլագար, խելագար բառերով: Պաշտամունքային այդ ձևը, երբ մոլագար, օտարաձայն բարբառում էին, նույնն է, ինչ որ այսօրվա շատ աղանդավորների պաշտամունքային կամ ինչպես իրենք են ասում, «փառաբանման» ձևը:

Եկեղեցու պատմությունը նման «շամբիշ» աղանդների՝ մոնտանականությունից հետո, այլևս չի հիշում մինչև XVII-XVIII դարերը, երբ բարենորոգչական շարժման (ռեֆորմացիա) հաջորդած բազում ճյուղավորումներ սկսեցին որդեգրել պաշտամունքային շամբիշ ձևերը, իհարկե, հավատալով, որ այդ ունի աստվածային ծագում: Ռմն Ֆոքս, Շոտլանդիայից, Մոնտանոսի նման իրեն հռչակեց երկնային կոչում ունեցող՝ այս աշխարհը կարգի բերելու և Քրիստոնեությունը ուղղելու համար: Ֆոքսը գտնում էր, որ Ս. Գիրքը ինքն իրենից մեռած գիրք է ներկայացնում: Այն կենդանացնելու փոխարեն պետք է հավատացյալը պայծառանա, ներքնապես լուսավորվի Սուրբ Հոգու միջոցով: Իրենց հավաքներում, կենտրոնանալով, նրանք ձգտում էին ներքնապես լուսավորվել՝ լռության մեջ մնալով և երկարատև «ինքնախոկումներից» հետո պայծառություն ստացողը սկսում էր մարգարեանալ, որի խոսքերը ընդունում էին որպես նոր հայտնություն մարդկությանը: Այս դավանանքով, բնական է, նրանք ամենևին կարիք չեն ունենա ո՛չ Սուրբ Գրքի, ո՛չ որևէ խորհրդի կամ որևէ կրոնական պահանջմունքի: Մոնտանոսի նման Ֆոքսն էլ երկնային հայտնությունները ստանում էր մտահափշտակության (էքստատիկ) վիճակում՝ ինչպես ինքն էր ասում, անմիջապես Աստծուց, Սուրբ Հոգու միջոցով: Հետևաբար, ամեն մեկը, ինչպես պնդում էր Ֆոքսը, անմիջապես լուսավորվելով Սուրբ Հոգուց, իմանում էր ամեն անհրաժեշտ բան և, բնականաբար, կարիք չուներ ոչ եկեղեցու, ոչ էլ՝ Սուրբ Գրքի: Հավաքվելով միասին նրանք, քվակերները (քվակեր՝ անգլերեն quake = դող, դողացնել, ըստ Փիլիպ. 2.12 համարի) սպասում էին որպեսզի իրենցից մեկն ու մեկը «պայծառություն» ստանա, սկսի մարգարեանալ, հայտնի երկնային Աստծու կամքը: Պաշտամունքային այդ ձևը, անշուշտ, հեթանոսական ծագում ունի, հոգեպաշտների՝ սպիրիտիստների այդ ժամանակ տարածված արարողություններից էր:

XVIII-XIX դարերին ի հայտ են գալիս նաև այլ կրոնական շարժումներ, որոնց հավատամքը նույնն է, ինչ որ այսօրվա խարիզմատիկ[82] շարժման հավատամքը: Օրինակ Անգլիայում, Էդ. Իրվինգի (1792-1834) հետևորդները՝ իրվինգիստները, քարոզում էին առաքելական ժամանակների շնորհների անհրաժեշտությունը, որոնք պիտի փոխանցվեին և ի հայտ գային նաև իրենց ժամանակներում: Այդ շնորհների մեջ իրվինգիստները տեսնում էին լեզվախոսությունը, բժշկությունը, մարգարեությունը և այլն:

Իրվինգիստներին զուգահեռ Անգլիայում առաջ եկավ մի նոր շարժում ևս, որի հիմնադիրը եղավ անգլիկան եկեղեցու քահանա Դերբին: Նա մերժում էր ամեն ինչ, քարոզելով կրոնական ազատություն՝ մերժելով բոլոր հավատամքներն ու հարանվանությունները: Նա միայն հաղորդությունն էր ընդունում որպես հավատացյալների միության խորհուրդ:

Այս ծայրահեղ կրոնական շարժումները, նրանց առաջ քաշած սկզբունքները դուռ բացեցին հետագայում բազմաթիվ նորանոր ճյուղավորումների առաջացման համար:

Կրոնական այս ազատականությունը, իր սկզբունքներով հանդերձ, այն աստիճան ազատագրեց «մարդկությունը», որ ամեն մեկին հռչակեց թե՛ քահանա, թե՛ թագավոր, թե՛ մարգարե, թե՛ տեսանող, թե՛ առաքյալ և հեռանալով ուղղափառ քրիստոնեությունից, անգամ որդեգրեց հեթանոսական տարրեր, որոնք թափանցել էին արևելյան կրոնների ծիսական արարողություններից:

Այդ ազատական շարժմանը դեմ կանգնեց ֆունդամենտալիզմը, որը լինելով պահպանողական շարժում, աշխատում էր թույլ չտալ նորամուծությունների մուտքը, այն համարում էր վտանգավոր և կործանարար: Ֆունդամենտալիստական շարժումը XIX-XX դդ ընդգրկեց հիմնականում բողոքական, մեթոդիստ եկեղեցիները կամ ավետարանական շարժումը:

Ֆունդամենտալիզմի հետ միասին առաջ եկավ Սրբության շարժումը, որը հիմնվելով Ջ. Վեսլիի առաջ քաշած այն սկզբունքի վրա, ըստ որի հավատացյալը «արդարացմանը» զուգահեռ պետք է նաև «սրբանա» իր կյանքի ընթացքում:

Այս հավատամքի վրա խարսխված, մեր դարասկզբին առաջ եկավ մի շարժում, որը տրամաբանական զարգացումն էր վերը թվարկած շարժումների և նրանց ժառանգորդը, շարժում, որը իրվինգիստներից որդեգրեց պաշտամունքի էքստատիկ արարողակարգը, հուզականության վառ արտահայտմամբ առաջ բերելով հոգեբանական զանազան երևույթներ (որն էլ շատ հեշտությամբ ընկալում են «մակերեսային» քրիստոնյաները), որին նրանք վերագրեցին աստվածային ծագում և առաջնորդություն:

«Մանկությունը հիշելու» սկզբունքը, որը բնորոշ էր ամերիկյան մայրցամաքի կրոնական շարժումներին, XX դարի մոնտանականների համար ամենակարևոր սկզբունքը դարձավ. նրանք քարոզում էին, որ այն, ինչ տեղի է ունեցել առաքելական շրջանում, կարող է կրկնվել նաև մեր օրերում: Սուրբ Հոգու պարգևներից առանձնացնելով լեզվախոսությունը (գլոսսոլալիա), հոգեգալստականները այն համարեցին պարտադիր ամեն հավատացյալի համար, դրանում տեսնելով Սուրբ Հոգով մկրտված լինելու նշանը: Սր-

82 * Յունարեն haris - շնորհք, պարգև բառից:

բության շարժման ղեկավարները քարոզում էին, որ փրկության առաջին աստիճանին՝ արդարացմանը (առաջին օրհնություն) պիտի հաջորդի սրբացումը (երկրորդ օրհնություն): Իսկ սրբացմանը պիտի հաջորդի մի երրորդ օրհնություն՝ Սուրբ Հոգու մկրտությունը, որը պիտի ուղեկցվի լեզվախոսությամբ, ընդ որում, այդ երրորդ օրհնությունը պետք է լինի շարունակական, կրկնվող: 1901 թվականի հունվարի 1-ին, Թոփեքայում (-Կանզաս) Սրբության շարժման ջատագով Չ. Պարհեմը և իր խմբերից մեկը երկարատև աղոթքներից հետո, փորձում էին իմանալ, թե ի՞նչն է պակասում իրենց՝ կենդանացնելու իրենց շարժումը և տարածելու այն աշխարհով մեկ: Պատասխանը եղավ այն, որ նրա աշակերտուհիներից մեկը՝ Ա. Օզմանը ստացավ «երրորդ օրհնությունը» և սկսեց խոսել այլ՝ անհասկանալի լեզվով: Այդպես ծնվեց մի շարժում, որը բոլոր հարցերի պատասխանը տեսավ հենց այդ մեկ երևույթի մեջ՝ լեզվախոսության (գլոսսոլալիայի) մեջ: Պարհեմը, նրա ընկերներից Դ. Սեյմուրը սկսեցին քարոզել այդ օրհնության նոր ձևը՝ հղում կատարելով Վերնատանը կատարված դեպքին՝ Հոգեգալստյան օրը: Բնական է, որ հոգեգալստականների շարժումը պետք է թափանցեր առաջին հերթին բողոքական հարանվանություններից ներս, այնտեղ, որտեղ ծնվել էին իրենք: 60-ական թվականներին հոգեգալստականությունը թափանցեց անգամ կաթոլիկների մեջ, որոնք խրախուսեցին այդ շարժումը:

Այս է պատճառը, որ բողոքական հարանվանությունները հոգեգալստական շարժում չեն դիտում որպես աղանդավորական և խիստ ծայրահեղ շարժում, ու այդ շարժումը իրենց հրատարակություններում չի ներկայացվում որպես այդպիսին: Ուղղափառ արևելյան շատ վարդապետներ հոգեգալստական շարժումը որակում են ոչ միայն աղանդավորական, այլ նաև հեթանոսական, նկատի ունենալով նրանց պաշտամունքի հեթանոսական, մարմնական, մակերեսային ձևերը (45, էջ 114):

XX դ. 50-ական թվականներին հոգեգալստական շարժումը ընդլայնելով իր աստվածաբանական հիմնադրույթները, առաջ է բերում խարիզմատիկ շարժումը, որոնք ընդունելով հոգեգալստականների բոլոր գաղափարները, մասնավորապես շեշտը դնում են միայն պարգևների վրա (ոչ միայն լեզվախոսության), նրանց բազմակողմանի դրսևորման վրա:

Մեզանում՝ Հայաստանում, հոգեգալստական շարժումը թափանցել է Ռուսաստանից, Ուկրաինայից՝ 70-ական թվականներին, երբ բողոքական համայնքից մի ստվար խումբ առանձնանալով՝ սկսեց այդ նոր երևույթը՝ լեզվախոսությունը տարածել և քարոզել Հայաստանի շրջաններում:

Հոգեգալստական շարժման մեջ նկատվում է երկու ընդգծված շերտ. չափավորներ և ծայրահեղներ: Առաջինները քարոզում են, որ փրկության համար անհրաժեշտ և բավարար է առաջին երկու օրհնությունները՝ արդարացումը և սրբացումը: Իսկ գլոսսոլալիան թեև համարվում է ոչ անհրաժեշտ, բայց՝ խրախուսվում է:

Երկրորդ շերտի ջատագովները գտնում են, որ այդ երկու օրհնությունները անբավարար են փրկվելու համար, և այդ օրհնություններին ավելացնում են երրորդ օրհնությունը՝ Սուրբ Հոգու մկրտությունը՝ գլոսսոլալիայի ուղեկցությամբ: Այդ երեք օրհնությունները անհարժեշտ և բավարար են համարում փրկության համար: Մնացած քրիստոնյա-

ներին նրանք չեն ընդունում որպես քրիստոնյաներ, այլ դիտում են որպես մոլորվածներ, որոնց անհասանելի է ճշմարտությունը՝ այսինքն Սուրբ Հոգով մկրտությունը:

Հայաստանում, ինչպես նաև ամբողջ աշխարհում հոգեգալստականների մեջ գերակշռում են այդ երկրորդ տեսակետի ջատագովները:

Այսպիսով, հոգեգալստականների վարդապետությունը քննելու համար պետք է քննել ընդամենը մեկ հասկացողություն. ի՞նչ է նշանակում Սուրբ Հոգու մկրտությունը և ինչպե՞ս է այն արտահայտվում: Մնացած ամեն ինչ բխում է այդ հարցի պատասխանից: Նրանց հրատարակած գրքերում և թերթիկներում (մեծամասամբ ռուսերեն լեզվով) հետաքրքրությունների շրջանակը բովանդակվում է միայն մեկ հարցի շուրջ՝ «հրաշագործության» տարրի շուրջ: Նրանց միացնողը ոչ թե Հիսուս Քրիստոսն է, այլ «լեզվախոսությունը»: Այդպիսի կապով միաբանվածներն էլ հեշտությամբ կարող են տրոհվել ու բաժանվել, որի ականատեսն ենք լինում ամեն օր:

## 2. ԳԼՈՍՍՈԼԱԼԻԱ ԿԱՄ ԼԵԶՎԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԵՐԵՎՈՒՅԹԸ

Էքստատիկ, գրգռված, հուզական վիճակում (էկզալտացիա) գտնվող մարդու մոտ նկատվում է անհասկանալի խոսակցական, հաճախ անկապ ու անիմաստ հնչյունների արտաբերում, որը կոչվում է գլոսսոլալիա՝ անհասկանալի լեզվախոսություն. գլոսսոլալիան բնորոշ է եղել հին հեթանոս ազգերին, կրոններին[83], որոնց ծիսական համակարգը անդամներին մղում է հուզավառության վիճակի մեջ բանականության «վերացման», որպեսզի անհատը դառնա անկառավարելի, քանի որ այդ դեպքում է միայն հնարավոր, որ Աստված իր նշանը դնի այդ անձի վրա: Այդ ծեսը կիրառում են նաև հոգեպաշտները (սպիրիտիստներ), որոնց պաշտամունքային արարողությունների ժամանակը նրանցից ամենահուզական (էկզալտիկ) անհատը ընկնելով մտահափշտակության (էքստազի) մեջ սկսում է անսովոր արտաբերություններ կատարել: Փռուգիացի մարգարեուհիներ Մաքսիմիլլան և Պրիսկիլլան այդ նույն ձևով էին Աստծու կամքը հայտնում մարդկությանը: Ի միջի այլոց, Պարհեմի աշակերտուհին էլ՝ Ա. Օզմանը, առաջինը սկսեց անսովոր լեզվախոսությունը: Եվ դա բնական է, քանի որ իգական սեռը, կենսաբանական տեսակետից ավելի զգայուն է, էկզալտիկ, քան՝ արական սեռը:

Այսօր մեզանում էլ հոգեգալստականների հավաքույթներում մեծամասնությունը կազմում են իգական սեռի ներկայացուցիչները:

## 3. ԳԼՈՍՍՈԼԱԼԻԱՅԻ ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպե՞ս մեկնաբանել սուրբգրային այն մի քանի համարները, ուր խոսվում է Սուրբ - Հոգու մկրտության մասին: Այս է այն առանձնահատուկ հարցադրումը, որի պատաս-

[83] * Օտար լեզվով «լեզվախոսությունը» ոչ քրիստոնեական՝ օկուլտ կրոններում շատ է տարածված: Վ. Բյունեի «Խաղ կրակի հետ» գրքում (էլեկտրոնային տարբերակ) բերված են օրինակներ, թե ինչպես գուրուները, գնչու «առաջնորդները» այդ «շնորհը» բաժանում են իրենց հետևորդներին:

խանը առաջ բերեց նորօրյա մոնտանականներին: Ուստի, քննել նրանց աստվածաբանությունը կամ քննել այդ մի քանի համարները նույն բանն է նշանակում:

Ավետարաններում Սուրբ Հոգու մկրտության մասին հիշվում է չորս անգամ՝ Մատթ. 3.11, Մարկ. 1.8, Ղուկ. 3.16 և Հովհ. 1.33 համարներում: Այդ համարներում Հովհաննես Մկրտիչն ասում է, որ ինքը մկրտում է ջրով, բայց իրենից հետո գալու է Հիսուս, որը մկրտելու է Սուրբ Հոգով և կրակով, ընդ որում «կրակով» բառը բացակայում է Մարկոսի ավետարանում:

Բնագրում օգտագործված է en նախդիրը (տե՛ս 17, էջ 275, 18, էջ 30), որը նշանակում է թե՛ «-ով» և թե՛ «-մեջ» (Մարկոս 1.8 համարում հոլովված ձևն է՝ առանց en նախդիրի): Այսինքն, հունարեն բնագիրը կարելի է կարդալ ինչպես «ես մկրտում եմ ջրով, բայց նա կմկրտի Սուրբ Հոգով և կրակով», այնպես էլ՝ «ես մկրտում եմ ջրի մեջ, բայց նա կմկրտի Սուրբ Հոգու և կրակի մեջ»:

Հիսուս Գործք 1.5 համարում դարձյալ ասում է Սուրբ Հոգու մկրտության մասին, նկատի ունենալով Հոգեգալուստը, որը տեղի ունեցավ Վերնատանը, երբ աշակերտները զորություն պիտի ստանային (Գործք 1.8) և Հիսուսի վկաները դառնային (Ղուկ. 24.49, - Գործք 1.4): Աշակերտները պիտի սպասեին մինչև զորություն ստանալը: Այդ օրը նրանք Սուրբ Հոգու զորությունն ընդունելով սկսեցին խոսել այլ լեզուներով (Գործք 2.1-4):

Սուրբ Հոգու այդ պարգևի մասին Նախնական եկեղեցում հիշատակվում է Գործք 8.14-17, 10.44-48, 19.1-6 համարներում, ինչպես նաև Ա Կորնթ. 12-14 գլուխներում: Մի քանի համարներում էլ Պողոս առաքյալը թվարկում է Ս. Հոգու զորության և պարգևն ընդունելու մասին (Բ Կորնթ. 12.12, Ա Տիմ. 4.14, Բ Տիմ. 1.6):

Ս. Գիրքը սովորեցնում է, որ Սուրբ Հոգին բնակվելով հավատացյալների մեջ գործում է տարբեր ճանապարհներով և տարբեր ձևերով: Մարդը չի կարող իր ուզածը թելադրել Սուրբ Հոգուն, Սուրբ Հոգին Ինքը պետք է թելադրի և գործի Իր ուզած ձևերով և - ճանապարհներով:

Հովհ. 20.22 համարում, մինչև Հոգեգալուստ, Հիսուս փչելով առաքյալների վրա՝ ասաց. «Առե՛ք Սուրբ Հոգին»: Այս պարագայում Հիսուսի արածը Վերնատանը սպասվող դեպքին սպասելու համար զորության մի մասնավոր «տվչություն» էր, որպեսզի դեռ տակավին թույլ, թերի աշակերտները կարող լինեին, պատրաստվեին հոգեգալստյանը (19, Ճ 103): Հետևաբար դա պարզապես առաքյալների հոգին զորացնելու սկիզբն էր, քանի որ առաքյալները այդ ժամանակ անգամ Հիսուսի վրա դեռ կատարյալ հավատ չունեին: Այդ փչումով Հիսուս իշխանություն է տալիս իր աշակերտներին՝ մեղքերը կապելու և արձակելու, ինչպես խոստացել էր նրանց (Մատթ. 16.19, 18.15): «Այստեղ, որպես ընդհանուր սկզբունք, - գրում է Մ. Օրմանյանը, - կարող ենք նշել, որ Հիսուսի հարությունից հետո ասածներն ու արածները մահվանից առաջ բոլոր ասածների ու արածների պաշտոնական լրացումներն ու գործադրություններն են» (45, Ճ 370):

Գործքում Սուրբ Հոգու մկրտության երևույթը նկարագրված է բազում տեղերում, տարբեր ձևերով ու անվանումներով: Այդ համարներն են.

Գործք 1.5, 11.16 - Սուրբ Հոգու մկրտության մասին,

Գործք 1.8 - զորություն ընդունելու մասին,

Գործք 1.8, 8.16, 10.44, 11.15, 19.6 - անհատների վրա Սուրբ Հոգու գալու և իջնելու մասին,

Գործք 2.4, 4.31, 9.17 - Սուրբ Հոգով լցվելու մասին,

Գործք 10.45 - Սուրբ Հոգու պարգևով լցվելու մասին,

Գործք 8.15, 10.47, 19.2 - Սուրբ Հոգին ընդունելու մասին:

Այն աշակերտները, որոնք Հիսուսի տված զորությամբ դևեր էին հանում և հրաշքներ գործում, հետագայում ընդունեցին Սուրբ Հոգին (Հովh. 20.22) և ավելի ուշ դարձյալ լցվեցին Սուրբ Հոգով (Գործք 2.1-4): Վերնատանը Սուրբ Հոգով լցվելուց հետո նույնը կրկնվեց և քիչ անց՝ Գործք 4.31 համարում:

Հետևաբար պարզ է դառնում, որ միևնույն երևույթը Գործքում ունի տարբեր անվանումներ և տարբեր ձևերով է ի հայտ գալիս, տարբեր ժամանակներում կարող է կրկնվել և այլն: Ընդ որում այդ երևույթը (Սուրբ Հոգու մկրտությունը) չի ենթարկվում մեր տրամաբանությանը, և երբեք էլ հնարավոր չէ նրա գործունեությունը սահմանափակել ինչ-որ շրջանակներում, ինչ-որ պայմաններ դնելով:

Այսպես, Սուրբ Հոգին ընդունելու փորձառությունը որոշ դեպքերում երևաց այն ընդունելուց անմիջապես հետո (Գործք 2.4), իսկ մի ուրիշ անգամ՝ ջրով մկրտվելուց մի քանի օր հետո (Գործք 8.9-17), իսկ Գործք 10.44-48 համարներում՝ ջրով մկրտվելուց առաջ: Մի քանի տեղերում էլ այն ի հայտ եկավ ձեռքերը դնելուց հետո (Գործք 8.17, 9.17, 19.6, 2 Տիմ. 1.6):

Այսպիսով կարելի է եզրակացնել, որ Նախնական եկեղեցում Սուրբ Հոգու գործունեությունը արտահայտվել է ոչ թե մարդու կամքի համաձայն, այլ ըստ Իր՝ Սուրբ Հոգու հայեցողության: Այն երբեք չի սահմանափակվել մարդկային տրամաբանության շրջանակներում, նա գործել է մի նպատակով, երկրի վրա հաստատել Քրիստոսի եկեղեցին, տալով նրան իշխանություն, շնորհաբաշխություն, զորություն՝ այս աշխարհում Հիսուսի գործը շարունակելու համար:

Ժամանակակից աղանդավորները (ոչ միայն հոգեգալստականները), հենվելով վերը բերված համարներից որևէ մեկի վրա, փաստորեն «ստիպում են» Սուրբ Հոգուն գործել իրենց ուզածի պես: Այսպես, ինչպես տեսանք, այստեղից դեռ չի կարելի եզրակացնել, որ Սուրբ Հոգու ընդունելը անպայման պետք է ընթանա այդ ձևերից միայն ու միայն մեկ ձևով, մեր ընտրած ու ցանկացած ձևով: Այդ տրամաբանությունը սուրբգրային չէ, քանի որ սահմանափակում է Սուրբ Հոգու գործունեությունը, իսկ այդ սահմանափակումը որևէ կրոնական շարժման համար հավասարազոր է այդ շարժման անհետացմանը՝ ժամանակի ընթացքում:

Եկեղեցու պատմությունն էլ հաստատում է այդ սկզբունքի ճշմարտացիությունը: Ուղղափառ եկեղեցիները իրենց գոյության ընթացքում (մոտ երկու հազար տարի) ցուցաբերել են արտակարգ «կայունություն», և ժամանակն անգամ ի զորու չի եղել սասանել այդ կայունությունը: Այսպես, Կաթոլիկ եկեղեցին իր գոյության երկու հազար տարվա ընթացքում տրոհվել է ընդամենը երկու անգամ (X-XIդդ. և XVI դ.): Հայ եկեղեցին իր գոյության 2000 տարվա ընթացքում ընդհանրապես չի տրոհվել, եթե չհաշվենք պատմական օբյեկտիվ պատճառների հետևանքով եկեղեցու ծոցից կաթոլիկների ու բողոքականների անջատումը (թեև դա տրոհում չի կարելի համարել): Նույնը չի կարելի ասել

արդի կրոնական շարժումների մասին: Բողոքականության առաջացումից մինչև մեր օ-րերը (մոտ 500 տարի) այդ շարժումը տրոհվել է հազարավոր ճյուղերի, մեկը մյուսից տարբեր դավանանքով, մինչև իսկ ոչ քրիստոնեական ուղղությունների (մորմոնակա-նություն, Եհովայի վկաներ):

Հաջորդ հարցը Մատթ. 3.11 համարում «կրակով» բառի հետ կապված խնդիրներն են: Ի՞նչ է նշանակում «Նա կմկրտի... կրակով»: Շնորհալու մեկնության մեջ (46, էջ 61) այդ հատվածը մեկնաբանվում է այսպես. Հովհաննես Մկրտչի մարգարեությունը՝ մկրտելու Հոգով ու կրակով, իրականացավ Վերնատանը, երբ կրակե լեզուները նստեցին ներկա-ների վրա և նրանք մկրտվեցին «ի Հոգին Սուրբ և ի հուր երևելի տեսլեամբ»: Եվ ապա, շարունակում է Շնորհալին, թեև ոչ այդպես հայտնի, այլ աներևութաբար՝ ըստ հավատ-քի, նույն ձևով մկրտվում են մարդիկ Հոգով ու կրակով: «Կրակով» ասելը ցույց է տալիս շնորհների ընդունելությունը, որդեգրությունը: Եվ ինչպես հուրը սկսելով փոքր տարած-քում տարածվում է և ընդարձակվում, այնպես էլ Հոգու շնորհները՝ մկրտվելուց հետո գալով՝ մարդկանց բնությունը լցնում են ուղիղ հավատով ու մաքուր վարքով, դարձնե-լով նրանց վառման նյութ:

Մատթ. 3.11 համարի մարգարեական կանխատեսման մեջ կարելի է առանձնացնել երկու ուղղություն՝ ընդհանրական և անհատական: Ընդհանրական ուղղությունը վե-րաբերում է Եկեղեցու հաստատվելու փաստին, որը տեղի ունեցավ Վերնատանը: Այս-պես, սուրբգրային այն համարները, որոնք վերաբերում են Վերնատանը և գրված են մինչև Գործք 2.1-4 համարի դեպքերը (ժամանակագրական առումով) օգտագործում են բայի ապառնի ժամանակը (Նա պիտի մկրտի), իսկ Վերնատան դեպքից հետո՝ օգտա-գործում է բայի անցյալ ժամանակը (ավելի ճիշտ՝ aorist-ը, անցյալ կատարյալը), այ-սինքն, դիտում է այդ երևույթը որպես կատարված դեպք՝ (...մեկ Հոգով մկրտվեցինք..., - Գործք 11.16, Ա Կորնթ. 12.13): Հետևաբար Հովհաննես Մկրտչի մարգարեությունը Սուրբ Հոգով մկրտելու մասին վերաբերում է Եկեղեցու ծննդյանը Վերնատանը (53, էջ 9-10):

Անհատական ուղղությունը վերաբերում է եկեղեցու անդամին, որը մկրտությամբ դառնում է եկեղեցու անդամ, Դրոշմով կնքվում և վերստին ծնունդ առնելով իր կյանքի ընթացքում վերածվում է վառման նյութի՝ փաստելով և վկայելով Հիսուսին ու Ավետա-րանը:

Այսպիսով, Սուրբ Հոգու մկրտությունը ներկայացնել որպես մի երրորդ օրհնություն՝ լեզվախոսության ուղեկցությամբ սուրբգրային չի կարող համարվել, այլ կամայական մեկնաբանության արդյունք է:

Ուստի, հոգեգալստականների հետ շփվելիս, պետք է լավ իմանալ

- որ նրանք դժվարությամբ են հրաժարվելու իրենց իմացած ու իրենց մեջ արմատա-վորված վարդապետությունից, որոնց ճշմարտացիության մեջ չեն էլ կասկածում,

- որ միանգամից չեն կարող ընդունել իրենց վարդապետության ոչ սուրբգրային հիմ-նավորումը, մանավանդ որ վստահ են, թե իրենց վարդապետությունն է միակ սուրբգ-րայինը:

Ուստի պետք է ձգտել ներկայացնել Սուրբ Հոգու մկրտության վերաբերյալ սուրբգ-րային այդ տեսակետը և ցույց տալ, որ Ս. Գիրքը հրամայում է Սուրբ Հոգով լցվել (Եփես. 5.18), այսինքն, մեր ամբողջ էությունը նվիրել Աստծուն ու, որպես հետևանք, Նրա՝ -

Սուրբ Հոգու պտուղները բերել (Գաղ. 5.22-23) ու ոչ թե արտաքին զգայացունց վիճակների մեջ ընկնելը համարել Սուրբ Հոգու ներկայության ապացույց, նշան:

### 4. ԳԼՈՍՍՈԼԱԼԻԱՅԻ ԵՐԵՎՈՒՅԹԸ

Հոգեգալստականները և խարիզմատները պնդում են, որ Սուրբ Հոգու մկրտությանը պիտի հետևի «լեզվախոսության» երևույթը, այսինքն՝ անծանոթ լեզուներով խոսելը: Ինչպես արդեն նշել ենք, հենց այս մակերեսային սկզբունքը դատապարտում է այդ շարժումներին կործանման, անհետացման, քանի որ սահմանափակվում է Սուրբ Հոգու գործունեության շրջանակները:

Ստորև ցույց կտանք, որ այդ ուղղությունների հիմնական պնդումները և սկզբունքները սուրբգրային չեն, իսկ եթե որևէ շարժում հիմնված է ավազի վրա, ապա այն կյանք չունի, ուստի շարժման ջատագովները պետք է վերանայեն իրենց սկզբունքները, ճշտելու և ճիշտ ուղու վրա դնելու այդ շարժումները:

Դարձյալ պիտի դիտարկենք Վերնատան դեպքը: Առաջին հարցն այս է. ի՞նչ լեզվով էին խոսում առաքյալները: Բնական է որ կա երկու հնարավոր պատասխան.

- մարդկային հասկանալի լեզուներով, որոնք իրենք չգիտեին և չէին սովորել, և

- ոչ մարդկային, անհասկանալի լեզուներով: Ընդ որում գոյություն չունեն ազգեր կամ ժողովուրդներ, որոնք այդ լեզուները կրողն են հանդիսանում: Այսինքն, պայմանականորեն միայն այդ լեզուները կարելի է անվանել «լեզու». դրանք անհասկանալի հնչյունների արտաբերություններ են:

Օրմանյանը միանգամից մերժում է երկրորդ տեսակետը, նշելով, որ այդ դեպքում այն չէր կարող հրաշք համարվել ականատեսների կողմից: Ի՞նչ հրաշք կարող էր համարվել «շամբիշ» խոսակցությունը (45, էջ 883):

Հետևաբար Վերնատանը լեզուների պարգևը մարդկային լեզուներով խոսելու շնորհիքն էր, որ Սուրբ Հոգին տալիս էր իր կամքի համաձայն:

Բնական է, որ երկրորդ տեսակետի ջատագովներ էլ կան (և բավականին շատ), որոնք պնդում են գլոսսոլալիայի՝ անհասկանալի արտաբերումների Սուրբ Հոգու պարգև լինելը, վկայակոչելով Կորնթացիների առաջին թղթի համապատասխան գլուխները (Ա - Կորնթ. գլ. 12-14):

Ստորև ցույց կտանք, որ երկու դեպքում էլ, ինչպես էլ որ կապենք Գործքը Կորնթացիների թղթի հետ, այսօրվա հոգեգալստականների և խարիզմատների տեսակետը լեզվախոսության՝ գլոսսոլալիայի վերաբերյալ չի հիմնավորվում Ս. Գրքով (53, գլ. 3):

Մի կարևոր դիտողություն. լեզվախոսության (գլոսսոլալիայի) երևույթը կարող են առաջ բերել նաև կեղծ ոգիները և սուտ մարգարեները: Ս. Գիրքը միշտ զգուշացնում է հեռու մնալ սուտ մարգարեներից, քանի որ նրանց թիվը գնալով պիտի ավելանա, մինչդեռ ճշմարիտ հավատի հետևորդների թիվը՝ պակասի, քանի որ նրանցից են դուրս գալու առաջինները՝ մոլորվելով ժամանակակից կրոնական «հրապույրներից»՝ որոնց թվին է պատկանում նաև լեզվախոսությունը (գլոսսոլալիան):

Տաթևացին «Գիրք Հարցմանցում» նշում է մի քանի երևույթներ, որոնցով նեռը պիտի խաբի մարդկանց վերջին օրերին: Դրանց թվում նա նշում է լեզվախոսության երևույթը. «և չար հոգիով խոսել պիտի տա այլ և այլ լեզուներ» (47, էջ 708):

Սուրբգրային պատմությունները ցույց են տալիս, որ միշտ հնարավոր է եղել կեղծել ճշմարտությունը. Մովսեսի հրաշքները փարավոնի առաջ կրկնեցին եգիպտական կախարդները (Ելք, գլ. 7-8), լուսո հրեշտակի պես կարող է երևան գալ նաև սատանան (Բ - Կորնթ. 11.14): Շատ հեթանոսական կրոններում էլ առկա է գլոսսոլալիայի երևույթը, այսինքն՝ անհասկանալի լեզուներով խոսելը: Ուստի միշտ պետք է ստուգել, թե արդյո՞ք այդ ամենը սուրբգրային հիմնավորում ունեն, թե՝ ոչ: Բայց քանի որ այդ արտաբերումները անհասկանալի են, Պողոս առաքյալը ամեն անգամ լեզուների պարգևի հետ միասին նշում է նաև թարգմանության շնորհը:

Այս օրերին Հայաստան եկած շատ քարոզիչ-հոգեգալստականներ (հիմնականում բալթյան երկրներից) ավելի մեծ արդյունքի կհասնեին, եթե իրենց պատգամները հաղորդեին մաքուր հայերենով, ինչպես առաքյալները Վերնատանը, ու ոչ թե իրենց «շամբիշ» լեզուներով:

Հունարենում glossa բառը նշանակում է լեզու, որպես մարմնի մաս, ինչպես Մարկ. 7.33 համարում, ուր Հիսուս բժշկեց խուլ-համրին՝ բռնելով նրա լեզվից (glossa-ից) և նույն բառն է օգտագործված Ա Հովհ. 3.18 համարում՝ խոսքի, խոսակցության իմաստով: Այս երկու իմաստներով էլ Նոր Կտակարանում օգտագործվում է glossa-ն, և միայն բովանդակությունն է թելադրում, թե որ նշանակությամբ է օգտագործվում glossa-ն (Lampe, էջ 316):

Մարկ. 16.17-18 համարների հրամանը՝ ուղղված առաքյալներին, բառացիորեն կատարվեցին Վերնատանը և Գործքի պատմություններում: Բայց այստեղից ամենևին չի հետևում, որ այդ գործընթացը ունի շարունակական բնույթ, այսինքն, չի նշանակում, որ Պողոսի հաջորդները կամ մեր ժամանակի հավատացյալները պիտի թունավոր օձեր բռնեն կամ թույն խմեն ու չվնասվեն, եթե վերստին ծնված են:

Նույնն էլ կարելի է ասել այդ համարում առկա «նոր լեզուներ» խոսելու մասին: Այդտեղ օգտագործված է «glossais lalesousin kainos» ձևը, ուր «kainos»-ը թարգմանվում է «նոր» բառով, չնայած հունարենն ունի neos=նոր բառն էլ: Վերջինը նշանակում է «նոր» ժամանակային կտրվածքի մեջ, օրինակ՝ գրաբարը հին հայերենն է, իսկ նոր (=neos) հայերենը՝ աշխարհաբարը: Իսկ kainos-ը այդ համարում նշանակում է «նոր» լեզուներ, բայց այնպիսի լեզուներ, որոնցով պիտի քարոզվեր ավետարանը աշխարհի բոլոր ծայրերում (Lampe, էջ 692 և 904): Հետևաբար, Մարկոսի այդ հատվածում «նոր լեզուները» չի նշանակում անիմաստ հնչյունների արտաբերում, որոնք ներկայացվելու են որպես Աստծու նշան, այլ լեզու՝ որով պիտի ավետարանը քարոզվեր: Առավել ևս մեր ժամանակներում, երբ սպիրիտուալիզմի և հեթանոսության վերընձյուղումը տարբեր դիմակների տակ հեշտությամբ կարելի է ներկայացնել այդ նշաններով:

Մարկ. 16.17-18 համարների մարգարեական իրականացումը տեղի ունեցավ Գործք 2.4-13 համարներում, հետևաբար այնտեղ էլ լեզվախոսությունը (գլոսսոլալիան) գոյութ-

յուն ունեցող մարդկային լեզուներով խոսելու երևույթն էր, որն ընդարձակեց եկեղեցին նոր անդամներով:

Հաջորդ հիշատակություններ են. սամարացիների դարձը, եթովպացի ներքինու դարձը (Գործք 8-րդ գլ.), Կոռնելիոսի պատմությունը (Գործք 10.44-46) և եփեսացիների դարձի պատմությունը (Գործք 19.1-10): Նշված համարներից միայն վերջին երկուսում է հիշատակվում այլ լեզուներով խոսելու փաստը: Եթե Սուրբ Հոգու ընդունումը անպայման պիտի ուղեկցվեր լեզվախոսությամբ, ապա այդ դեպքում անհասկանալի է, թե ինչու այդ չեղավ սամարացիների ու ներքինու հետ: Մյուս կողմից, վերջին երկու դեպքերում, ուր խոսվում է լեզուներով խոսելու մասին, Գործքի հեղինակը ամենևին էլ չի ասում, որ դրանք պատահեցին մտահափշտակության (էքստատիկ) վիճակում գտնվելու ժամանակ և անհասկանալի արտաբերություններ էին: Ընդհակառակը, ավելի շուտ այդ լեզվախոսությունը (գլոսսոլալիան) Գործք 2.1-4 հատվածում նշված լեզվախոսության երևույթն էր:

Այսպիսով, Գործքի պատմությունները ցույց են տալիս, որ լեզվախոսությունը (գլոսսոլալիան) որպես նշան երևաց հեթանոսների մեջ, որպես ապացույց այն տիեզերական առաքելության, որ Սուրբ Հոգին կարող է և պետք է գործի նաև ոչ հրեաների՝ հեթանոսների մեջ, երևացող արտաքին նշանների ուղեկցությամբ, ինչպիսին է գլոսսոլալիան, բայց ոչ երբեք մտահափշտակության (էքստատիկ) վիճակում գտնվելով, որն ավելի հեթանոսության գովերգություն կլիներ և դրանով հեթանոսներին չէիր զարմացնի:

Հաջորդ հարցը լեզվախոսությունն է Պողոսի թղթերում և մանավանդ՝ Կորնթոսի եկեղեցում:

## 5. ԼԵԶՎԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՐՆԹՈՍԻ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Մերօրյա հոգեգալստականները, իրենց «շամբիշ» լեզվախոսությունը հիմնավորելու համար, սիրում են հղում կատարել Ա Կորնթ. 12-14 գլուխներում նկարագրված գլոսսոլալիայի երևույթին: Բայց, հենց այդ վկայություններն են, որ ի վերջո չեն խրախուսում գլոսսոլալիան. այստեղ է, որ Պողոս առաքյալը ուզում է այդ թղթով շտկել Կորնթոսի եկեղեցու արատավոր վիճակը, որի պատճառներից մեկն էր գլոսսոլալիան:

Իմանալով Կորնթոսի եկեղեցու այդ մարմնական վիճակը, ամբարիշտ բարքերը, ուր ամենից շատ տարածված էր գլոսսոլալիան, մի՞թե կարելի է ընդօրինակել կորնթացիների այդ արատավոր ընթացքը կամ ձգտել դրան: Ընդհակառակը, նրանք, ովքեր ձգտում են նմանվել կորնթացիներին դեռ չեն հասկացել Պողոս առաքյալի նամակի նպատակն ու բովանդակությունը: Պողոս առաքյալի նպատակն էր այդ «մարմնավոր» եկեղեցին հանել այդ վիճակից՝ նրանց ավելի լավ ճանապարհ ցույց տալով: Իսկ այդպիսի ընկած վիճակում գտնվող եկեղեցու «անձնագիրը»՝ գլոսսոլալիան էր:

Մերօրյա հոգեգալստականները այսօր նույն բանն են քարոզում. գլոսսոլալիայով միավորված ժողովուրդը չի կարող քրիստոնեական խորը գիտելիքներին հաղորդ լինել, խոնարհվել, հնազանդվել ավետարանի խոսքին: Այսօրվա հոգեգալստականներին հենց գլոսսոլալիան է խանգարում խոնարհվելու, սիրո ճանապարհով ընթանալու: Դրա փո-

խարեն գլոսսոլալիան նրանց «շնորհում է» առանձնահատուկ հպարտություն, մեծամտություն, ուրիշներին անարգելու հանդգնություն, որը երբեք քրիստոնեական չի կարելի որակել:

Կորնթոսը գտնվելով առևտրական մեծ ճանապարհների խաչմերուկին, ունենալով զարգացած առևտուր, իր ժամանակին մարմնավորում էր անբարոյական կյանքը, ամբարշտությունը: Առաքելական ժամանակներում Կորնթոսը նշանակել էր հարբածների, անառակների խորհրդանիշը համարվող քաղաք: Անգամ ժամանակակից անգլերենում կորնթացի ածականը նշանակում է աշխարհիկ մարդ, հարուստ մարդ: Պողոսի կորնթացիներին ուղղված թղթերից իմանում ենք, որ այդ բոլոր արատավոր երևույթները փողոցից տեղափոխվել էին եկեղեցի, և առաքյալը փորձում է արմատախիլ անել այդ արատները:

Պողոս առաքյալը, թվարկելով Սուրբ Հոգու պարգևները (Ա Կորնթ. 12.4-11) նախավերջին տեղում դնում է լեզուների պարգևը և վերջում՝ թարգմանության պարգևը: Առաքյալը չէր թերագնահատում լեզուների շնորհը, եթե անգամ այն լիներ «հրեշտակային», բայց պահանջում էր, որ անպայման այն թարգմանվի՝ հասկանալի լինելու համար: Պողոսը գիտեր, որ այդ ճանապարհով «կեղծ» լեզվախոսությունն էլ կարող էր սողոսկել եկեղեցուց ներս: Ուստի Պողոսը ցույց է տալիս մեկ ուրիշ, ավելի լավ ճանապարհ՝ սիրո ճանապարհը:

«Մի՞թե բոլորն էլ առաքյալներ են, մի՞թե բոլորն էլ մարգարեներ են, մի՞թե բոլորն էլ զորություններ գործողներ են, մի՞թե բոլորն էլ բժշկելու շնորհ ունեն, մի՞թե բոլորն էլ լեզուներ են խոսում, մի՞թե բոլորն էլ թարգմանում են» (Ա Կորնթ. 12.29-30):

Ինչպես երևում է հատվածի կառուցվածքից, Պողոսը տողերի արանքում տալիս է դրանց պատասխանը՝ Ո՛չ:

Պողոսը քաջ գիտակցում էր, որ կորնթացիների՝ գլոսսոլալիայի հանդեպ ունեցած այդ ձգտումը բացասական արդյունք կբերեր և իր աշխատանքը կմնար անպտուղ, ուստի այդ մտավախությամբ էլ ցույց է տալիս նոր ճանապարհը՝ սիրո ճանապարհը:

Այո, ասում է նա, լեզուները կլռեն, մարգարեությունները կչքանան (Ա Կորնթ. 13.8-10), բայց սերը կմնա:

Հաջորդ համարներում առաքյալը բերում է երեխայության օրինակը, ասելով, որ «երբ տղամարդ դարձա, երեխայական բաները թողեցի»: Ի՞նչ նկատի ուներ առաքյալը: Պարզ է որ 11-րդ համարը հենց պատասխանն է 8-10 համարների հարցադրման: Պողոս առաքյալը կորնթացիների հետ խոսում էր պարզ, հասկանալի, մատչելի պատկերներով, ոչ այնպես, ինչպես հռոմեացիների հետ, ուր արծարծում է բարդ աստվածաբանական մտքեր, կամ եբրայեցիներին ուղղված նամակի նման, որի ընթերցողները գոնե անգիր պիտի իմանային Հնգամատյանը՝ հասկանալու կամ հետևելու Պողոսի մտքի ընթացքին: Կորնթացիները մարմնավոր էին, դեռ երեխայի նման էին մտածում ու ապրում:

Երբ երեխան խաղում է խաղալիքների հետ, գովելի է և ուրախություն է ծնողների համար, բայց երբ երեխան մեծանալով դարձյալ սկսում է խաղալ խաղալիքների հետ, այդ արդեն վշտացնում է ծնողներին և նրանք ստիպված դիմում են համապատասխան բժշկի: Պողոս առաքյալն էր այդ բժիշկը, որ հաջորդ գլխում փորձում է բժշկել և մարմնա-

վոր եկեղեցին հոգևոր եկեղեցու վերածել: Ուստի այդ ներածական խոսքից հետո, Պողոս առաքյալը սկսում է իր հիմնական մտքերի շարադրումը, որն ամփոփված է 14-րդ գլխում:

## 6. ԼԵԶՎԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԹՂԹԻ 14-ՐԴ ԳԼՈՒԽԸ

Պողոսն ասում է, որ այլ լեզուներով խոսելը ուղղված է Աստծուն ու ոչ թե՝ մարդկանց, քանի որ մարդիկ այն չեն հասկանում: Ուստի, նա թելադրում է կորնթացիներին, որ ավելի լավ է հետամուտ լինեն մարգարեություն անելուն, քան թե՝ լեզուներ խոսելուն: Լեզուները անհասկանալի են, մարգարեությունները՝ հասկանալի, ուրեմն և շինություն է եկեղեցու համար (Ա Կորնթ. 14.1-4):

Պողոս առաքյալը, լինելով Քրիստոսի եկեղեցու մեծագույն ռազմավարը՝ ստրատեգը, չէր բավարարվում ներկայով, նա հեռուն էր նայում, նրա համար եկեղեցու շինության մասին հոգ տանելը շատ ավելի կարևոր էր, քան՝ որևէ անհատի շինությունը, քանի որ անհատը կմեռներ՝ իր պարգևի հետ միասին, բայց եկեղեցին է, որ պիտի փոխանցեր Հիսուսի Ավետարանը մարդկանց սերունդներին, եկեղեցին է, որ պիտի ապրեր ու հարատևեր մինչև Տիրոջ Երկրորդ գալուստը: Եվ այդ նպատակին հասնելու համար Պողոսը աստիճանաբար սկսում է իր «բուժման» ծրագրի իրականացումը. կորնթացիներին պետք էր հանել մարմնավոր վիճակից, որից հետո՝ արդեն մնացած հարցերը կարելի էր լուծել: Մարմնավոր եկեղեցին ապագա չունի, այն հիվանդ օրգանիզմ է, որը վաղ թե ուշ մահանալու է:

«Ուզում եմ, որ բոլորդ էլ լեզուներ խոսեք, - ասում է Պողոսը, որպեսզի չվիրավորի նրանց անձը, - բայց ավելի լավ է մարգարեանաք» (Ա Կորնթ. 14.5):

Ի՞նչ էր առաքելական այդ ժամանակներում նշանակում մարգարեանալ: Առաքելական ժամանակներում չկային այսօրվա նման տպագրված Սուրբ Գրքեր, եկեղեցիների համար հեղինակություններն էին որոշում, թե որն է ճիշտը, և որը՝ կեղծը: Մարգարեությունը Սուրբ Հոգու այն պարգևն էր, որն ունեցողը իր սրբակենցաղ կյանքով և վարքով կարողանում էր Աստծու խոսքը հասցնել եկեղեցուն, մարդկանց, և հենց դա էր Պողոսը համարում շինություն եկեղեցու համար: Այդ մի քանի համարներում, փաստորեն, Պողոսը փորձում է մարմնավոր կորնթացիներին բարձրացնել հոգևոր վիճակի: Այո՛, մարգարեության, Աստծու խոսքի պակասն էր, որ կորնթացիներին դատապարտել էր մարմնական վիճակի մեջ մնալու և միայն Աստծու խոսքը պիտի կարողանար նրանց դուրս հանել ճահճային այդ վիճակից:

Նույնը կարելի ասել նաև այսօրվա հոգեգալստականների և խարիզմատների վերաբերյալ. Աստծու խոսքի խորհուրդները և խորությունը անհասանելի են դառնում նրանց համար: Գլոսսոլալիայի ֆենոմենը թույլ չի տալիս նրանց դուրս գալու այդ ճահիճից և աճելու Աստծու խոսքով, նրանց որդեգրած «մարտավարությունը» թույլ չի տալիս աճելու, մեծանալու, դրա համար էլ նրանք մնում են նույն ճահճային՝ մարմնավոր վիճակում:

Այսպիսով, եզրակացնում է Պողոս առաքյալը, լեզուները նշան են անհավատների համար, այն էլ՝ երբ դրանք հասկանալի լինեն անհավատին, ու ոչ թե՝ անիմաստ արտաբերումները (14.22): Նախորդ համարում (14.21) Պողոսը մեջբերում է Հին Կտակարա-

նից (Բ Օր. 28.49 և Եսայի 28.11-12) և, որպես Հին Կտակարանի մեկնիչ, հիշեցնում, որ Եսային խոսեց իր ազգի լեզվով, նրան չլսեցին, բայց կգան ուրիշներ, որոնք այլ լեզվով կխոսեն, որը նրանք այլևս չեն հասկանա (խոսքը ասորեստանցիների մասին էր): Այսինքն, Պողոսը այդ մեջբերումն անելիս և այլ լեզուներով խոսելը փաստելիս նկատի ուներ մարդկային հասկանալի լեզուն, ու ոչ թե անհասկանալի ոչ մարդկային լեզուներով խոսակցությունը կամ անիմաստ հնչյունների արտաբերումները:

Ընդհանրացնելով, Պողոսը բերում է շատ համոզիչ մի փաստարկ (14.24-25). ո՞րն է ավելի լավ, երբ մարդիկ լսելով մարգարեության խոսքը, դարձի գան ու զղջալով՝ ծնկի գան ու Աստծուն փառաբանեն, թե լսելով անիմաստ մի արտաբերություն, այն էլ ոչ թե մեկ կամ երկու հոգու, այլ՝ տասնյակների անիմաստ արտաբերումներ, թողնեն ու հեռանան, համարելով այդ «խրախճանքը» դևերի խրախճանք:

Մի քանի կարևոր խրատներ էլ է տալիս Պողոսը կորնթացիներին (14.26-33), որոնք կարգ ու կանոն պիտի հաստատեին եկեղեցում: Դրանք են.

- եթե անգամ խոսում են լեզուներով, ապա ամենաշատը երկու կամ երեք հոգի թող խոսեն.
- եթե չկա թարգմանություն, թող լռեն, իրենց մտքում աղոթեն Աստծուն.
- «մարգարեության հոգին ենթարկվում է մարգարեացողին, որովհետև Աստված խռովության Աստված չէ, այլ՝ խաղաղության» (14.32-33):

## 7. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

- Սուրբ Հոգու թվարկած պարգևների մեջ լեզվախոսությունը ամենավերջում է դրված, հետևաբար ավելի կարևոր են առաջին տեղում նշվածները՝ խաղաղությունը, գիտությունը, հավատը, բժշկությունը, հրաշագործությունները, մարգարեությունները, զանազանելու շնորհը:
- Լավագույն ճանապարհը սիրո ճանապարհն է:
- Բոլոր շնորհները կանցնեն, բայց սերը կմնա:
-Առանց սիրո ոչ մի արժեք չունի շնորհը, այդ թվում նաև լեզուների շնորհը:
- Շնորհները բոլորի համար չեն, անհատը չպիտի ձգտի շնորհին, քանի որ Սուրբ Հոգին է տվողը, և մեր ուզելով չէ, որ նա շնորհ է տալիս:
- Շնորհները, որ տրվել են Նախնական եկեղեցուն, պարտադիր կերպով չպետք է շարունակվեն: Այսօր, եկեղեցու 2000 ամյա տարիքին, պահանջել նույն շնորհները՝ ի մասնավորի լեզուների շնորհը, անհատներին կտանի «էգոցենտրիզմի»՝ անձի շինության, ու ոչ թե՝ եկեղեցու շինության:
- Մանկությունը հիշելու արատավոր սկզբունքը կործանարար ճանապարհ է:
- Եկեղեցու շինության տեսակետից լեզուները շահեկան չեն, օդում խոսել է նշանակում:
- Լեզվախոսությունը պետք է օգուտ բերի եկեղեցուն, այսինքն, լինի թարգմանիչ, ուստի, այդ դեպքում, այն ինքնաբերաբար կորցնում է իր իմաստը, տեղը զիջելով մարգարեության շնորհին:

## 8. Post Scriptum
## ԿԱՄ ՀԵՏԳՐՈՒԹՅՈՒՆ

Հոգեգալստականների այսօրվա վիճակը շատ չի տարբերվում Կորնթոսի եկեղեցու վիճակից: Ինչպես տեսանք վերևում, ամենևին նշանակություն չունի, թե գլոսսոլալիա ասելով ինչ նկատի ունենք, հասկանալի մարդկային չիմացած լեզուներ խոսելը, թե անիմաստ հնչյունների արտաբերությունները, գոռում-գոչյունով՝ մտահափշտակության (էքստատիկ) պահեր ապրելը: Երկու դեպքում էլ վերևում բերված տրամաբանությունը մնում է նույնը, հետևաբար և եզրահանգումները նույնը կմնան:

Այսօրվա հոգեգալստականները գլոսսոլալիայի տակ հասկանում են վերջինը՝ անիմաստ արտաբերությունները կամ, ինչպես իրենք են սիրում ասել, օտար լեզու խոսելը: Եվ հենց այդ պրակտիկան էլ թույլ չի տալիս մարմնավոր վիճակից դուրս գալ. մեկ տարի հետո, երկու տարի հետո, տասը տարի հետո նույն մարդուն հանդիպելիս նրան տեսնում ես նո՛ւյն վիճակում, նո՛ւյն մտքերով, նո՛ւյն պատկերացումներով, առանց փոփոխության, որն էլ մարմնավոր հիվանդությունն է. օրգանիզմը չի աճում, մնում է նո՛ւյնը:

Այս շարժումը ծնվել է արևմուտքում և բնական է, իր պաշտամունքային ձևերը կլինեն նույն արևմտյան շոուների նման, ինչը և տեսնում ենք նրանց հրապարակային դահլիճ-ստադիոնային հավաքներում:

Երևանում հրատարակվող խարիզմատների պարբերականում («Ճշմարտություն», N 1, 1998) մի մեքենայի լուսանկար է զետեղված, իր «գովազդային» բացատրությունով. եթե դուք էլ գաք մեզ մոտ, մեր աղոթքներին մասնակցեք այսինչի նման այսպիսի մի մեքենա էլ դուք կշահեք:

Սա արդեն ոչ միայն կորնթացիների վիճակն է, այլ մի քանի աստիճան ետ, դեպի հեթանոսություն՝ ոսկե հորթի ժամանակները: Ի՞նչ ավետարանական խորություն կարելի սպասել այդ «շոու-ճշմարտություններից»:

Բայց նրանք շատ ճկուն են. բավականին լավ մշակված ձևեր ունեն: Երբ արգելվում են արևմուտքում, անմիջապես տեղափոխվում են Հայաստան ու սկսում իրենց քարոզչական գործունեությունը: «Կենաց խոսք», «Նոր սերունդ» և այսօրինակ անվանումներով հանդես են գալիս խարիզմատները:

1988 թ. Ռիգայի հոգեգալստականների եկեղեցում սկսեցին ներմուծվել ժամանակակից նորամուծություններ՝ վերածելով նրանց ժողով-համայնքները արդի շոուների: Որոշ ղեկավարների կողմից այն չընդունվեց և նորարարները վտարվեցին եկեղեցուց: Այդ վտարվածները միանալով՝ կազմակերպեցին մի նոր հոգեգալստական շարժում՝ «Նոր սերունդ» անունով և, ինչպես միշտ լինում է նման դեպքերում, նրանք սկսեցին տարածվել հարևան երկրներում: Այդ վտարանդի «հիպիները» հասան նաև Հայաստան և ցայսօր հանդես են գալիս այդ նույն՝ «Նոր սերունդ» անունով: Խարիզմատների այդկզյակները, որոնք տարածվում են Հայաստանի շրջաններում, խաչակիրների հայրենիքից դուրս քշված խաչակիրների համար ապաստարաններ են մեզանում, ուր նրանք գալիս են «հյուրախաղերի»: Վարձելով դահլիճներ, կինոթատրոններ, սպորտ դահլիճներ, այ-

սօրվա ծանր սոցիալական պայմանները հաշվի առնելով, նրանք գովազդային և այլ ճա-նապարհներով մարդկանց հրավիրում են իրենց ներկայացումներին, ուր կամ գիրք բա-ժանելու կամ բժշկություննր անելու խոստումներ են տրվում: Քարոզիչ հյուրը կամ հյու-րերը, որպես կանոն, «ալելուիա» և «օրհնենք Տիրոջը» դարձվածքները մանտրաների[84] նման անընդհատ կրկնելով՝ հարց են տալիս հանդիսականներին, թե՝ ուզում են արդյոք բժշկվել: Բուժվել ցանկացող հիվանդներին հրավիրելով բեմ՝ շամանական և զանազան հեթանոսական շարժումներով, գոռում-գոչյուններով «բուժում են» նրանց, այն էլ այնպի-սի եռանդով, որ կաշպիրովսկիներն ու չումակները կնախանձեին: Այդ շոկոթերապիան, ազդելով հիվանդների վրա, նրանց լեզուների պարզն է տալիս, նրանք ընկնելով թավալ-վում են «հոգուց» բռնված ու դառնում... «Նոր սերունդ»: Այս է այդ նոր սերունդի աստվա-ծաբանությունը, որն արգելված է զարգացած երկրներում, որպես քաղաքացիների ա-ռողջությանը վնաս հասցնող ամբողջատիրական՝ ինչ որ տեղ նաև հեթանոսական շար-ժում, քողարկված քրիստոնեության անվամբ:

Հոգեգալստական շարժումը, գիտակցելով, որ լեզվախոսությունը ապագա չունի, վերջերս սկսել է քարոզել նաև այլ շնորհների անհրաժեշտությունը, որոնցից առանձ-նացնում են բժշկությունը, դևեր հանելը:

Ս. Գիրքը դեմ չէ նման շնորհների գոյության, այլ դեմ է դրանց պարտադիր լինելու քարոզությանը: Հայ Եկեղեցու հիմնադրումն ու հայոց դարձի պատմությունը հիմնված է հենց այդպիսի հրաշագործությունների վրա (Տրդատ թագավորի բժշկության պատմութ-յունը): Բայց Հայ Եկեղեցին երբեք չի հպարտացել դրանով, գտնելով, որ այդ ամենը Աստ-ծու շնորհն է, և փառքը Աստծունն է և ոչ թե՝ մարդուն: Հայ Եկեղեցին գերադասել է գործ անել, քան թե՝ չարած բանի համար աղմուկ հանել:

Մեր հոգեգալստականները այդպես չեն մտածում, հպարտանում են այդ շնորհների առատությամբ: «Հյուրախաղերի» եկած «բժիշկները» դևեր են հանում այդ ժողովի մաս-նակիցների միջից: Իսկ շոու-բժշկությունները շատ չեն տարբերվում հեռուստատեսային շատ հայտնի Կաշպիրովսկի-Չումակ անաստվածների բժշկումներից: Իհարկե, սա չի նշանակում, որ այսօր Աստված բժշկություններ չի անում, հրաշքներ չի գործում: Ընդհա-կառակը, պետք է թողնել միայն, որ Աստված գործի, ու ոչ թե մենք՝ մեր ուզածով ու պատվերներով:

Մեզանում հոգեգալստականները առանձնանում են երկու հատկանշական գծով.

ա. զենք չվերցնելու պարտադիր պայմանը, և

բ. ընտանիքների բազմազավակությունը:

Առաջինը հիմնավորում են «մի սպանիր» պատվերով, իսկ երկրորդը՝ Ա Տիմ. 2.15 համարով, ուր Պողոս առաքյալը ասում է. «Բայց նա (կինը) պիտի փրկվի որդեծնութ-յամբ, եթե պարկեշտությամբ մնան հավատքի, սիրո և սրբության մեջ»: Այստեղ էլ, հատ-վածը դիտարկելով առանձին, կարելի է եզրակացնել, որ կինը պիտի փրկվի միայն որ-

---

[84] * Մանտրա - հնդուիզմում և նրա զանազան ճյուղավորումներում սանսկրիտով բառ կամ դարձվածք, որը անհատը, ա-ռանց հասկանալու իմաստը, կրկնում է անընդհատ ծեսի ժամանակ:

ղեծնությամբ: Բայց եթե համեմատենք Ա Կորնթ. 7.25 համարի հետ, կտեսնենք, որ այնտեղ Պողոսը հակառակն է ասում: Ուրեմն, այստեղ միայն երեխա ծնելու մասին չէ խոսքը, այլ այն, որ կինը ընտանիքում մնալով հավատքի, սիրո ու սրբության մեջ՝ «կպահովի» իր փրկությունը: Մյուս կողմից, ինչպես տեսնում ենք, այս համարի առաջին մասում Պողոսն օգտագործում է եզակի թիվը՝ «նա պիտի փրկվի...», իսկ երկրորդ մասում օգտագործում է հոգնակին՝ «եթե մնան...»: Այսինքն, եզակի թիվը ցույց է տալիս, որ «նա»-ն նախորդ 9-14 համարների «կնոջն» է վերաբերում, իսկ հոգնակին՝ բոլոր կանանց: Իսկ 9-14 համարներում Պողոսը խոսում է ընդհանրապես կնոջ դերի մասին եկեղեցում, ակնարկում է Ծննդ. 3.15 մարգարեությունը, Եվայի մեղանչումը և այդ անեծքից փրկվելու խոստումը, ու հրահանգում, որ կինը եկեղեցում սովորեցնելու փոխարեն, թող իր ընտանիքում հավատով, սիրով ու սրբությամբ ապրի, որպեսզի «ապահովի» իր փրկությունը: Հետևաբար չի կարելի պնդել, թե այստեղից հետևում է, որ կնոջ փրկության միակ ճանապարհը որդեծնության մեջ է:

Իսկ «զենքի» և «երդումի» մասին հոգեգալստականների մոտեցումը դարձյալ սուրբգրային չէ, քանի որ երբ զինվորը երդվում է ծառայել «վասն հայրենյաց», դրանով չի խախտում Աստծու պատվերը, ընդհակառակը՝ կատարում է այն: Լեռան քարոզից երդման օրինակները այս դեպքի համար չեն, քանի որ զինվորական երդումը դա զինվորի վկայությունն է, որ ինքը խոստանում է իր վրա դրած պարտականությունները կատարել՝ հնազանդ գտնվելով պետության օրենքներին և սահմանադրությանը: Ի վերջո քրիստոնեական սերը վերացական հասկացողություն չի, այլ իրական է: Եվ եթե մենք սիրում ենք մեր մտերիմներին, հարազատներին, ապա պարտավոր ենք նրանց պաշտպանել: - Փարիսեցիություն է, երբ այսօրվա շատ աղանդավորներ քարոզում են սիրել «թշնամուն»՝ բայց «չսիրել» իրենց իսկ ժողովրդին, իրենց իսկ ընտանիքը: Ոչ մեկը չի կարող սիրել «թշնամուն», եթե չի սիրում իր ընտանիքը, ժողովրդին, հայրենիքը: Դրա համար էլ ուղղափառ եկեղեցիներում «վասն հայրենեաց և վասն հաւատոյ» զոհված զինվորներին միանգամից դասում են սրբերի շարքին, քանի որ իրենց արյունն են թափել: Իսկ փափուկ բազմոցներում՝ տանը նստած դատապարտել նրանց, իհարկե կարող է ամեն մեկը: Իսկ ինչ վերաբերում է Հովհաննես Մկրտչի զինվորներին տված պատվերին («Ոչ ոքի մի՛ նեղեք, մի՛ զրպարտեք», /Ղուկ. 3.14/), ապա դրանով Մկրտիչը չարգելեց զենք վերցնելն ու զինվորական ծառայությունը, այլ դատապարտեց դրա՝ ի չարի կիրառումը:

# VI. ԴԵՏ ՆԻՆ ԵՎ ՎԿԱ ԼԻՆ

## 1. ՇԱՐԺՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

«Կենդանի հոսք» կազմակերպության հրատարակած բազմաթիվ գրքեր (հայերեն լեզվով) գնալով սկսում են լայն տարածում գտնել մեզանում: Դրանք հիմնականում Վոչման Նիի և Վիթնես Լիի ստեղծագործություններն են, քարոզները:

Բողոքական հարանվանություններից այս մեկը՝ «Կենդանի հոսքը» ծնունդ է առել - Չինաստանում՝ դարասկզբին և հետո տեղափոխվել Ամերիկյան մայրցամաք (Անահայմ), որտեղից էլ մինչև այսօր ղեկավարվում է «Կենդանի հոսքը»:

Նրանց հայերենով հրատարակած գրքերի ցանկն արդեն անցնում է տասնյակից. բոլորն էլ նույն բովանդակությամբ և նույն կառուցվածքով, նույնաբանությունների (տավտալոգիա) առատությամբ աչքի ընկնող: Նշանակություն չունի թե ինչ գիրք ես կարդում, եթե այն Անահայմից է. ամենուր նույն միտքը, ամեն էջում նույն գաղափարը, բառերի անկապ շարաններ, ամպագոռգոռ դարձվածքներ…

Գրքույկների քարոզած աստվածաբանությունը համառոտ կարելի է ներկայացնել այսպես.

- Մարդը մեղավոր է և ոչ մի բան չի կարող անել, նա մեռած է.

- մարդ պիտի ձգտի իմանալ իր կյանքի նպատակը[85].

- դրա համար պետք է ամեն մարդկայինը[86] իր միջից վերացնի.

- մարդը դառնում է մեքենա՝ ռոբոտ[87].

- այս բոլորից հետո միայն նրա հետ կարող է գործել Սուրբ Հոգին՝ սովորեցնելով նրան ու ամեն բան տալով.

- և վերջում, որն ամենակարևորն է՝

«եթե դու ցանկանում ես ավելին սովորել Աստծու տնտեսության մասին և ստանալ Քրիստոսի փրկության ավելի խորը փորձառություն, կապ հաստատիր մեզ հետ հետագա զրույցների համար»:

Եվ ապա՝

«Խնդրում ենք ձեր հասցեն գրել տպագիր տառերով» (48, էջ 25-28):

Գործողության այս ձևը շատ է տարածված արևմուտքում և այդ ձևով են լայն ցանցեր ստեղծվում (մորմոնները, օրինակ հայտնի են իրենց հսկայական արխիվներով):

Որևէ աստվածաբանություն հստակորեն չունեն ներկայացված, մանավանդ քարոզում են այնպիսի պարզունակություն, որ արգելակում է մարդու մտավոր զարգացումը և

---

[85] * Նկարագրելով մարդու կյանքի նպատակը «Մարդկային կյանքի խորհուրդը» գրքույկը (48) գրում է. «Խոզը չի կարող թագավորել ոչխարի թագավորության մեջ և ոչխարի կյանք ապրել կրթության, բարելավման կամ կարգավորման միջոցով, այն պետք է օժտված լինի ոչխարի կյանքով» (էջ 20): Նման գռեհկաբանությունները շատ բնորոշ են և սովորական աղանդավորական գրականության մեջ, մանավանդ Անահայմի հրատարակություններում:

[86] * Վիթնես Լին գրում է. «Երբ մենք թաղվեցինք (նկատի ունի մկրտությունը - ՍՄ) այն ամենը, ինչ մենք սիրում էինք, այն ամենը ինչ պարունակում էր մեր աշխարհը թաղվեց մեզ հետ… ոչ միայն աշխարհիկ ուժերը թաղվեցին, այլև մենք նույնպես թաղվեցինք» (49, էջ 165-166):

[87] * Մենք պետք է սկսենք մեզ ուրիշներին ենթարկելուց, - գրում է Վիթնես Լին, - մենք պետք է ինքներս մեզ ենթարկենք ուրիշներին և սովորենք ասել «այո», ու ոչ թե՝ ոչ» (49, էջ 155):

զրկում նրան ինքնուրույն մտածելուց. բոլորը սպասում են, թե ինչ նոր հրահանգ կգա Անահայմից՝ «կենդանի հոսքից» այս կամ այն հարցի վերաբերյալ և դրանով էլ այս շարժումը նմանվում Եհովայի վկաներին, որոնք «անհամբեր» սպասում են Դիտարանի հերթական համարին և հրահանգներին:

Ովքե՞ր են նրանք, «Կենդանի հոսքի» առաջնորդներ ու հիմնադիրներ Վոչման (watchman=դետ, պահակ) Նին և Վիթնես (witness=վկա) Լին:

1920 թվականին Չինաստանում ծնունդ է առնում արևմտյան քրիստոնեությանը հակադրվող «տեղական» շարժումներ, որոնցից մեկի հիմնադիրն ու առաջնորդն է դառնում ոմն Նի Թո Շեն, որն իրեն վերանվանում է Վոչման Նի (Եզեկ.3.17-ի «դետ»-ից): Նրա ծնողները մեթոդական եկեղեցու անդամներ էին: Նին կրթությունը ստացել է տարբեր միսիոներական դպրոցներում: Ի վերջո, Նին միանում է ոմն Վան Ցզա անունով մի ավետարանչի, որը խրախուսում էր տներում աղոթաժողովներ անցկացնելու գաղափարը, առանց որևէ կրոնական միավորման պատկանելու կամ ընդգրկվելու: 1927 թվականին, բաժանվելով Վան Ցզայից, Նին հիմնում է անկախ «Տնային Ժողովների եկեղեցին»: Այս խմբավորումը ընդարձակվելով՝ տարածվում է Չինաստանով մեկ: Վոչման Նիին փոխարինում է նրա աշակերտ և համախոհ՝ Լի Չան Շոուն (հետագայում՝ Վիթնես Լի): Տնային ժողովների եկեղեցին, նման բոլոր աղանդների, ունի կուռ կազմակերպչական կառույցներ. սկզբնական կազմակերպությունները ընտանիքներն են, որոնք պարտադիր կերպով հավաքվում են շաբաթը երեք անգամ՝ տներում: Չորս ընտանիքը միանալով կազմում է խումբը:

1952 թվականին կոմունիստական վարչակարգը ձերբակալում է Նիին, Տայվանում դեղագործական գործարան բացելու և Չինաստանում քարոզչական գործունեություն ծավալելու համար: Նին 20 տարի բանտում մնալով՝ վախճանվում է 1972 թվականին: - Լին շարունակում է Նիի գործը, ավելի խստացնելով կազմակերպչական կանոններն ու կարգերը: Ինքնամեկուսացումը և մնացած բոլոր՝ թե՛ հին, թե՛ նոր (բողոքական) եկեղեցիները հայտարարվում են Ս. Գրքի հակառակորդներ և մերժվում են: Կաթոլիկներին նույնացնում են Հայտնության Հեզաբելի հետ, որը մոլորեցնում էր Աստծու ծառաներին (Հայտն. 2.20): Բողոքականներին Լին համեմատում է Սարդիկեի եկեղեցու հետ (Հայտն. 3.1-2): Որոշ մեղմությամբ է Նին մոտենում Բարենորոգիչներին (Լյութեր, Կալվին, Ցվինգլի և այլն), համարելով, որ նրանք որոշակի քայլեր են արել վերականգնելու ճշմարիտ եկեղեցին:

Նրանց գործունեության ձևերն էլ նորություն չեն. սովորական մարդորսություն է, մանավանդ ուսանողական շրջաններում: Ընդ որում, մնացած աղանդների նման սկզբում իրենց հիմնական վարդապետության մասին ոչինչ չեն քարոզում, այլ ընդհանուր, համաքրիստոնեական, համամարդկային գաղափարներով ու հավիտենական խնդիրներին (կյանքի նպատակը, տիեզերքի ճակատագիրը և այլն) պարզունակ լուծումներ տալով՝ նոր ձևավորվող մարդկանց կամ թերուսերին ներգրավում են ընտանեկան եկեղեցիների շրջանակներում: Ոչ մեկին և ոչ մի եկեղեցու չեն քննադատում, այսինքն, թաքցնում են իրենց ով կամ ինչ լինելը: Այդպիսով, կապելով նեոֆիտներին (հունարեն

neophitos բառից, որ թարգմանվում է նորադարձ, նոր անդամ) իրենց եկեղեցու հետ, նրանք որոշ ժամանակ անց սկսում են բացել «խաղաքարտերը»:

Նրանց գործունեության ձևերն են.

- կարդալ Ս. Գիրքը, թեկուզ առանց հասկանալու, քանի որ Աստծու խոսքը արդեն զորություն ունի իր մեջ.

-անընդհատ ու միշտ կրկնելով՝ «Ալելուիա», «Տեր Հիսուս Քրիստոս»՝ սրբանում են և վայելում են Աստծու ներկայությունը: Այս արարողությունը՝ մանտրաների արտաբերումների նման, առանց հասկանալու՝ էկզալտացիայի տանող ճանապարհն է (3, գլ. 12, նաև ЖМП, 11, 1996, էջ 46-51):

Լիի եկեղեցին առանձնանում է նաև «Մանկությունը հիշելու» սկզբունքով. նա պնդում է, որ իրենք վերադառնում են առաքելական շրջանի եկեղեցիներին և այսօր աշխարհում այդպիսի մի եկեղեցիկա՝ Լիի եկեղեցին:

Տնային ժողովների եկեղեցու աստվածաբանությունը մի խղճուկ խառնուրդ է արևելյան կրոնների և քրիստոնեության սկզբունքների: Արտաքուստ թվում է, թե ամեն ինչ ճիշտ է և սուրբգրային է, բայց իրականում այդպես չէ: Լիի եկեղեցու աստվածաբանական հայացքների մեջ աչքի է ընկնում «միաձուլման» վարդապետությունը[88], որը քրիստոնեական չէ, այլ բուդդայական և կրիշնայական սկզբունք է: Այդ առումով Նի-Լի եկեղեցին միջին թվաբանականն է քրիստոնեական սկզբունքների և արևելյան կրոնական որոշ սկզբունքների: Այդ է պատճառը որ Նի-Լի եկեղեցին մերժվում է համարյա բոլոր բողոքական հարանվանությունների կողմից, անշուշտ, նաև Ուղղափառ եկեղեցիների կողմից: Հիսուսը Բելիարի հետ չի կարող համագործակցել: Աչքի ընկնող մյուս սկզբունքը (տե՛ս ստորև) մարդու մասին նրանց դավանանքն է. մարդուն նրանք պատկերացնում են որպես մի մեքենա, որի վարորդը մեղքն է, սատանան: Փոխելով վարորդին փոխվում է նաև մարդը և ամեն հարց լուծվում է:

Եվ, վերջապես, Լի-Նի կրոնում բացակայում է «հավատ» հասկացողությունը, ամեն ինչ տրամաբանորեն հետևում է և ամեն ինչ տրամաբանորեն բացատրվում, ինքնակատարելագործման ճանապարհով ամեն մեկը արժանանում է աստվածային շնորհներին:

(48) գրքույկի ողջ բովանդակությունն այն է, որ մարդը չի կարող հասկանալ ոչ մի բան (էջ 5), քանի դեռ չգիտի Աստծու ծրագիրը, և միայն այդ գրքույկը ընթերցելուց հետո մարդը կհասկանա հավիտենականության, կյանքի իմաստն ու նպատակը և այդ ամենը ընդամենը... 28 էջանոց փոքրիկ գրպանի գրքույկում:

Մարդն անոթ է, և ըստ Լի-Նիի այդ երեք մասերից բաղկացած մարդու մեջ բնակվում է մեղքը և այդ եռաշերտ մարդը ոչինչ անել չի կարող, քանի դեռ Ինքը՝ Քրիստոս չի եկել նրա մեջ, որպեսզի դուրս մղի մեղքը և ամբողջությամբ գրավի ու տիրի այդ եռաշերտ անհատի ամեն մի մասնիկ. «Աստված սկզբում բաշխում է Իրեն մեր հոգու մեջ և, այնուհետև տարածվում է մեր հոգուց մեր շնչի մեջ: Ի վերջո, նա լցնում և հագեցնում է մեր հոգին, շունչը և մարմինը Իրենով» (48, էջ 21): Եվ, որպես վերջաբան, հայտարարվում է.

Սա է մարդու կյանքի նպատակը:

Սա է քրիստոնյա լինելու իմաստը:

---

[88] * Ըստ Լիի Աստված իրեն բաշխում է մեր հոգու մեջ և այնուհետև տարածվում շնչի, մարմնի ամեն մի մասնիկի մեջ:

Սա է այն, ինչ Աստված ծրագրել է քեզ համար (էջ 22):

Իսկ այն հարցին, թե՝ «Այժմ ի՞նչ պիտի անես դու», պատասխանում է՝

«Կապ հաստատիր մեզ հետ» և չմոռանաս, որ «մենք խնդրում ենք ձեր հասցեն գրել տպագիր տառերով» (էջ 27-28):

Այս շռու-ծրագիրը սրանով չի ավարտվում: Հայերեն հրատարակած բազմաթիվ գրքերում ավելի մանրամասնորեն է ներկայացվում այդ «ձուլման» վարդապետությունը. Քրիստոս, Աստված իջնում է մարդու մեջ և ձուլվում նրա հետ, բոլոր հավատացյալները, այդպիսով դառնում են աստվածամարդեր, և կյանքի նպատակը հենց այս է: Աշխարհը, տիեզերքը դա նույն Քրիստոսն է: Ամեն ինչ Քրիստոսն է: Այս է (49) գրքույկի բոլոր թերթերի բովանդակությունը: Տիեզերքը հնազանդ է Աստծուն, բայց մարդը՝ ոչ: Եվ Քրիստոսի փրկագործությունն էլ այն է, որ «միաձուլվի» մարդու հետ, խառնվի և մեզ դարձնի աստվածամարդ: Աստծու ծրագիրն է միաձուլվել և խառնվել մարդկանց մեջ (ոչ թե՝ հետ) և ստեղծել աստվածամարդերի միություն, որը կոչվում է եկեղեցի: Այստեղ ոչ թե միավորման մասին է, այլ՝ միաձուլվելու, նույնանալու և նույնություն հաստատելու:

Այսպիսով, մարդը վերանալով՝ ձուլվում է Արարչի, Տիեզերքի հետ, ինքը դառնալով աստվածամարդ: Արարիչը՝ Աստված այդ դեպքում դառնում է վերացական գաղափար միայն՝ Արարիչն էլ խառնվելով իր արարչության ամեն մի ատոմի հետ աստվածացնում է ամեն մի ատոմը... սա արդեն քրիստոնեություն չէ, կեղծ-քրիստոնեություն է:

«Քրիստոնյան Քրիստոս-մարդ է: Քրիստոնյան մի մարդ է, որ օրըստօրե ուտում է Քրիստոսին, խմում է Քրիստոսին, մարսում է Քրիստոսին և Քրիստոսի հետ միախառնվում է: Որոշ ժամանակ անց, Քրիստոսն ինչ որ չափով դառնում է այս մարդը» (49, էջ 196):

Նույն բանն է Լին քարոզում նաև (50) գրքույկում.

«Քանի որ Աստծո կամքը Նրա սրտի ցանկությունն է, մենք պետք է սովորենք, թե ինչ է նրա ցանկությունը: Այն Աստծո խառնվելն է մարդուն: Մարդու հետ խառնվելը և՛ Աստծու փափագն է, և՛ Նրա կամքը» (50, էջ 166):

Այսպիսով, Լի-Նի եկեղեցու դավանանքի հիմնական սկզբունքները ոչ մի կապ չունեն Ս. Գրքի հետ, պարզապես հեթանոսական են, և անգամ հակառակ Ս. Գրքին:

Եկեղեցու պատմությանը հայտնի է եղել այս կարգի աղանդներ դեռ III դարում, երբ - Մանի անունով մեկը, փորձեց միավորել պարսից կրոնը քրիստոնեության հետ և առաջացավ մանիքեությունը, որն էլ ժամանակին մերժվեց և վերացավ պատմության ասպարեզից:

Լի-Նի եկեղեցին, փաստորեն, նոր մանիքեության դրսևորում է, երբ արտաքին կողմը քրիստոնեական է ներկայանում, իսկ նպատակը՝ պտուղը կամ արդյունքը՝ հեթանոսական:

## VII. ՏՆԱՅԻՆ ԽՄԲԱԿԱՅԻՆ ԵԿԵՂԵՑԻ

Վերջին ժամանակներում Հայաստան են թափանցում զանազան նոր ուղղությունների ներկայացուցիչներ, որոնք, որպես կանոն, իրենց ոտքի տակ հող են գտնում մեզանում արդեն տարածում գտած հոգեգալստականների ու խարիզմատների մեջ: Թափանցումը, ավելի ճիշտ՝ ներխուժումը կատարվում է երկու փուլով. առաջին փուլում տարածվում են զանազան գրքույկներ ու թերթիկներ, տեսաերիզներ և ձայնաերիզներ, ուր ներկայացնում են այս կամ այն շարժման «առաքյալներին» (Խեյգին, Յոն գի Չոն, Բենի - Խին և այլն)[89], ցուցադրում նրանց կարողությունները բժշկության ասպարեզում և նրանց գովազդային շոու-քարոզներ:

Երկրորդ փուլում նրանք արդեն ստիպված ընդունում են այդ ներկայացուցիչներին, քանի որ արդեն ճանապարհ են պատրաստել այդ հեղինակությունների համար:

Մի նոր ուղղություն էլ է վերջերս իրեն զգացնել տալիս մեզանում: Դատելով նրանց հրատարակած թերթիկներից ու գրքույկներից կարելի է եզրակացնել, որ այս նորաբույս շարժումը միջին թվաբանականն է Նի-Լի և խարիզմատ շարժումների: Որդեգրելով Նի--Լի եկեղեցու կառուցվածքային ձևերը՝ տնային եկեղեցիների հիմնումը, և խարիզմատների ազատական սկզբունքները, վերջինս առանձնացնում է մեկ սկզբունք՝ աշակերտության սկզբունքը: Մատթ. 28.19 համարի «աշակերտ դարձնելու» հրամանի վրա հիմնվելով, Տնային Խմբակային եկեղեցին իր առջև պարտականություն է դնում ոչ թե Քրիստոնեության քարոզության կամ Ավետարանի տարածման պարտականությունը, այլ՝ աշակերտներ պատրաստելու ծրագրի իրականացումը, պնդելով, որ այս է միակ ճշմարիտ եկեղեցու հատկանիշը:

«Ներկայումս եկեղեցիները դարձնում են նորահավատներ, ու ոչ թե աշակերտներ: Այն որ մարդը ընդունեց Հիսուսին դեռևս չի դարձնում նրան աշակերտ: Աշակերտը որակական այլ հատկություններ ունի: Ինքը Հիսուս առաջինն էր, որ ցույց տվեց իրական աշակերտությունը» (51, էջ 4):

Այս պարզունակ դատողությունը շարժումը վերածում է կազմակերպված կուսակցական կազմակերպության, իր աստիճանական կառուցվածքով՝ ուսուցիչ-աշակերտ, որն էլ իրար զեկուցելու և հաշվետվություններ ներկայացնելու պարտադիր կանոն է պահանջում:

Այս սկզբունքն էլ արևմտյան, (ավելի ճիշտ ամերիկյան) ծագում ունի, հայտնի է Բոստոնյան սկզբունք անունով: 1979 թվականին, Բոստոնում, ոմն Լուկաս հայտնաբերեց «աշակերտության» սկզբունքը (3, էջ 274-275):

Ընդհանրական եկեղեցու դեմ բացահայտորեն պայքարելու ձևերը այսօր փոխվում են, քողարկված նորանոր ձևեր են ընդունում: Տնային Խմբակային շարժումը դրա վառ ապացույցն է: Շարժումը սկսում է թափանցել և «հսկողության» տակ պահել որևէ ազգի, ժողովրդի ամենաառաջնային ու ամենակայուն օղակը՝ ընտանիքը: Թափանցելով ընտանիքները, հիմնավորվելով և զանազան ձևերով կապելով և կապվելով դրանց, նրանք

---

89 * Արդի խարիզմատ շարժման «կարկառուն» գործիչները:

կազմակերպում են խմբակներ, երկու-երեք ընտանիքներից, որոնց ղեկավարները հեշտությամբ կարող են վերահսկել և «հովվել» խումբը:

«Այս վերջին շրջանում Աստված նորովի է բացահայտում Քրիստոսի փառավոր մարմնի մարդկանց կողմից անտեսված անդամների արժեքը և կարևորությունը: Կարծես այժմ Եկեղեցին ողջ աշխարհում սկսում է գիտակցել համայնական կյանքի կարևորությունը: Բոլոր աշխարհում ծառայողները նոր ուշադրությամբ են ուսումնասիրում առաջին դարի քրիստոնյաների կյանքն ու գործունեությունը» (էջ 2):

Կամ՝ «Այժմ աշխարհում Սուրբ Հոգին սկսել է իր նոր շարժումը, որը կարող է ապահովել այս բոլոր խնդիրների իրականացումը, դա այսպես կոչված Տնային եկեղեցիներն են» (էջ 2):

Այստեղ էլ, ինչպես երևում է, նույն ձեռագիրն է, նույն ռազմավարությունը, նույն սկզբունքները, որոնք բնորոշ են բոլոր աղանդավորական շարժումներին. իրենք միակ ճիշտն են, միակ աստվածահաճոն, միակ սուրբգրայինը, միակը...

## ՀԱՎԵԼՎԱԾ

«Հաւատամք և ի մի միայն յընդհանրական
և յառաքելական Եկեղեցի...»

Այսօր հայ հավատացյալները ամեն քայլափոխի հանդիպում են ոչ միայն աղանդավորական հարձակումներին, այլև ստիպված են լինում իրենց հավատը, դավանանքը անխախտ պահել նաև կաթոլիկ և բողոքական «հարձակումներից»: Այդ առումով էլ նպատակահարմար գտանք Հավելվածի այս բաժնում համառոտակի ներկայացնել, թե ինչպես Հռոմեական կաթոլիկ եկեղեցին և Բողոքական եկեղեցին մուտք գործեցին Հայաստան, ինչ ծրագրերով և ինչ նպատակով: ԻԱ դարի նախաշեմին մեզանում ստեղծվել է մի այնպիսի կրոնական համայնապատկեր, որ Հայ Եկեղեցու անդամների համար անհրաժեշտություն է դարձել սույն գրքում արծարծված հարցերին ծանոթ լինելը:

Մեկ է Քրիստոսի եկեղեցին և միայն մեկ կարող է լինել, բայց դժբախտաբար, բաժանումն առկա է նաև այստեղ, ու բաժանումը ոչ միայն աշխարհագրականորեն է, այլև՝ դավանանքով:

Քրիստոնեությունը երկու խմբի կարելի բաժանել. Պատմական Առաքելական եկեղեցիներ և Բողոքական աղանդներ (ԾՊ, էջ 24): Պատմական եկեղեցիներում պահպանվում են եկեղեցական իշխանության նվիրապետական կարգը, իսկ բողոքականների մոտ նվիրապետականության բացակայությունը պատճառ է հանդիսանում հետագա բազմաթիվ ճյուղավորումների և այդ տրոհումը շարունակվում է մինչ այսօր:

Առաքելական եկեղեցիները իրենց հերթին բաժանվում են Արևելյան Ուղղափառ եկեղեցիների և Հռոմեական կաթոլիկ եկեղեցու: Այս երկու խմբի մեջ հիմնական տարբերությունը եկեղեցական գերագույն իշխանության հասկացողության մեջ է: Արևելյան Ուղղափառ եկեղեցիները որդեգրել են տեղական կենտրոնացված կրոնական իշխանության սկզբունք, իսկ Հռոմեական կաթոլիկ եկեղեցին ընդունում է մեկ և կենտրոնական իշխանության սկզբունք: Դավանանքի և ծիսական տարբերությունները հիմնականում կապված են Ս. Երրորդության, քրիստոսաբանական հարցերի հետ: Հռոմեական կաթոլիկ եկեղեցին մեկ է իր դավանանքով, նրան ենթակա տեղական եկեղեցիները տարբերվում են իրարից միայն ծեսով: Արևմուտքում և Ամերիկայում բոլոր կաթոլիկ երկրների ծեսը լատիներեն է, իսկ կաթոլիկ արևելյան եկեղեցիները պահպանում են իրենց մայր եկեղեցու ծեսը (այն եկեղեցու, որից անջատվել են), բնական է, ինչ-ինչ փոփոխություններով: Բոլորն էլ իրենց տեղական հոգևոր պետերն ունենալով հանդերձ հպատակվում են Հռոմի պապի գերագույն իշխանությանը:

Արևելյան եկեղեցիները իրենց հերթին բաժանվում են երկու խմբի՝ Հունադավան եկեղեցիներ և Արևելյան ազգային եկեղեցիներ: Այս երկու խմբերի հիմնական տարբերությունը Քաղկեդոնի ժողովի որոշումների ընդունելու-չընդունելու հարցն է, այսինքն Քրիստոսի մեջ մեկ կամ երկու բնություն դավանելու խնդիրը:

Արևելյան ազգային եկեղեցիների մեջ են մտնում Հայ Առաքելական Եկեղեցին, Ղպտի Եկեղեցին, Ասորական Եկեղեցին, Հնդիկ-մալաբար Եկեղեցին և Եթովպիական Եկե-

ղեցին: Այս խմբում դավանական տարբերություններ չկան, նրանք տարբերվում են միայն ծիսական, տոնական և վարչական բությամբ:

Կաթոլիկ եկեղեցին իր գործունեությունը Հայաստան աշխարհում հիմնականում սկսել է ԺԷ դարում: Հատկանշական է այն փաստը, որ Հռոմեական կաթոլիկ եկեղեցին այդ նույն ժամանակ «կորցնելով» իր հոտից մի մեծ բազմություն՝ բողոքականության առաջացումով, իր հայացքը ուղղեց դեպի արևելք, փորձելով լրացնել իր իսկ ներսում կորցրածը: Բողոքականությունը իր հերթին հալածանքի ենթարկվելով պատմականորեն կաթոլիկ պետություններում, բնական է, պետք է դուրս գար Հին աշխարհից և նոր հանգրվան որոներ ապաստանելու համար: Այդպես էլ եղավ. բողոքականությունը սկսվեց հիմնավորվել ամերիկյան մայրցամաքում, իսկ Հռոմն իր հայացքն ուղղեց Արևելք: Կաթոլիկ կղերականների գործունեության շրջանակներում հայտնվեց նաև Հայաստան աշխարհը:

ԺԴ դարում ունիթոռական շարժումը[90] Հայաստանում արդեն ուներ իր կենտրոնները, բայց չէր կարողանում ընդլայնվել և տարածվել, քանի որ Հայ եկեղեցու դիմադրությանն էր հանդիպում: Ունիթոռական կենտրոններ արդեն ստեղծվել էին Նախիջևանում, Արևմտյան Հայաստանի որոշ քաղաքներում: ԺԷ դարում դոմինիկյան և մանավանդ ճիզվիտական (Հիսուսյան) ուխտի միսիոներները նոր ուժով ու եռանդով սկսեցին Հայաստանում տարածել կաթոլիկությունը: Զանազան պատրվակներով Հայաստան եկած քարոզիչները մի նպատակ ունեին, այն է Հայ Եկեղեցու միացումը Հռոմի եկեղեցուն: Ինչքան և ինչպես էլ փորձեն այսօր կաթոլիկ պատմաբաններն ու պատմաբան-հայագետները ներկայացնել այդ քարոզիչներին, որպես մեր աշխարհում կրթության, լուսավորության գործի ջատագովներ, միևնույն է, պատմությունը ցույց տվեց, որ նրանք իրենց ծրագրերը և ռազմավարությունը չեն փոխել. նպատակը մեկն է՝ միացում, և պարզ է, միայն Հռոմի գերակայության պայմանով:

Դավանական հարցերը և զանազան վեճերը միայն քողարկելու նպատակին են ծառայել: Ճիզվիտներն ու զանազան այլ ուխտերի ջատագովները գալիս էին Հայաստան (որն այն ժամանակ Պարսից և Թուրքիո տիրապետության տակ էր), իրենց երկրների թագավորների հանձնարարականներով և, բնական է, ստանում էին գործելու լիարժեք ազատություն (ԱԶ, էջ 93): Հայ համայնքներում էլ կազմակերպում էին զանազան բարեգործական աշխատանքներ՝ բժշկություն, սնունդ, ձրի խնամք և այլն, որով կարողանում էին իրենց կողմը գրավել շատերին: Բնական է, որ թե՛ Պարսից, թե՛ Թուրքիո կառավարությունները պետք է խրախուսեին կաթոլիկ քարոզիչներին՝ թուլացնելու համար թե՛ - Հայ եկեղեցին, թե՛ հայերին: Բայց այդ բոլոր միսիոներների նպատակը չէր սահմանափակվում միայն դրանով, նրանց գլխավոր նպատակը Ս. Էջմիածնին տիրելն էր (ԱԶ, էջ 94):

[90] * Ունիթոռական շարժումը փորձեց միավորել քրիստոնեական եկեղեցիները մեկ եկեղեցու՝ Հռոմեական Կաթոլիկ եկեղեցու մեջ, բնական է, Պապի հովանու ներքո:

Կաթոլիկական առաքելությունը ավելի մեծ հետևողներ ունեցավ Արևմտյան Հայաստանում, Պոլիսում, ուր տեղի զանազան եվրոպական դիվանագիտական կենտրոնների հովանավորության շնորհիվ նրանք կարողացան մեծ գործունեություն ծավալել (ԱԶ, էջ 97): Առաջին քարոզիչը՝ ոմն Կղեմես Գալանոս, անգամ հայ եկեղեցականի սքեմ էր հագնում և ազատորեն մտնում հայ ընտանիքներ:

Հայ հոգևորականները, անշուշտ, չէին կարող հանգիստ մնալ, տեսնելով կաթոլիկ միսիոներների եռանդուն գործունեությունը՝ հովանավորությամբ տեղական իշխանությունների: Իրենց հնարավորության սահմաններում հայ կղերականությունը դիմակայել է այդ հզոր մեքենային, հրատարակելով հակաճառություններ, հայ եկեղեցու դեմ ուղղված զրպարտությունների պատասխաններ և այլն:

Կաթոլիկության տարածման կենտրոններ դարձան նաև Մխիթարյան հայտնի միաբանությունն (Ս. Ղազարում) ու Անտոնյան միաբանությունը (Լիբանանի լեռներում): Մխիթարյանները հայագիտական և կրոնագիտական բազում գործերին զուգահեռ թարգմանում և տպագրում էին նաև «մաքուր» կաթոլիկական գործեր:

Մեր օրերում կաթոլիկության տարածում Հայաստանում ընթանում է նույն ծրագրված ձևերով և մեթոդներով:

1992 թվականին կաթոլիկ հայոց պատրիարքի «Վերադարձ Հայաստան» պաշտոնական շրջաբերականով ժխտում է Հայ Առաքելական Եկեղեցու գոյության վավերականությունը և կանոնական իրավունքը Հայաստանում, քաղկեդոնական բանաձևը չընդունելու համար: Ոչինչ պատահական չէր այդ շրջաբերականում. ուղղակի բացահայտ գրի էին առել իրենց՝ Հռոմեական Կաթոլիկ եկեղեցու դիրքորոշումը և վերաբերմունքը Հայ Առաքելական Եկեղեցու հանդեպ: Այսինքն, վերջին դարերի ընթացքում այն չի փոխվել, չի փոխվել և նրա նկրտումները. «Վերադարձ Հայաստան» պաշտոնական շրջաբերականի բովանդակությունը ամբողջապես, ներառյալ Հայ Առաքելական Եկեղեցին «անվավեր» հոչակող պարբերությունը, որպես փաստաթուղթ մնում է անփոփոխ, իբրև պաշտոնական կեցվածքը Հայ Կաթոլիկ Եկեղեցու[91]: Շրջաբերականը դարձյալ ու դարձյալ առաջ է քաշում արդեն պատմական դարձած դավանական խնդիրները, նորից հարություն տալով դարավոր վեճերին, որոնց վերջը չի երևում. դրանք են՝ Քաղկեդոնի ժողովի որոշումների ընդունման-չընդունման խնդիրը, Հռոմի պապի գերակայության խնդիրը, դավանական մի քանի հարցեր (Բխման վարդապետությունը, անարատ հղության վարդապետությունը և այլն[92]):

Բայց իրականում միայն մեկ Կաթոլիկ եկեղեցի գոյություն ունի՝ Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցին, իր նվիրապետությամբ, բազմաթիվ ճյուղավորումներով, որոնք բոլորն էլ ծառայում են և հպատակ են Հռոմի Պապին. իսկ Հայ Կաթոլիկ Եկեղեցի անունը շինծու է, քանի որ այն չի կարող գոյություն ունենալ. կարող են լինել հայ կաթոլիկներ կամ ինչ-

91 * «Հրավեր ողջմտության», Ս. Էջմիածին, 1993, էջ4-5:

92 * Այդ հարցերը, դրանց պատասխանները համառոտակի ներկայացված են մեր նախորդ գրքույկներում. «Ոսկեփորիկ» հ. Ա, Երևան, 1992, «Ոսկեփորիկ», հ. Բ, Երևան, 1993, «Եղծ աղանդոց», Այրարատ, 1994:

պես մեզանում ասում են՝ ֆռանկներ, որոնք անդամ են Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցուն, բայց Հայ Կաթոլիկ Եկեղեցի գոյություն ունենալ չի կարող (ՀՈ, էջ 21):

Կարելի է միանշանակորեն ասել, որ Հայաստանում եղել է և կա միայն մի եկեղեցի՝ Հայ Առաքելական Եկեղեցին, մնացած բոլոր եկեղեցիները, լինեն կաթոլիկ, բողոքական, Հայաստանում բերված են, տեղական արմատներ չունեն և չեն ունեցել, ինչքան էլ ձգտեն ապացուցել և զանազան փաստարկներ բերել:

Ավելորդ չէ նշել, որ Հայ Առաքելական Եկեղեցին միակն է, որ գոյատևել է ահա արդեն 1700 տարի, և նրա հովանուց ցանկացած շեղում, լինի դեպի Հռոմ կամ ավելի հեռուն, դատապարտելու մեզ, կործանարար է: Ուստի Հայ Առաքելական Եկեղեցու կենսունակությունը մեզ համար կենսունակության տանող միակ ուղին է:

Բողոքական եկեղեցին, բարենորոգչական շրջանում վերջնականապես բաժանվելով Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցուց, մերժելով կաթոլիկ դավանանքի որոշ սկզբունքները, վերածվեց ինքնուրույն եկեղեցու և տարածվելով Արևմուտքում ԺԹ դարում սկսեց իր միսիոներական գործունեության ընդլայնումը դեպի Հին Աշխարհ՝ արևելք: Հիմնականում անգլո-ամերիկյան միսիոներներն էին, որոնք ԺԹ դարում սկսեցին թափանցել մասնավորապես Թուրքիայի տարածք, ուր և սկսեցին իրենց գործունեությունը. քարոզություն աղքատ ընտանիքներին, բարեգործական գործունեություն, ձրի օգնություն, ձրի ուսուցում և այլն, ճիշտ այնպես, ինչպես մեր օրերում: Եվ բնական է, նրանք չգնացին հեթանոսներին ավետարանելու, ինչպես պատվիրել է Հիսուս, այլ եկան քրիստոնյաներին դավանափոխ անելու: Պոլիսում նրանց գործունեությունը սկզբնական շրջանում չուներ կրոնական բնույթ, բայց դավանափոխության հարցը նրանց ուշադրության կենտրոնում է եղել միշտ: Իհարկե այդ ամենը չէր կարող չանհանգստացնել հայ հոգևորականներին, բայց միշտ միսիոներներին խրախուսել և պաշտպանել են և՛ Անգլիայի, և՛ Ֆրանսիայի, և՛ Ամերիկայի դեսպանները:

Չնայած այդ հզոր պաշտպանների գոյությանը, հայոց պատրիարքարանը ամեն կերպ ընդդիմանում էր այդ ուժերին: Բայց ավաղ, ուժերն անհավասար էին: Երբ Մատթեոս պատրիարքը 1845 թ. Պոլսի քահանաներից հաշվետվություն պահանջեց հոտի անդամներից դավանափոխ եղածների մասին, ապա ստացվեց այսպիսի պատկեր. մոտ 8.000 հայ արդեն հեռացել էին Մայր եկեղեցուց, որոնցից մեծ մասը ամսական ռոճիկ էին ստանում (ԱՁ, էջ 216): Այլընտրանք չկար. Մատթեոս պատրիարքը 1846 թ. բանադրեց այդ անգլո-ամերիկյան հերձվածը հայոց մեջ, որն էլ սկիզբը դրեց հայ բողոքականների եկեղեցու:

Հյուսիսային կողմից էլ, այսինքն Ռուսաստանի վրայով, Հայաստան թափանցեցին - Բազելի ավետարանական ընկերության անդամները, որոնք 1820-ականներին հաստատվեցին Շուշիում: Հետաքրքրական է, որ բազելյան այդ քարոզիչներին Ռուսաց կառավարությունը թույլատրել էր քարոզելու հեթանոսների մեջ (այսօրվա ադրբեջանցիներն ու այդ տարածքի շատ մահմեդականներ), բայց նրանք իրենց գործունեությունը ծավալեցին քրիստոնյա հայերի մեջ: Ճիշտ է, հետագայում հայ կղերականների ջանքերով փակվեց բազելյան քարոզիչների դուռը, բայց խմորումը արդեն սկսվել էր և նրանց հարող հայերը արդեն շարունակեցին դավանափոխության բազելյան գործը:

1861 թ. արդեն Մատթեոս Ա կաթողիկոսը, որը իր նախկին՝ պատրիարքական ժամանակ բանադրել էր բողոքականներին, ստիպված եղավ կոնդակով կտրել հայ բողոքականներին եկեղեցուց և հոգևորականներին արգելեց հարաբերվել նրանց հետ: Բնական է, որ այդ լուծումը միակն էր, այլընտրանք չկար այդ ժամանակ: Բաժանվելուց հետո հայ բողոքականների միակ ջանքը եղավ ճանաչվել կառավարության կողմից, որպես ազատ կրոնական համայնք (ԱՁ, էջ 219): Այդպես ընդգրկելով Հայաստանը արևմուտքից և արևելքից, հյուսիսից և հարավից, բողոքական հայերը, արդեն 1850-ականներին հաստատվեցին Ալեքսանդրապոլում (այսօրվա Գյումրին), մոտեցան Վաղարշապատին:

Վերջերս լույս տեսած հայ բողոքականների պատմության նվիրված ծավալուն մի գրքում[93] հեղինակները ամեն կերպ ձգտում են ապացուցել ու համոզել, որ հայ բողոքականները դրսից բերված չեն, օտարածին չեն, այլ ծնունդ են Հայ Եկեղեցու: Մինչ այդ լույս տեսած բոլոր աշխատությունների նպատակը եղել է այդ նույն գաղափարի հաստատումը: «Մենք հարազատ զավակներն ենք Մայր Եկեղեցու և հայ ազգի: Մենք շառավիղն ենք Մայր Եկեղեցու սյուները կազմող սուրբերի»[94]: Իրականում սակայն այդ ամենը խոսքերն են և ոչ մի լուրջ ընթերցող չի համոզվի դրանում: Պետք չէ դես-դեն ընկնել, գրքեր թերթել. բավական է մի անգամ այցելել հայ բողոքականների հավաք-ժողովին և կհամոզվեք, թե որ սուրբերի հետևորդներն են իրենց համարում. հայ եկեղեցու՞, թե անդրօվկիանոսյան՝ անգլո-ամերիկյան «սուրբերի»: Եվ ընդհանրապես անվանումն էլ է սխալ. ինչպես հայ կաթոլիկների դեպքում է, հայ բողոքական եկեղեցու համար էլ կարելի է նույնը ասել. չիք հայ բողոքական եկեղեցի, կան բողոքականություն դավանող հայեր, որոնք էլ բողոքական եկեղեցու հարյուրավոր ճյուղերից մեկն են կազմում:

Պատմությունը ցույց տվեց, որ Ուղղափառ պատմական եկեղեցիները ժամանակի ընթացքում ցուցաբերում են վերին աստիճանի կայունություն. նրանց խորթ է մեկ սերնդի ընթացքում երկու-երեք ճյուղավորումի տրոհվելու հատկությունը: Ընդհանրական եկեղեցին իր գոյության ընթացքում, ինչպես տեսանք վերևում, տրոհվել է ընդամենը երկու անգամ. Ե դարում (451 թ.) և ԺԱ դարում (1054 թ.), իսկ այդ տրոհումներից Հռոմեականը՝ նաև ԺԵ-ԺԶ դարերում՝ ծնունդ տալով բողոքականության: Հայ Առաքելական Եկեղեցին իր գոյության 1700 տարում ընդհանրապես չի տրոհվել: Իսկ Բողոքական եկեղեցին իր գոյության մոտ 500 տարվա ընթացքում հարյուրավոր ճյուղերի է բաժանվել, մինչև իսկ ոչ քրիստոնեական ճյուղերի (մորմոններ, Եհովայի վկաներ):

Մեզանում էլ նույնն է. ամեն մի բողոքական հարանվանություն տարին մեկ տրոհվում է (մանավանդ հոգեգալստականները), ամեն մի մասում «ծնվում» է իր սեփական «Հռոմի պապը» և այլն:

Ընդհանուր առմամբ բողոքականությունը, իր մի շարք դրական կողմերով հանդերձ, բոլորովին խորթ է հայ ժողովրդի ոգուն և անհարիր մեր եկեղեցու վարդապետությանն ու առաքելությանը[95]:

---

[93] * Ա. Ղազարյան, Հայաստանյայց ավետարանական եկեղեցի, Երևան, 1999:

[94] * «Ջանասեր» ամսաթերթ, նոյեմբեր 1986, էջ 250:

[95] * Հակոբ եպս. Գըլըճյան, Մարտին Լյութեր, Մոնտեվիդեո, 1994, էջ 433:

## ՀԱՄԱՌՈՏ ԲԱՌԱՐԱՆ

Բառարանում տրվում է գրքում հաճախակի օգտագործված որոշ բառերի (կրոնական, աստվածաբանական, սուրբգրային, օտար և այլն) բացատրությունը: Համեմատության համար տրվում է հայ եկեղեցու տեսակետը, դիրքորոշումը տվյալ հարցի վերաբերյալ: Աշխատել ենք չկրկնել գրքի նյութը՝ նշելով տվյալ բառի տեղը գրքում. առաջին՝ լատիներեն թիվը ցույց է տալիս գլուխը, հաջորդ թվերը, որոնք բաժանված են կետով, համապասխանաբար ցույց են տալիս բաժինը, ենթաբաժինը. օրինակ III.5.1 նշանակում է՝ III գլուխ (Եհովայի վկաներ), 5-րդ ենթագլուխ (ԴԱՎԱՆԱՆՔԸ), 1-ին բաժին (ԱՍՏՎԱԾ):

**ԱԶԱԶԵԼ** կամ Քավության նոխազ - տե՛ս IV.3.4: Մեղքի քավության համար Հին Կտակարանը ունի բավականին բարդ համակարգ (Ղևտական գիրքը): Մեղքը քավել նշանակում է մեղքը ներել, շնորհել, բայց ոչ ձրիաբար, այլ՝ փոխհատուցմամբ: Հնում ստրուկին ազատություն շնորհելու համար պետք է վճարվեր, եւ գնվեր տիրոջից: Եբրայերենը այդ իմաստով օգտագործում է kaphar բառը (կաֆար, որի հունարեն համարժեքն է՝ hilasmos): Հին Կտակարանը ամենայն մանրամասնությամբ է նկարագրում քավության ձևերը և այդ բոլորի մեջ հստակորեն ուրվագծվում է ՄԵՍԻԱՆ՝ Հիսուս Քրիստոսին:

Հինկտակարանյան Քավության և Քրիստոսի միջև եղած նմանությունները շատ են. Քրիստոս մեզ ազատեց Օրենքի անեծքից (Գաղ. 3.13, 1 Հովh. 4.10) և մեզ համար քավություն եղավ, Խաչի վրա իր արյունը թափեց, ջնջելով մարդկության մեղքը: Տապանակի կափարիչը, որը կոչվում էր Քավություն, ծածկում էր Տապանակում գտնվող Օրինաց տախտակները՝ Օրենքի անեծքը:

Քավության հետ սերտորեն կապված է փոխանորդության գաղափարը: Հին Կտակարանում մեղքի պատճառով մարդը մեռած էր համարվում Աստծու առաջ, ուստի Օրենքը պահանջում էր փոխանորդական զոհ՝ որը զոհվում էր մարդու փոխարեն: Այդ առումով էլ քավության նոխազը խորհրդանշել է Հիսուս Քրիստոսին, Ով մեղքը Իր վրա վերցնելով Իր մահվամբ փրկություն շնորհեց մարդկանց:

**ԱՆԱԽՐՈՆԻԶՄ** - Ժամանակավրիպություն: Պատմական դեպքերի հաջորդականության խեղաթյուրումը. մի դարաշրջանում կատարվածը մեկ այլ դարաշրջանին վերագրելու երևույթը: Անախրոնիզմի վառ օրինակ է Մորմոնի գրքում նկարագրված պատմությունները որպես մարգարեական ներկայացնելը: Օրինակ 1 Նեֆի 13.12-ը պատմում է մի մարդու մասին, որն կտրելու է մեծ ջրերը և մտնելու է ավետյաց երկիր. մորմոնները այդ ներկայացնում են որպես մարգարեություն Կոլումբոսի մասին, որն իբր արվել է մոտ 2500 տարի առաջ: Տե՛ս II.6.6:

**ԱՐՄԱԳԵԴՈՆ** (Հայտն. 16.6) - Աշխարհագրական վայրի անուն է, ուր ըստ Հայտնության 16.12-16 հատվածի պետք է հավաքվեն աշխարհի թագավորները՝ Աստծու դեմ

պատերազմելու համար: Ս. Գրքում այդ բառը օգտագործված է միայն նշված տեղում: Արմագեդոն բառի ստուգաբանությունը ստույգ հայտնի չէ, կան միայն կարծիքներ:

Ա. Կեսարացին, այդ հատվածը մեկնելիս հանդերձները մաքուր պահողներին համեմատում է ավետարանական հարսանյաց առակի հրավիրվածների հետ, նշելով որ հանդերձ չունեցողը, որը հեռացվում է «կտրվում է» և «մերկ ու ամոթով է պտտվում»[96]: Ուստի մեկնիչը գրում է, որ «Արմագեդոնը թարգմանվում է կտրված» և այնտեղ են հավաքվում այդ «կտրվածները»՝ ընդդեմ մարդկանց:

Մեկ այլ տեսակետի համաձայն «Արմագեդոնը» նույնացվում է Մակեդովի դաշտի հետ, որը գտնվում է Կարմեղոս լեռան ստորոտին և ուր Իսրայելը միշտ պատերազմել է թշնամիների դեմ՝ նրանց պարտության մատնելով (Դատ. 5.19, 4 Թագ. 23.29, 2 Մնաց. 35.22, Զաք. 12.10-14): Արմագեդոնը ստուգաբանվում է որպես har+Mageddon, ուր har-ը եբրայերենում նշանակում է լեռ, բլուր ու, հետևաբար, Արմագեդոնը թարգմանվում է՝ «Մակեդովի լեռ»:

Տե՛ս III.5.11-12:

ԲԵԹ ՍԱՐԻՄ - բառացի իշխանական տուն, Եհովայի վկաների ժողովարանների անվանումը, ներկայացնելով այն որպես թագավորական սրահ՝ kingdom hall:

Տե՛ս III.5.10:

**ԳԱԼՈՒՍՏ Ա և Բ** - Քրիստոսի Ա գալուստ համարվում է Աստվածհայտնությունը՝ Ծնունդը, իսկ Բ Գալուստը՝ Քրիստոսի երկրորդ գալն է աշխարհի վախճանին: Բոլոր աղանդավորական շարժումները տարբեր տեսակետներ ունեն Բ Գալստի վերաբերյալ, որոնք ներկայացված են II.6.9, III.5.10-14, IV.3.3 բաժիններում: Այդտեղ նկարագրված - Վերջին օրերին կատարվող դեպքերի հաջորդականությունը գալիս է բողոքական եկեղեցու վախճանաբանական հայացքներից, որը զանազան ձևերով է մեկնաբանվում այս կամ այն աղանդների կողմից:

Կախված Բ Գալուստի և Հազարամյա թագավորության հաջորդականությունից, որոշվում է տվյալ վախճանաբանության նախահազարամյա (premillenarian) և հետհազարամյա (postmillenarian) լինելը: Նախահազարամյայի վարդապետությունը ընդունում է, որ Բ Գալուստը նախորդելու է Հազարամյային, իսկ հետհազարամյայի դեպքում՝ հաջորդելու է:

Գոյություն ունի նաև այդ երկու տեսակետերը ժխտող վարդապետություն՝ անհազարամյա (amillenarian) վարդապետություն, որը Հազարամյան դիտում է լոկ խորհրդաբանություն ու ոչ թե իրականություն:

Բոլոր ժամանակակից աղանդները, որպես սկզբունք, պատկանում են նախահազարամյա վարդապետության դասին, իսկ բոլոր ուղղափառ եկեղեցիները՝ հետհազարամյա դասին:

---

[96] * «Մեկնութիւն Յայտնութեան…» Անդրէի և Արետասայ եպիսկոպոսացն Կեսարու, Երուսաղէմ, 1855, գլ. 51:

Հայ եկեղեցին Հազարամյա է կոչում Քրիստոսի Ա և Բ Գալուստների միջև ընկած ժամանակահատվածը, հետևաբար պարտադիր չէ, որ այն ունենա 1000 աստեղային տարվա տևողություն:

**ԳԼՈՍՍՈԼԱԼԻԱ - Տե՛ս V.2-6:**

**ԴԱՏԱՍՏԱՆ-ԴԺՈԽՔ-ԴՐԱԽՏ: Տե՛ս II.5.6, III.5.10, IV.3.3, նաև IV.3.1, III.5.6:**

**ԵԿԵՂԵՑԻ - Տե՛ս III.5.8, IV.1, II.2 և VII գլուխը:**

**ԵՐԿՐՈՐԴՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔ** - արդի աղանդների որդեգրած սկզբունքներից, երբ առարկայական՝ օբյեկտիվ փաստարկները վերացվում են, տեղը զիջելով երկրորդական՝ ենթակայական փաստարկներին:

Մորմոնի գրքի ծագման պատմությունը դրա վառ օրինակն է:

**ԷԿԼԵԿՏԻԶՄ** - հունարեն eklektikos՝ ընտրել բառից, որ նշանակում է խառնել, մեխանիկորեն կրկնել, պատճենել տարբեր գաղափարներ և ընտրել այն ինչ որ ցանկանում ես:

Արդի աղանդները, մանավանդ մորմոնները, էկլեկտիկորեն կրկնում են հինկտակարանային զանազան դրվագներ, փոխելով անուններն ու վայրերը:

**ԷԿԶԱԼՏԱՑԻԱ** - լատիներեն exaltatio՝ ոգևորություն բառից, որ նշանակում է գրգռված, հիացմունքի արտահայտություն, հուզավառություն, բորբոքված վիճակ:

**ԷՔՍՏԱԶ** - հունարեն extasis՝ հափշտակվել բառից, որի համարժեքն է հայերենում մտահափշտակությունը: Նշանակում է ծայրահեղ գրգռված վիճակի մեջ գտնվել, երբ բանականությունը չի աշխատում և անհատը չի կարողանում հսկել իրեն: Տե՛ս V.3-4:

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆ Ա և Բ** - տե՛ս V.10, 12:

Ուղղափառ եկեղեցիների դավանանքի համաձայն Ա կամ առաջին հարությունը հոգևոր հարությունն է կամ այլ խոսքով՝ վերստին ծնունդը որևէ անհատի համար: Բ հարությունը մարմնավոր հարությունն է, որը տեղի է ունենալու աշխարհի վախճանին, ինչպես և արձանագրված է Նիկիական Հանգանակում: Ինչպես Ա հարությունը հնարավոր դարձավ Ա Գալստյամբ, այնպես էլ Բ հարությունը իրական է դառնալու Բ Գալստյամբ: Այսպիսով Ա և Բ հարությունների միջև կան թե՛ նմանություններ, թե՛ տարբերություններ:Ա հարությունը անհատական է, այն համարվում է քրիստոնյայի վերստին ծննդյան օրը: Բ հարությունը ընդհանրական է. թե՛ արդարները և թե՛ մեղավորները հարություն են առնելու այդ ժամանակ: Ա հարությանը հաջորդելու է Խաչի ճանապարհը ամեն քրիստոնյայի համար. նեղություններ, փորձություններ, դժվարություններ, գայթակղություններ և այլն: Բ հարությանը հաջորդելու է հավիտենական կյանքը, անվախ-

ճան թագավորություն Հիսուս Քրիստոսի հետ: Ա հարությունը անհատական է, մինչդեռ Բ հարությանը բոլորն են մասնակից լինելու:

Բողոքական հարանվանությունների տեսակետները միանգամայն տարբեր են ուղղափառ տեսակետներից: Թե Ա և թե՛ Բ հարությունները հաջորդելու են Բ Գալստին, ընդ որում Ա և Բ հարությունները միաժամանակ տեղի չեն ունենալու, որոշակի ժամանակահատված կա նրանց միջև, Ա հարությունը վերապահված է միայն արդարների համար, իսկ Բ հարությունը՝ միայն մեղավորների:

**ՀՈԳԻ, ՇՈՒՆՉ, ՄԱՐՄԻՆ: Տե՛ս III.5-6, IV.3.1:**

ալ-ՂԱՅԲԱ - արաբերեն բառ, որ նշանակում է բացակա, անտեսանելի ներկայություն, իսկ կրոնական իմաստով՝ թաքնված վիճակ: Իսլամի շիա ուղղության մեջ հավատում են իմամի «թաքնված վիճակում» գտնվելուն, երբ նա՝ իմամը, գտնվելով ալ-ղայբայում ղեկավարում է շարժումը սաֆիրների՝ ուղարկվածների միջոցով: Տե՛ս II.2:

ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՇԵԼՈՒ ՍԿԶԲՈՒՆՔ - տե՛ս V.1: Արդի աղանդներին բնորոշ մի սկզբունք է, երբ նրանք իրենց հռչակում են Նախնական եկեղեցու միակ իրավահաջորդը, ընդունելով Նախնական եկեղեցում տեղի ունեցած բոլոր դեպքերի շարունակական բնույթը կամ կրկնողություն: Նման սկզբունք որդեգրած կրոնական շարժումները, ինչպես օրինակ խարիզմատ շարժումը, վերածվում են մակերեսային քրիստոնեության:

ՍԻՆԿՐԵՏԻԶՄ - հունարեն բառ է, որ նշանակում է միավորել, միացնել: Պատմությանը հայտնի են սինկրետիկ կրոններ, որոնք առաջացել են տարբեր կրոնների միախառնումից: Տե՛ս VI:

**ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ - տե ս V.3-6**:

**ՎԱԽՃԱՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ** - տե՛ս II.5.9, III.5.14, IV.3.3: Հունարեն eschatologia (eschatos՝ վախճան և logos՝ բան) բառի թարգմանությունն է, որը գիտելիքների համակարգ է աշխարհի վախճանի, վերջին օրերի, հանդերձյալ կյանքի և դրանց հարակից հարցերի մասին:

Վախճանաբանությունը եկեղեցու դավանանքի արտահայտությունն ու տրամաբանական վերլուծությունն է վերջին օրերի վերաբերյալ: Վախճանաբանության հարցերից է նաև հանդերձյալ կյանքին, դատաստանին, դժոխքին, դրախտին վերաբերող հարցերը:

Վախճանաբանությունը բաժանվում է երկու դասի, կախված նրանից, թե Քրիստոսի Բ գալուստը նախորդելու թե հաջորդելու է Հազարամյա թագավորությանը: Ըստ այդմ վախճանաբանությունը լինում է նախահազարամյա՝ premillenarian և հետհազարամյա՝ postmillenarian դասին պատկանող: Արդի բոլոր աղանդավորների վախճանաբանությունը նախահազարամյայի դասին է պատկանում, մինչդեռ բոլոր ուղղափառ եկեղեցիների վախճանաբանությունը պատկանում է հետհազարամյա դասին:

**ՏԱՍԸ ՑԵՂԵՐԸ ԻՍՐԱՅԵԼԻ** -տե՛ս VI.1, II.4.7: Հրեաստանը Ռոբովամի օրոք բաժանվեց երկու թագավորության՝ Հուդա և Իսրայել: Իսրայելը՝ հյուսիսային թագավորությունը, համախմբեց 10 ցեղերին և այդպես կոչվեց՝ Իսրայելի տասը ցեղերի թագավորություն: Գոյատևեց համեմատաբար կարճ ժամանակ, մոտ 250 տարի և Ոսիայի օրոք վերացավ Գերության տարիներին այդ տասը ցեղեր ձուլվեցին և պատմության թատերաբեմից վերացան:Գերությունից հետո Հյուսիսային թագավորությանը փոխարինեց Սամարիան: Այդ տասը անվանվեցին որպես Իսրայելի կորած տասը ցեղեր: Մորմոնականությունը քարոզում է, որ այդ տասը ցեղերը վերահաստատվելու են Հյուսիսային Ամերիկայում:

**ՈՒՐԻՄ, ԹՈՒՄԻՄ** - թարգմանվում է լույս և կատարելություն: LXX թարգմանիչները թարգմանել են հունարեն delosis և aletheia բառերով համապատասխանաբար: Գրաբարը հունարեն այդ բառերը թարգմանել է որպես հանդիմանություն, հայտնություն (delosis) և ճշմարտություն (aletheia): Աստվածաշնչական Ընկերության բոլոր հրատարակություններում Ուրիմն ու Թումիմը չեն թարգմանվում: Դրա համար էլ մեր կանոնում չկան Ուրիմ և Թումիմ ձևերը: Ի՞նչ են ներկայացնում դրանք: Միանշանակ պատասխան չկա: - Հին Կտակարանում Ուրիմին ու Թումիմին հանդիպում ենք Ելք 29.30, Ղևտ. 8.8, Թվեր 27.21, Բ Օր. 33.8, Եզր 2.63, 1 Թագ. 23.9 և 1 Թագ. 28.6 համարներում:

Ենթադրում են, որ Ուրիմն ու Թումիմը պատվական քարերն են քահանայապետի վակասի վրա, որոնց միջոցով՝ դատելով քարերի լույսի խաղից, քահանայապետը իմանում էր Աստծու կամքը: Հրեական ավանդությունը հստակ պատասխան չի տալիս Ուրիմի ու Թումիմի նշանակության մասին: Եբրայերենում Ուրիմ բառը սկսվում է եբրայերենի alef՝ առաջին տառով, իսկ Թումիմը՝ tau՝ վերջին տառով (հմմտ. հունարեն ալֆան և օմեգան): Այդ առումով էլ մեկնիչները Ուրիմն ու Թումիմը համարում են Հիսուս Քրիստոսի խորհրդանիշը՝ մարմնացյալ Աստծու կամքը՝ հայտնությունն ու ճշմարտությունը (LXX թարգմանության մեջ) և Լույսն ու Կատարելությունը:

Մորմոնականությունը յուրովի վերակենդանացրեց Ուրիմն ու Թումիմը Մորմոնի գրքի թարգմանության պատմության մեջ: Տե՛ս II.2:

## ԿՐՈՆԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐ, ԵԿԵՂԵՑԻՆԵՐ, ԱՂԱՆԴՆԵՐ

Ադվենտիստներ
Անտրոպոսոֆիա
Աստրոլոգիա
Գնոստիկներ
Բահայիզմ
Բոստոնյան շարժում
Բողոքականներ
Դավթի սերունդ
Եհովայի վկաներ
Ջրադաշտականներ
Թեոսոֆիա
Իսլամ
Իրվինգիստներ
Լյութերականներ
Խարիզմատներ
Կաթոլիկ եկեղեցի
Հարե Կրիշնա
Կալվինականներ
Կենդանի հոսք
Կենաց խոսք
Հայ Առաքելական Եկեղեցի
Հոգեգալստականներ
Ճշմարտություն
Մասոնականություն
Մանիքեյականություն
Մոդալիստ-միիշխանություն (մոնարխիականություն)
Մունիստներ
Մորմոններ
Նախնական եկեղեցի
Նոր դար
Նոր սերունդ
Շիյա
Շտայներականներ
Պավլիկյաններ
Պենտեկոստեականներ
Սաբելականություն
Սպիրիտիզմ
Սատանայապաշտություն
Սայենտոլոգներ
Սրբության շարժում
ՏՄ

Տնային եկեղեցի
Ուղղափառ եկեղեցիներ
Օկուլտ
Ֆունդամենտալիզմ

# ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ


Աբրահամ նահապետ
Աբու Քիր
Ադամ
Ազազել
Ալլահ
Ահարոն
Ամերիկա
Ամերիկա կենտրոնական
Անահայմ
Ասիա
Արիոս
Արտաքսերքսես
Արմագեդոն
Աֆրիկա

Բեթ սարիմ
Բաբելոն
Բեթղեհեմ
Բառնաբաս
Բարբույ
Բաղաամ
Բեյթս Ժ.
Բենի Խին
Բենսոն Եզրա Թաֆթ
Բլավատսկայա Ելենա
Բրիտանիա Մեծ
Բրիգհեմ Յանգ
Բրուկլին
Բրուկլին
Բունվել

Դավիթ թագավոր
Դանիել
Դերբի
Դիոնիսիոս Կրտսեր
Դիտարան թերթ

Եդեմ
Եվա
Եվագրիոս Պոնտացի
Եսայի մարգարե
Եվսեբիոս Կեսարացի
Եվրոպա
Եգիպտոս
Երուսաղեմ
Եհովա
Եփրաթա

Զաքարիա մարգարե

Էդսոն Հայրում
Էմավուս
Էմանուել
Էնթոնի Չարլզ

Թովմաս առաքյալ
Թոփեքա

Իսահակ
Իսրայել
Իսմայել
Իրվինգ
Իրինեոս
Իլլիյոնս
Իգնատիոս
Ինդիփենդանս

Լեհիա
Լի Ջոն
Լի Չան Շոու - Լի Վիթնես
Լիախոյա
Լյութեր
Լոգոս

Խարան
Խեյզին
Խինկլի Գորդոն

Կեսար Հուլիոս
Կալվին
Կալիֆորնիա
Կամպանելլա ուտոպիստ
Կիրտլենդ
Կիմբալ Սպենսեր
Կումրան
Կումորա
Կորնթոս քաղաք
Կոլոբ
Կոլումբոս

Հարեդ
Հագար
Հերմաս
Հակոբ նահապետ
Հակոբոս առաքյալ
Հայաստան
Հայր Աստված
Հանիել Հովարդ
Հենշել Միլտոն
Հիսուս Քրիստոս
Հրեաստան
Հուդա
Հովհաննես ավետարանիչ
Հովհաննես Մկրտիչ

Ղազարոս աղքատ
Ղազարոս Հիսուսի բարեկամ
Ղուրան

Մատնոս ավետարանիչ
Մարիամ
Մարկոս Ավետարանիչ
Մելքիսեդեկ
Մակեդոնացի Ալեքսանդր
Մանի
Մաքսիմիլլա
Միսսուրի
Միսսուրի
Միլլեր Վիլյամ
Միքայել հրեշտակապետ
Մովսես մարգարե
Մուրադ Բեյ
Մուհամմեդ
Մոր ուտոպիստ
Մորմոն
Մորոնի
Մոնտանոս

Յութա
Յոն Գի Չոն

Նաբուգոդոնոսոր
Նապոլեոն
Նավու
Նեբրովք
Նելսոն ծովակալ
Նեֆի
Նի Թո Շեն - Վոչման
Նիկոդեմոս
Նյու Յորք
Նոյ
Նոր Նաթանայել

Շարոն
Շեմա
Շամպոլեոն
Շնորհալի Ներսես

Ոզիա
Որոգինես
Որդի Աստծու

Չինաստան

Պապիաս
Պեպուզա
Պետրոս առաքյալ
Պարհեմ
Պարհեմ Չ.
Պիտսբուրգ
Պիղատոս
Պլատոն փիլիսոփա
Պրիսկիլլա
Պողոս առաքյալ

Ջեբրայիլ
Ջոնս Ջիմ
Ջոնստաուն

Ռասել Չարլզ
Ռիկտոն
Ռոբովամ
Ռուսաստան
Ռուտերֆորդ Ֆրանկլին
Ռոմնի Մերիոն

Սեդեկիա
Սառա
Սավուղ թագավոր
Սամոստացի Պողոս
Սեյմուր Դ.
Սեն Ժան դակր
Սբոլտինգ Սողոմոն
Սիոն
Ստեփանոս նախավկա
Սմիթ Սեմուել
Սմիթ Ժոզեֆ
Սմիթ Սոֆրոնիա
Սմիթ Լյուսի
Սմիթ Հայրում
Սուրբ Երրորդություն
Սուրբ Հոգի
Սուրբ Հոգի
Սոլթ Լեյք Սիթի
Սողոմոն թագավոր

Ուայթ Ելենա
Ուեյկո
Ուկրաինա
Ուիթմեր Ջեյքըբ
Ուիթմեր Ջոն
Ուիթմեր Դեյվիդ
Ուիթմեր Մարտին
Ուիթմեր Փիթեր
Ուիթմեր Քրիսչեն
Ուր
Ուրիմ, Թումիմ

Վան Ցզա
Վեսլի Ջոն
Վերմոնտ նահանգ
Վուդրաֆ Վիլդորֆ

Տաթևացի
Տեներ Էլդոն
Տրդատ թագավոր
Տրովադա

Ցվինգլի

Փեյջ Հայրում
Փռուգիա

Քաուդերի Օլիվեր

Օզիա
Օզման Ա.
Օրմանյան
Օհայո

Ֆրանսիա
Ֆրանց Ֆրեդերիկ
Ֆոքս

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


1. Ջոզեֆ Սմիթ մարգարեի վկայությունը, ՀՔՎՕՍԵ, հայերեն, 1995թ:
2. Учение и заветы, Драгоценная жемчужина, Солт-Лейк Сити, Юта, 1995:
3. А. Дворкин, Введение в сектоведение, Н. Новгород, 1998:
4. W. Martin, The kingdom of the cults, Minneapolis,1997:
5. Ա. Կ. Հասէսեան, Աղանդներ Քրիստոնէական Ճշմարտութեան պրիսմակէն, Բեյրութ, 1969:
6. Книга Мормона, Новые свидетельства об Иисусе Христе, Солт-Лейк Сити, 1988:
7. Dictionary of cults, sects, religions and the occult, C.A. Mather, L.A. Nicols, Michigan, 1993.
8. Morey R., How to answer Mormon, Minneapolis,1983:
9. Ռուտերֆորդ, Աստծու քնարը, Բրուկլին, 1926, արևմտահայերեն:
10. Ռուտերֆորդ, Աստված թող լինի Ճշմարիտ, 1952:
11. «Հարկավո՞ր է հավատալ Երրորդությանը», Դիտարան, 1995:
12. Поснов М., История Христианской церкви, Киев, 1991:
13. Եզնիկ Ծ. Վրդ., Հայրաբանություն, Ա, Ս. Էջմիածին, 1996:
14. Самый Великий человек который когда-либо жил, Бруклин, 1991:
15. Ահա ամէն բաները նոր կ՛ընեմ, Բրուկլին, 1986:
16. Գիտությունը, որ հավիտենական կյանքի է առաջնորդում, Բրուկլին, 1995:
17. Соболевский, древне-греческий язык, Л-д, 1975:
18. Էրիկ Ջ., Նոր Կտակարանի հունարենը, Լոնդոն, 1958:
19. Օրմանեան, Տեղիք աստվածաբանութեան, Երուսաղէմ, 1974:
20. Мак-Дауэл Дж., Неоспоримые свидетельства, Чикаго, 1987:
21. Քո թագավորությունը գա, Բրուկլին, 1984:
22. Եզնիկ ծ. վրդ. Պետրոսյան, Ներածություն Նոր Կտակարանի, Ս. Էջմիածին, 1996:
23. Lampe, A patristic greek lexicon, Oxford, 1982.
24. Божье имя пребудет вовеки, Бруклин, 1984:
25. Բարի լուր քեզ ուրախացնելու համար, Բրուկլին, 1981:
26. Ա. Տեր Միքելյան, Հայաստանյայց Առաքելական եկեղեցու քրիստոնեականը, Տփխիս, 1900:
27. Ты можешь жить вечно в раю на земле, Бруклин, 1989:
28. Ստեփանոս Սյունեցի, Չորս ավետարանների համառոտ մեկնություն, Ս. Էջմիածին, 1997:
29. Пасха, что говорится о ней в Библии, Сторожевая Башня, 1.04.1996:
30. Морис Г., Библейские основания современной науки, 1995:
31. Միացած՝ միակ Ճշմարիտ Աստծու պաշտամունքի մեջ, Բրուկլին, 1988:
32. Զարեհ Եպս. Ազնավուրյան, Եհովայի վկաների այլափոխված աստվածաշունչը, Անթիլիաս, 1992:
33. Դիտարան, օգոստոս 1, 1995:
34. Եհովայի վկաները և կրթությունը, Բրուկլին, 1988:
35. Խըլըպյան, Եհովայի վկաներ, Երևան, 1994:
36. Դիտարան, օգոստոս 1, 1995:
37. Seventh-day Adventist Believe..., GCSdA, Washington, 1988:
38. Ե. Ուայտ, Սանձազերծ առյուծ, Վնաձոր, 1995, հայերեն:
39. Աստվածաշնչական ձեռնարկ, համառոտ ընթերցումներ ընտանիքի և հասարակության համար, ադվենտիստների ձեռքի գիրքն է, անանուն հեղինակ ու հրատարակիչ:
40. Ռ. Վոլկոսլավսկի, Աստվածաշնչի ու Ավետարանի մասին, Զաոկսկի, 1989:

41. Գ. Տաթևացի, Քարոզգիրք, ամարան հատոր, Կ. Պոլիս, 1741:
42. Ե. Տեր-Մինասյան, Ընդհանուր եկեղեցական պատմություն, Ս. Էջմիածին, 1908:
43. Եւսեբիոս Կեսարացի, Պատմութիւն եկեղեցական, Վենետիկ, 1877:
44. С. Роуз, Православие и религия будущего, Москва, 1992.
45. Մ. Օրմանյան, Համապատում, Ս. Էջմիածին, 1996:
46. Ն. Շնորհալի, Մեկնութիւն Մատթէոսի, Պոլիս, 1825:
47. Գրիգոր Տաթևացի, Գիրք հարցմանց, Պոլիս, 1728:
48. անանուն, Մարդկային կյանքի խորհուրդը, Անահայմ, Կենդանի հոսք, 1997:
49. Վիթնես Լի, Բովանդակ Քրիստոս, Անահայմ, Կենդանի հոսք, 1997:
50. Վիթնես Լի, Կյանքի փորձառություն, Անահայմ, Կենդանի հոսք, 1997:
51. անանուն, Տնային Խմբակային եկեղեցի:
52. անանուն, Նոր Առաքելական հավատ, հարցեր և պատասխաններ, Միջազգային Նոր առաքելական հավատ եկեղեցի, 1992:
53. А. П., Дары Духа или фантазия, GBV, 1991

ՇԳ - Շնորհք եպս. Գալուստեան, Տեղիք աստուածաբանութեան, Երուսաղէմ, 1993:
ԵԿ - Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, Երևան, 1994:
ԱՋ - Աբր. Ջամինյան, Պատմություն Հայ եկեղեցվո, Նախիջևան, 1909:
ՀՈ - Հրավեր ողջմտության, Ս. Էջմիածին, 1993:
ТВ – Толковая Библия Лопухина, Стокгольм, 1987.

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ3
I. ԻԲՐԵՎ ՆԱԽԱԲԱՆ6
II. ԱՂԱՆԴՆԵՐԸ, ՆՐԱՆՑ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ10
III. ՄՈՐՄՈՆՆԵՐ ԿԱՄ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ ԵԿԵՂԵՑԻ21
1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ21
2. ԺՈԶԵՖ ՍՄԻԹ ԿՐՏՍԵՐԸ ԵՎ ՄՈՐՄՈՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ25
3. ՄՈՐՄՈՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ40
3.1 ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 243
4. ՄՈՐՄՈՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՍՐԲԱԶԱՆ ԳՐՔԵՐԸ46
4.1 ՄՈՐՄՈՆԻ ԳԻՐՔԸ46
4.2. «ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒԽՏԵՐ»50
4.3. «ՄԵԾԱԳԻՆ ԳՈՀԱՐԸ»56
4.4 ՄՈՎՍԵՍԻ ԳԻՐՔԸ58
4.5. ԱԲՐԱՀԱՄԻ ԳԻՐՔԸ59
4.6. ԺՈԶԵՖ ՍՄԻԹԻ ՄԱՏԹԵՎՈՍԻ
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ62
4.7. ԺՈԶԵՖ ՍՄԻԹԻ ՀԱՎԱՏՈ ՀԱՆԳԱՆԱԿԸ63
5. ՄՈՐՄՈՆՆԵՐՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ72
5.1.ԱՍՏՎԱԾ ՄՈՐՄՈՆՆԵՐԻ
ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ74
5.2. ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ74
5.3.ՍՈՒՐԲ ՀՈԳԻ75
5.4.ՓՐԿԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ76
5.5.ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆԸ77
5.6.ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆ ՄԵՌԱԾՆԵՐԻ ՀԱՄԱՐ77
5.7.ՄԵԼՔԻՍԵԴԵԿՅԱՆ ԵՎ ԱՀԱՐՈՆՅԱՆ
ՔԱՀԱՆԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ79
5.8.ՎԱԽՃԱՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ80
6. ՄՈՐՄՈՆՆԵՐԻ ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ
ԽՈՑԵԼԻ ՏԵՂԵՐԸ82
6.1. Մորմոնի գիրքը84
6.2. Պողպատի, երկաթի խնդիրը85
6.3. Մետաքսի խնդիրը87
6.4. Կովի, ոչխարի, ձիերի, էշերի, փղերի խնդիրը87
6.5. Մարդաբանական տիպը՝ մոնղոլոիդ88
6.6. Տեքստաբանական խնդիրներ90
6.7. Մարգարեական հոգին եւ մորմոն եկեղեցին95
6.8. Սողոմոն Սբոլտինգը եւ Մորմոնի գիրքը99

VI. ՉԱՐԼԶ ՌԱՍԵԼԸ ԵՎ ԴԻՏԱՐԱՆԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ (ԵՀՈՎԱՅԻ ՎԿԱՆԵՐ)103
1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ103

2.ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ104
3.ԺՈԶԵՖ ՖՐԱՆԿԼԻՆ ՌՈՒՏԵՐՖՈՐԴ113
4.ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ116
5.ԵՀՈՎԱՅԻ ՎԿԱՆԵՐԻ ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴԱՎԱՆԱՆՔԸ120
5.1ԱՍՏՎԱԾ122
5.2.ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ129
5.3.ՍՈՒՐԲ ՀՈԳԻ139
5.4.ԴԱՐՁՅԱԼ ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ142
5.5.ԱՍՏԾՈՒ ԱՆՈՒՆԸ - ՏԵՏՐԱԳԱՄԱՏՈՆԸ ԿԱՄ ՏԵՏՐԱԳՐԱՄԱՆ154
5.6.ՄԱՐԴԸ ԵՀՈՎԱՅԻ ՎԿԱՆԵՐԻ ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ163
5.7.ԱՌԱԿԻ ՄԱՍԻՆ173
5.8.ԵԿԵՂԵՑԻ187
5.9.ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ181
5.10.ՎԱԽՃԱՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ183
5.11.ԱՐՄԱԳԵԴՈՆ, ՀԱԶԱՐԱՄՅԱ
ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԵՏԱԳԱ ԴԵՊՔԵՐԸ197
5.12.ԱՐՄԱԳԵԴՈՆԻՑ ՀԵՏՈ201
5.13.ՄԵԾ ԲԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԵՀՈՎԱՅԻ
ՎԿԱՆԵՐԻ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ203
5.14.ԴԱՐՁՅԱԼ ԵՀՈՎԱՅԻ ՎԿԱՆԵՐԻ
ՎԱԽՃԱՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ206
6.ԵՀՈՎԱՅԻ ՎԿԱՆԵՐԻ «ՆՈՐ ԱՇԽԱՐՀԻ» ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ210
7.ԽԱՉԸ ԵՎ ԵՀՈՎԱՅԻ ՎԿԱՆԵՐԸ216
8.ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ, ԱՐՅՈՒՆԸ ԵՎ
ԵՀՈՎԱՅԻ ՎԿԱՆԵՐԸ218
9. ԵՀՈՎԱՅԻ ՎԿԱՆԵՐԸ ԵՎ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ226
10. Post Scriptum228

V. ՄԻԼԼԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ ՅՈԹՆԵՐՈՐԴ ՕՐՎԱ ԱԴԵՆՏԻՍՏՆԵՐ229
1. ՀԱՄԱՌՈՏ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ229
2. ԵԼԵՆԱ ՈՒԱՅՏ ՄԵԾ ՄԱՐԳԱՐԵՈՒՀԻՆ234
3. ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ237
3.1.ՀՈԳԵՔՆԱԾՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ ՄԱՀՎԱՆ ՈՒ
ՀԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ238
3.2. ՇԱԲԱԹ ՕՐՎԱ ԽՆԴԻՐԸ244
3.3.ՎԱԽՃԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ247
3.4. ՂԵՎՏԱՑԻՆԵՐԻ 16-ՐԴ ԳԼՈՒԽԸ ԿԱՄ
ՔԱՎՈՒԹՅԱՆ ՆՈԽԱՁԻ ԵՎ ԱԶԱԶԵԼԻ
ԽՆԴԻՐԸ253
4. Post Scriptum256

VI. ՀՈԳԵԳԱԼՍՏԱԿԱՆ ԿԱՄ ՊԵՆՏԵԿՈՍՏԵԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ258
1. ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ265

2. ԳԼՈՍՍԱԼԱԼԻԱ ԿԱՄ ԼԵԶՎԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԵՐԵՎՈՒՅԹԸ266
3. ԳԼՈՍՍՈԼԱԼԻԱՅԻ ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆԸ272
4. ԳԼՈՍՍՈԼԱԼԻԱՅԻ ԵՐԵՎՈՒՅԹԸ278
5. ԼԵԶՎԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՐՆԹՈՍԻ
ԵԿԵՂԵՑՈՒՄ280
6. ԼԵԶՎԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԹՂԹԻ 14-ՐԴ ԳԼՈՒԽԸ283
7. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ283
8. Post Scriptum284

VII. ԴԵՏ ՆԻՆ ԵՎ ՎԿԱ ԼԻՆ290
1. ՇԱՐԺՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ
ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ290
2. Post Scriptum296
VIII. ՏՆԱՅԻՆ ԽՄԲԱԿԱՅԻՆ ԵԿԵՂԵՑԻ298

ՀԱՎԵԼՎԱԾ302

ԲԱՌԱՐԱՆ305

ԱՆՎԱՆԱՑԱՆԿԵՐ
ԿՐՈՆԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐ, ԵԿԵՂԵՑԻՆԵՐ, ԱՂԱՆԴՆԵՐ331

ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ332
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ336
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ339